

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ
Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Բ

№ 5 1890

ՄԱՅԻՍ

1890 № 5

ԵՐԿՐՈՒԴ ՏԱՐԻ

կրես

1 ԱՐԱՎԻՆԾԵԱՆՑ ԱԻԵՏԵՔ	635 Թիւ և ուժ,
2 ԱՐԺԻՒԽԱՆ	648 Ազնքան դառն ցաւ ու վշտեր (բան+),
3 ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ, Ա.	649 Հայ գիւղացու սի օրը (մերջ),
4 ՄԻՒԹԱՐԵԱՆՑ ԱՐՃԱԼՈՅՆ	699 Խղճի խալիթ (բանաստ.),
5 ՍԱՂԱԹԵԼԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ	704 Համալն, հողատ, Երևան, նահանգ,
6 ԱՐԾԻՒԵԱՆ	718 10 Ապրիլի (բանաստ.),
7 " " " " "	719 Ծաղիկներ և իղձեր (բանաստեղծ),
8 ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ	720 Աղքասների խնամատարութիւնը,
9 ՏԵՐ-ՄԻՔԵԼԵԱՆ ԱՐՃԱԿ.	735 Գերմանակ, դպր, դրութիւնը (շար.),
10 Ա. Ա., ՎԱՆԿ.	746 Գրախօսութիւն,
11 ԼՈՒՍԻՆԵ.	752 Ամսւակ Քրօնիկ,
12 Ն*.	757 Բանւորները Անգլիակում:
13 Յ. ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆՑ.	761 Մանկավարժ. բուժական վարժարան
14 ԱՍԲԱՆԱԶԵԱՆՑ, Դ.	762 Կարինից, դպրոց, դորձեր,
15 Z.	767 Քաղաքական ֆեսութիւն:
16 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ ՏԻԳՐԱՆ.	772 Նամակ Խմբադրին,
17 ԽՄԲ.	775 Խմբադրութեան կողմից,


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԹԻՖԼԻՍ

Ա. Դ. ԱՌԵՆՆԵՐԸ ՏՊԱՐԱՆ

Տիպոգրաֆія М. Д. Ротишвили, на Гол. просп. соб. д. № 41.

1890



ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 5 1890

ՄԱՅԻՍ

1890 № 5

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

~~~~~

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՇԵԱՆՑԻ

1890

Дозволено цензурою, Тифлісъ, 8 Мая 1890 г.

Типографія М. Д. Ротніанца, на Голов. просп. соб. д. № 41.

## ԹԻՒ ԵՒ ԱՅԺ

Ժողովրդի թիւը, որպէս մի կուլտուրական առաջնակարգ ոյժ, բաւականաշափ ուշազրութեան չէ առնւած մեր գրակմնութեան մէջ:

Հաստատ կարելի է ասել, որ մի հասարակութիւն կամ մի ազգ կազմող անդամների թիւը մի որոշ չափով որոշում է այդ ազգի դիրքը մարդկացին մեծ ցեղի մէջ:

Ամեն ինչ չի կախւած թիւց, բայց, բոլոր այլ հաւասար պայմաններում, այն ազգը աւելի է կոչւած լինում կուլտուրական դեր կատարելու, որը աւելի խոշոր մեծութիւն է ներկայացնում:

Եթէ երկու ազգեր ունին նման բնաւորութիւն, նման հակումներ և կենում են նման կամ միւնոյն հանգամանքների մէջ, — դոցանից կարեւորագոյնը դառնում է նա, որը աւելի մեծ է:

Եթէ երկու ազգեր նման բնաւորութիւն չ'ունին, նման էլ հակումներ չ'ունին, բայց կենում են նման հանգամանքներում, ոյժը ամեն անդամ աւելի խելօքինը չէ, այլ յաճախ նորանն է, ով աւելի պատկառելի թիւ է ներկայացնում և աւելի աճելու ընդունակութիւն է ցոյց տալիս:

Մարդկացին շունչը ինքն ըստ ինքեան մի գործիչ է հասարակութիւնների մէջ: Նաև անկախ խելքի կամ առհասարակ ինտելիգենցիայի աստիճանից մարդս, մի անդամ որ նա կայ այս աշխարհիս վերայ, նա միւնոյն ժամանակ որոշ ՚իրաւունքների տէր է հանդիսանում: Նա ապրուստ է պահանջում, նա կրթութիւն է պահանջում, նա պահանջում է աշխարհքիս բարիքների վայելումը, նա դիրք է պահանջում: և այդ բոլորի դիմոց՝ նա կատարում է որոշ պարագաներութիւններ, որոշ ծառացութիւններ հասարակութեան, ազգին, պետութեան:

Եւ որքան շատ է մի ազդ կազմող մարդկանց թիւը, նոյնքան աւելի մեծ պահանջներ է զգում և պարտականութիւն ունի կատարելու դոյն այդ ազդը:

Պարտականութիւնները մի ազդի համար որոշում են նորա էռալ պուրական էռչումը: Եւ ես ասում եմ, որ որքան մեծ է մի ազդ, այնքան աւելի մեծ է նորա կոչումը՝ կուլտուրական գործ կատարելու: Մի ազդի բարձրանալը և կենսունակութիւնը յաճախ չափում է նորա աճելու ընդունակութիւնով: Մի ազդ, որ աճելութեան նշաններ չի ցոց տալիս՝ նա թուլանում է: Համեմատած մի աւելի աճող ազդի հետ, ոչ-աճող ազդը աւելի քիչ մղում է զգում ընդարձակելու, իւր ազդեցութիւնը ուրիշների վերաց արածելու, զաղթավայրեր հաստատելու և այլն:

Եւրոպան և Ամերիկան ընակեցրած են այժմ գրեթէ բացառապէս մարդկային՝ այսպէս կոչւած սպիտակ ցեղով: Նրեք իրանց թւով մեծ գրուալաները այդ սպիտակ ցեղի են՝ բոմանական, գերմանական և սլաւոնական: Ծնորհիւ այն հանգամանքի, որ բոմանական, գերմանական և սլաւոնական ազգախումբերը ներկայացնում են իրանց թւով խոշոր մեծութիւններ, նոքա եղած են և շարունակում են մնալ տիրապետող ազգեր քաղաքակրթական (կուլտուրական) ասպարիզում, թէև մէկը առաւել, միւսը՝ պակաս: Դոցանից ամեն մի գրուպա բաղկացած է մի քանի ազգերից, որոնք առանձին կարեւորութիւն են ստացել հետո իրանց թւի ծնորհիւ: Թիւն է, որ ստեղծեց Ֆրանսիան, թիւն է, որ ստեղծեց Խոալիան և դեռ ևս թիւն է պատճառը, որ Խոպանիան, չը նայած իւր խորին անկմանը, շարունակում է մի որոշ զիրք բռնել Եւրոպայի մէջ: Եւ եթէ Պօրտուգալիան, Խոպանիայի հարեւանը, վերջինիս կարեւորութիւնը չ'ունի—նորա ազգաբնակութեան փոքր թւի պատճառովն է:

Այն բոլոր գերմանական ազգերը, որոնք զերմանական լեզու ունին և գերմանական հայրենասիրութիւնն զերմանական քաղաքակրթութիւն, այժմ միացած մի մեծ թիւ են ներկայացնում: Չը լինէր այդ թիւը,—Գերմանիան այն առաջնակարգ, քաղաքական և կուլտուրական ոչժը չէր ունենալ, ինչ նա ունեցած է անցեալում և ունի ներկայումս:

Նոյն երեսոյթը կրկնուում է Աւստրիա-Ռւնդարիայում: Բաւական

չէ, որ Աւնգարիան ունենար մեծ հայրենասիրական ողի՝ իւր այժման զիրքին հասնելու համար. դորա համար հարկաւոր էր որ ունգարացիք, իբր մի ազգ, բաւականին խոշոր մեծութիւն կազմէին: Թիւը հարկաւոր է, որպէս զի ողին մեծ ծաւալ ստանայ և բեղմնաւորի. թիւը անհրաժեշտ է, որ այդ ողին մնաի:

Նոյն այդ երկրում, եթէ կայ չեխական խնդիր, պէտք է հաւասար լնդունել, որ այդ յառաջացած է չեխական ազգի համեմատական մեծութիւնից: Եւ եթէ նոյն Աւսորիա-Աւնգարիայում սլաւոնական խնդիր կայ առհասարակ, այդ նորանից է, որ սլաւոնական ազգերը, միասին առած, կազմում են այլ պետութեան մէջ ազգարնակութեան մի խոշոր մասը, բռնելով երկրի համապատասխան խոշոր անդը:

Օրինակներ կարելի էր դեռ ևս շատ բերել, բայց մենք կարծում ենք թէ բերածներովը արդէն բաւականաշափ պարզել ենք մեր միտքը և ազացուցել, թէ ի՞նչ մեծ կարևորութիւն ունի մի ազգի թւական խոշորութիւնը դոյն այդ ազգի կուլտուրական ազագայի համար:

---

Անդրկովկասում թւի նշանակութիւնը այլ չէ, քան այն, ինչ մենք տեսանք ուրիշ երկիրներում: Ի՞նչ մեծ լնդունակութիւնների տէր են ներկայանում թուրքերը: — Համեմատապէս փոքր: Որ քաղաքակրթութեանը նոքա աւելի քիչ են յարում, քան մեր քրիստոնեայ ազգերը, այդ մի նորութիւն չէ: Բայց այդ նւազ կուլտուրական ազգը իւր խոշորութիւնով առաջին տեղն է բռնում Անդրկովկասում: Եւ թւով մեծ լինելով, այդ ազգը, որը իսպառ կ'անյացտանար իրանց գրացիների հարևանութեամբ, իւր թւով պահպանում է իրան իբր մի ոյժ: Տիմիայն թիւը բաւական չէ պահպանուելու համար, բայց որոշ յատկութիւններով մի ժողովուրդ երբ յայտնի թւով է, զօրութիւն է ստանում հէնց նոյն այդ յատկութիւնները և ձգուումները պահպանելու և աւելի զարգացնելու: Մեծ քանակութեամբ մի տեղ դարսած սառուցները զիմանում են նաև տաք օրերին, մինչդեռ մի փոքրիկ կտորը ձեռաց հալչում է: Որովհետեւ մեծ քանակութեամբ սառուցներ միասին առած սուեղծում

են իրանց շուրջը մի սառցացին մթնոլորտ, որի մէջ սառցցը կարող է դիմանալ։ Մի կտոր սառցցը մթնոլորտ չի ստեղծում։

Որպէս զի ծառերը կարողանան ստեղծել պառկի կամ անտառի մթնոլորտ, պահանջւում է, որ նոքա որոշ քանակութիւնից պահաս չը լինին։ Մի քանի ծառ միասին դեռ անզօր են մթնոլորտ ստեղծելու, իսկ առանց այդ մթնոլորտի նոքա անզօր կը լինին դիմանալ, եթէ արհեստական միջոցների չը դիմեն, մինչդեռ անտառը ինքը իւր սեպհական ոյժովն է իրան պահում։

Ազգերի համար պահանջւում է նոյնը. այսոեղ պահանջւում է, որ մի ազգ թւով աւելի փոքր չը լինի, քան այն, որ հարկաւոր է ներքին կեանք ստեղծելու, պահպանելու և զարգացնելու համար։ Մի որոշ կուլտուրա ունենալու համար, անհրաժեշտ է, որ մի ազգ իւր ներքին կեանքն ունենայ։

Անդրկովկասում կան ազգութիւններ՝ կուլտուրական հակումներով բաւականի և կամ շատ բարձր։ Դոցանից է մեր երկրի գերմանական գաղթական ազգաքնակութիւնը։ Բայց այդ գերմանացիք անընդունակ են մեր երկրում մի գերմանական մթնոլորտ, գերմանական ներքին կեանք ստեղծելու։ Այդ գերմանացիք կարող են իրար մէջ ունենալ սերտ յարաբերութիւններ, բարեկամական, ազգակցական կապեր, զանազանւել միւս ազգերից իրանց կենցաղով։ Բայց նոքա անընդունակ են իրանց այդ առանձին կենցաղով ստանալ հասարակական նշանակութիւն, ստեղծել մի մթնոլորտ, որի մէջ նոքա կարողանացին ներքին կեանք ունենալ, լրադրութիւն և զրականութիւն ստեղծել, լիզու զարգացնել և այն։ Եւ ինչո՞ւ։ Որովհետեւ մի այլպիսի գեր կատարելու համար նոյցա թիւը մեր երկրում շատ է փոքր։ Գերմանացիք մեր երկրում շատ են քիչ, որպէս զի մի գերմանացի մեր երկրում իրան զգար գերմանական կուլտուրացի ազգեցութեան ներքոց, ազգւեր տեղական գերմանական հասարակութիւնից։

Կրիստոմ ենք՝ մի այլպիսի Փակտոր լինելու համար տեղական գերմանական տարրը շատ է փոքր, չը նայած որ նոքա, տեղացի այդ գերմանացիք, ուղղակի սերւում են աշխարհքումն մեծ դիրք ունեցող հզօր կուլտուրական պետութիւններ կազմող մի ցեղից, այն ցեղից, որը ստեղծել է Աւստրիան, Զւիցերիան, Գերմանիան։

Ամեն կուլտուրա սկսում է ներքին կեանքի ստեղծւելուց: Մի ժողովուրդ կարող է ինքն ունենալ կուլտուրական հակումներ, շփւել քաղաքակրթական տարրերի հետ, սրանց նմանւել ամեն կերպ,— բայց լինել բնաւորութիւնից զուրկ, ուրիշն և ազդեցութիւնից զուրկ: Խոկ ազգեցութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ներքին կեանքի արտափայլումը: Բոլոր այն ազգերը, որոնք կարողացել են գրսում անուն վաստակել, բարոյական կամ այլ ազգեցութիւն ձեռք բերել, նոքա այդ բանին հասել են իրանց ներքին կեանքը մի որոշ չափի կենդանութեան հասցնելուց յետ: Ֆրանսիան այն ժամանակ սկսեց մեծ բարոյական ազգեցութիւն ձեռք բերել Եւրոպայում, երբ նա յաջողութեամբ մտաւոր և բարոյական ինքնուրոյնութիւն ձեռք բերեց, նա ստեղծեց մի ֆրանսիական կանոնաւոր լեզու, գրականութիւն, գեղարւեստ, թատրոն և ձեռնամուխ եղաւ գիտութիւնների մշակման: Խոկ այդ բոլորը՝ ներքին զարգացման պրօցեսներ են, ներքին կեանքի եւումներ են: Այդ աստիճանի զօրեղ զարգացման համար մի փոքրիկ թւով ժողովրդի ոյժերը չէին կարող բաւել: Պէտք էր որ բոլոր մանր ժողովրդները միանային, պէտք էր որ առաջւայ իրար հակառակող՝ բայց և մի ցեղի պատկանող մանր իշխանութիւնները աւելի սերտ կերպով իրար հետ կապւեին, որպէս և եղաւ իրագործած քաղաքակրթական շարժումը համապատասխան եղաւ այդպիսով կազմած ազգի մեծութեանը, ազգի, որը իւր անդամների թւի չափով կարողացաւ մեծամեծ թէ դրամական և թէ մարդկացին զոհաբերութիւններ յանձն առնել:

Տիեզերական նշանակութիւն ունեցող գործերի համար՝ հարկաւոր է ծայրայեղ կենդանի ներքին կեանք ստեղծել: Աւելի համեստ կուլտուրական գործերի համար՝ հարկաւոր է համապատասխան համեստ՝ բայց և այնպէս իւր շրջանակի մէջ կենդանի ներքին կեանք ունենալ: Եւ իմ ասելս այն է, որ նոյն իսկ այդ համեստի համար պահանջւում է մի ազգի անդամների որոշ թիւ, որից պակաս՝ ինքնուրոյն կուլտուրա ստեղծելու չափ ներքին կեանք չի կարող գոյութիւն ունենալ:

Այդ թիւը ամեն տեղ, ամեն ժամանակ և ամեն ազգի համար միւնոյնը չի կարող լինել: Որոշել այդ թիւը գծւար է, թերեւս անդամ անհնարին է ամեն մի ազգի և հանգամանքի համար: Խոկ

միւս կողմից նման հանգամանքներում ապրող տարբեր ազգի ժողովուրդները, թէև իրար հաւասար լինին թւով, մէկը՝ շնորհիւ իւր ցեղական յատկութիւնների և պատմական անցեալի, աւելի ընդունակ է լինում իրան արտայայտելու և կուլտուրական գործի մէջ բեղմնաւորելու, քան մի ուրիշը հայց այդ արդէն մի այլ ինողիր է, որը գոնէ այս անգամ մենք չենք ուզում շօշափել: Առ այժմ կարեորդ սա է, որ մեր ժամանակի կուլտուրական պահանջների համատ մի ազգ թւով բաւականաչափ զօրեղ պէտք է լինի:

Ուուսիացի լայնածաւալ կայսերութեան մէջ կենում են բազմաթիւ ազգեր: Նոցա մէջ հայ ազգը թւով շուրջ մէկ միլիոն է: Անդրկովկասեան երկրում թուրքերի և վրացիների հետ հայկական տարրը գրեթէ հաւասար թւական ոյժ է ներկայացնում: Եւ եթէ Անդրկովկասում կան երեք նշանաւոր շրջաններ, դոքա են՝ թուրքականը, վիրականը և հայկականը: Մնացած ազգութիւնների թւական ոյժը չի պատռում առանձին շրջան կազմելու համար:

Արդ, մի միլիոնաւոր ժողովուրդ հազիւ հազ կարող է բաւել ներքին կեանք ստեղծելու, ոչ միայն կուլտուրա ընդունելու, այլ և մաքեր բեղմնաւորելու, ինքնուրոյն կերպով նոցա վերարտադրելու և տարածելու համար:

Տեսէք, թէ քաղաքակրթութեան մէջ գործիշ հանդիսանալու համար ինչպիսի գործիքներ ունենալու է պարտաւորացնում մեր դարի ոգին: Հարկաւոր է ունենալ դպրոցներ տարրական, միջին և բարձր. հարկաւոր է ունենալ դրականութիւն թէ զուտ դրական և թէ դիտական. հարկաւոր է ունենալ մամուլ, բազմակողմանի պահանջների համապատասխանող մամուլ. պէտք է ունենալ թատրոն:

Այս բոլորը ոչ միայն առհասարակ ունենալու, այլ և իսկապէս նոցա զարգացնելու և մի այնպիսի կատարելագործութեան հասցնելու համար, որ մենք ինքներս նոցանով ներքնապէս ապրել կարողանանք. պահանջւում է մի ժողովուրդ բազմակողմանի արհեստներով, մի խօսքով պահանջւում են զօրեղ միջոցներ: Դպրոցը ձրի չէ, դրականութիւնը՝ ձրի չէ, լրագիրը՝ ձրի չէ, թատրոնը՝ ձրի չէ: Եւ այն, ինչ մեր հայ ժողովուրդը այսօր տալիս է իւր դպրոցի, գրա-

կանութեան, մամուլի և թատրոնի համար, եթէ արհամարհելի չէ, բայց և այն չէ, ինչ պահանջւում է մի աւելի զօրեղ ներքին կուլտուրական կեանքի տեսակետից։ Մեր ունեցածի ցանցառութիւնը հասկանալու համար, բաւական է վերցնել մամուլի գրութիւնը։ Մենք ունինք եօթ հատ պարբերական հրատարակութիւններ, որոնց բոլորի հաւաքական տարեկան բիւջեար ցիսուն հազար րուբլու գումարի շուրջն է պատում։ Մինչդեռ մի փոքր ի շատէ կարգին և ապահով օտար թերթի տարեկան բիւջեարի հազիւ երրորդն է կազմում այդ գումարը։

Ինչի՞ցն է այդ ցանցառութիւնը։ Անշուշտ բաժանորդների քչութիւնից։ Եւ ինչի՞ցն է այդ քչութիւնը։ Պատճառները մի քանի են, բայց դոցա մէջ մէկը և կարեորներից մէկը՝ մեր ժողովրդի քչութիւնն է։ Այդ այնքան պարզ է, որ ես հրաժարւում եմ լնդարձակւել այդ նիւթի վերաց։ Դոյն իսկ այժմեան հանգամանքներում մեր ժողովուրդը կը ներկայացներ աւելի մեծ բաժանորդագրական ոյժ, եթէ մէկի տեղ նա լիներ երկու-երեք միլիոն։

Մարդկացին շանչը ինքն լսու ինքեան արտադրող, սպառող և զբող ոյժ է։ Որքան շատ արտադրում է, որքան շատ սպառում է, նոյնքան աւելի մեծ զրդող ոյժ է ներկայանում նա հասարակական տեսակետից։ որովհետև այդ անտեսական կեանքի պրօցեսը ազդում է նաև հասարակութեան մտաւոր և հոգեկան շարժումների վերաց։ Ոչ միայն պէտք է բարւոքել եղածների գրութիւնը, այլ և դրականապէս աւելացնել հասարակութիւն կազմող անդամների թիւը։

Մենք, որ մեծ կշիռ ենք տալիս ազգաբնակութեան աճելուն և բազմանալուն և հանդէս ենք գալիս նորա բարձր հասարակական նշանակութիւնը ցոյց տալու, ի նկատի ունինք այն, որ ազգաբնակութեան այդ ցանկալի աճումը զլխաւորապէս մեզնից է կախւած։

Նրկու միջոցներով ժողովուրդը կարող է աճել՝ ծնունդների շատութիւնով և մահացութեան պակասութիւնով։ Բոլոր այն ժողովրդական կարգ ու կանոնները և կամ անկարգութիւնները և անկանոնութիւնները, որոնց շնորհիւ ծնունդները սակաւանում են՝ վեսասկար են։ Եւ բոլոր այն պայմանները, որոնց շնորհիւ մահացութիւնը

աճում է՝ վեսսակար պայմաններ են: Պէտք է վերջացնել այն բռ-  
լորը, ինչ մահառիթ են մեր մատաղ սերունդների համար, գիւղա-  
կան թէ քաղաքացին ազգաբնակութեան նկատմամբ՝ այդ միեւնոյն է:

Իայց ո՞վ պէտք է աշխատի այդ բոլորի համար: Մի՞թէ կարելի  
է և խելացի է սպասել, որ ամեն ոք իւր անելիքը տնօրինէ այն-  
պէս, ինչպէս այդ պահանջում է բարձր հասարակական ինտերէսը:  
Կարելի՞ է արդեօք թողնել այդ բոլորը բազդի բերմունքին:

Այդ ոչ միայն կարելի չէ, այլ և պէտք չէ: Երբ. հասարակու-  
թեան գիտակցութեան մէջ մայցրած կը լինի ազգաբնակութեան ա-  
ճելու բարձր կարևորութեան գաղափարը, հասարակութիւնը ինքը  
պէտք է զիմէ ընդհանուր և զօրեղ միջոցների՝ չարիքների դէմն առ-  
նելու համար: Հասարակական և համայնական ողին այսուղ կարող  
է հրաշքներ դորձել: Պէտք է միայն համոզւել, թէ կան գործեր  
կառարելու և որ ամեն ինչ բնութեան ազատ խաղին չի մատնած  
և չը պէտք է մատնած մնայ:

Թւել մի առ մի բոլոր այն չարիքները, որոնք տիրապետում  
են մեր ժողովրդի մէջ և խանդարում մի կողմից ծնունդները, իսկ  
միւս կողմից՝ բազմացնում մահացութիւնը, թւել այդ բոլորը այս-  
տեղ մենք մտազիր չենք: Առ այժմ մենք բաւականանում ենք  
գնելով ինդիրը ասպարէզի վերայ:

Ազատել մահից այն բոլոր մատաղ երեխաններին, որոնք զոհ են  
գնում խոնաւ և վատառողջ բնակարանների թէ գիւղերում և թէ  
քաղաքներում, ազատել մահից այն բոլոր մատաղ երեխաններին, ո-  
րոնք ամեն տարի հարիւրներով ու հազարներով զոհ են գնում  
հէնց, զիցուք, ծաղկի հիւանդութեան համաճարակութիւնին, խելացի  
օրէնքներով և ամեն տեսակ պրօվագանդացով ազատել մանաւանդ  
գիւղական կանանց՝ որդեճննդեան անընդունակութիւնից, վերացնելով  
նոցա մանկահասակ ժամանակ ամուսնանալու մեզանում արդէն դա-  
րերով արմատացած ախտը, և այն և այն, — ահա՛ մի քանի չարիք-  
ներ, որոնց դէմ կռւելու համար կարելի է կազմակերպութիւններ  
ստեղծել հաւաքական ոյժերով: Բոլոր նոքա, որոնք ազգաբնակու-  
թեան աճելուն հասարակական մեծ նշանակութիւն են տալիս,  
պէտք է նաև մեծ նշանակութիւն տան և առաջնակարգ խնդիրներ  
համարեն այդ աճելուն նալաստող բոլոր պայմանները:

Եոլոր չարիքներից միմայն վերը յիշածները խլում են մեր ժողովրդից տարեկան մի քանի հաղարներ։ Միմայն ծաղկի հիւանդութիւնից տարեկան մենք կորցնում ենք մի թիւ, որը հաւասարէ մի մեծ զիւղի ազգաբնակութեան։ մի տամնեակ տարում, հէսց այդ հիւանդութիւնից, մենք կորցնում ենք մի քաղաք, հաւասար երևանի հայ ազգաբնակութեան մեծութեան։ Պատմութեան էջերում այլպիսի կորուստներ մենք սարսափով կը կարդացինք և մեծ ազգային աղէտներ կը համարէինք, որպէս մեծամեծ աղէտներ ենք համարում մեր պատմութեան մէջ յիշառակածները։

Եթէ միայն ծաղկը այդ ոյժերն է խլում մեզանից, ապա ինչ սարսափելի կոտորածներ են անում թէ մեր վերը յիշած և թէ զեռ մեզանից չը յիշւած միւս հանգամանքները, որոնց դէմ կուելը միանգամայն հնարաւոր է և որոնց դէմը կուելու անհրաժեշտութիւնը կը զգացւի մեր ինտելիգենտ զասակարդից, երբ վերջինս լիովին կը ըմբռնէ մեր մատնանիշ արած հանգամանքի լրջութիւնը։ Ամեն տարի, այդպէս ենք համոզւած, մենք մեր ձեռքից մի տամնեակ զիւղեր կամ մի մեծ քաղաք ենք ձեռքից բաց թողնում միմայն շնորհիւ այն հանգամանքների, որ մենք ցայժմ դեռ ևս բաւականաշափ չենք ըմբռնել ժողովրդի թւի հասարակական և պատմական ոյժը։

Մեզ կ'ասեն թերեւս, թէ ասածներս ճիշդ հետազօտութիւնների վերայ հիմուած չեն և որ արտայայտած երկիւղներս կամ դութիւն չ'ունին և կամ չափազանցացրած են։

Ճիշդը այս է, որ յայտնած երկիւղներս չեն հիմուած ճիշդ հետազօտութիւնների վերայ մեր ժողովրդի նկատմամբ։ բայց նոքահէնց այդ պատճառով անհիմն չեն։

Մի հատ օրինակ!.

Միայն ծաղկի հիւանդութիւնը, ասացինք վերը, մեզնից ամեն տարի խլում է մի մեծ զիւղի ազգաբնակութեան չափ հոգիներ, և որ մի քանի տարում միայն այդ ծաղկի հիւանդութիւնը մի նրեւան քաղաք է խլում մեզնից։

Մաղկի պատւաստուրը մեզանում պարտաւորիչ չէ։ պարտաւորիչ չը լինելով՝ պատւաստելը կամքի է թողած։ իսկ կամքի թողած լինելով՝ մեր ժողովրդի աշագին մեծամասնութիւնը չի օգտւում դիտութեան այդ զիւղից։ նոկ չի օգտւում այն պատճառով, որով-

հետեւ պատւաստման գործը մեզանում կազմակերպւած չէ։ Իսկ կազմակերպել ացդ գործը մենք կարող ենք. օրէնքը մեզ ոչ միայն թոյլէ առաջին ացդ, այլ և կառավարութիւնը ամեն կերպ կը խրախուսի մեզ ացդպիսի մարդասիրական գործի համար։

Այժմ դասեցէ՛ք ինքներդ, թէ ո՛ր աստիճանի արժէ դորա համար ոչ միայն մոտածել, այլ և ուզզակի զիմել գործնական միջոցների։ Մենք կը բերենք միայն թւեր, այս՝ միմիայն թւեր, հիմնւած առենամնրակրկիս հետազոտութիւնների վերաց։

Ծաղկի մահառիթ թոյնը անվտանգ դարձնելու համար՝ դիմում՝ են ծաղկի պատւաստումը և կրկնապատւաստում։

Կրկնապատւաստումը պարտաւորիչ է միմիայն Գերմանիայում, 1875 թւականից դէս։

Պատւաստումը, բայց ոչ կրկնապատւաստումը, պարտաւորիչ է Անգլիայում, Նորմանիայում, Դանիայում։

Պատւաստումը պարտաւորիչ չէ Ֆրանսիայում, Առուսիայում, Բելգիայում, Աւստրիայում, Խոսալիայում և այն։

Դէ այժմ տեսնենք հետեւանքները։ Վերցնենք Նորմանիան։ Այդերկրի համար կան ճիշդ թւեր՝ սկսած 1774 թւականից։ Այդ երկրում չը կար ծաղկի պատւաստում մինչ 1801 թւականը։ Հաշւում են, որ 1774 թւից մինչ 1801 թ. ամեն տարի մեռնում էին ծաղկից 166 հոգի ամեն մի 100 հազար հոգուց։

1801 թւականին մացրւեց կամաւոր պատւաստումը, որ և տեսեց մինչ 1815 թւականը։ Ով ուզեց և կարողացաւ օգտել դորանից, պատւաստեց իւր երեխաներին, ով չ'ուզեց՝ չ'օգտեց։ Բայց և այնպէս ծաղկից յառաջացած մահի զէպքերը պակասեցին շատ զգալի կերպով. ամեն 100 հազար բնակիչներից մեռան տարեկան ոչ թէ 166, այլ միայն 65 հոգի միջին հաշւով։ 1815 թ.-ից լոկ պատւաստումը դառաւ պարտաւորիչ։ Ծաղկամահ եղածների թիւը աւելի ևս նուազեց, այնպէս որ մինչ 1883 թւականը տարեկան միջին հաշւով ծաղկից մեռել են ացդ երկրում միայն 18 հոգի ամեն մի 100 հազար հոգուց։

Ու ոք չը պէտք է զլանաց, եթէ մենք, ացդպիսի փաստերի զիմաց, մտածենք, որ մեր ժողովուրդը, որը տասն անգամ հարիւր հազար է Անդրկովկասում, և որը պատւաստումը դեռ ևս շատ թոյլ

կերպով է գործադրում, տարեկան կորցնումը է տասն անգամ՝ 166, ուրեմն՝ 1660 հոգի, իսկ յամենայն դէպս, ոչ պակաս քան տասն անգամ՝ 65, ուրեմն՝ 650 հոգի:

Աւատրիացում, որտեղ թէեւ ոչ պատաստումն է պարտաւորիչ և ոչ կրկնապատւաստումը, բայց այնպէս ամեն յարմարութիւններ կան պատւաստելու համար և ուր ժողովուրդը երեւի ամենալայն կերպով օգտուում է այդ յարմարութիւններից, այնու ամենայնիւ 1875—1884 թւականներին, ուրեմն տասը տարւայ ընթացքում, միջին հաշւով ամեն մի 100 հազարից մեռան 62 հոգի, մինչդեռ Անդիայում, ուր պատւաստումը պարտաւորիչ էր, նոյն շրջանում և նոյն հաշւով մեռան միայն 7 հոգի, իսկ Պրուսիայում, ուր կրկնապատւաստումն էլ պարտաւորիչ էր, մեռան միայն 2 հոգի:

Եթէ Աւատրիացում, ուր պատւաստումը կամաւոր է, որպէս մեզանում, մի միլիօն բնակչից մեռան տարեկան 620 հոգի, իրաւունք ունինք արդեօք թէ ոչ ընդունելու, որ մեր մի միլիօն տասնապատիկ աւելի տղէս և աւելի անօդնական ժողովուրդը կորցնում է կրկնապատիկը և եռապատիկը, ուրեմն 1000 կամ 1800 հոգի:

Ցիւրիխի գաւառում (Կանտոն), Զւիցերիացում, ծաղկի էպիդեմիա կար թէ 1871—72 թւականներում և թէ 1884 թ., բայց առաջնում աւելի զարհուրելի, քան երկրորդում, քանի որ առաջնում հիւանդացածների թիւը կրկնապատիկ աւելի էր, քան երկրորդում: Արդ, չը նայած դորան, 1871—72-ին այդ կանածնում մոտ 1500 ծաղկով հիւանդացած երեխաններից մեռան միայն 15 հոգի, որովհետեւ այդ ժամանակ պատւաստումը պարտաւորիչ էր. մինչդեռ 1884 թ.-ին, երբ հիւանդների թիւը կիսով չափ պակաս էր, ծաղկից մեռան 129 հոգի, որոնցից 70-ը մինչ 10 տարեկան երեխաններ, որոնցից ոչ մէկը չէր պատւաստւած:

Երևակայեցէք, ուրեմն, եթէ բոլոր հիւանդները պատւաստւած չը լինէին, և այդ Ցիւրիխի կանտոնը ներկայացնէր ոչ թէ իւր մաքրութիւնով և առհասարակ իւր լուսաւորութիւնով աշխարհքիս ամենապայծառ կենդրուններից մէկը, այլ ներկայացնէր մի երկիր, նման մեր Զանգեազուրին, մեր Երևանին, մեր Գանձակին, մեր Փամբակին, մեր Թիֆլիսի Հաւլաբարին կամ Խարբուխին և էլ ինչ դիտեմ ինչ թաղերին ու գաւառներին, երևակայեցէք, ասում ենք, թէ քանի՛

պատիկ աւելի զոհեր կը տանէր նոյն այն 1884 թւականին ծագի հիւանդութիւնը Յիւրիսի կանոօնից իւր 300 հազար բնակիչներով:

Եւ մենք այժմ այլ ևս չենք զարմանում, երբ մի լրագրական հայ թղթակից, սարսափած իւր բնակատեղում բուն դրած ծաղիկ համաճարակումից, լուսահատ գրչով գրում է ամանուկներ է, որ զերեզման են տանում. ծաղկի հիւանդութիւնը մեր շրջակայ զիւղերում այլ ևս երեխաներ չը թողեցաւ:

Եւ ո՛վքեր են այդ մեռնողները. այդ նորա են, որ մի քանի տարուց յետոյ պէտք է զառնացին մեր երկրի հողեր մշակողները, տան տնտեսութիւն անողները, մեր երկրի գործարանների բանւորները, մեր արհեստաւորները, մեր զինւորները, մեր վաճառականները, մեր զպրոցների աշակերտները, մեր գիւղական և այլ ուսուցիչները, մեր ընտրողական անդամները, մեր լնթերցողները, այսինքն այն ամենքը, որոնք պէտք է ոյժ տացին մեր ներքին կեանքին, ինչ ձեւերով որ սա արտայացուում է մի կուլտուրական ազգի մէջ...

Եւ կեանքի ու կուլտուրայի այնքան մշակներ մենք կորցնում ենք ամեն տարի միմիան մի հատիկ շարիքից, որի ասպարէզից հեռացնելլ կոյց բնութեան գործ չէ, այլ մեր խելքի և մեր եռանդի գործ է:

Եւ եթէ մենք կանգ առանք մի օրինակի վերայ, այդ նորանից չէ, որ մեր բոլոր ասելիքը դորան է վերաբերում: Մենք ուզեցինք դորանով միայն ցոյց տալ, որ մեր աղաղակը իրաւացի է: Մենք սարսափով ենք նայում այն շարիքների վերայ, որոնք թոյլ չեն տալիս հասարակութեան կանոնաւոր և զօրեղ աճելուն և կամ որոնք թերևս դրականապէս նւազեցնում են մեր ազգաբնակութիւնը, առանց որ այդ շարունակ բայց հաստատ կերպով ազգող և ազգակործան բայց գաղտնի մնացող պրօցեսները գրաւեն մեր ուշադրութիւնը, ցնցեն մեր ներքինը՝ այդ հասարակական թշնամիների դէմ համայնական և հասարակական ոյժերով պատերազմելու:

Մենք ասում ենք՝ այն բոլոր հանդամանքները, որոնք մեր առանդական սովորութիւնների և կամ տգիտութեան պատճառով յառաջացնում են ծնունդների սակաւութիւնը և մեծացնում մահւան դէպեքերի թիւը, այդ հանդամանքները պէտք է մի առ մի յիշեն դրականութեան մէջ և առաջարկւեն նոցա դէմ առնելու

ամենագործնական միջոցներ։ Պէտք է հասարակական արթուն և հսկող կարծիք ստեղծել զեռ ևս իշխող սովորութիւնների դէմ՝ երեխայ աղջիկներ ամուսնացնելու, զեանափոր և գոմային տներում ապրելու, երեխաներին առանց ծաղկի պատւաստման և կրինապատւաստման թողնելու, ընտանիքից երկար տարիներ բացակայելու, բժշկական օգնութիւնից զուրկ մնալու, մանաւանդ գիւղական կանանց համար և այլն և այլն։

Մենք կրկնում ենք՝ այստեղ կայ հասարակութեան ասլագայ լննդիր, որի մանրամասն քննութիւնը կը համոզնէր մեզ այդ խնդրի ամենաառաջնակարգ նշանակութիւնը։ Բաւականանք միայն ակնարկածով։ Այդքանն էլ բաւական է այդ ճանապարհի վերայ մի քայլ առաջանալու համար։

ԱԿԵՏԻՔ ԱՐԱՄԽԱՆԵԱՆՑ

## ԱՅՆՔԱՆ ԴԱՌՆ ՑԱԻ ՈՒ ՎՃՏԵՐ.

Արծիւեանի

Այնքան դառըն ցաւ ու վշտեր  
Կուտակւած են իմ սրտում,  
Որ եթէ քեզ, ազնի՛ւ լնկեր,  
Ողբամ նոցա իմ երգում,  
Քո առաջեւ արտասուքի  
Դու կը տեսնես մի մեծ ծով,  
Որ յուզւում է վիշտ ու սուգի  
Սիրտը մաշող փոթորկով...

Բայց անվեհեր լողորդի պէս,  
Ալիքները ծաղրելով՝  
Այդ մեծ ծովում լողում եմ ես  
Խորին կերպով յուսալով,  
Որ անկասկած և՛ ես մի օր  
Յանկալի ափ կը հասնեմ,  
Ուր ազատւած իմ խեղճ եղբօր  
Տանջւած կրծքիս կը սեղմեմ...

Մօսկով. 12 ապրիլի, 1890 թ.

## ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕՐԸ

Ս. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ

(Հարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

### ԺԱ.

Անգեղակոթցի երիտասարդ ու տղամարդ, որը նախանձից դըրդած, որը ընդհանուր հոսանքին մատնած և վերջապէս որը պարտքերից ազատուելու համար, բագու գնալով մեծ նեղութեան մէջ էին թողել իրանց տները։ Համարեա ամեն տուն ամեն տեսակ զրկանք, նեղութիւն վիզն էր առել և տոկունութեամբ տանում էր ասելով։ Մի կերպ կառավարենք, Աստուած ողորմած է, խօ միշտ այսպէս չը պիտի լինինք. կ'անցնի երկու զատիկ՝ մեր տղան մեծ կարողութեամբ կը դայ...։ Այսպէս հայ գիւղացին զրկանքով բեռնաւորւած՝ ներկան ուրախութեամբ զոհում էր լիութեամբ ու բարիքով բեռնաւորւած ապադային։

Ստեփիանի տունը առ այժմ ոչ մի բանի պակասութիւն չ'ունէր։ Թագուհին թէւ, ինչպէս կին, երևակայութեամբ էր ապրում և ամենայն օր իւր կանացի յեղեղուկ մտածողութիւնը աւելի պարզ, որոշ դոյներով էր ստեղծագործում իւր դարպաները, բայց այնու ամենայնիւ սրտով սիրած ամուսնուն մոքից չէր հեռացնում։ Նա շատ անգամ վրձինը ձեռքին, երբ ներկերի խառնուրդի մէջ էր թաթախում հոյակապ դարպաները ներկելու, յանկարծ որ միտք չէր դալիս իւր սիրելի ամուսինը՝ ձեռը թուլանում, վրձինը վեր էր ընկ-

1) Տե՛ս «Մուրճ»-ի № 3 և 4.:

նում և բազմայարկ գիւղական ճաշակով զարդարւած պալատը անեթեոյթանում, ձեռները պարզում էր դէպի Ստեփանը, որ կենդանի աշքի առջևն էր երեսում և կարծես մժութեան մէջ խարխափում էր անգիտակցաբար, բայց խաբւած տեսնելով սժափուում և ընկլմում էր տիրութեան մէջ. գլուխը խոնարհած բարակ, քաղցր ձայնով, բայցաթու տիսուր եղանակով քինթկալի տակից սրտի զգացմունքն էր գեղգեղում և արցունքները երկար թերթերունքների ծայրից այտերի վրայով գլորւելով քինթկալն էր թանում: Երգն ու արցունքը, ինչպէս գեղթափ, ազդում էին Թագուհու սրտին. թոռ-արև սիրու երկար տիսուր չէր մնում. նա մտածում էր. «Աս, իմ սիրելի մարդը ինձ որքա՞ն է սիրում, որ թողել է տունը, հեռու հեռու երկիրներ է գնացել փող աշխատելու, որպէս զի մեր կեանքը լաւացնի, զիւղի չը լինինք, լաւ ապրենք...»: Եւ սրանից յետոյ ոսկեձեզուն դարպասը դարձեալ պատկերանում էր աշքերին և վրձինը ձեռին ներկում էր մեծ աշխուժով և ճարտար հմտութեամբ:

Ստեփանի բացակայութեամբ եթէ մի բան փոփոխութեան չէր ենթարկւել՝ այդ երեխաներն էին. Նրանց համար հայրը եղած չ'եղած միւնոյն էր, քանի որ իրանց հօր գրկում չ'էին նատել, բազուկ ներին թառ եղել և համբոցներին սակաւ էին արժանացելի Նրանց մայրն էր, որի հետ սերտ սիրով կապւած էին, իսկ հօր հետ այնպէս էին ինչպէս մի օտարականի:

Բազուն դեռ ևս չը տեսնողները, նորա ծարաւով տուրուող ները գնացին և դեռ շարունակ շաբաթ չէր անցնում, որ Բագու տանող ճանապարհի վերայ սեին չը տան պանդուխտ գնացողների խումբը կռունկների նման, որոնք չւում են ուրախութեամբ դէպի տապաք երկիրներ. իսկ տեսնողները գիւղում երկար չը մնացին, չը կարողացան գիւղական կեանքը տանել, պանդուխտի պարկերը շալակները առնելով՝ շտապեցին դէպի Բագու իրանց համեսների կարօտով վասուած:

Սաքանը մնաց գիւղում: Նա Բագուից բերած փերեղակի ապրանքը ըուըխած ման էր ածում տնից տուն և կանայք ու աղջիկներ, որոնք ցորենը փող չ'էին համարում, առատ առատ տալիս էին մի ասղի, մի գնդասղի, մի սանրի, մի կանթած կեղծ ոսկու և հազար տեսակ զիղերիցի բաների, որ կանանց աշքը շատ է սիրում:

Սաքանը կանանց խարելու, շոյելու, շողոքորթելու և իրան բարի ցոյց տալու մէջ ունէր մեծ ճարպիկութիւն. նա լաւ զիտէր ում հետ որդիական հնազանդութեամբ պիտի խօսէր՝ իւր շահը ձեռքից չը տալով, ում հետ ընկերաբար, ում հետ իշխանաբար և ում հետ սորկաբար:

Սաքանը, ինչպէս խօսք էր տւել, Ստեփանի տանը կատարեալ տանտէր գարձաւ. շաբաթ չէր անցնում, որ մի քանի անգամ չը գնար Թագուհու մօտ և պակասութիւնները չը հարցնէր: Թագուհին թէև ուրախացաւ երբ իմացաւ, որ Ստեփանից յետոյ անսոէր անսոիրական չի ֆնալու, բայց այժմ Սաքանի ներկայութիւնից քաշւում էր. Սաքանը երբ զալիս էր, ինքը դիտմամբ մի բան էր գտնում, ներս ու գուրս անում կամ թէ չէ աղջիկներին մօտից չէր հեռացնում. նստած տեղը, կարծես, ցաքի վշերի վերաց էր լինում նստած, բոսդէներն էր համարում թէ երբ պիտի նա դուրս գայ: Սաքանը թէև կնքահայր էր, բայց այնու ամենայնիւ Թագուհին քաշւում էր և աչքը միշտ զրանն էր պահում թէ այս է որտեղ որի է մէկը դանովը ներս պիտի մտնի. մտածում էր. «Աստուած չ'անի եկող լինի, ի՞նչ կ'ասեն: Նա սիի չէր կասկածում Սաքանի ազնւութեան և բարութեան վերայ, բայց որ չը պսակւած աղամարդ է, իսկ ինքն էլ երիտասարդ կին է, դա տեղիք էր տալիս հասարակաց աչքով նայել ինդրին:»

Սաքանը, ինչպէս ասացինք, Ստեփանի գնալուց յետոյ շատ անգամ էր Թագուհուն տեսութեան գնացել, բայց առանց իւր մանրմունրի. մի օր մտքումը դրեց, որ ապրանքը մի տանի Թագուհուն ցոյց տայ. այդպէս էլ արաւ:

— Սանամէ՛ր, տուն մտնելուն պէս բերանը բացաւ Սաքանը, ախր չես ասում սովորաքեար ես դարձել, Սէրգի՛, ինչո՞ւ մի օրից մի օր Բագուից իրիդ առած ապրանքդ չես բերում մի մենք էլ տեսնենք. ա՛խ, սանամէ՛ր, լավի խեղճ ես, իմ օրումն կերած-կորած. ուրիշները՝ ծանօթ, անծանօթները տանել են տալիս, տեսնում են, քրքրում են, քեզ ի՞նչ է եկել, որ օխտը բարեկամից էլ աւել ենք: Դէ էլ մի՛ քաշւի. է՛հ, ինչ ես վեր կացել, նստի՛, նստի՛ ա՛. նորահարա չես, որ չես խօսում ինձ հետ, հերիք է թողի՛ր այդ սովորութիւնը, ես օտար չեմ հո՞ւ:

Սաքանը այսպէս խօսելով իւր ունեցած չ'ունեցածը հանեց,

աչքների առաջը դրաւ։ Թագուհին և աղջկերքը աչքները չորս արած մի առարկայից միւսն էին դարձնում, ուզում էին միանգամից ամեն ինչ տեսած լինել։ Սաքանը, ճիշդէ, գովում էր իւր ապրանքը, բայց աչքները չէր հեռացնում Թագուհու աչքերից, աչքերով ուզում էր թէ ուտի։

— Դէ, սանամէ՛ր, էլ մի՛ քաշւիր, ինչ սիրող ուզում է քեզ համար, աղջկերանցդ համար, սրան սրան՝ այս փափլիկի համար վերցո՛ւր, աչքս չը կաչի, բոլորն էլ քեզ են եկել, ի՞նչ սիրուն են, հէնց են հրեշտակի ճառեր լինին։ Փողի համար սկի մի՛ մտածիր, վա՛յ թէ մտքովդ վողդբան անցկացնես, իմացած կացիր որ էլ ոչ ես ոչ դու, ձեր դոներով էլ չեմ անցնի, հասկացա՞ր. և մի մի պղնձի խաչ հանեց, աղջիներին տւաւ աւելացնելով. խելքս գնացել է սրանց վերայ, ի՞նչպէս գեղեցիկ են, ճշմարիտ, սանամէ՛ր, բոլորն էլ քեզ են եկել։

Թագուհին հիացաւ Սաքանի պարզասրտութեան վերայ։ «Ինչ լաւ մարդ է եղել մեր կնքահայքը, մտածում էր նա, բայց ինչպէս ասեմ՝ այս տուր, այն տուր, շատ բան է հարկաւոր»։

— Դէ էլ ի՞նչ ես մտածում, ինչ որ հարկաւոր է ասա՛։

— Դէ, կնքահէ՛ր, մի հայելի, մի սանր, մի քանի հատ ասեղ, գնդասեղ տո՛ւր, զար-զօռով, ամաշելով ասաց Թագուհին։

— Հէնց ա՛յդ, ինչ ես այդպէս քիչ վերցնում. տեսնում եմ ամացում ես, շատ բանի հարկաւորութիւն կ'ունենաս, ասելով ուզածները և ուրիշ բաներ վերցրեց և Թագուհուն տւեց։

— Դէ, կնքահէ՛ր, չը նեղանաս, դրանց գները ասա՛, ցորենը շափեմ տամ։

— Դէ ասս ուզում ես, որ ձեր դոները էլ չը կրխեմ էլի, ինչպէս երեւում է դու զեռ ինձ լաւ չես ճանաշում. այս անգամ, սասամէ՛ր, քեզ բախչում եմ, բայց որ մէկ էլ բերանիցդ հանել ես՝ իմացած կացիր ձեր դոներով էլ չեմ անցնիլ։

— Դու ես իմանում, բայց հաշիւը պահի՛ր, որ ինքը (Ստեփանը) բագուից գալուց միանգամից բոլորը տայ։

— Ելի. հաշիւս ո՛րն է. ի՞նչ ես ասում չեմ իմանում. կնիկը ի՞նչ է, հաշիւների մէջ մտնելը ի՞նչ. իմ ու Ստեփանի մէջ ի՞նչ հաշիւներ պիտի լինի։ Ինչպէս Ստեփանը՝ ինչ որ առնում, ծախում էր ոչ մի ձայն

ծպտում չէիր հանում, այնպէս էլ այժմ չը պիտի հանես, ասելով  
դուրս գնաց:

«Տան և հինգ կոպէկ արժէ բոլորը, մոտածում էր Սաքանը  
ճանապարհին, այդ ոչինչ միայն կարողանամ ձեռք դցել. բայց ի՞նչ կառըն  
է... Նա ինձ սիրում է անպատճառ և ո'վ չի սիրի ինձ, իրանց  
մարդկանց պէս վար անող ու տաւար պահող գիւղացի չեմ հո՞ւ,  
սովորաքեա՞ր եմ, սովորաքեա՞ր: Բայց ի՞նչպէս ես դրան խելքից տա-  
նեմ. ինչ եմ ասում, դեռ նոր պիտի խելքից տանեմ: մի քիչ առաջ  
աչքը աչքս էր դցել նայում, փա՛հ, փա՛հ, ի՞նչ սիրուն աչքեր ունի,  
չէլքան մարալի աչքեր լինի ասես... Ստեփանը, զըմբօ Ստեփանը  
գնաց Բագու, թող գնայ մի քիչ էլ նա մաշւի տանջւի. տանը ոչ  
ոք չը կայ, մենակ ինքն է ու ինքը, մօտ բարեկամ էլ ոչ ոք չը կայ,  
որ քթի մազութիւն անի. բանս բան է: — Այսպէս կիսատպուաց խօ-  
սելով գոտակը ծուռը զրած մոտաւ ուրիշ բակ:

Իսկ Թագուհին Սաքանի թողած տպաւրութեան տակից գուրս  
չեկաւ. Սաքանը մի բարի հրեշտակ երևեցաւ նորա աչքերին, որ  
զիտէ օգնել, զիտէ վարել, քիթը ցցած չը նայել իրանց՝ գիւ-  
ղացիների վերաց: Նա այնքան էր յափշտակել Սաքանի քաղցր լե-  
զուով և արած բարութիւններով, որ ընկեր-հարեւաններին էլ ասաց՝  
թէ ինչպէս Սաքանը գնում գալիս է, պակասութիւնները հարցնում  
և ինչ որ հարկաւոր է լինում տալիս է:

### ԺԲ.

Չմեռւայ օր էր. դորշ ամպերով ծածկւած երկնակամարը ասես  
կապարի ծանրութեամբ ճնշում էր քաղաքը: Հիւսիսային չոր  
սաստկաշունչ քամին՝ ահեղագով փշելով՝ ձիւնի հատիկները փետուրի  
պէս ոլոր-մոլոր խաղացնում էր և ապա պատերին, հեռազրական  
սիւներին ու լապտերներին խփում, կպցնում:

Մշակի օր չէր: Նրանք՝ թուրք, պարսիկ՝ թուխ ու կեղսոս  
զէմքով, խուզած կոշտ ընչացքով և բաց կրծքով հացթուխների  
և խաշեփողների խանութների պատի տակ լքչան լրիկի վերայ պալ-  
զած՝ զրընդ-զրընդ դողդողում էին: Գործ չունէին, անդորթութիւ-  
նից մրսում էին. բեռան կամ արևի բացւելուն էին սպասում, բայց  
ոչ այս կար և ոչ այն:

Թուրք չայէին, որ հոտը վեր առած շան նման դոցա հազար մի չարչարանքով ու տանջանքով հաւաքած սև կոպէկների յետևիցն էր ման գալիս ամենայն օր, ճարեց որսը: Ճարպիկ վարպետ չայչու յօնքերը յետ գնացին, ուրախ ուրախ ձեռքի կալայակած կողոր ինքնաեռը ցած զրաւ և գոտկի վերայ կապած արկղից փոքրիկ բաժակը հանեց կապոյտ ծաղկաւոր, ճաքճաքոտած բաժակակալի հետ և առանց մի որ և է տեղից պատւէր ստանալու, «Փա՛հ Փա՛հ» անելով; մի բաժակ թէյ պատրաստեց: «Ի՞նչ թէյ է, վերպի սորթ, Փօփօվ է», գովում էր ու խմում ընչացքը ծծելով: Մշակների ախորժակը զրգուեց. սլընկի տաք ջուր էր, որ ածում ու համեցէք էր անում պազած մշակներին: Մշակները թէյ խմելիս մեծ ախորժակով էին նայում տաք տաք լաւաշներին, որ հացթուխները թոնրից հանել և շորի պէս թառ էին տւել խանութների առջևից, բայց միւնոյն ժամանակ մտածում էին՝ «տաք հացը մարդու վոր չի կշտացնիլ, շատ կ'ուտուի, թող մի քիչ էլ հովանաց»:

Թուրք փինաչիները իրանց տեղը լաւ ճարել էին. երեք, չորս փինաչի՝ հացթուխների ու խաշեփողների խանութների մօտը նըստոտած՝ այս ու այնտեղից ծակ տրեխ ու լապչին էր, որ ստանում էին:

Թուրք սափիրիչն էլ մշակների տեղը գիտէր. նա՝ ածելին սրելով գոտկից կախ պապղուն կաշւի վերայ՝ մօտեցաւ զոցա: Վարպետ սափիրիչի ցաքհատի աջ ու ձախ վրայ բերելուց մերկանում էր ցաքապատ, խորդ ու բորդ սարահարթը. պրծնում էր մէկի գլուխը, դեղին հայելին իսկոյն տալիս էր նրան իւր պատկերով զմայլելու և սև փողը պատրաստելու, մինչեւ որ մի ուրիշի գլուխը կամ երեսը կը սափիրի կռան տակը զցած:

Խաշեփողների աչքը ջուր կտրւեց. նրանք հանել էին պղնձից ոչխարի եփած ոս ու զլուխը և ափսէի վերայ ճաշակով կուտակել: Գոլորշին բարձրանում և հոտը մշակների քթներին էր զիազում. բոլորի բերնի ջուրն էր գնում, բայց չին ուզում աւելորդ փող ծախսել, քանի որ անգործ նստած էին. նոքա լաւ գիտէին, թէ երբ պէտք է գնել ացդ իրանց համեղ, կիրակնօրեայ կերակուրը: Խաշեփողն էլ չայչու պէս արաւ. ոչխարի զլուխը մի կտոր մղթի պոկեց, ձեռքերը լսպատելով, չլմիչլմիացնելով կերաւ նոցա գիմաց:

Մշակները, ճիշդ է, շաղիքները կուլ տւին, բայց դարձեալ չը մօ-  
տեցան:

Դոցանից մի քիչ վեր առանձին նասուսած էին իրանց համետ-  
ների վերայ տասը հոգի հայ մշակներ: Դոցանից մի երեք, չորսն  
էին, որ կարելի էր ասել թէ հայ էին զէմքով, իսկ մնացածները  
եթէ խառը լինէին նստոտած թալիշների ու թրքերի հետ՝ դժւար  
թէ կարելի լինէր զանազանել նոցա ազգութիւնները: Դոքա էլ  
գործ չ'ունէին, քամու ձեռքից պատի տակն էին կուչ եկել, ատամ  
ատամի խփում, սըրթսըրթում: Զայշին հայ մշակներին աչքաթող  
չ'արաւ: Խաշը նոքա էլ էին տեսնում և նոցա բերանների ջուրն էլ  
էր գնում, մանաւանդ նորեկների, բայց մի հզօր տնտես ձեռք ար-  
գելում էր դոցա այդ ցրտին կուշո ուտել՝ ազդարարելով. «Ձեռքդ  
տա՛ր գրպանդ, տե՛ս նոր սե փող եկաւ՝ տասանորդը փորիդ տո՛ւր,  
եթէ ոչ, մոռացի՛ր քաղցդ և ձրի օդ կուլ տուր»:

Հայ մշակների մէջն էր Ստեփանը: Երկու ամիս էր անցել այն  
օրից, երբ նա համետը անվճռաբար կռնակն առաւ, սկզբում—  
առաջի շաբաթում վարանման մէջ էր ընկնում, մէկ ուզում էր  
տուն գնալ, մէկ հաստատապէս ասում էր՝ «չեմ գնայ ինչ էլ որ  
լինի», իսկ մի շաբթից յետոյ՝ հաշտելով իւր բազդի հետ՝ լայն  
մէջքը կուացրաւ, անձկուն վիզը ծուեց, իւր ընկեր մահակը թողեց  
փոշոտելու, պարան առաւ ձեռքը: Այդ օրւանից նորա հապարտ ու  
անկեղծ աչքերը ոչինչ չէին ուզում տեսնել, բայց միան սե կոպէկ-  
ները: Թակարդի մէջ ընկաւ. փողը քաղցրացրաւ նորա ստոր պաշ-  
տօնը, մոքից չը տալով ապագայ զաւ ապրելը և կնոջ խստացած-  
ները: Նա ստանում էր օրեկան 30—50 կոպէկ. ցամաք հացով էր  
ապրում և դորան տւած փողն էլ կորած էր համարում, որովհետեւ  
թանկ ու կրակ էր նորա համար հացը և բացի այդ իրանց հացի համն  
ու հոտը չ'ունէր:

Երկու ամիսը ընտանիքում մէծացած ամուսնացած մարդու  
համար մէծ ժամանակամիջոց է: Սկզբում Ստեփանը թէև շատ  
քիչ էր յիշում ամուսնուն, բայց յետոյ ուշք ու միտքը գիւղումն  
էր, կարծես մի բան կորցրած, ցրւած ու ապուշ էր երևում: Յիշե-  
լով իրանց երջանիկ ամուսնական կեանքը՝ ուզում էր թեեր առնի,  
թռչի դէպի գիւղը, մի բոպէ տեսնի իւր սիրելի կողակցին և յետոյ

կրկին վերադառնայ, իւր սե կոպէկները ժողովի: Տանջւում էր, աղքատիկ ապրուսոը մի կողմից, չարքաշ կեանքը միւս և անցեալ երջանիկ կենցաղավարութեան իրականանալու փափագը մի երրորդ կողմից՝ նրան հալ ու մաշ անել էին սկսել: Փոխւել էր. լիքը թշերին, սպիտակ փայլուն ճակատին, և վառվուուն աչքերին չարքաշ կեանքի և մելամաղձութեան վրձինը թեթև կերպով անց էր կացել:

—Այսօր, տեսնում է՞ք, զործ չը կայ, լութիւնը խանգարեց նղիան:

—Դեռ ոչինչ չեմ վերցրել, ժամի տասներկուոր շուտով կը խփենու:

—Մենք էլ ոչինչ չենք վերցրել, ձայն տւին այս և այն կողմից:

—Այսօր, ինչպէս երեսում է, ոչինչ չը պիտի աշխատենք, աւելացրաւ Ստեփանը:

—Աստուած է իմանում, տեսնենք, վրայ բերաւ կողքի նստածը:

Այս խօսակցութեան ժամանակն էր, որ դրանց առաջով անցկացաւ մեր ծանօթ պարոն Զախարը: Նա ամբողջ մարմնով շուռեկաւ, չը կարողանալով հաստ վիզը ծռել և Ստեփանին ձեռքով արաւ: Ստեփանը ծլունկ եղաւ տեղից, հետն էլ մօտի նստածները:

—Հը, ի՞նչ է, ի՞նչ նորութիւն, մարդ չէք կուլ տալու խօ, ես սրան կանչեցի, ցոյց տալով Ստեփանին, աեղներդ շնթուկեցէք, նախատեց պ. Զախարը:

—Աղա՛յ, բա իմ հաշիւը չէ՞ք վերջացնում, դարձաւ վախվախելով Աղաջանը:

—Ի՞նչ հաշիւ է: Հաշիւս ո՞րն է, ասես ինձ համար բանկի դրէքտօր է, հաշիւ է պահանջում:

—Այն օրը որ ձեզ համար 15 հակ ապրանք կրեցի, նորա փողը մնաց:

—Ի՞նչ է ասում, դիժ ես, դլսիդ ձի է քացի տւել, ինչ է, գնա՛, գնա՛, ինչպէս երեսում է գլխովդ քամի է անցել:

—Աղա՛յ, ախր...

—Դէ կորի՛, էշ դիւղացի՛, ինչ ես դլուխս տանում. այնքան եղանք, որ քո տասնեւհինգ կոպէկը չը կարողացանք տա՞լ:

Աղաջանը ճարահատեալ լեզուն կծած յետ գարձաւ: Պ. Զախարը լիշեց, որ պարտք է մեացել, բայց այն տեսակ ձեւ տւաւ, որ Աղաջանը ինքը անդամ քիչ մեաց կասկածի:

— Հա, անունդ ի՞նչ է, հարցրաւ Ստեփանին:

— Քեզ ծառայ Ստեփան:

— Լաւ, Ստեփան, ես քեզ տեսնում եմ, որ քաջ և սրոտա կը լինես և բացի դրանից հաւատարիմ, դորա համար ուզում եմ քեզ մի գիշերապահութեան պաշտօն տալ:

— Ծառադ եմ ի՞նչ խօսք, ինչպէս հրամայում էք, պատասխանեց Ստեփանը բոլորովին անկեղծ կերպով:

— Հա, դէ որ այդպէս է խօսենք ամսով. ամիսը ի՞նչ կ'առնես:

— Աղա՛յ, դէ ես ինչ իմանամ, դուք ասացէ՛ք:

Ստեփանի մտքով այդ բոպէին ի՞նչեր չեր անցնում. Լաւ պատահեց. բաղդս բացւել է. էլ մշակ չեմ լինի. լաւ մարդ է երեւում, ինձ հաւանեց. լաւ փող կը տայի:

— Դէ լաւ, որ ինձ ես թողնում, ես այնպէս ոռճիկ կը տամ, որ խղճով լինի: Ես քեզ կը տամ եօթը մանէթ:

«Եօթը մանէթ, մտածում էր Ստեփանը, օրը 25 կոպէկ էլ չի գալիս, ցերեկները երկապատիկն եմ վերցնում և գիշերները քնում, գիշերները անքուն պիտի մնամ 20 - 23 կոպէկի համար. չէ, իմ ուզածը չ'եղաւ:

— Հը, կը մնա՞ս, լաւ փող է, ձեռքիցդ կ'ընկնի հա՛:

— Եատ քիչ է, աղա՛յ:

— Տուն էլ եմ տալիս:

— Աղա՛յ, ճիշդն ասած, ձեռք չի տալ. մշակութեամբ աւելի ենք աշխատում:

— Օրհնւած, էլի մշակութիւնդ արա՛, ձեռքդ բռնողը ո՞վ է. քեզ համար այդ եօթ մանէթը համարեա գտած է. հը, էլի չը հասկացա՞ր. դէ որ այդպէս է մի մանէթ էլ եմ աւելացնում. դէ էլ չը խօսես, ուրիշին չէի տալ:

«Ճիշդ է ասում, մտածում էր Ստեփանը, այս ութ մանէթը համարեա գտած է. գիշերը գիշերապահութիւն կ'անեմ, իսկ ցերեկը մշակութիւնն»

— Լաւ, ձեր ասածը լինի. կը դամ:

— Այժմ ասեմ քո պարտականութիւնը. գիշերը ժամի եօթից մինչև ժամի վեցը առաւաօտեան պիտի հսկես ա՛յ այս փողոցը, երբէք չը պիտի քնես: Լաւ, սա հեշտ բան է, խօսք չը կայ. յետոյ ցերեկները

պիտի մեր բակը և փողոցը միշտ մնաքուր պահես. Հաւաքած աղբը շալակով կրեաւ Այսրանք են, տեսնում ես՝ ոչինչ չը կայ. Հա, կարող է պատահել՝ շառ, ինչը մի բան պատահեցաւ՝ մի տեղ գնալու, մի արկղ շալակելու խանութը տանելու, սրանք էլ կ'անես ի հարկէ. ի զուր է մինչև անգամ այս տեսակ ծրախ-ալրոի բաները չիշեցնել: Այս ցոյց տալով ներքնայարկում խոր ընկած մի դուռ, երբ խօսելով մեծ դոնով մտան բակը, այդ էլ քո սենեակը կը լինի, գնա՛ շորերդ բեր և խանի պէս կ'ապրես:

Ստեփանը համաձայնւեց և եղաւ գիշերապահ. դարձեալ իւր ընկեր սիրելի մահակը ուրախ ուրախ ձեռն առաւ:

## ԺՊ.

Պարզնկայ գիշեր էր: Զիւնը աղօտ սպիտակին էր տալիս փողոցների վերայ: Լուռութիւն էր տիրած, միայն երբեմն կառքերի խուլ դղրդոցն էր լսւում հետու տեղերից: Մժութեան մէջ սեին էր տալիս մի մարդ, որ ունէր մի ձեռին հաստագլուխ մահակ, իսկ միւսում՝ չիչիկան: Պարթև էր նորա հասակը. ցրտին դէմ էր տւել իւր լայն կուրծքը և կարծես սառը քամին կալչելիս յետ յետ էր գնում տաքացած: Նա սլտուում էր փողոցի երկարութիւնը և երբեմն ձեռքի չիչիկանը չիչիկացնում: Անցաւ բաւականին ժամանակ, կարծես ձանձրացած սլտուելուց կունակը տւաւ պատին և արձանացտծ սկսեց նայել երկնքին: Լուսինը երեւեցաւ պարզ երկնակամարի վերայ և այդ աղօտ լոյսի տակ Ստեփանն ինքն էր գիշերապահի պաշտօնով:

Նայում էր լուսնին և ինչե՛ր չէր անցնում մտքովը. իւր երիտասարդութիւնից՝ լուսնի հետ զուգորդած՝ ինչե՛ր չիշում: Անքթիթ լուսնին նայելով, կարծես, նրանից ուզում էր տեղեկութիւն հարցնել իւր հեռաւոր տան մասին: Լուսինը վեր վեր էր բարձրանում լուս ու մունջ, իսկ Ստեփանը աչքերով հետևում էր տիտուր ու տրտում: «Ես լինեի լուսնի տեղ այդ բարձրութիւնից անպատճառ կը տեսնէի մեր տունը... այժմ անուշ քնով քնած կը լինին...» և ոչինչ չը կարողացաւ ասել, տիտուր աչքերը գետնին զցեց և անգիտակցաբար ձեռքի չիչիկանը շարժեց:

Հարեւան փողոցից մի ուրիշ չևսկոց ևս լուեցաւ և չ'անցաւ  
մի քանի վայրկեան փողոցի զլսին երեւեցաւ մեր ծանօթ Աղաջանը:  
Դոքա մօտեցան իրար, որ գոնէ խօսակցութեամբ հեռացնեն  
քունը և մօտանան ցուրտը:

—Այս գիշեր շատ ցուրտ է, Ստեփան, խօսք բաց արաւ Աղաջանը:

—Հա, որովհետեւ պարզնկայ է:

—Ինչպէս երեւում է չես մրտում, որ այդպէս պատն ի վեր կանդ-  
նել էիր:

—Չէ, այնքան էլ քո ասած չեմ մրտում:

—Ստեփան, լու չենք անում, մի մաղալից բանից ունենա-  
ցինք, լու կը լինէր:

—Ե՞հ, սա ինչ ցուրտ է որ:

Սրանց խօսակցութիւնը դադարեց՝ երբ մօտի գինեանից դուրս  
եկան երկու մարդ և մի կինարմատ Երեքն էլ կոնծած էին. կինը  
մէջ տեղները առած, անվայել շարժմունքներով և կեղտոտ խօսքե-  
րով, անցան փողոցի երկարութիւնը:

—Ստեփան, տեսնում ես, ինչպէս քէֆ են անում:

—Ինչպէս երեւում է զրանցից մէկի կինն է:

—Չէ, ի՞նչ կին, այս րոպէին էլի յետ կը դառնայ գինետուն:

—Բա ի՞նչպէս է այս մթին տնից դուրս եկել անծանօթ մարդ-  
կանց հետ:

—Վա դեռ չը գիտե՞ս, նա մարդ չ'ունի, նորա բան ու գործը  
դա է: Եւ սկսեց՝ ծիծաղելով Ստեփանի տղիտութեան վերայ՝ մի առ-  
մի, պարզորոշ նկարագրել այդ տեսակ կանանց դերը:

Այս խօսակցութեան ժամանակն էր, որ կինը վերադարձաւ:  
Աղաջանը յետեկց կանչեց.

—Աղջի, ո՞ւր ես գնում: Վերջի նախադասութիւնը աղաւաղած  
ոռուերէն ասաց, իսկ «աղջի» բառը հայերէն:

—Ալո՛, քեզ ի՞նչ, պատասխանեց՝ կինը:

—Ինչ ես խօսում այդ լրբի հետ, թող մի կորչի է՛, իսկոյն վրայ  
բերաւ Ստեփանը:

—Դու էլ ինձ համար վարդապետ ես դարձել:

—Ահօթ է ահօթ, մեզ չի ասզի այդպիսիների հետ խօսել:

—Ալո՛, մրտում ես, ասաց կինը և մտաւ գինետունը:

—Ստեփան, արի՛ գնանք մարդը մի բաժակ օղի խմենք:

—Զէ, չեմ ուզում:

—Հէնց ես իմանում նորա համար եմ ասում, որ նա այնտեղ է՛:

—Հէնց այնտեղ էլ չը լինի էլի չեմ ուզում:

—Ե՛հ, Ստեփան, լաւ տղայ չես, ինչ որ ասում եմ հակառակում ես, դու լաւ մուղղուսացու ես:

Ստեփանը մնացէլ էր զարմացած՝ թէ ինչպէս մի տարիքը առած ամումնացած մարդ աչք է զնում մի լիրք, վշացած կնկայ Աշխատեց հեռանալ նրանից, չը լսել նորա խօսակցութիւնը ացդ անսակ կանանց և իւր գործած լրբութեան մասին, բայց չ'եղաւ. ուր դնաց՝ նա էլ հետևեց. ուզում էր Ստեփանին էլ հեալ տանի գինետուն, որ կարողանաց նորա գրպանից մի քանի կոպէկ պոկ տաց:

—Զէ, չեմ ուզում, կեանքումս զինետուն մտած չը կամ և չեմ էլ մտնելու, եթէ դու էլ մտնում ես շատ յիմարութիւն ես անում, քեզ ի՞նչ կը սազի այդպիսի բաներ անել, դու մշակ մարդ ես:

—Վա՛, հէնց որ մշակ եմ չը պիտի անեմ, դու շատ խամ ես երեսում, նոր ես զեռ, մի քանի տարի կ'անցնի, քո ասածները երբ քեզ կ'ասեմ, քեզ վերայ դու էլ կը ծիծաղես:

—Ուզում է հէնց քսան տարի էլ անցնի, ինչ որ կամ՝ կամ:

—Ես էլ այդպէս էի ասում սկզբում, բայց յետոց տեսաց որ չի լինում, սկսեցի ուրիշների ճանապարհով գնալ. ինչ մեղադրելու բան է:

—Բա սկի միտոդ չի դալիս, որ դու կնիկ արած ե՞ս:

—Նատ հարկաւոր է թէ կնիկ արած եմ. կինս դիւղումն է, իսկ ես այստեղ:

—Այդ ինչե՞ր ես ասում, տո մի լաւ մտածիր ինչ ես ասում է՛: Մեղք է մեղք. էլ ինչո՞ւ ես ապրում, քեզ նման տղամարդ սկի տեսած չեմ կեանքումս, մարդ որ ամուսնանում է, էլ նորա աչքերը միայն իւր կինն է տեսնում, հասկանո՞ւմ ես:

—Ճշմարիտ, մեր գիւղիք քահանաներից մէկը վախճանել է այս քանի օրը, եկ դու գնա՛ այնտեղ քահանաց եղիր, դու մշակացու չես, ես մեռնեմ թէ մեր քահանան կարողանաց այդպիսի խրատներ տալ:

—Ծիծաղի՛ր, վնաս չը կայ Նա, եկ մի լաւ մտածենք. դու որ այդպէս ես մտածում, եթէ, ծէր մի՛ արասցէ, քո կինն էլ քեզ սկի մտածի՛ ի՞նչ կ'անես:

— Ինչ պէտք է անեմ, երեխայ ես, կը ապանեմ, էլ ինչ պէտք է անեմ. Է՛հ, ինչ ես երեխայ երեխայ խօսում, չես գալիս՝ ես գնում եմ, ասելով բացիրը ուղղեց դէպի զինետունը: Դուռը բանալիս վերջի անդամն էլ կանչեց Ստեփանին, բայց տեսաւ որ ականջ չի դնում, ներս մտաւ:

— Ագա՛, էլի եկա՞ր. մի բաժակ օղիի հիւրասիրի՛, աղա՛, դարձաւ կինը մշակին:

— Աղջի՛, այս ըստէին:

— Լա՛ւ տղաց է թէեւ մշակ. դէ եկ այսոեղ նստի՛ր:

Աղաջանը կողքին նստեց:

Կնոջ հագուստը, դէմքը պարզ ցոյց էին տալիս, որ սոսոր դասակարգի համար էր ստեղծւած: Նորա կէս կարմրած, կէս կապտած, դէպի վեր ցցւած քիթը, կապտած ու ուռած ներքին կոպերը տալիս էին աղջուիկներով ծածկւած այլանդակ դէմքին մի դժոխոցին սպասիկեր:

Ստեփանը թէեւ սկզբում ուշադրութիւն չը դարձնելով պտտում էր անդադար չիւսկացնելով և չվշվացնելով, երբեմն էլ թուրքերէն երգելով, բայց վերջը երբ անցաւ հակառակ լրիկը, հետաքրքրութիւնը շարժեց և սկսեց նայել զինետան դրան ճեղքերով: Հենց որ Աղաջանի արարմունքը տեսաւ լիրը կնոջ հետ, թքեց ու հեռացաւ այդանդից: «Թի՛ւ, թի՛ւ, այդ տեսակ էլ լրբութիւն կը լինի. անունն էլ տղամարդ է դրել»:

Այդ ժամանակ, կարծես, մի ուրիշ ձայն նրան պատասխանեց. «Բանի տարի է տանից տեղից հեռացել է, ինչ անի խեղճը»: Եւ նա սկսեց ուրիշ տեսակ մտածել. էլ այնքան ստոր չէր երեւում նորա աչքին Աղաջանը, էլ այնքան չէր պախարակում նորա արարմունքը: Հեռացան մի քիչ առաջ ասածները և թանձր մշուշով պատեց գլուխը: Երեւակացութեամբ ապրել էլ չը կարողացաւ. կարծես ոտերը առանց հրամանի ուզում էին ուղղել դէպի զինետունը:

Աղաջանը դուրս եկաւ կոնծած այն ժամանակը, երբ Ստեփանը ծուել էր միւս փողոցը: Նա չը կարողանալով ոտի վերաց կանգնել, քունը աչքերը կոխեց և այդ ցրտին կուշ եկաւ իւր աղացի մեծ դրան անկիւնում ու մրափեց: Ստեփանը տեսաւ նրան, բայց չը մօտեցաւ: Դուրս եկաւ և կինը բոլորովին հարբած. Ստեփանին տես-

նելով վազեց դէպի նա անվայել շարժւածքներով և «աղա», աղա, անելով։ Ստեփանը հեռացաւ նրանից դէս դէն խշկոտալով, բայց երբ կինը կրկին մօտեցաւ, ձեռքից բռնեց և գինետունը ցոյց տւաւ, էլ Ստեփանը չ'իմացաւ ինչպէս գինետունը մտաւ։ Միայն նա ուշքի եկաւ, երբ գինետնից դուրս եկաւ։ Նա դէս դէն նայելով յանկարծ դուրս թռաւ գինետնից, ամօթից ուզում էր գետինը մոնի, ինքը իրանից ամաչում էր. «Զը լինի տեսնող եղաւ, Աղաջանը այժմ որ ինձ վերայ կը ծիծաղի. հեռանամ այստեղից։ Այս ի՞նչ արի ես, թի՛ւ, Աղաջանն էր մեղաւորը, նա չը պատմեր զրանց մասին, սկի միտս էլ չէր գալ. էլ այսուշետեւ ե՞ս մտնեմ գինետուն։ Զէ, էլ չեմ անի ինչ էլ որ լինի. ես մեղա՛յ Ասոծու։» Եւ քիչ մնաց թէ լաց լինի։

Արևելքը սկսել էր շառագունւել։ Փողոցում էլ չխչնկոց չէր լսում։ Ստեփանը մտել էր իւր սենեակը և խոր քնի մէջ ընկղմել։

Արև դուրս եկաւ, քաղաքը կենդանացաւ. կրպակաւորներն ու խանութների դործակատարները բոլորեքանք ոտի վերայ էին, ամեն մէկը շոտապում էր իւր դործին։ Պ. Զախարի գործակատարներն ևս ոտքի վերայ էին։ Նոքա դուրս եկան իրանց սենեակից խանութ գնալու։ Նոցանից մէկը մօտեցաւ Ստեփանին և ամուր ձայն տւաւ, բայց նա չը լսեց. երկրորդեց, երրորդեց, բայց նա դարձեալ չը շարժեց տեղից, խոր քնի մէջ էր։ Համբերութիւնը հառած մօտեցաւ և ձեռափայտով սկսեց բիշբիշտել. Ստեփանը այժմ որ ցնցւեցաւ և տեղը նստեց։

—Տօ ի՞ն, է պատահել, այդքան էլ կը քնեն, այնքան բղաւեցի, որ ձայնս կտրւեց։ Վեր շուտ արի՛, մի երկու հակ կայ վերցո՛ւր, գնանք խանութ։

Ստեփանը արդէն հագնւած էր. ոչինչ չը խօսեց, լուռ ու մունջ վեր կացաւ, պարանը ձեռն առաւ մտածելով՝ «Երևի շատ եմ քնել»։

Ստեփանը հակերը կրելուց յետոց, երբ ուզեց դուրս գնալ մշակութեան, այժմ էլ պ. Զախարը նրան հրամայեց բակի, վողոցի ձիւնը մաքրել։ Ստեփանը առանց դժկամակելու հիմա էլ թին ձեռն առաւ։

Ստեփանի մտածածը՝ թէ գիշերապահութեան հետ միասին և

մշակութիւն կանի՝ չէր լինում։ Շաբաթւայ մի քանի օրը իւր տիրոջ գործն էր ձրի կատարում, ուստի և մշակութեամբ շատ քիչ էր աշխատում և իւր երեակայած տասնհինգ րուբլին չէր տեսնում։

### ԺԴ.

Անցան ամիսներ, Ստեփանը առանց տրտունջի կատարում էր գիշերապահութիւնը, բայց միւնոյն ժամանակ լաւ տեսնում էր, որ իւր ոյժերը կամաց կամաց սպառում են, աշխատանքն էլ դորա հետ համեմատած շատ և շատ քիչ է։ Վճռեց թողնել ազդ պաշտօնը և իրան համար ազատ մշակութիւն անել, յոյս ունենալով դորանով աւելի վաստակի։ Երբ իւր դիտաւորութիւնը պ. Զախարին յայտնեց, վերջինս ըստ երեսոյթին բարի դէմքով և հայրաբար դարձաւ դէպի նա։

—Ի զուր ես թողնում մեր տունը. փա՛ռք Աստուծոյ, ի՞նչդ է պակաս, տունդ՝ տուն, ուտելդ՝ ուտել, (թէև շատ քիչ էր պատահում, որ իւր խոհարարը առանց աղայի հրամանին ծածուկ մի կտոր հաց կամ կերակրի տականք տար) ոռնիկ՝ ոռնիկ, էլ ի՞նչ ես ուզում. դուրսը մշակութիւն անելով ոչինչ չես աշխատի։

—Աղա՛յ, կը մնայի, եթէ կարողանայի շարունակել, բոլորովին ձեռքից ընկել եմ, այնքան անքուն եմ մնացել։ Ինչ անենք, էլի ձերն եմ. ժամանակ անժամանակ մի գործ պատահած պատրաստ եմ ձեր ծառայութեան։

—Օրհնւա՛ծ, քունը ինչ է որ մարլուս ձեռքից դցի, շատ քնողը կը լիմարանայ. արջերն էլ են շատ քնում, ինչ են աւելացնում։ Իայց դու ցերեկը քնում ես։

—Հէնց այդ է, որ մշակութիւնից զրկում եմ և ամսի տակին տեսնում եմ աշխատածս մի բան չէ։

—Հէնց ես իմանում, որ գիշերապահութիւն չ'անես, միայն մշակութեան գնաս, զրանից շատ պիտի աշխատե՞ս. քա՛ւ լիցի. օրւայ հացդ հազիւ հազ կարող ես դատել, այն էլ հազար մի նեղութիւնով. այն ինչ այսուեղ հանգիստ ստանում ես ոռնիկդ և գիշերը քեզ համար պարապ-սարապ շվշվացնելով պատում։

—Աղա՛յ, ճշմարիս չեմ կարող, լաւը այն է իմ հաշիւը տեսնէք, թողնէք ինձ գնամ։

Պ. Զախարը տեսնելով, որ զիմացինը այնքան էլ խաբւողը չի, վարպետ է դարձել, բարկացած ասաց.

— Գնում ես, գնա՛, այն դու՝ այն ճանապարհը, էլ ինձնից ինչո՞ւ ես հարցնում:

— Բայց հաշիւս տեսէք, գեռ մնում է:

— Էլի սիսիանցի է՛, շուտ մի հաշւի պոչիցն է բռնում, հէնց է իմանում փախստական ենք. այսօր ժամանակ չ'ունիմ, մի ուրիշ օր կը գաս, հաշիւդ կը տեսնենք, բայց հիմիկուց ասում եմ, որ փոշմանած գաս՝ կրկին քո պաշաճնի մէջ մոնելու, էլ 8 մանէթ չեմ տալ: Այժմ ուզում ես կացիր միևնոյն ռոճիկով, թէ չէ գնաս դլուխդ այստեղայնուեղ մտցնես, գաս, կրկին ասում եմ՝ հինգ մանէթ էլ չեմ տալ:

Ստեփանը ոչինչ չը պատասխանեց, դուրս եկաւ գնաց: Երկու օրից յետոյ Ստեփանը շտապեց գնալ պ. Զախարի հետ հաշիւը վերջացնել, վախենալով մի գուցէ իւր փողն էլ կորի Աղաջանի 30 կոպէկի պէս:

— Հը, բարով ես եկել, շննծու քաղցր ժպիտը բերանին ասաց պ. Զախարը, ինչպէս է անցնում մշակութիւնդ. փոշմանած կը լինիս անպատճառ. խե՛ղճ, դէմքիցդ տեսնում եմ թէ այս երկու օրը որքան նեղութիւն ես քաշել. քանի որ ուրիշներին չեմ վարձել դու եկ, էլի քո տունն է:

— Ինչո՞ւ, փա՛ռք Ասուծոյ, մշակութիւնով կրկնապատիկ եմ վերջնում:

— Այդ հաշիւ չէ. այս քանի օրս կարող է լաւ գործ պատահած լինի և քառասուն, յիսուն կոպէկ վերցրած լինիս, բայց ամսւայ մէջ քանի՛ այդպիսի օր կը պատահի, շատ շատ մի չորս, հինգ օր: Մենք ենք մշակներին դործ տւողք. պատահում է, որ մի օր հակերը գալիս թափւում են և մշակները էլ քիթ սրբելու ժամանակ չեն ունենում: իսկ այնուհետև շաբաթներ է անցնում և ոչ մի հակ չի լինում:

Ստեփանի դիրքը, հայեացքը անմոռունջ խնդրում էին հաշիւը վերջացնել և դուրս գնալ:

— Նիմա ուզում ես միա՞լ, դորա համար ես եկել չէ՞:

— Աղա՛յ, բախշի՛ր, չեմ կարող ձեր ասածը կատարել, հաշւի համար եմ եկել:

— Տօ երեկ չէիր այստեղ, ասացի որ ժամանակ չ'ունիմ, մի

ուրիշ օր եկ. այդպէս շուտով կը գա՞ն, ինձնից որ փողդ առնես հա,  
ուրիշին չը պիտի տաս պահելու. խօ քո մօտը չե՞ս պահելու:

—Զէ, գիւղը պիտի ուղարկեմ:

—Գիւղումը փողը ի՞նչ հարկաւոր է, որ ուղարկում ես, ի՞նչ  
շինեցիր, որ այդպէս շուտով ուղարկում ես. զեռ մի փող շինիր յետոյ է:

—Տանը պէտք է այժմ. անպատճառ պիտի ուղարկել:

—Դէ որ այդպէս է մի ուրիշ օր եկ. այժմ մեր բակը՝ քանի  
օր է ինչ դուրս ես եկել՝ չի սրբւել, սրբիր յետոյ գնա՛:

Ստեփանը քիթ ու մոռւթը կախ դուրս գնաց անիծելով այն  
օրը, որ դրան պատահեց:

—Բա ձեզ ինչ ասեմ, որ ինչ դառնաք, Ստեփանի յետեից ասաց  
ալ. Զախարը. ասա՛, ասա՛, ելի իրանց էը պիտի քշեն. չէ, առել է, չը  
պիտի գայ. բայց ի՞նչ տղայ է, —արդար, բաջ, աչքաբաց, դործից չը  
վախեցող: Զէ, երեւում է, էլ յետ չի դառնալու, ափառ'ս. բայց ի՞նչ  
փող կը ստանաց և շուտով գիւղը կ'ուղարկի', այնքան քաշքշեմ,  
որ ինքը իւր ոտով գայ աղաշի: Սրանցը այսպէս պիտի լինի, որ  
ո՛ր կողմը ծուես իրանք էլ կամայ ակամայ ծուեն:

Մի ամսւայ մէջ Ստեփանը մի քանի անդամ գնաց եկաւ, բայց  
չը կարողացաւ իւր տաժանելի աշխատանքի առաջի պտուղը ստա-  
նալ: «Ի՞նչ անեմ, Տէ՛ր Աստուած, ասում էր նա, կրկին զիշերապա-  
հութիւն անեմ իմ փողիս համար, բայց աւելի իմ վերցնում մշա-  
կութիւնով: Այս ինչո՞ւ չի տալիս փողը, փառք Աստուծոյ գրան չի  
կարօտ խօ. տունը՝ տուն, խանութը՝ խանութ, բաղուայ հարուստ  
վաճառականներից, էլ ինչո՞ւ չի տալիս՝ չը զիտիմ: Նա, երել ուղում  
է այդպիսով կրկին նոյն պաշտօնը ընդունեմ, բայց անտանելի բան  
է, թէ վարձը քիչ և թէ նեղութիւնը շատ և բացի զրանից հա-  
զիւ եմ աղատուել այն գինետնից, մէկ էլ գնամ: Զէ՛, չէ՛, գտայ— առաջ-  
ւայ պաշտօնս կ'ընդունեմ, որ մի կերպ կարողանամ ստանալիքս պոկ  
տամ, Սաքանին ուղարկեմ:

Պ. Զախարը երբ իմացաւ նորա միտքը՝ ուրախ ուրախ ասաց.

—Այս ես քեզ չ'ասացի կը փոշմանես. հիմա լաւ է մի ամսւայ  
ոռնիկիցդ ընկար, թէեւ այն ժամանակ բարկացած ասացի հինգ մա-  
նէթից աւել չեմ տալ, բայց այժմ խղճալով քեզ վերայ 7 մանէթ  
եմ նշանակում: Որ մի մանէթը պահասացնում եմ չը լինի մտածես՝

քիչ է տալիս գործս վատ կատարեմ. առաջւայ պէս եղի՛ր, տարիներով քեզ բաց չեմ թողնի և վերջը կը տեսնես մի գումարատէր դարձած:

—Ուժ մանէթը առանց էն էլ քիչ էր, նրանից էլ էք պակսացնո՞ւմ:

—Ել աւելորդ մի՛ խօսիր, աշխարհիս տակ ու գլուխը հինդ մատերիս պէս զիտեմ, քեզ ինչ տալիս եմ, անձայն վերցո՛ւր և խոնարհութեամբ քո գործը կատարի՛ր:

«Տէր Աստուած, այս ի՞նչ կրակի մէջ եմ ընկել, բանը այնուել է հասցրել, այժմ որ չ'ընդունեմ, վաղը դամ՝ հինդ կը տայ. ինչ անեմ, զնենք թէ մի մանէթը կորցրել եմ, մի ամիս կը մնամ, ստանալիքս կ'առնեմ և էլ այդ սեւ սատանի երեսը չեմ տեսնի», մտածում էր Ստեփանը:

—Լա՛ւ, որ եօթն էք տալիս՝ ինչ պիտի ասեմ, բայց խնդրում եմ մի քսան մանէթ տաք, այս քանի օրս գիւղը գնացող կայ. անպատճառ պիտի ուղարկեմ:

«Կարծում է իւր մտածածը իմ խելքը չի կորում, մտածում էր հեղնական ժպիտը բերանին պ. Զախարը. ողորմելի՛, ի՞նչ պարզամտն է. կը ստանաս, չէ մի ո՛տներ. ուղում է այս ամիս՝ բոլոր ռոճիկլ ստանայ, ազատ համարձակ դուրս գնայ»:

—Լաւ է կը տամ, ասաց պ. Զախարը, դեռ այժմ գործ ունիմ, այս քանի օրը առանց քո ասելի կը տամ, էլ փողի անուն չը տաս:

Ստեփանը ինչ անէր, լաւ ծուղակի էր բռնւել, նօթերը կուտած հեռացաւ իւր աղայի մօտից, դարձեալ գիշերապահ եղաւ և այդ պաշտօնի հետ մերս կապւած զինետունը կրկին նրան մոլորեցրեց:

## ԺԵ.

Սաքանը զիւղում նստած փափուկ փող էր աշխատում. ապրանքի մի մասը արգէն հալեցրել էր, մտածում էր թէ ի՞նչպէս պէտք է սպրանք բերել տայ, որ էժան նստի. չէր մոռացել Ստեփանի և ուրիշների ընկերութիւնը, նրանցից տեղեկութեան էր սպասում, բայց ոչ մի լուր չը կար. «Զախորդութեան ևն պատահել մտածում էր Սաքանը, նրանք խարւեցին, գնացին կարծելով սէլի

պէս թափւած է հարստութիւնը, հիմա ես եմ իմանում թէ ի՞նչպէս շան քթից ջուր խմելով մշակութիւն են անում, բայց ոչինչ, էլի փող կ'աշխատեն մի կերպ բերաններիցը կորելով, պէտք է գրել ապրանք ուղարկեն եկողով կամաց կամաց, թէ չէ յանկարծ կը վերջանաց ապրանքը, այնուհետեւ դժւար կը լինի:

Այսպէս մտածելով նա նամակ գրեց Ստեփանին և մնացած չորսին, որ անպատճառ, էլ այնտեղը չի, ապրանք հասցնեն, որովհետեւ ծախելու լաւ ժամանակն է:

Սաքանը մի կողմից ապրանք էր ծախում, միւս կողմից հաւաքած ցորենն ու գարին նազդ փող շինում, իսկ նազդ փողը տալիս էր քառասուն և յիսուն տոկոսով վիզները ծուռ մնացած գիւղացիներին, որ կալի ժամանակ կամ ցորեն տան կամ թէ չէ փողը: Սաքանը տոկոսով փող տալով կարծ միջոցում մեծ անուն հանեց, աեղովը վեր կենողը նրան ճանաչում էր իբրև խեղճերին ձեռք մեկնող. մի խօջայ Սէրգի էր մի Անգեղակոթի:

—Աստուած ձեր պապերի գերեզմանոտաց վերաց լոյս թափի, Մկրտում ապէ՛ր, ասում էին խեղճ մնացած գիւղացիները, եարաբ մեր ճարը ինչ կը լինէր, թէ որ խօջայ Սէրգին չը լինէր. մին մին այդպէս օգնութիւն հասնող, դարդ ու ցաւ իմացող հէնց ինքն է որ կայ. ախր ժամանակիս, այն էլ այս ժամանակին, որ որդին հօրը չի ճանաչում, ո՞վ կ'անի նորա արածները: Տէր Աստուածը նորա մինը հազար անի. երեկ չէ միւս օրը պարտատէրս եկել եղներս էր ուղում քշի տանի. չեմ իմանում ո՞րտեղից էր լսել, Աստուածանից էր, սրբերից էր թէ ինչ է, եկաւ փողը տւաւ և եղներս ազատեց. հէնց իմացայ թէ աշխարհքս ինձ բաշխեց, որ եղներս չը տարան, անունս տափովը չը տւին:

—Անում է, զորդ է, պատասխանում էր Մկրտում ապէրը աչքերը ճապճապացնելով, բայց սկի մինը երկու չի դառնում. հէնց է որ փողը սրան նրան է տալիս, թղթի պատառուանքով մնդուկը լցնում. ախր սկի չի մտածում մեռնել կայ, սպանւել կայ: — է՛, ա որդի՛, ասում եմ, բաւական է շահով տաս ազդ փողերը. լաւն այն է արծաթ կամ ոսկի շինես, մի տեղ թաղենք, որ ոչ կորչի և ոչ փոտի, երեսին ջրով մնայ. ես եմ լինում ինքը՝ չի անում: — Զէ՛, ասում է, դու չես իմանում, այսպէս լաւ է. փողն էլ է փող աշխատում առանց ապրանք առնե-

լու։ — Երեխի ինքը մի բան հասկանում է առանց այն չի, աշխարհք տեսած մարդ է։

— Ինչ խօսք, նա աւելի լաւ է անում, որ աղքատ-ուղքուտի օդ-նութեան է հասնում. լաւ է քո ասածը չի անում խօջայ Սէրգին, ախր դրանից ոչ գուք խէր կ'ունենաք և ոչ էլ մեզ նմանները։

Այսպէս գիւղում Սաքանի շւաքը բամբակով էին հաւաքում, ամեն տեղ ձայն ունէր, ամեն խնջոցքում վերի տեղն էր նստած լինում տանուտէրի և տէրտէրի մօտ. նորա խօսքին ո՛վ կարող էր չէ ասել Տանուտէրի ու տէրտէրի բերանները կապել էր, նրանց ուտացնելով ու ընծաններ տալով. ինչ անում չէր անում, ոչ մի արգելք, ոչ մի գատաստան չը կար, որովհետեւ խօջայ Սէրգին է արել. մի խօսքով թրի այս կողմն էլ էր կտրում այն կողմն էլ։ Աղջկատէրերը օրեր էին համարում թէ երբ է խօջայ Սէրգին աղջիկ ուզելու, իսկ Սաքանը դեռ ևս մտադրութիւն չ'ունէր պահելու, նա ուզում էր մեծ անուն և դիրք ունեցողի աղջիկ ուզել, որ ընդ միշտ ասլահով համարի իրան խէր-շառ պատահած ժամանակ. իսկ այդ մտադիր էր անել մի երկու տարուց յետոյ, երբ իրան լաւ կը դրսէր, կը շինէր։

Նամակը հասաւ Ստեփանին։ Կարծելով տնիցն է՝ մէկ ձեւքն էր առնում, բանում, աչքերը գցում ու տողերին, ինքն իրան մտածում «Տեսնես ի՞նչ են գրել, ա՛խ, կարդալ չ'իմանացի որ մէկ կարդացի հանգստանայի»։ Մէկ նամակը պաշում է, պաշչորում, աչքերը քսում, ծոցը դնում ասելով. «Անիկս ու որդիքս մօտն են եղել գրելու ժամանակի նրանց ձեռքը կպած կը լինի, կնիկս ծոցն է զբել անպատճառ...» էլ ոչինչ չը կարողացաւ ասել, արիւնը կարծես գլխին խփեց, աչքերը սեացան, լեզուն կապ ընկաւ կնոջը ցիշելով։ Նա կնոջը ցիշելով զի նետունը իսկոյն մտաբերեց և այդ ժամանակ էլ չէր ուզում ինո՞ւ անունը տալ, վախենում, դողում էր ինչպէս մի երեխայ. նա ուզում էր փախչել իւր սենեակից, ինքն էլ չը գիտէր ուր, կարծում էր կինը այդ բոպէին մօտն էր զտնուում, որ իրան կշտամբում էր. և այ ևս կանգնած չը կարողացաւ մնալ, ընկաւ իւր կեղսուտ տեղաշրի վերայ և սկսեց գառն արտասուք թափել։

«Ախ Աստուած, մեղաւո՛ր եմ, մեղաւոր, ես մեղա՛յ Աստծու մէկ էլ այդ մեղքը շեմ անի... Բաշխի՛ր, ա՛ կնիկ... դու կը բաշխի՛

անպատճառ, ես գիտեմ. էլ չեմ անի, վա՛յ, էլ չեմ անի, սուրբ կը  
մնամ մինչեւ...»

Եւ այս սրտանց մեղաց գալն էր, որ նրան մի քիչ հանգստաց-  
րեց. նա կրկին նամակը հանեց և սկսեց պաշալչորել, աշքերը քսել  
ասելով. «Սիս ձեր հոգուն մատաղ, դուք ինձ համար այդքան քաղցր  
էք եղել հա՛յ:

Ամուսնական, ծնողական սուրբ զգացմունքները Ստեփանի  
սրտում շարժւեցան բուռն կերպով: Նամակը համբուրելով կարծես  
խր փափիլիների աչքերն էր համբուրում, ծոցումը դնելով վերա-  
նորոգւած ասում էր. «Ես քո հաւատարիմ մարդն եմ, դու իմ հա-  
ւատարիմ, քաղցր, ամեն բանից էլ անուշ ինիկն եւա:

Ստեփանը ուզում էր շուտով նամակը կարգալ տալ, դորա հա-  
մար մտաւ աղայի խանութը և գործակատարներից մէկին առաջար-  
կեց կարգավոր: Գործակատարը թթւած դէմքով շուռ եկաւ ասելով.  
«Փամանակ չ'ունիմ». ճարահատեալ երկրորդ գործակատարին դիմեց.  
Վերջինս էլ նոյն կերպ վարւեց: Ստեփանը ձը զարմացաւ, նա լաւ  
գիտէր, որ գործակատարները, թէև իրանց նման զիւղացիներ են,  
բայց մշակներից զգելով զզում են, հետները մինչեւ անգամ չեն  
ուզում խօսել, միայն տեղն ընկած ժամանակ լաւ գիտեն թրքերէն  
կտի շամախեցու և ոսերէն հարբած գեղջուկների անվայել հացհո-  
յանքները թափել իրանց զլիխն. հայերէն էլ գիտեն հայհոյել, բայց  
միայն այն ժամանակ, երբ մշակների հաւատն են հայհոյում: Ստե-  
փանը այս բոլորը իմանալով ի հարկէ ճարահատեալ տարաւ գործա-  
կատարների մօտ, որոնց աշքը սովոր էր միայն տեսնել մետաքսի ու  
շալերի թանգանոց ճոթերը, տիկինների զարդարանքը և դոցա իրանց  
պէս սիրուն պայուսակների ամուսինների ամսի 20-ին ստացած ան-  
ծալ, շխշան փողերը և ոչ թէ կեղտ ու քրտինքի մէջ կորած  
նամակը:

Ստեփանը կոյր ու փոշման դուրս եկաւ խանութից և հազիւ  
հազ կարողացաւ մի երկու ժամկից յետոյ մէկ աստուածասիրի կար-  
դալ տալ: Սաքանի նամակի միտքը հասկանալով մոռացաւ խր հո-  
գեկան տանջանքը ինչ որ մի քիչ առաջ ունէր. նա շտապեց ձեռքի  
եղած չ'եղածով և պ. Զախարի մօտի փողով, որ մի կերպ պոկ էր  
տւել, ապրանք գնեց: «Մէկին հինգ է աշխատելու, ես գիտեմ, բանս

բան է», մոտածում էր Ստեփանը: «Աստուած խէր տայ, բարի բազար՝ ասելով կապեց, մի քանի օրից յետոյ Սաքանին ուղարկեց:

Ստեփանը հաշիւները աղայի հետ վերջացնելով սկսեց իւր համար ազատ մշակութիւն անել և այդ ժամանակ օր ու գիշեր անելով հազիւ էր կարողանում 10—15 րուրի դատել:

Սաքանի նամակի պատասխանը և ապրանքը եկաւ: «Բանս բան է, մտածում էր նա ուրախ ուրախ, մնացածներն էլ կ'ուղարկեն, թո՞զ ուղարկեն, ես էլ նստած կը ծախսեմ, փափուկ փող կը շինեմ, տակս կը դնեմ: Հինգի աներն էլ համարեա իմ ձեռքին է նայում, ես եմ կառավարում, ինչ ուզում են բաց կը թողնեմ; ո՞վ են կուռս բռնում: կնիկարմատը հէնց բեր հա բեր անող կը լինի, ես էլ կը տանեմ, ո՞վ է մնասւում և ո՞վ խէրում: Սրանք բոլորն էլ լաւ է. ինչպէս ես եմ առաջուց կարգադրել, յոց ունիմ, որ այնպէս էլ կը լինի, դու նորա դարդը քաշիր. Ե՞հ, դարդ չէ մին ո՞տեր. ինչպէս Ստեփանի աշխատանքն է այսուհետեւ իմը, այնպէս էլ Թագուհին է իմը: Բայց չէ, պէտք է մի քիչ էլ սատանայութիւն բանեցնել. վայ թէ չեղաւ, բոի գիւղացի է, կը գրի Ստեփանին, դէ այն ժամանակ արի' էշը ցլիցը հանի՛ր, էլ զրանից յետոյ մնաք բարեւ ընկերութիւն. էլ ո՞վ կը նայի գիւղումը իմ կզակին. չէ՛, չէ՛, պէտք է մի քիչ էլ համբերել, տեսնել խօ Ստեփանը շուտով չի գալու կամ թէ չէ նորա ձեռք ու ոտը լաւ հաւաքել, բոլորովին սիրահարացնել. ինչ եմ շտապում, փա՛ռք Աստուծոյ մէկը չի, երկուսը չի, ուրիշներն էլ կան: Բայց ախր դրա տեղը չեն տալ, հոգիս ուղի կը տամ, նրանցից ձեռք կը վերցնեմ, միայն...

Այսպէս Սաքանը Թագուհուն իրանը համարելով խաղում էր առ այժմ նրանով, ինչպէս կատուն է խաղում նախ կլանելլ որսած մինով հաստատ հաւատացած լինելով, որ իւր սուր սուր ճանկերից պրծում չունի: Սաքանը թէկ շարունակ տեսութեան էր գնում Թագուհուն և միշտ չար մտքով, բայց շատ հեռուները մտածելով սրտինը չէր կարողանում յաջողացնել:

Ստեփանը չորս ամիսը, հինգ ամիսը մի անգամ ապրանք էր ուղարկում Սաքանին և միշտ գրել էր տալիս տանը լաւ մտիկ տալ վար ու ցանքը անել տալ, ինչպէս իւր խելքն է կտրում:

**Ժ. 2.**

Անցել էր գարունը, ամառաւայ թեժ ժամանակն էր. արեւը կրակ էր թափում: Մեծատուն քաղաքացիք տեղափոխւեցան ամարանցները՝ պղասուելու հագուայ անսանելիք. բոց ու կրակից, իսկ միջոցներ չունեցողները մնացին այդ պլալացող հնոցի մէջ:

Ստեփանի զրութիւնը վաստ էր. երկրորդ ամառն էր նորա համար, նա սկսեց կամաց կամաց ծիւրել, հալ ու մաշ լինել. շոգը մի կողմից, անունդի պահասութիւնը միւս, անառակ կեանքը մի երրորդ կողմից՝ նրան ձեռք ու ոտից գցեցին. վերջը էլ չը կարողանալով զիմանալ հակերի տակ՝ սովորած թողեց գործը և մի քանի օր սկսեց քաշ դալ՝ թուլացած, սպրոնած, աչքերը խոր ընկած՝ պատերի տակ՝ շւաք տեղերում: Նորա արագաշարժ ոտերը, հաստ բազուիները և միշտ ուրախ դէմքը թռել, կորել էին. այժմ էլ անզեղակոթցի Ստեփանը չէր, այլ կատարեալ մի մշակ ոտից մինչև զլուխ: Նա կարծում էր կ'անցնի շուտով այդ թուլութիւնը և շուտով իւր գործը կը շարունակի, բայց չ'եղաւ: Նրան այս ու այն խորհուրդ տւին անդործ չը մնալ, որով աւելի կը վատանայ վիճակը. Նա էլ նրանց խորհուրդը լսելով էլի սկսեց հակեր կրել: Նէնց առաջի օրը, երբ հակի տակ տնքսնքալով գնում էր մի պարոնի յետևից, չը կարողացաւ հետեւ պարոնին. ուզեց հակը պատին դէմ տալ, կանգնել, չը կարողացաւ, թոյլ ոտերը չը դիմացան մինչև պատը հասնի, ընկաւ կողքի վերայ՝ պարանը ձեռքից տալով, միւս կողմն ընկաւ հակը, ինքը անվնաս մնաց ընկած: Պարոնը ծխելով շարունակում էր ձանապարհը, մէկ էլ յետ նայեց, տեսաւ որ մշակը չի գալիս, բարկացած մօտեցաւ. Այս անպիտաններ, որ չէք կարողանում, ինչո՞ւ էք վերցնում, կողքին մի քանի քացի չը տաս, որ խելքը զլուխը ժողովւի: «Մշակ, այց մշակ»: Նոր մշակ կանչեց. հայ մշակը իսկոն եկաւ. հրամացական ձանով պարոնը հրամացեց, որ մշակը հակը վերցնի և իրան հետեւ:

Մշակը, որ Ստեփանի մանկութիւնից ի վեր ընկերն էր և որ միւեանց հետ շատ սիրով էին, փոխանակ դէպի հակը վազելու, ինչովէս հակի ծարաւ մշակ, դէպի Ստեփանը վազեց:

—Ստեփան, Ստեփան, ա ինչո՞ւ ես ընկել, վե՛ր գնանք:

—Վա՛յ, մեռնում եմ, Կարօ՛, ինձ տուն հասցրո՛ւ:

—Դէ վե՛ր գնա՛նք:

—Նուտ արա՛ հակը վերցուր եկ, ես այդքան ժամանակ՝ չունիմ՝ քեղ սպասելու, բղաւեց պարոնը:

—Աղա՛յ, բա չե՞ս տեմնում, խեղճը ընկած է անտէր անտիրական, չեմ կարող, ուրիշն կանչի՛ր:

—Այ անիծւի՛ք դուք, էլի վավան հայեր են է, ի՞նչ կայ. խօ չը մեռաւ. ասաց ու մի ուրիշ մշակ կանչեց:

Կարօն Ստեփանի կռանտակերից բռնած տարաւ իրանց գետնափոր սենեակը և պառկեցրեց:

Ստեփանի գետնափոր սենեակը մի խուլ փողոցում՝ էր: Այդ համարեա անպատուհան փոքրիկ սենեակում կենում էին վեց հողի: Կարօն էլ ացտեղ էր կենում: Կենալու ոչինչ յարմարութիւն՝ չունէր այդ բնակարանը: Խոնաւ յատակի վերայ փուած էր մի քանի կտոր պատռուած, ցեխուտ խասիրներ, որոնց վերայ աջ ու ձախ կողուած զրւած էր կեղտից սրոց կորած անկողիններ: Ամբողջ սենեակի կահ կարասիքը կազմում էր խասիրի կտորտանքը և անկողինները. Եթէ սրանց վերայ աւելացնելու լինինք մի կուժ և գաւաթ և մի քանի ծակոտած, մաշւած տրեխներ այս և այն անկիւնում վեր թափուած, սրանով վերջացրած կը լինինք Ստեփանի անշուք բնակարանին նկարագրութիւնը: Այդ բնակարանին կից էր գոմը, որ տախտակով էր բաժանւած: Նախանձելի էր երկու ձիաների գոմը. զա աւելի արձակ էր, աւելի լուսաւոր, քան թէ մշակների բնակարանը:

Կարօն լուռ ու մունջ նստած էր հիւանդի մօտ. Նա չէր ուզում խօսացնի՛ վախենալով մի գուցէ անհանդիստ անէր Ստեփանին «Թող մի քիչ քնի, հանգստանայ», մտածում էր Կարօն:

Մի ամբողջ ժամ անցնելուց յետոյ Կարօն դարձաւ Ստեփանին.

—Ստեփան, ա՛ Ստեփան:

—Հ՛ը. թոյլ կերպով արտասանեց և շրջւեցաւ դէպի Կարօն:

—Աչքերդ մի բա՛յ, օրհնւած, ի՞նչ ես լնկել, սկի չես խօսում:

—Կարողանում եմ չեմ խօսո՞ւմ:

—Ի՞նչդ է ցաւում:

—Էլ սաղ տեղ չ'ունիմ, մեռնում եմ:

—Երեխայ երեխայ. մի՛ խօսիր. ախորժակդ ի՞նչպէս է:

—Ասորժակից մի՛ խօսիր, ոչինչ չեմ ուզում, բերանս լափ լեղի է:

—Բա սոված պիտի մնաս, գնամ բան առնեմ բերեմ, սովածութիւնը աւելի քեզ վեր կը դցի:

—Չէ՛, չէ՛, Կարօ՛, ի զուր ես գնում, չեմ կարող ուտել, թոքս կրակ է ընկել, զու ինձ մի դրալ ջուր առ'ւր՝ թոքիս ածեմ:

Կարօն Ստեփանի կուռը բռնելով, նստացրեց ջուրը խմացրեց:

—Թի՛ւ, թի՛ւ, երանի թէ կուլ տւած չը լինէի, լեղի է դա՞ջո՞ւր է, ա'խ, մեր աղբը ջուր, ո'րտեղ ես... ասաց և խոր հառաշելով թուլացած ընկաւ տեղաշորի վերայ:

Ստեփանը տեղաշորից չը կարողացաւ վեր կենալ այդ օրը: Նա ոչինչ չը կերաւ, միայն յաճախ ջուր էր խնդրում, բայց երբ բերանն էր առնում՝ զզւած մէկ էլ բերանից դուրս էր թափում:

Մի երկու օրից յետոյ ձեռք ու ոտ ընկան, մի թուրք հէքիմ ճարեցին. թուրք հէքիմը, ջիբան զցած, խորհրդաւոր հայեացքով, թէզբիհը ձեռին, մոտաւ հիւանդին այցելութեան:

Աչքերը լրջութեամբ մի կողմ դարձրած բազկերակը բռնեց, կարծես խորն էր մտածում, ուզում էր ինչ հիւանդութիւն լինելը զանել: Լեզուն էլ տնտղեց և նոյն լրջութեամբ զլուխը շարժեց:

—Բա ինչո՞ւ էք ուշացրել, ա' ձեր աները չի քանդւի:

—Հէնց իմացանք թէ ոչինչ չը կայ, կ'անցնի, պատասխանեց

Ստեփանի ընկեր Պօղոսը:

—Չէ, լաւ չէք արել, սաստկացել է հիւանդութիւնը եաթալաղի է փոխւել. բացի եաթալաղից վէքեր էլ կան վրան, այն էլ վատ վէքեր են: Բայց ոչինչ, ես կ'առողջացնեմ: մի շաբթից յետոյ ոտի վերայ կանգնած կը տեսնէք, ինչ էք տիրում:

—Դէ ուր է, քեալբալայի՛, Աստուած բերանիցդ լսի, հէնց իմացիր մէկ էլ նոր զու նորան կեանք ես բաշխում, մենք քո վարձը չենք մոտանայ:

—Այժմ ինձ փող է հարկաւոր, որ մի քանի հարկաւոր բան առնեմ դեղերի համար. վատ չէր լինի հէնց այժմեանից խօսենք:

—Լաւ. ի՞նչ պէտք է առնես, քեալբալայի՛:

—Ես տեսնում եմ, որ դուք մշակ մարդիկ էք. ես ձեղնից աւել չեմ պահանջի, ինձ կը տաք տասը մանեթ:

— Քեալբալայի՛, տասը մանէթը շատ է:

— Նատ չի՛, շատ չի՛. օրը մի երկու անգամ՝ նեղութիւն սկիտի քաշեմ այս ծանր տեղովս դամ՝ դնամ, դեղեր պիտի շինեմ, որի ձեռք բերելը շատ թանկ է նատում, փեղամբարը վկայ՝ դրանից պակաս չեմ կարող:

— Զէ՛, չենք կարող տալ, ի զուր քեզ էլ նեղութիւն տւինք:

Հէքիմը լաւ տեսաւ, որ տասը մանէթ տւողը չեն՝ իջնելով իջնելով հասաւ մինչև հինգ րուբլի: Համաձայնեցան: Մէկ րուբլի էլ տւին դեղերի համար: Հէքիմը դուրս գալուց գարձաւ Պօղոսին.

— Փահրիպը պիտի անպատճառ պահի, թթւի, կծւի չը մօտենայ. տաք կերակուր երբէք չը տաք, եթէ տւել էք իմացէք, որ տունը գլխին կը քանդէք: Գլուխը, մարմինը լաւ կը փթթորէք, որքան կարողանաք տաք պահեցէք. այսքանաւ: Ես երկու ժամից յետոյ կը գամ և դեղերը կը բերեմ:

Ստեփանը ընդունեց քեալբալայու տուտ տուտ պատրաստած դեղերը: Երկու տեսակ՝ սպիտակ ու դեղին փոշիներ էր թղթերի մէջ ածած, սպիտակը ցերեկով պիտի ջուր անէր խմէր՝ ժամը մի անգամ, իսկ դեղինը՝ գիշերները:

Սնցաւ երկու օր. շարունակ գնում գալիս էր քեալբալային, արդէն երեք րուբլին առել էր, բայց հիւանդը քանի գնում աւելի վատթարանում էր: Հէքիմը յոց էր տալիս, դեղերը շատ շուտ փոխում էր, շատ անգամ էլ բարկանում էր մշակների վերայ ասելով՝ «Երկի փահրիպը չէք պահել տալիս, թէ չէ ինչու չը պիտի առողջացած լինի մինչև այժմ»:

Հիւանդի մօտից Կարօն շատ քիչ էր հեռանում: իսկ մնացածները իրանց գործին էին գնում, միայն երեկոներն էր, որ գալիս էին և իրանց սիրելի ընկերին շրջապատում, անխօս լուռ ու մունջ նորա երեսկահատին մտիկ տալիս: Ազգբում նոքա այնքան էլ նշանակութիւն չէին տալիս, կարծելով շուտով կ'անցնի, բայց երրորդ օրը, երբ հիւանդութիւնը սաստկացաւ, այնպէս որ նա էլ ոչ խօսում, ոչ ուտում և ոչ խմում էր, մնացին շւարած:

— Կարօ՛, ինչ անենք, Ստեփանը ախր դէպի վատն է գնում, դարձաւ Պօղոսը:

Կարօյի տիսուր արտայացտութիւնը լուռ ու մունջ պատասխանեց. «Մենք ինչ կարող ենք անել, մեր ձեռքովը ինչ կը գայ:

Այդ ժամանակ Ստեփանը բանդագուշանքի մէջ սկսեց շրջարծել տեղաշորում. «Ե'կ, ե'կ այստեղ եմ... բեր... բեր ձեռքդ համբուրեմ»:

— Յիսուս Քրիստոս Աստուած, քթի տակ մրմնջաց Պօղոսը և երեսին խաչ հանեց, հրեշտակի հետ է խօսում:

Կարօցի աչքերը արտասունքով լցւեցաւ, ոչինչ չը կարողացաւ խօսել:

— Տէր, ողորմած Աստուած, դու դրան խնայիր, կնոջը ու երեխայոց բաշխիր, զգացւած արտասուքը աչքերին ձեռքերը վեր կարկառեց Պօղոսը:

Ստեփանը շարունակեց բանդագուշանքը.

«Ե'կ, ե'կ, այստեղ եմ... աղբրի ջուր ես բերել, ուխա՛յ, վա՛յ, վա՛յ, չէ, մի՛ գայ... գինետուն... անիծւած Աղաջան... գնացին... փախչորում են... ընկան կրակը, երեխաներս... վա՛յ, վա՛յ, կնիկս... նորա շորերը վառւում է, օգնեցէ՛ք»... և անդադար շրջարծւում էր տեղաշորում և վերմակը զէն զցում, իսկ հիւանդապահը հէքիմի ասածները ամենայն ճշդութեամբ կատարում էր, իսկոյն հաստ վերմակը վրայ էր քաշում:

— Պօղոս ապէ՛ր, դարձաւ Կարօն, Ստեփանը դելն է տալիս, ոչինչ չը կայ, ես այստեղ կը մնամ, դու մի գնա՛ տես քեալբալային որտեղ կորաւ:

— Ել ինչ գնամ, չես տեսնում մահւան հրեշտակը գլխավերել պտտում է, նա ել ի՞նչ կարող է անել, ի զուր փող պիտի տանք. մեղք է մինչեւ անդամ հէքիմ բերելը, ճակատին ինչ դրած է այնպէս ել պիտի լինի, հէքիմը իրան մարդ տեղովը ինչ է, որ ճակատի դրածը կարողանայ չնշել. աւելի լաւ է երեսը ծածկենք տեսնենք վերջը ինչ կը լինի:

Հէնց այդ խօսակցութեան ժամանակն էր, որ քեալբալային ներս մտաւ: Նա կրկին յոյս տւաւ հիւանդին մի լաւ գննելուց յետոյ և մնացած երկու րուբլին առաւ, դուրս գնաց:

Հէքիմը ել չերեւեցաւ, ոտ չը կոխեց մշակների բնակարանը, նա իւր հաշիւը վերջացրել էր:

Մշակները իրանց ընկերոջ լոյս աշխարհում ապրելու վճիռը անդուժ մահւան անօրինութեան յանձնեցին, երբէք չը կասկածելով, որ նա անողոք է, նա կատաղի է, նորա ու, գարհուրելի ճի-

րաններից հազիւ հազ է կարողանում ազատւել անօգնականը։  
Անզօր ձեռքեր, խուփ աչքեր, նւազած սիրու—ահա անազորոն։  
մահւան ձեռք ու ոտը կապած գերին։

Թուրք հեքիմը չը կարողացաւ նրան ազատւել, կը նշանակի  
ճակատագիրն է այդպէս էլ պիտի լինի, ուրեմն նորա ասողը թեք-  
ւեցաւ, նորա արևը խաւարեցաւ։

Ստեփանը մնաց անօգնական, թուրք հեքիմը էլ չէր գալիս։  
Իւր ընկեր մշակներն էին պահում, խնամում, սրանից-նրանից խոր-  
հուրդներ հարցնելով։ Մի օր էլ երբ խորհուրդ էր հարցնում Կարօն  
մի անծանօթ պարոնից, որի դէմքը, խօսակցութիւնը շատ բարի  
էր և հէնց զբա համար էր որ մօտեցել էր Կարօն, վողոցում կանգ-  
նեցրել և խորհուրդ հարցնում, անծանօթ պարոնը հետաքրքրւե-  
ցաւ, մտաւ հիւանդի մօտ, ոչինչ չը կարողացաւ իմանալ, դարձաւ  
Կարօյին։

—Դու մօտը սպասի՞ր, ես գնամ բժիշկ բերեմ։

—Ախր այդ հեքիմները փող շատ են վերցնում, էն էլ քանի  
քանի անգամ պիտի զան գնան, մենք խեղճ մարդիկ ենք, որոնք դից  
ճարենք նրանց ուզածը։

—Ոչինչ, ոչինչ, փողի համար մի' մտածիր, ասաց ու գուրս գնաց։

Անծանօթ պարոնը բժիշկ բերաւ ի հարկէ իւր փողով. բժիշկը  
յացնեց պարոնին, որ Ստեփանը՝ առողջանայ մի քանի օրից յետոց,  
միայն նա վերջ չ'ունի, որովհետև նա վարակւած է անբուժելի վե-  
ներական ախտով։

Ստեփանը մի շաբթից յետոյ առողջացաւ, ոտի կանգնեց։ Հե-  
ւանդութիւնից յետոյ, կարծես, զգւած էր նայում Բագուի վերայ։  
Նա մտքումը զրաւ անպատճառ զիւղը գնալ Շնչ եմ շինում ես  
այստեղ, մտածում էր նա, ինչ եմ աշխատում, ինչ, աչքս մի բան  
տեսնում է, ափսոս չի զիւղը, էլի այնաեղ իմ տունն է, էլի այնաեղ  
եփող, թխող կայ, ինչի՞ պակասութիւն եմ քաշելու. այս ինչ եմ  
դարձել, ձեռք ու ոտից ընկել եմ, իսկ ջերումն մի քոռ կոպէկ կա՞յ։  
եղած չ'եղած ըուղարկել եմ Սաքանին, մի կերոց կ'ապրեմ զիւղում...  
Այսպէս անդապար երկար ու բարակ մտածելուց յետոյ վերջապէս  
հաստատ վճռելով մի երկու ամսից յետոյ ճանապարհ ընկաւ դէպի  
իւր ծննդավայրը։

## ՓԵ.

Թագուհին շատ ուրախացաւ Ստեփանի զալովը. նորա երազած ամրոցները ահա այսօր էզուց է պիտի կատարւէին: Ստեփանին փոխաւած տեսաւ. նա էլ էր հագուստը փոխել, բայց ոչ այնպէս, ինչպէս Սաքանը, Դանին էին. նա ունէր դլսին ոչ թէ մորթի գոտակի, այլ մահուդի իւղուած, սրոց կտրած ֆուրաշկաց, հազին մի քանի տեղից կարկառած և գոյնը գնացած բաճկոնակ, իսկ ոտերին լապճիներ էին. միայն արխալուղն էր նոր: Թէև այսպէս հին—մին էին Ստեփանի հագուստը, այնու ամենայնիւ թագուհին Ստեփանին փոխաւած տեսնելով շատ ուրախացաւ, միայն ներսում սաստիկ տանջւում էր, երբ տեսնում էր Ստեփանին ձեռք ու ոտից ընկած. «Քոռանամ», քար կորւեմ, որքան չարչարւել տանջւել է խեղճ մարդս մեզ համար», ասում էր նա: Բայց յոց ունէր, որ այնուհետև լաւ ապրելով Ստեփանը կը վերանորոգւի, այն ժամանակ էլ իրանց բաղդաւորութեան չափ ու սահման չի լինի:

Ստեփանի առաջի բան ու գործը եղաւ Սաքանին հարցնել, գործը ի՞նչպէս է գնում: Սաքանն էլ միամտացրեց նրան ասելով.

—Քէֆդ քէօք պահի՛ր, տղան լաւ աշխատում է. մէկին մէկ, մէկին երկու է աշխատում բագուայ խուրդաւաթը, այսպէս եթէ գնալու լինի մի քանի տարում մեր փողին փող չը հասնիլ:

Ստեփանը միամտեցաւ, իսր գնալուց յետոյ ասոկած եղան հոգաց մոռացաւ մտածելով.

—Լաւ է, ես իմ Աստուածը, մի հարիւր մանէթի ապրանք հազին. լինեմ ուղարկած, այժմ երկու հարիւր գարձած կը լինի. էլ ինչու եմ գնում բագու, հէնց կը մնամ՝ աշխաեց:

Անցաւ մի երկու շաբաթ. գիւղացիների վար ու ցանքի ժամանակն էր. ամեն մէկը իւր դութանը, տաւարն էր սլատրաստում գործը սկսելու, իսկ Ստեփանը ձեռքերը ծալած ոչինչ չէր անում. երբ միան էր գալիս գութանը, վար ու ցանքը, կարծիս, սիրով ծանրանում, սեւանում էր և անիծում էր գիւղը. չ'չ, էլի դութանի յետեւց պիտի քաշ քաշ լինեմ, էլի պիտի գամ ծխոսած կոճերի տակ նստեմ, էլի նորա երեսը տեսնեմ... չ՛, չ՛, էլի Բագուն լաւ է, էլի թէ կեանք ուրախութիւն կաց այնտեղ է. աւելի լաւ է գնամ

նազու, ականջս հանդարտ իմ մշակութիւնս անեմ, քան թէ այստեղ էլի գութանի մաճը բռնեմ. թող կիսովի վարեն մեր բաժինտափը, ինչ ուղում են անեն, ես կը գնամ, չեմ կարողանում դիմանալ:

Այսպէս Ստեփանը բոլորովին օտարացած զիւղական կեանքին՝ ոչ մի բանի ձեռք չը տւաւ. կինը զարմացաւ, նա կարծում էր, որ Ստեփանը մեծ հարստութիւն է բերել և դրա համար է, որ ոչ մի բան չի անում ինչպէս Սաքանն էր:

Երկու ամսից յետոց Ստեփանը պատրաստւեց Բագու գնալ: Դորա համար Սաքանից ճանապարհածախքի և գլխահարկի համար փող ուղեց:

Սաքանը ունքերը կիսած դարձաւ Ստեփանին.

— Բա չես ասիլ փողը շահով տւել էի Խօջաչ Պօղոսին՝ կերաւ. քեզ չը յայտնեցի, ասացի, նոր է տուն եկել, ինչու սիրտը կոտրեմ. բայց ես նորա հախիցը կը գամ. դու գնա՛ Բագու, էլի ուղարկի՛ր, այսուհետեւ ես կ'իմանամ ում կը տամ շահով:

— Բա թուղթ բան չ'ունի՞ս նրանից. ուրեմն ասում է, որ փող եմ տեսել, հա՛, վհատած հարցրաւ Ստեփանը:

— Բա չ'ունիմ, ով է թղթին նայում ժամանակիս, հասարակ թղթով բան չի դառնալ, պէտք է էլի մի ցիսուն, վաթսուն մանէթիսրջեմ, սրան նրան ուտացնեմ, սրան նրան ուները լիզեմ, որ կարողանամ առնել: Փորձանք է, պատահմունք է, այսպէս էլ կը լինի, բա չես իմանում՝ յաջողութեան մէջ անյաջողութիւն էլ կը լինի. ինչու ես տիրում, դու լինես սաղ՝ ես, էլի կը գնաս Բագու, էլի կ'ուղարկես, այն ժամանակ ոչ թէ մինին մին կ'աշխատենք, այլ մինին հինգ, վեց, որովհետեւ այժմ փորձել եմ, ուստայ եմ դարձել. Այս էլ ասեմ, որ եթէ Պօղոսը իրան կոտր չը հանի, եղած չեղածը չը ծածկի, սրան նրան անունովը անի, իմացած կացիր, որ, ինչպէս էլ որ լինի, տղան պոկ կը տայ: Ակի սիրտդ մի կտրիր այս ընկերութիւնից, էլի ասում եմ, Աստուծով լաւ կը լինինք:

Ստեփանը հաւատաց Սաքանի շինծու խօսքերին և սիրտը բոլորովին կորւեց զիւղից: Նա մի կերպ Սաքանի միջնորդութեամբ մի տեղից պարոք վերցրեց, թողեց առնը տակը տակ, զլուխը զլուխ, առանց մի կորեկի չափ անգամ զգացւելու գնաց Բագու: Ժի՞նչ տեսայ ես, ի՞նչ իմացայ ես, ասաց Յագուհին Ստեփանի

գնալուց յետոյ, ինչո՞ւ եկաւ, ինչո՞ւ գնաց և ինչո՞ւ ոչ մի կարգադրութիւն չ'արաւ. մեր վար անողը ո՞վ է, մեր հնձողը ո՞վ, առանց փողի ո՞վ է անողը. ասենք ոսկու փողը տւել է, բա մեր բերանի հացը. հա, երեխ Սաքանի հետ խօսել է: Բոլորը դէն, ախր սկի մին չը խօսաց, մին չը հարցրաւ ի՞նչպէս էինք ապրում իրանից յետոյ, այսուհետեւ ինչ պիտի անենք. հէնց որ ուզում էիր հետը խօսալ, ունքերը վրայ էր տալիս, տնից դուրս գալիս, չը գիտեմ, մի ուրիշ տեսակ երեւաց աչքիս. բա ասա էլ պրծաւ էլի մեր լաւ ապրելը. բաղդի աչքը դուրս գայ, էլի ինձ եկաւ, քոռացաւ: Գնալու ժամանակը, գնալու ժամանակը, սկի մոքիցս դուրս չի գալիս, մի դարտակ խօսքը ինչ է, այն էլ ափսոսաց ասելու. բա այսպէս քոռաղդ կը լինի, որ իմ ճակատին է գրւած: Եւ երկար բարակ մոածելուց յետոյ աւելացրաւ. Ե՛հ, տեսնես ինչ է պատահել, կամ գործն է կիսատ թողել կամ վեասւել է, գնում է վերջացնի: Տէր Աստուած, դու նրան բարի ճանապարհ և գործին յաջողութիւն տաս:

## ԺԼ.

Սաքանը շատ ուրախացաւ, որ Ստեփանը շուտով գնաց և իւր ասածներին հաւատացած գնաց: «Թող գնայ, էլի ապրանք ուղարկի, ասաց Սաքանը, նա այնպէս էր զզւած զիւղից, որ էլ չեմ կարծում մէկ էլ յետ դառնաց զիւղը. այդ լաւ է, ինչ ուզենամ կ'անեմ այսուհետեւ, իմ վախս դրանից էր, զա էլ չը կայ, բանս բան է: Այսօր հէնց Թագուհին մի քանի բաներ է ուզել, կը տանեմ, նորա կակուղ դամարը արդէն դուել եմ»:

Այսպէս Սաքանը մտածելով մանրունքը վերցրեց և գնաց Թագուհու մօսու:

—Բարով, սանամէ՛ր, Ստեփանից նամակ ունիմ, ստեց Սաքանը, աչքդ լոյս, գործը լաւ է. ուզած բաներդ բերել եմ, լաւերն եմ ջոկել, ախր բա ես վաս ապրանք կը տամ իմ ազիզ սանամօրը. դէ նատի՛, ինչ ես վեր կենում. երեխաները այնտեղ իրանց համար խաղում են, էլ ինչո՞ւ ես կանչում, նստի ա՛. Ե՛հ, ցաւերս նորոգւում է, որ տեսնում եմ էլի քեզ այնպէս, ինչպէս առաջ էիր. ախր ինչպէս ես եմ քեզ հետ վարւում, ուզում եմ, որ դու էլ այնպէս վարւես:

Ճիշդ է Թագուհին նստեց, բայց վա՛յ այն նստելուն:

—Մի բան եմ ասում, կնքահա՛յր, չը նեղանաս, դարձաւ Թագուհին ամաչելով:

—Տասն ասա՛, քեզ մատաղ, դու բան ասես ես նեղանա՞մ. որ Աստուածդ ուրանաս, ասես, գնա՛ սարիցը տակը ընկիր, յետ կենողը չեմ, խելքդ ո՞ւմ է գնացել:

—Վերցրած ապրանքի զինն ասա՛, որ ցորենը չափեմ տամ:

—Դէ, զէ, էլի կնիկարմատ է, հէնց ուզում ես դուռը երեսիդ փակ մնայ. սրանից յետոց թէ ես ձեր դոները կոխեմ՝ ասա՛ թիւ երեսիդ. հերիք է, ես ինչ եմ ասում, սա ինչ. բա այսքան խօսքեց մէկը մտքումդ չը մնաց, բա էլ ո՛ր օրւայ համար ենք մէնք: Ստեփանի տան համար բան պէտք լինի և փողով տա՞մ. ինչ որ տւել եմ յետ կ'առնեմ, կրակը կը զցեմ և էլ ձեր դուռը չեմ տեսնի: Կեանքումն դեռ մէկը այնպէս սրտիս չի կպել ինչպէս այսօր դու կպար:

—Ես չե՞մ իմանում դու. ինչ սրտի տէր ես, բայց լաւն այն է, որ վերցնես:

—Էլի փողի անունն է տալիս, որ այդպէս է՝ երեխ ուզում ես, որ գնամ այստեղից էլ չը գամ: լաւ, ես էլ կը գնամ, ասելով ուզեց իբր թէ տեղից վեր կենալ:

—Սանահէ՛ր, դէ որ ցորենը չես վերցնում, մի ճուխտ դուլպայ ունիմ, այն լինի, վերցո՞ւր:

—Այ դրան խօսք չունիմ. բայց ինչպէս հագնեմ քո մատներով արած դուլպան. սկի կը հագնեմ՝ կը պահեմ իբրև յիշելիք:

Թագուհին դուլպան բերաւ. Սաքանը ձեռիցը տռնելով սկսեց գովել. «Ո՞նչ գեղեցիկ է, կեանքումն դեռ այսպիսի դուլպայ չեմ տեսել. ա՛յ ձեռքաջուր, ոսկի է ո՞սկի, ես իմ Աստուածը. չէ, չեմ հագնի, կը պահեմ աչքիս լուսի պէս»:

«Գուլպայ է տալիս, մոտածեց Սաքանը, այն էլ Սանփանի համար արած դուլպան, տե՛ս որքա՞ն ինձ սիրում է. ժամանակին է, էլ դէս դէն չը կաց:»

—Այս ձեռքերո՞վն ես արել, ասելով ձեռքը բռնեց, և ուզում էր սեղմելով ասել՝ «զիլար կենաց, բայց խօսքը բերանումը մնաց, որովհետեւ Թագուհին կայծակի արագութեամբ ձեռքը յետ քաշեց:

—Ինչ ես ձեռքդ քաշում. բա այդպիսի ձեռքաջրատէրի ձեռ-

քին չեն մտիկ տա՞յ, ճիշդ ջահիլի համար է, ինձ կը սազի չէ, սա-  
նամէր. և այնպիսի շարժմունք գործ դրաւ, որ Թագուհին կիսով  
շափ հասկացաւ և մի քիչ հեռացաւ: Սաքանը կրկին մօտեցաւ և  
սկսեց դարձեալ իւր գովասանքը և հանաքները: Թագուհին կար-  
մըրել, արիւնը տեղ էր գլխին, չէր իմանում ինչ անի, մի կերպ,  
մի հնարքով ուզում էր կամ դուրս գնաց կամ երեխաններին  
կանչի:

— Բան չ'ունիս խօ, ինչո՞ւ ես դուրս գնում, խօսում ենք, էլի՞.  
դու էլ տեսնում ես որ այնքան գործ ունիմ, որ միշտ չեմ կարո-  
ղանում գալ. Է՛հ, Ստեփանը հիմա այնտեղ քէֆ է անում. թի՞ւ,  
այստեղի նման չի հու. այստեղ գիւղացիներ են, չեն հասկանում:  
այնտեղ լաւ է, անկնկատէր մարդն էլ է կնկատէր:

— Է՛հ, հողս այնպիսի կնիկների գլխին, մենք մատուշկայ  
չենք հո՞ւ, Ստեփանը այդպիսի բան չի անիլ:

— Հա՛յ, հա՛յ, մին թեւ առնես գնաս, նայես, այն ժամանակ  
միայն կը հաւատաս թէ ինչեր կաց այնտեղ, ինձից հարցուր, ինչ  
որ ասում եմ ինձ հաւատա՛. լաւ, ես մի կողմը, բա այնտեղից եկողը,  
նամակ բերողը ինչ է ասում.— Ստեփանը լաւ գործում է, ասում է,  
բայց ինչ կանես ստացածը ցրիւ է տալիս, էլ աչք չ'ունի գիւղի  
վերայ. ի հարկէ աչք չի ունենալ, ցիւմար չի հո՞ւ:

— Նա՞, Ստեփանը... վա՛յ քո բերողի ծամը կտրեմ, այդ ինչ օյին  
գրիր գլխիս, էլ ես ինչ պիտի անեմ այս աշխարհում մենակ. վա՛յ  
քո ծնած օրը մւանայ, գորա համա՞ր շուտ փախար գիւղից: Եւ  
Թագուհին էլ չ'իմացաւ թէ ինչպէս նստեց տեղը. արտասուքը հե-  
ղողի պէս էր թափում. նա այդ րոպէին իրան զդաց մենակ լայնա-  
տարած աշխարհում և բաղդի ձեռքին խաղալիք:

— Անահէ՛ր, գլխովդ պառուտ գամ, ոտիդ տակի հողը լինեմ,  
զորդ ես ասո՞ւմ, բա այդ օյին է որ գլխիս է դնում, լացակումած  
հարցրեց Թագուհին:

— Արդ չը լինի էլ ինչո՞ւ եմ ասում, շատ ուրախ եմ ասելո՞ւ.  
քեզ եմ ասում, ուրիշը լինէր չէի ասիլ, որովհետև քեզ համար է  
իմ սիրոս ցաւում:

— Ե՛, սրանից յետոյ էլ ինձ մեռած համարիր, աւելի լաւ է  
դուռը երեխիս փակես և գնաս, էլ ինձ ոչ մի բան հարկաւոր չի,

երբ որ եղած հացը կը պրծնի, էլ ուտելու բան չենք ունենալ, այն ժամանակ թո՞ղ մեռնենք:

— Ինչ է ասում, ինչ է ասում. խօջայ Սէրգին մեռած է էլի, էլ ո՞ր օրւայ համար եմ ես, սկի ոչ մի բանի սլակասութիւն չես քաշիլ, մի՛ վախիր, այս ջանը քեզ համար չը դնողին մարդ չեմ ասի, խելքդ ո՞ւմ է զնացել. լաց մի՛ լինիր, սանամէր, շատ վատս է զալիս, չեմ կարողանում աչքերիդ արտասուքը տանել: Ես գնում եմ, չը լինի էլի լաց լինես, սիրտդ մի քիչ պինդ պահէր, ինչ է ամեն մի բանի համար լաց ես լինում, ասելով դուրս գնաց:

Սաքանը կիսով չափ նպատակին հասած համարեց. «Դէ թող այժմ էլ առաջւայ նման մտածի, Ստեփանը նորա աշքում էլ մի կոպէկի գին չունի, դէ թող այժմ էլ ձեռքը յետ քաշի. նորա օգնողն է սրանից յետոյ նորա տէրը. ինչ պիտի անի որ, կնիկ չի՝ մազը երկար, խելքը կարճ, բանս բան է. զլսահարկի, վարուցանքի ժամանակը կը գայ՝ ո՞վ է տալու, ո՞վ է օգնելու, եթէ ոչ ես. նա էլ կ'իմանայ թէ քրտինքովս աշխատած փողովն եմ օգնում, Ստեփանը սաղ լինիս:

Թագուհին մնաց մէնակ. դրութիւնը վատ էր. երազած ամրոցները անդառնալի կերպով չքացան, իւր և որդիկերանց խեղճութիւնը միայն աչքի առաջ պատկերացաւ, իսկ Ստեփանը երևեցաւ իրրե մի անբարողական, փչացած մարդ, որ չը գիտէ ընտանեկան սրբութիւն, որ չը գիտէ ծնող հօր պարտականութիւնը. նա, մի խօսքով, մի հրէշ էր, որից, կարծես, ուզում էր այդ րոպէին փախչել, ուզում էր այն անից, որի մէջ միասին ապրել են, հեռանալ, կորչել առանց յետ նայելու որպէս զի տունը և տան եղած չ'եղածը տեսնելով չը մտաբերի նրան:

«Ո՛ւհ, Ստեփան, ասաց Թագուհին մի քիչ հանդարտւելուց յետոյ, այդպէս էլի, այդպէս խաբեցիր էլի ինձ, զնացիր որ էլ յետ չը դառնաս. էլ ինչո՞ւ ես գտակ ծածկում, էլ ինչո՞ւ ես քեզ մարդ ասում, ա՛ տղամարդ մեռնես զու, սրանից յետոյ կնիկդ, երեխաներդ ուրիշը պիտի պահի և ինչե՞ր պիտի ասեն, ո՛ւհ, փչանաս զու, ինչ պէս փչացել ես. էլ ի՞նչ երեսով իմ պակաս—պռատը ասեմ Սաքանին, շատ էլ նա պատրաստ է տալու, բայց որ գիտէ զու էլ չես գալու և իւր պարտքը չես վճարելու: Օխ, Ստեփան, կեանքդ սեւ-

նայ, ինչպէս իմը սկացրիր, էլ ես ինչ յուսով տանը նստեմ բանիս կենամ, բա դու ինձ այլպէ՞ս էիր սիրում։ ինձնից լաւը ճարեցիր, ա՛ հողեմ զորա գլուխը՝ ջերդ ուտելու, տկոր դուրս անելու քեզ։ Այս Աստուած, այնքան ապրեմ, որ Ստեփանի վերջը տեսնեմ։

### ԺԹ.

Թագուհու ձեռքը էլ բանի չեր կպչում։ նա, կարծես, ինչ որ անում էր ձախ ձեռքով էր անում։ մի բան կորցրածի պէս, ապուշի նման, չը զիտէր ինչ էր անում։ կերածի, խմածի համը չը զիտէր, հանգստութիւն չ'ունէր ամբողջ օրերով, իսկ զիշերները՝ քուն։ նա ընկեր հարևանի հետ, կարծես, կտրել էր իւր յարաբերութիւնը, էլ առաջւայ Թագուհին չեր, որ ոտը կախ տար աղբըին ջուր լցնելիս կամ աղբըից գալիս. խօսքը, բառն էլ էր կտրւել նորա բերանից, շրթունքը շրթունքին զրած, ապուշ և կասկածոտ աչքերով կը գնար ջրի, կը գար։ «Ի՞նչ է պատահել Թագուհուն, յաճախ քչփչում էին քիթ քթի տւած կանայքը աղբըին, հնարքով ընկած չը լինի, զիր ու փտիկ արած չը լինին»։ Այսպէս ամեն մէկը մի կարծիք էր յայտնում, բայց մի որոշ եզրակացութեան չէին գալիս։

Թագուհին թէև կորցրած էր համարում Ստեփանին, բայց մի օր երբ շատ լաց եղաւ, անիծեց Ստեփանին, սկ արաւ իւր ծնած օրը և վերջը երբ արտասուքը մի քիչ հանգստացրեց վշտացած սիրտը, սկսեց հանգարտութեամբ մտածել և յանկարծ մի լոյս ծագեց Թագուհու գլխում, մի լոյս, որ թէև մազի չափ երեցաւ աշքին, բայց որից սիրտը ժամանակաւորապէս կանգ առաւ, հանդարտւեց։ նա մտածեց Սաքանին ինդրել, աղաչել որ Ստեփանին մի կերպ տնով անի։ «Սաքանը ինձ համար ինչ ասես կ'անի, մոտածում էր Թագուհին սրտապնդւած, նա բարի տղայ է, նա այնպէս կ'անի, որ Ստեփանին հէնց վաղը բերել կը տայց նորա ոտերը կ'ընկնեմ, լիզ կը տամ նորա ոտերի տակը, կ'աղաչեմ, կը պաղատեմ որ այս որբերին խեղճ գայ»

Այսպէս մտածելուց յետոց շուտով վերկացաւ և ուղում էր թէ դէպի Սաքանինց տունը գնայ՝ մէկ էլ տեսաւ Սաքանը երեսն ի վեր ելաւ։ — Աա՛յ, կնքահայր, հէնց ես ուղում էի ձեր առւնը գալ, ցաւդ առնեմ, ոտերիդ մատաղ գնամ, կնքահայր, թուղթ ու գրիչդ

ա՛ռ, մի գրի գրի՛ր ընկերոջդ, գրիր ասա՛ հիւանդ են հրեխաներդ, կնիկդ, շուտ վերկաց եկ, էլ ճար չը կայ:

—ինչ ես ասում, սանամի՛ր, կարծում ես նա չի իմանալ, որ խաբում ե՞ս. նամակդ կը պատոի, դէն կը զցի քեզ վերայ ծիծաղելով. ի՞նչ ես շատ էլ դարտ անում, այդ ինչ ես դառել, բոլորովին ձեռք ու ոտից ընկել ես, ուրիշի խօ չե՞ս յայտնել:

—Ոչ ոքի, ոչ ոքի չեմ յայտնել, էլ հանդսուոթիւն չ'ունիմ, թէ մի ճար ունիս, ճար արա՛, թէ չէ ես կը մեռնեմ այսպէս, խեղճ են այն սեերեսի որբերը:

—Ինչ եմ էլ սպասում, մտածեց Սաքանը, լաւ ժամանակն է, էլ ինչ պիտի ասի որ»:

Այսպէս մտածելուց յետոյ Սաքանը պարզ-որոշ իւր միտքը յայտնեց և աւելացրեց, որ իւր ձեռքին շատ հեշտ է Ստեփանին բերիլ տալ. նա չը սպասեց իւր պատասխանին, ձեռքը զցեց Թագուհու վզովը և ուզում էր հանաքներ անել, մէկ էլ պատն ի վեր զրած մահակը Թագուհու ձեռքումը տեսաւ: Սաքանը թիկոնքի վերայ մի քանի հարւած ընդունելուց յետոյ շատ աշխատեց մահակը առնել՝ չը կարողացաւ, Թագուհին տղամարդի պէս առաջն արած ծեծելով դուրս հանեց տնից:

—Պա՛, պկա՛, պկա՛, ժամանակս փոխւել է, հեալով տուն ընկաւ Թագուհին, այն տեսակ լեզու բանեցրաւ, այն տեսակ բաներ արաւ, որ եղքօր տեղ ընդունեցի. տես, աես նորա մտքին նայիր, չորանայ քո ծծած ծիծը: Քո բերողի ծամը կորեմ, Ստեփան, դու էլ ասում ես դուակ ունիմ գլխիս, կնիկդ անոտէր ես թողել սրան նրան ձեռքին, դու դնացել այնտեղ շնութիւն անում: աբուռը հացի հետ ես կերել ինչ է, այ անխիղճ. ա՛խ Աստուած, ես մարդ լինէի մի դուրս գայի համարձակ, բռնէի այդ քոսոտին խեղդէի. Ստեփանին, Ստեփանին՝ նա ի՞նչ մեղ ունի:

Թագուհին այժմ բոլորովին մենակ զգաց իրան. էլ ոչ մի տեղից յոյս չ'ունէր, օգնութիւն անող չ'ունէր, մնում էր ինքը իրան գլխի ճարը տեսնի, բայց ի՞նչպէս պիտի տեսնէր, կնիկ տեղովը ի՞նչ պիտի անէր, ո՞վ էր նորա հարկի վողը տւողը, ո՞վ էր նորա հունձ անողը, —ոչ ոք չը կար. ուրիշ մօտ բարեկամ չը կար, հօրանո ու մարդու կողմից բարեկամները ողջ Բագու էին գնացել, խկ օտարին ի՞նչպէս դիմէր, ո՞վ նրան փող կը տար:

«Այս Աստուած, ճարս ինչ պիտի լինի, ասաց Թագուհին դառնացած, դեռ այժմ կ'ապրեմ քարին քացի տալով, բայց յետոց... Ստեփան աղա՛յ, մէկդ երկու չը դառնայ, որ դու ինձ այս օրին հասցըիր, ինչ անեմ, ինչ, մեռնեմ աւելի լաւ չի. բայց այսորքերը ի՞նչ անեն, ո՞ւր գնան, ո՞ւմ ձեռք մեկնեն—Սաքա՞նին. ա՛խ, Սաքան, ոչ կանաչ կարմիրդ կապես, դատածդդ վերմակի տակ ուտես, ոչ ուրախութիւն տեսնես»:

«Ո՛ւհ, ո՛ւհ, կապտած կը լինի տեղերը անպատճառ, ձեռքը տանելով մէջքը շնչաց Սաքանը, յետ յետ նայելով. գնամ, գնամ տուն արտղ քսեմ: Տեսար այդ անիծածը ինչ դրաւ զլխիս, ինիկարմատ տեղովը ինձ ծեծեց. դուրս չը գայ չաւ անի, անունս կոտրի: Դու սպասիր, Թագուհի, այդ քեզ վերայ արժան չի նստիլ, քեզ այն օրին հասցնեմ, որ ոտերս ընկնես աղաչես. լաւ, Թագուհի, այսօր էդուց հարկահանը կը գայ դուռդ կը կարի, ասենք՝ այս տարի մի կերպ կ'ապրես, կիսովի հնձել կը տաս, եկող տարին ի՞նչ պիտի անես, ով պիտի քեզ պահի. ա՛յ գիտի Բագու հա՛, ո՛վ է տեսել այդպիսի բաներ»:

Օրը մթնել էր. Թագուհու դուռը փակ, երեխաները քնած, ձայն-ձունը կորւած էր. միայն Թագուհին էր, որ այդ մթութեան մէջ չարչարում, տանջւում էր: Քունը աչքից փախած՝ նա անդադար շրջաջւում էր տեղերում. նորա մտածողութիւնը առաջ ոչ այլ ինչ էր եթէ ոչ Ստեփանը, իսկ այժմ Սաքանի արարքը երկրորդ մտածողութեան նիւթ տուաւ. Ստեփանին բոլորովին կորած համարեց, որովհետեւ Սաքանին ծեծեց, դուրս քշեց տնից. Սաքանն էր մենակ, որ մարդուն կարող կը լինէր Բագուից բերել զիւղը: Ո՞նչ պիտի անեմ ես—ահա՛ այն հետեանքը, որ դուրս բերաւ Ստեփանի և Սաքանի վարմունքից. երկար ու բարակ չը մտածեց, պարզ-որոշ աչքին երևեցաւ իւր և որդիերանց դրութիւնը: Որոշեցաւ Թագուհու վիճակը, էլ ուրիշ բան չէր մտածում բացի մուրացկանութիւնը, թէ ինչպէս երեխաներին ոտարորիկ յետել դցած, իսկ ինքը ցնցոտիներով ծածկւած, տւողին օրհնում, իսկ չը տւողին թթու

գէմքով նայում մինչև անգամ անիծում, անցնում է: Միտն ընկաւ նոյնպէս, որ իրանը ոչ մի ուրախութիւն չը պիտի տեսնեն, գիւղացիները էլ իրանց մարդու տեղ չը պիտի գցեն ուրախութեան ու արտօնութեան ժամանակ, այլ իբրև ողորմելի, թշւառ ընտանիքի՝ միշտ պիտի կոխ տան, անցնեն և իրանցով ծաղը ու ծանակ անեն: Այս բոլորը միտքը բերելուց յետոյ մի սարսուռ զգաց ներսը և լաւ ապրելը իբրև հակապատկեր երեեցաւ աչքերին. Սաքանը բերել կը տայ Ստեփանին, էլի կ'ապրենք միասին և լաւ օր կը քաշենք. չ՛, չ՛, չեմ կարող տանել, սոված, ծարաւ ինչպէս պիտի ապրեմ; Ստեփին, այնտեղ իւր գլուխն է պահում, իսկ ես այստեղ...» և յան- կարծ լեզուն կծեց, չը վերջացրաւ, մինչև անգամ չ'ուզեց մտածած լինի, ինքն իրանից ամաչեց, ճակատը սառը քրտինք կոխեց և այդ դրութեան մէջ աւելի լաւ համարեց սոված, ծարաւ դռներն ընկնել հաց մուրալ, քան թէ այդ քայլը անել:

«Վի', ծամս կտրեմ; քոռանամ ես ճուխո աչքերով, այս ի՞նչ է իմ մտքովը անցնում, այբուին, խորովւին Ստեփանն էլ, Սաքանն էլ. նեղը ընկած տեղը ինչ պիտի անեմ, զնենք թէ այն տղամարդ մեռածը չը կայ, մեռել է, — աղքատութիւն կ'անեմ, երեխաներիս կը պահեմ»:

Այսպէս մտածելուց յետոյ Թագուհու սիրով փոքր ինչ հանդարտւեց և ջարդւած կոտրատւածի պէս վերմակը գլխովը քաշեց, քնի աշխարհքը ընկաւ:

## Ի.

Սաքանը մտքումը դրաւ Թագուհուց անպատճառ վրէժ առնել: Նա առ այժմ մինչև այդ վրէժի գործադրութիւնը աչքով պահում էր Բագու գնացողներին կամ այնտեղից եկողներին, որ տեսնի Թագուհու և Ստեփանի մէջ նամակադրութիւնն չը կայ խօ, և երբ տեսաւ որ բոլորովին կորւած է այդ երկուսի յարաբերութիւնը, Թագուհուն այնպիսի դրութեան մէջ դրաւ, որ ինքը, իւր ոսով դայ աղաշի. բացց Թագուհին ոչ մի նշան ցոյց չը տւաւ և այդ եղելութեան մասին ոչ ոքի չ'ասաց: Սաքանը իւր միւն էր ուտում, զարմանում էր թէ ի՞նչպէս մի կին—մի խեղճ արարած անտէր, անտիրական ոչէ, է ասել, սուել կանգնել և առեն նեղութեան համբերու-

թեամբ տանում է. իսկ երբեմն երբ խորն էր մտածում՝ թէ ինչպէս ինըը ծեծւեց մի թողլ, մի ոսի տակի հող արարածից, արիւնը քիչ էր մնում գլխին խփի: «Նա, նա ինձ նման սովորաքեարին ծեծի', տնից դուրս հանի': կաց, խելքը կարծ կինարմատ, զու դեռ ինձ չես ճանաշում, կարծում ես քո մարդի նման մշակ եմ, ես սկի լայադ չեմ անում տանուտէր ու դատաւորի հետ նստել, ասել, խօսել, դու պէտք է ինձ ծեծե՛ս քո կնիկ տեղովդ. սպասի՛ր, այնպէս ճաշդ եփեմ, որ քէֆդ գայ:

Ամեն անգամ ասում էր այս խօսքերը, բայց դարձեալ սիրաը չէր հովանում, նա անպատճառ ուզում էր վրէժ առնել, որովհետեւ պարզ տեսնում էր Թագուհին կակդոզը, իւր թքածը լիզողը չէ:

Սաքանի առաջի բան ու գործը եղաւ Թագուհու անունը կոտրել, աշխարհքով մին անել. դորա միջոցը գտաւ. մի օր հարեւանների կանանց մօտ նստած մանրունք էր ծախում՝ սրան նրան խաբելով, հանաքներ անելով, սորա նորա վերայ բամբասելով՝ խօսքը յաջողութեամբ շուռ բերաւ Ստեփանի վերայ:

—Ստեփանը լաւ տղայ է, ասաց նա, բայց ինչ կ'անես կնիկը մի քիչ լաւ ճանապարհի վերայ չի, ափս՛ս տղայ:

Կանաքը շուռ տւին երեսները, իբր թէ չին ուզում լսել, այն ինչ հոգեկան մեծ բաւականութեամբ պատրաստ էին լսելու, որովհետեւ մի կնոջ գատ արարմունքը, բարքը պիտի պախարակւի:

—Աղջի՛, ոնց կը լինի այդպիսի բանը, ասաց կանանցից մէկը, վո՞ւյ, վո՞ւյ, վարս կտրեմ, նեռը ծնւել է: —Խօսողը վախենալով մի գուցէ խօսակցութեան թելը կտրւի, աւելացրեց ըստ երեսյթին կամաց, իբր չ'ուզենալով Սաքանը լսի. «Բա խօջայ Սէրգին ի՞նչպէս իմացաւու»

—Ո՞նց իմացայ... է՛, ա՛ կնանիք, ձեր ցերեկւայ մոտածածը ես գիշերը քնած ժամանակն եմ մոտածում. ինձ խօջայ Սէրգի կ'ասեն հա՛, Բագու կացած, ամեն ինչը սովորած. ման դալուց, խօսալուց, հէնց մինչև անգամ նայելուց ճանաշում եմ մի աչքաճպումը թէ նա ինչ պտուղ կը լինի՝ չա՞ր թէ բարի:

—Աղջի՛, մոռացել ես քեզ ինչ եմ պատմել նորա մասին, գեռ մի հղոկ չը կար մանուշակի վնջեր էին տալիս աղբրին, դարձեալ իբր թէ ծածուկ ասաց կանանցից մէկը:

—Ողորմի քո հօրը, էլ ես ինչ ասեմ; դու ինձնից լաւ զիտես

նորա տակն էլ զլուխն էլ. բայց նրանից այն տեսակ բաներ եմ տեսել, որ այդ փունջեր ստանալը ոչինչ բաներ են:

—Վո՞յ, վո՞յ, աշխարհս փոխւել է, ով է տեսել այդ տեսակ բան, տեսնես ի՞նչ է արել. ինեղձ Ստեփանը նորա համար շուտ փախաւ է, իրար հետ քշփշում էին կանայք և սրտատրով աղասում էին Սաքանի բերան բացւելուն:

—Եհ, լաւ չէ ասելլ, խեղճ է, Ստեփանի ականջը կ'ընկնի, կը գայ սաղսաղ կը մորթի, ասաց Սաքանը:

—Գլխներիս ձի՛ է քացի տւել ինչ է, որ բերաններիցս հանենք, միաբերան վրայ բերին մօտի նստածները:

—Հարցրո՛ւ, հարցրո՛ւ, տես ինչ է տեսել, բիշաբիշտորում էին չըխօսկանները աւելի մօտ նստածին, որ տարիքով կին էր:

—Դորդ է, ասացի որ Ստեփանի ականջը ընկնի նորա բանը վատ կը լինի, բայց որ ծանր ու թեթև անենք, կը տեսնենք, աւելի լաւ է իմանայ, որ նորա կապը քաշի, ճանապարհ բերի: Եհ, դէ ինչ էք ուզում իմանալ, նա լա՞ւ բան է արել, որ ասեմ էլ. էլ նրան դիւդումը պահելի չի, ցաքում պիտի դնել կրակել:

—Ասա՛, ասա՛ լաւ, տեսնենք ինչ է արել այդ ծամըկուտուրը, դարձաւ տարիքով կինը:

—Նատ երկար է դրա պատմութիւնը, ես կարճ կ'ասեմ՝ դուք երկար հասկացէք.—մի գիշեր յետ էի դառնում տուն. Ստեփաննց տան մօտովը անցնելիս, մէկ էլ ականջովս մի ձայն ընկաւ, նացեցի չորս կողմա, ոչինչ չը տեսայ, սաստիկ մութ էր. ականջներս սրեցի, աչքերիս զոռ տոի, մնացի մեխւած տեղս կանգնած, աչքերս ջոկեց, մէկի գլուխը երևեցաւ, կնկայ զլուխ էր, մէկ էլ աչքերիս զոռ տոի մի ուրիշ գլուխ էլ աչքովս ընկաւ, այդ էլ տղամարդի էր: Դէ սա բաւական է էլ ինչ ասեմ, վերջը դուք իմացէք:

Կանանցից մէկը բացականչում էր. «Քո բերողի ծամը կորեմ, միւսը՝ «Քո դուրս եկած օջաղը քանդւի, պիրիշակ մնայ», մի երրորդը՝ «Ծծած ծիծդ չորանայ», իսկ չորրորդը, որ աւելի անկեղծ էր՝ «Մեր տանուտէրին մարդ չեմ ասիլ», որ նրան ցաքումը չը դնի, կրակ տայ»:

—Դէ լաւ, վերջացրո՛ւ տեսնենք ինչ է եղել, ինդրեց տարիքով կինը:

—Դէ լաւ ասեմ. նրանք ինձ չէին տեսնում, սկսեցին անուշ-

անուշ զբոց անել, ամօթք դէս, հեռի երեսաց, այնպիսի բաներ էին ասում, այնպիսի լիրը լիրը խօսքեր էին ասում, որ էլ չեմ կարող ասել, հէնց մնացի այնտեղ քար կտրած կանգնած։ Այսպէս ուղղում էի տեսնել վերջը ինչ պիտի լինի, որ յետոյ մի լաւ քոթիեմ երկուսին էլ, բայց որտեղից էր այդ ժամին մէկ էլ տեսնեմ մէկը էշը առաջը դցած տմումբալի չո՛ւ չո՛ւ անելով եկաւ։ հէնց որ այդ ձայնը լսեցին, իրար վերջին անգամ համբոյր տւին և մարդը կրակ կտրւած ծլկեց։ Թագուհին չը կարողացաւ ձեռքի մեկնած բանը նրան տալ, վէր ընկաւ։ էլ չը կարողացայ ոչ մէկին հանել, որ ճաշները եփեմ, հէնց մնաց դազը սրտումն էշաւորը գլուխը քաշ դցած գնաց, մնացի մենակ։ մօտեցայ նրանց չափարին և սկսեցի ման գալ, գտնել, տեսնել ինչ բան էր, որ Թագուհին վէր զցեց։ երկար պտուտելուց յետոյ վերջապէս, էլ ինչ գլուխներդ ցաւացնեմ, գտայ մի ճուխտ գուլպակ։ ի՞նչ կը տաք ցոյց տամ, ասելով հանեց գուլպան և նրանց առաջը զրեց։

Էլ կանանց բացականչութիւններին ու հայհոգանքներին վերջ չը կար։

— Վի՛, վի՛ աղջի, այդպէս բան կը լինի՝, դորդ որ նորա արած գուլպան է։

— Հա, նա է միայն մեր թաղում այդ տեսակ նախշուն գուլպաներ անում, աւելացրեց մի ուրիշը։

— Նախշուն գուլպաներ է անում, որ ջահէլներին բաշխի հա՞, ասաց Սաքանը։

— Բոլորովին բերաններիցդ չը հանէք, մի քար տակին զբէք մի քար զլիսին, գարձաւ տարիքով կինը, ինչ հարկաւոր է, Ստեփանը կ'իմանայ, արիւն կ'անի։

— Ոնց թէ բերաններիցդ չը հանէք, բա այդպէս մնաց լաւ է, թող իմանայ, կապը քաշի, իբրև բարեկամ նրան՝ ինձ էլ է ամօթք կպչում չէ, վրէժինդրութեամբ լցւած բարձր ձայնով ասաց Սաքանը։

Մինչեւ արևը մայր կը մոռնէր գիւղացի կանայք համարեա բոլորեքեանք էլ Սաքանի այս շինծու պատմութիւնը գիտէին։ չը նայելով նոցանից ամեն մէկը՝ իւր հարեւանին ու բարեկամին պատմելուց յետոյ՝ ինպրում էր բերաններից չը հանել, բայց չէր անցնում

մի բոպէ, բերաններում տաք ջուր չը կարողանալով պահել՝ ուրիշին էին, յացանում աւելի զարդարուն ծաղկացրած կերպով և աւելադրութիւններով։

Այսպէս կանայք՝ ճիշլ, որոշ գաղափար կազմելով Թագուհու վերայ՝ վճռեցին նորա հետ երբէք չը խօսել և յարաբերութիւն չ'ունենալ։

## ԻԱ.

Թագուհին տան եղած չեղածը ծախել ծախծխոտել էր և մի կերպ կառափարւել. առաջ՝ մինչև նորա անունը կոտրւելը՝ էլի այս ու այն օգնում էր և աւզրում էր քարին քացի տալով, բայց այժմ ոչ մէկը չի ուզում ձեռք մեկնել նրան, չի ուզում մինչև անգամ կիսովի վարը անել, հարամ են համարում նրան, նորա տունը, նորա ունեցած չ'ունեցածը։ Թագուհին այդ գժւար զրութեան մէջ մի կերպ նամակ գրել տւառ Ստեփանին, յայտնեց իւր զրութիւնը, բայց նամակը տեղ չը հասաւ, որովհետեւ Սաքանը ճանկն էր զցել։

Ել ոչ մի տեղից յոյս չ'ունէր։ Գիշեր էր. երեխանները չորս կողմը կարած ժընգժընգում, հաց էին ուզում. նա աչքը չորս բոլորը դարձրեց մի բան չը գտաւ, որին կարելի լինէր փող տալ, երեխանների քաղցը յագեցնել. Փնչ անեմ, Աստուած, դուռը փակեմ և միասին քաղցից կոտորւենք, բա ես ինչպէս տեսնեմ այս իմ կուրացած աչքերով երեխաններիս մահը. ոււհ, չէ՛, չեմ ուզում, աւելի լաւ է ես ինձ կը խեղդեմ այս գիշեր և թող ինչ լինում է լինի ինձնից յետոյ Քնեցէ՛ք, դարձաւ բարձր ձայնով լացուկումած երեխաններին, էգուց ձեղ համար հաց կ'առնեմ, այժմ չը կայ, քնեցէ՛ք, որդիք. խեղճ երեխաններ, քթի տակ ասաց արտասելով, ինչպէս քնեն, այսօր ինչ են կերել, Ե՛հ, երեւի ինձնից յետոյ կը խղճան ձեղ վերաց և այն ժամանակ կուշա կ'ուտէք։

Այսպէս Թագուհին կեանքից ուզեց ձեռք վերցնել. չէր ուզում այլ ևս ապրել. մուրացկանութիւնը միտը չէր գալիս թէ գժւար էր համարում. նա զորա մասին այդ ճգնաժամին չը մտածեց. ուզում էր շուտով որքան որ հնարաւոր է որդիկերանց այդ աղեկաոր ձայներից ազատւել։

Որդինները ժընգժընգալով, «Հաց, հաց անելով աջ ու ձախ պառկեցին, քնով անցան» Թագուհին մնաց նստած աչքերը հերթին

չուած. հերթը բաց էր, տեսնում էր պարզ երկնակամարը, ծպիլին տուղ, ցանցը իւր աստղերը և գրանցից բարձր եօթներորդ երկնքի վերաց իւր Արարէի աթոռը, որի վերայ նստած Արարէը աշալուրջ նայում էր բովանդակ համատարած աշխարհին. նորա աչքերից չէին փախչում ոչ հարուսար և ոչ աղքատը, ոչ բարին և ոչ չարը. այդ բոլորը լաւ գիտէր Թագուհին և, կարծես, տեսնում էր, որ իրան—աղքատին էլ Աստուած—իւր Ամենաբարի Աստուածը նայում է, բայց ոչինչ չի անում, լուռ միայն նայում է: Թագուհին չի ուզում խընդրել, չի ուզում երեսի վերաց ընկնել, աղաւել պաղատել՝ որբերի բերանի հացը տալ. նա շատ է խնդրել, շատ է չոքէ չոք ժամում սեղանի առաջ արտասուրք թափելով խնդրել, բայց ոչինչ չի եղել. նա իւր հաւատը մի մազի չափ անդամ չի խախտել տեղից, այժմ հաստատ հաւատացած է, որ ինքը մեղաւոր է, ապա թէ ոչ անմեղի աղաչանքը Աստուած կը լսի, Աստուած չի թողնի, որ անմեղը կորչի: Մեղաւոր է, ով գիտէ ինչ է արել, բայց այժմ չի ցիշում, գուցէ աղքատին երե՞ս է շուռ տեել, գուցէ սուրբերի տակը ամեն տարի չի զնացել, ժամում մոմ չի վառել, շարաթ երեկները խունկ չի ծխել: Այս բոլորը միտն էր գալիս և այլ ևս չեր ուզում իւր մեղաւոր գլուխը բարձրացնել, Արարէի աթոռին նայել:

«Մեղաւոր ես», կարծես զարադամի մի անկիւնից ձայն տուեց մէկը:

Թագուհին սրառաց, դողդողաց, զարզանդեց և վախեցաւ նայել դէպի այն կողմը, որտեղից ձայնը եկաւ: Լռութիւն տիրեց. ոչ մի ձայն չը կար, միայն ականջները թշշշում, վշվում էին. նա կարծես շշմեց և ցնորւածի պէս բերանը բաց չուած աչքերը մի կէտի վերաց գցեց, մնաց անշարժ:

Երկրորդ անգամ դարձեալ լսեց նորա թշշշացնող ականջները՝ և մեղաւոր ես խօսքը. բայց այս անգամ Թագուհին անգիտակցաբար բարձր ճիչ հանեց, գետնին կպաւ, կարծես ուզում էր ձեռքերով գետինը պինդ բռնել, որ ոչ ոք չը կարողանայ տեղից վերկացնել. նա ոյժ գործ գրաւ և կարծում էր մատերը հողի յատակի մէջ է իրել, ամուր բռնել և գլուխը գետնի մէջ կոխել: Թագուհու աչքերից Ամենաբարի Աստուածը հեռացաւ, երկեցան սատանաները աջանդակ դէմքերով, երկար կէռ կէռ պողերով, բարակ սուր պուշտով, շրջապատեցին իրան, պար եկան, ծիծաղեցին, ժըժըզա-

պայ արին երեսին, թքեցին, հեռացան. երկրորդ և երրորդ անգամ նոյնը կրկնւելուց յետոյ՝ զլիսին, մէջքին թափւեցան, մազերը քաշեցին, պոկեցին, շորերը կտոր կտոր արին. այդ բոլորը լաւ զգում էր, զգում էր մինչև անգամ ծանրութիւնը, որ իւր վերայ նստած շորերը կտորում էին սուր-սուր գանակներով, բայց ոչ մի շարժմունք, ոչ մի ձայն-ծպտուն չէր կարողանում հանել, քափ ու քրտինքի մէջ կորած, շնչառութիւնը արագացած սպասում էր՝ ահա մի երկու բոպէից յետոյ պիտի շունչը կտրւի, սատանաների բաժին գտնայ:

Հեռացաւ սատանաների խումբը, բայց ահա մի ուրիշ խումբ մանր, բոլորովին մանր, թափւեցան վրան, ողջ մարմինը ծածկեցին, ամեն մի մազի ծայրից կախւեցան, քաշեցին, քաշքացին անկիւնից անկիւն, սիւների վրացով բարձրացրին, տարան հերթին հացրին և այնուեղից պատրաստում էին բաց թողնել, կտոր կտոր անել. Թագուհին լեղապատառ ուզեց հարաց' տալ, օգնութիւն կանչել, բայց բերանումը լեզուն չորացել, քիմքին էր կպել, կամաց հա՛յ հա՛յ արաւ, մէկ էլ լսեց մեծ աղջիկը «այան, այան» է կանչում և փեշից ձգձգում. կարծես քնից զարթնեց, իւր որդուն տեսնելով մօսը՝ սթափւեց, ձեռքը դէպի մարմինը տարաւ վախվիսելով, բայց ոչինչ չը տեսաւ, զետինը շօշափեց իմացաւ՝ որ գետնի վերայ է, երկիւղ չը կայ. փախան կորան աչքից սատանաները, երեսին խաչ հանց «Յիսուս Քրիստոս» ասելով, մի քիչ ջուր խմեց, սրտի թրթռողը կտրեց, քրտինքը չորացաւ, յետոյ հարցրաւ աղջկան.

—Ինչու ես վերկացել:

—Քնած տեղս յանկարծ մէկը վրաս ընկաւ՝ զարթնեցի:

—Աղջի՛, ո՞վ պիտի ընկնի վրադ, վի՛, քոռանամ, խեղճ եթիմս զլիսին էլ են թափւել էդ ծամրկտուրները, իմ մեղքիս համար է իմ, դու ի՞նչ մեղ ունիս, ա՛ անմեղ գառը. բա՛ էլ սրանից յետոյ այս տանը չի ապրէիլ, քաջքերով լցւել են. խեղճ երեխիս էլ են ճարել. մի՛ քնիր, կա՛ց, վա՛ց, իմ եթիմ բալայ:

Աղջիկը ոչինչ չը հասկացաւ մօր սասածներից, նա քնաթաթալս աչքերը ճմռոտում էր. իւր վերայ ընկնողը մայրն է եղել, երբ սատանաները չարչարում էին:

Թագուհին համոզւեցաւ, որ սատանաներով լցւած է իւր սունը մեղքի պատճառով. «Ես ինձ սպանեմ, մոածում էր նա, ազատեմ

թէ երեխաներիս լաց ու կոծից և թէ սատանաների ձեռքից, բայց միւս աշխարհում սատանաները ինձ աւելի կը շարչարեն, կը տանեն գժոխքը, կ'այրեն կը փթօթեն, և հուր յաւիտենական դժոխքի բաժին կը դառնամ. չէ՛, աւելի լաւ է մեղքերս քաւեմ, ողորմութիւն ուզեմ, երեխաներիս պահեմ, պաս ու ծոմ կենամ, մեր սուրբի տակը գնամ, մեղքերս թողնեմ, պրծնեմ՝ յետոյ ինչ լինում է լինի:

Այսպէս մտածելով վեր կացաւ տեղից. նա գիտէր որ երբ խաչահանում են սատանաները չքանում են. կանգնեց գէպի ազօթարանը, աղջկան էլ կանգնեցրեց, խաչ հանեց, նրան էլ անել տւաւ և այդպէս թեթևացած անկողին մտան:

## ԻԲ.

Քաղցր առաւօտը բոլորեցունց տան դւները բաց անել տւաւ: Դաները բացւելիս արեի կարմիր լոյսը ներս թափանցեց և մեծի թէ փոքրի, տղամարդի թէ կինարմատի աչքերը խողսալով ներսերը գործունէութեան աշխոյժ սկատրոյկը վառեց և շտապով նոր գործի հրաւիրեց: Թագուհու գուռը ևս բացւեցաւ, բայց շատ ծանր, չ'ուզենալով. Թագուհին էր գուռ բաց անողը. նա մէկ ուզեց բանալ գուրս գալ և իբրև մուրացկան յայտարարւել ողջ զիւղացիներին. մէկ էլ յետ քաշեց, չ'ուզեց բանալ, կարծում էր բոլորեքնանք էլ գիտեն, որ այնուհետև ինքը պարկը շալակին ողորմութիւն պիտի հաւաքի. նա պինդ բանած դրան փակը, լաց եղաւ, անիծեց իւր ծնած օրը, ուե արաւ Ստեփանի հետ պսակւիլը և յետ կանգնելով տաց. Որ ինչ էլ որ լինի ողորմութիւն չեմ հաւաքի. ի՞նչ կ'ասեն զիւղի միջումը, լաւ չէ հէնց այս ժամին տափը մոտնեմ՝ պրծնեմ: բայց երբ անգիտակցաբար յետ նայեց, և որդիկերանց նայեց, որոնք գեռ ևս անուշ քնած էին և ով գիտէ անուշ երազներ էին տեսնում թէ ինչպէս ցամաք հաց պիտի ուտեն որ քնառեղից վերկենան, զլիխին սառը ջուր մաղւեց, վիզը ծուեց, թով ձեռքը յետ քաշեց և դուռը բացւեցաւ կամացուկ:

Պայծառ առաւօտ էր. արեւը իւր կենսատու ճառադայթները անխնաց ափսել, տարածել էր ամենուրեք. բոլորեքեան ով դուրս էր գալիս անից առոյզ, շտապ քայլերով, գլուխները անկած, աչքերը մեծ մեծ բացած, ձեռները յետ ու առաջ առնելով իրանց դործին

էին կենում, իսկ Թագուհին մութ տեսաւ այդ լուսաւոր և գեղեցիկ առաւօտը. զլուխը կրծքին խոնարհած, կոները բոլորովին թուլացած, աչքերը, կարծես, փառով անցած կանգնեց սրահումը, բայց ոտերը. չը զիմացան, նատեց փայտի վերաց և այդպէս նստած մնաց. գուցէ ացպէս անվերջ նստած մնար, եթէ երեխաները մկանէին յետեից չը գային «Հաց, Հաց» անելով մօր փէշից բռնէին:

«Մի կտոր Հաց, խոր Հոգոց քաշելով քթի տակ ասաց Թագուհին, մի կտոր Հաց. Է՛հ, կար ժամանակ, որ ես էի բաժանում այդ կտոր Հացը սրան նրան, Հիմա ես պիտի ձեռք մեկնեմ և ո՞ւմ, — նրանց, որոնք լայաղ էլ չեն անում թէ խօսեն հետս, է՛ ճարս ինչ, մի սաղ օրից աւելի է խեղճերին խաբում եմ, երեխ սա է իմ բաղդը, ճակուս գիրը, գնամ պարկս շալակեմ գիւղն ընկնեմ, ջուրը ընկնողը անձրեից չի վախենալու:

Այսպէս մի ձեռքում բռնեց պարկը, իսկ միւսով փոքրիկ երեխային խստեց և ճանապարհ ընկաւ: Նա ճիշդ է գնում էր, բայց վա՛յ այն գնալուն, անդադար դէս ու դէն էր դառնում, այս ու այն կողմը նայում, տեսնի վրան նայող, ծիծաղող չը կա՞յ: Մուրացկանութեան եղանակը դեռ ես չը գիտէր, անցաւ բաւականին տեղ, բայց ոչ մի տան դրան առաջ չը կանգնեց, Հաց չ'ուզեց: Իրանց թաղից անց կենալով բոլորովին ուրիշ թաղ, առաջի անգամը Հանդիպեց Սաքանին. Սաքանը աչքերը գետնին դցած ճանապարհը փոխեց քթի տակ ասելով. Ողորմութիւն է Հաւաքում. Հա՛, Հա՛, Հա՛, տեսնեմ ողորմութիւնով ինչպէս ես ապրում և ո՛վ է քեզ ողորմութիւն տւողը, կը կակղես, կը գաս, կը գաս, ձեռքիցս չես փախչիլ. Ստեփանին էլ չես տեսնիլ. լուրը Հիմա որտեղ որ է գնաց, ականջը ընկաւ, որքան ուզում ես զիր զրի, զրիդ նայողը ո՛վ է. դեռ դա ոչինչ, քթածակերովդ պիտի թափեմ, դու մի քիչ էլ սպասիրու:

— Սաքանն է, ա՛ տափը մտնես, ասաց Թագուհին ցնցւած, ամբողջապէս դողդողալովից, այդ օձի ճուտը չէ՞ր Ստեփանին ինձնից Հանողը, ով է իմանում՝ ինչեր է զրել. ծիծաղի՛ր, ծիծաղի՛ր, մուրացկանութիւն եմ անում պարկը շալակիս, երեխայիս պահեմ, մեծացնեմ, որ մօր աջըդը Հանի, որ քեզ պէս քոստ աղւեսները մարդու վերաց չը ծիծաղեն. Աստուած տեսնում է բոլորը, քո վերջն էլ կը տեսնենք:

Թագուհին շարունակեց ճանապարհը: «Ուր եմ գնում, մոնեմ այս բակը, երեխաներիս աչքը հիմա ջուր կտրեց», ասելով մտաւ, մնաց շորացած կանգնած բակի մէջ տեղը. մարդ չը կար դուրսը, տեսնող չը կար, որ շուտով աղքատի բաժինը տային, ճանապարհ գցէին, ամօթից գետինն էր ուզում մտնել, պրծներ: «Յետ դառնամ, մարդ չը կայ, ո՞վ է կանգնողը, խօ ներս չը պիտի մտնեմ», ասելով ուզում էր յետ յետ գնալ, որ մի երեխայ դէպի իրան վազեց հարցնելով:

— Ի՞նչ ես ուզում, բայի՞:

— Հաց եմ ուզում, բալայ, մի կտոր հաց, ձեռքով չափը ցոյց տալով առանց ամաչելու ասաց Թագուհին:

— Այսն, այսն, հաց ուզող է եկել, ասելով տղան տուն վազեց:

Մայրը դուրս եկաւ, բաց Թագուհուն տեսնելով՝ թիւ, առաւոտ առաւոտ ում երես տեսանք, շուտով անիծելով, հայհոյելով ներս մտաւ. «Ճամըդ կտրեմ, մհանին նայի՞ր, մհանի՞ն, հիմա էլ տես ինչ օյինբազութիւն է անում, ուզում է ասել թէ չոր ծառը արիւն էք քսում, սուտ է, տեսնում էք ողորմութիւն եմ հաւաքում: ինչ ես հացը տանում մուռտառին տալիս, վի՞ր դիր», բարկացաւ երեխայի վերայ:

— Այսն, այսն, լաց էր լինում, երեխան էլ էր լաց լինում, սոված է երեռում: ասելով հացը ձեռքին դէպի Թագուհին վազեց:

Թագուհին դուրս գնաց, փոքրիկ տղան էլ յետեից, երկար ու բարակ նայում էր նորա յետեից զարմացած թէ ինչո՞ւ. մայրը աղքատի վերայ բարկացաւ, չուզեց որ հաց տայ:

Թագուհին մոտաւ մի երկրորդ բակ. ոչ ոք դուրս չ'եկաւ տեսնելով է հաց ուզողը, էլանէծք, հայհոյանք չը մնաց դլիսին թափեցին. նա էլ կոյր ու փոշման յետ յետ գնաց:

Մտաւ մի ուրիշ բակ և յանկարծ երեսն ի վեր ելան մի քանի կանայք, որ քիթ քիթ տւած խօսում էին. դրանցից մէկը, որ լաւ գիտէր Սաքանի շինծու պատմութիւնը, բերանը ճղածի նման ձեռքերով, աչք ու ունքով, հարայ հրոցով յարձակեց Թագուհու վերայ և կարկախ պէս վրայ թափեց. «Ա լաչա՛ռ, անզգա՛մ, գիշերները ջահիլ ջհուլների հետ ես նստում, վեր կենում, յերեկներն էլ աղքատի շորերում, պարկը շալակիդ դռնէ դուռը ընկնում, ողորմութիւն

հաւաքում, որ ցոյց տաս թէ քեզանում մեղ չը կայ. ասենք ու-  
զում ևս զորանով մեղ խաբել, բա վէրքերով պատած երեսդ ինչ է  
ասում. ա' կնանիք, նայեցէք սրա երեսին, սուտ եմ ասում. ինչ է  
ձեր թաղեցուց էլ քուն ու դադար չես տալիս գիշերները, դէ կորի՛ր  
այս տեղից թէ չէ այս թուրնըխառնին, տեսնում ես, վրադ կը  
կոտրատեմ:

Մնացածներն էլ նորա օրինակին հետևեցին, էլ հայհոյանք,  
անէծք չը մնաց, որ նորա գլխին չը թափէին:

Թագուհին սկզբում մնաց սառած, կանգնած, յետոյ դողաց  
սրառաց, սպրոնեց և կանայք կարծում էին ուշագնաց պիտի լինի,  
վէր ընկնի, բայց յանկարծ ծիծաղեց, քռքռաց «մեղաւոր եմ ես,  
մեղաւոր եմ ես», ասելով ձեռքից դէն զցեց երեխային և շորերը  
պատռաելով, զլուխը քանդելով դուրս վազեց: Թագուհին գժւեց.  
Նա վազում էր բղաւելով, հարայ տալով և ոմեղաւոր եմ, մեղաւոր  
եմ կանչելով. նա այնպէս էր փախչում, կարծես մէկը նրան հետևե-  
լիս լինէր:

Թագուհու երեխան մնաց այստեղ լնկած, սկզբում ոչ ոք չէր  
ուզում վերցնել նրան, հարամ համարելով. բայց յետոյ մի պառաւ  
երեխայի լացը չը կարողանալով տանել վերցրաւ, իւր տունը տարաւ:

Տանուտէրը Թագուհու յետևից մարդ զցել տւաւ, բռնեց և մի  
տան մէջ կողպեց, զզրին հրամայելով ճիպուներ պատրաստել: Իրիկ-  
նապիմին տանուտէրը մի քանի մարդկանցով զուռը բաց անել տւաւ,  
Թագուհուն մի անկիւնում արնաթաթախ կուչ եկած զտան. սաղ  
տեղ չէր մնացել, այնքան էր դէն դէն վազել, զլուխը պատերին կողցրել:  
Այդտեղից ուժով դուրս բերին. տանուտէրը սկսեց հայհոյել, թքել  
երեսին և ասել. «թո՛ղ, ասում եմ, լի՛րբ, անզգամ, անառակութիւնդ,  
թէ չէ ցաքում զնել կը տամ կ'այցեմ. ո՞ւմ ես ուզում խաքել, սուտ  
աղքատ ես ձւանում; սուտ զժւում ես, այդ բոլորը թողիր թէ չէ  
ճիպուները պատրաստ է. թողնում ես թէ չէ, ասա. հա՛, թէ չէ՛»:  
և տեսնելով որ Թագուհին միայն ծիծաղում և վացրենական ձայներ  
է հանում, հրամայեց ծեծել:

Բղաւում էր Թագուհին, վեր վար էր թուշկառում, հարայ էր  
տալիս, բայց տանուտէրը ծեծը չէր մեղմացնում, այլ ասում էր.  
«Ամենայն օր կը ծեծւես, եթէ լաշառութիւնդ չը թողնեսա:

Տան չորս կողմն էին հաւաքւած գիւղացիները. Թագուհու ձայնը նրանց ականջը ընկնելով «ուխա՛յ, ուխա՛յ» էին ասում, ձեռք-ները կրծքերը քսելով. Միայն երեխաների վերայ էր, որ վատ տպա-ւրութիւն էր թողնում, նրանք զարդանդում, փշաքաղւում էին Թա-գուհու ձայնը լսելով. «Քաջկոտ է ընկեր», ասում էին և փախչում:

—Զէ, գծւած է, ի զուր ենք ծեծում, մեղք է, վերջապէս ասաց տանուտէրը և արգելեց ծեծը. թողէք այսոեղ մնայ, հացից ջրից մօռը դրէք, դուռը փակեցէք, գնացէք:

Այդպէս էլ արին. Թագուհուն թողեցին տան մէջ փակւած: Երեխաներից ամեն մէկին տանուտէրի հրամանով մի տուն տւին. նրանց վերայ նոյնպէս վերքեր էր երևում:

Մի ամբողջ շաբաթ Թագուհուն փակած պահեցին օրը մի ան-դամ հաց ու ջուր տալով և վերջը դուրս բերին՝ տեսնելով որ մի քիչ մեղմացել է: Նա էլ չէր վազում, շորերը չէր պատռում: Փո-դոցները ընկած ման էր գալիս, հաց էր ուզում, ստացած հացը մի քանի անգամ կծում, ուտում էր և հնացածը դէն գցում, բայց երբ երեխաները յետևը կտրած հայհոյում, քարոտում էին «քաջքոտ, քաջքոտ» կանչելով, այն ժամանակ հայհոյում, շորերը պատռում, և հարայ տալով փախչում էր բերանը փրփռած:

Թագուհուն վարժւեցան գիւղացիները. հաց էին տալիս պա-հում, որովհետև բանեցնում էին, հանողը ջուր էր կրել տալիս, թէև միևնույն ժամանակ և զզւում էին նորա վերքերից:

## ԻԳ.

Ստեփանը Բագու ապրում էր առանց իրան հաշիւ տալու: Առաջի տարին էլի մէկ մէկ ցնցւում, դողում էր յիշելով իւր անա-ռակ կեանքը, իսկ այժմ սովորական բան էր դարձել նորա համար այդ տեսակ կեանքը. թէև ախտը նորա ձեռք ու ոտը կուչ էր ածել, բայց ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում նորա վերայ, ապրում էր ինչպէս մի կենդանի. աշխատածը համարեա ձեռքից գնում էր, աչ-քին չէր գալիս: Նա մի անգամ ապրանք ուղարկեց Սաքանին, յետոյ այդ էլ կորեց ասելով. «Ինչո՞ւ եմ ուղարկում, տանի դա էլ ուտացնի, դժւար թէ ուղարկածս էլ յետ ստանամ»: Խակ երբ լսեց կնոջ դրու-

թիւնը և սորա նորա խորհուրդները՝ գնալ և երեխաներին տէրութիւն անել, նա ճանապարհ ընկաւ դէպի Անդրկասպեան երկիրը՝ այդ այն ժամանակն էր, երբ այդ նոր երկրի համար նոյն հռչակն էր տարածւել, ինչ որ հագուայ համար էր մի ժամանակ:

Նա գնաց հայ զիւղացիների երկրորդ ռաւետեաց երկիրը» ոչ թէ նորա համար, որ հարստութիւն ձեռք բերի, վերադառնայ տուն, այլ որ այնտեղ, ինչպէս լուր էր տարածւել, աշխատանքի մեծ զնահատում և լաւ ապրուստ կար:

Ստեփանը ծովի միւս երեսը անցնելով, բոլորովին մոռացաւ իւր տուն ու տեղը, ահուսնուն ու որդիկերանց և չը քաշեց երկու տարի մեռաւ սարսափելի դրութեան մէջ:

## ԽՂՃԻ ԽԱՅԹ

Ա. ՄԻՒԹԱՐԵԱՆՑԻ

### I.

Պայծառ գիշեր է. լամբաքալլ լուսին  
Հազիւ գընում է առաջ կիսաքուն.  
Հեռու միգապատ սարի գագաթին  
Փայլում են աստղեր. լոգնած բընութիւն  
Հազիւ շընչում է խաղաղ քնի մէջ.  
Լուս են և երգեր նորեկ թըռչնակի,  
Միալն խոր ձորից տաղտուկ և անվերջ  
Լըսում է խոխոջն արթուն գետակի:  
Ժամ է և հանդչել վաստակած մարդուն,  
Ժամ է մոռանալ հոգսեր ցերեկեան,  
Մոռանալ վըրէժ, ոխ, ատելութիւն,  
Գոնէ երազում սիրել մի վայրկեան:

### II.

Բայց փախչում է քուն մարդու աչքերից.  
Անձալն քաղաքում վառ են ճըրագներ,  
Վառւառ են նոյնպէս վըշտեր ու թախիծ  
Մարդկալին սըրտում. ոչ ոք այս գիշեր  
Զի կարող հանդչել: Եւ ահա հեռւից  
Կէս գիշերալին մեղմիկ զօղանջիւն,  
Հանգած բընութեան ընդհատելով քուն,

Խաղաց, գողդողաց և ալենըման  
Ցընդւեց օդի մէջ։ Նորից կետնք առան  
Թափուր փողոցներ. Նորից ոտնաձայն,  
Երշուկ, աղաղակ տիրեց քաղաքում,  
Նորից բարձրաձայն զանգակն է հընչում։

## III.

Լուռ է բազմութիւն Աստծոյ յարկի տակ։  
Սըրբերի առաջ աղօտ նըշուլով  
Այս և այն կողմում փալլում է ճըրագ,  
Վառւում է կանթեղ առկալծեալ լուսով  
Արտասւող Կուսի պատկերի առաջ,  
Հեռու մըթան մէջ երեւում է խաչ։  
Հոգեբուղին երգեր, տըխուր մեղեղի  
Մըտնում են հոգու խորին ծածկոյթներ,  
Հնկնում է կապանք քարացած սըրտի.  
Արթնանում է խիղճ. չարութեան գործեր  
Շարւում են մէկ մէկ իրար ետևից  
Եւ... և արտասուք գընում է աչքից։

## IV.

Հանգչում են կանթեղ, ճըրագ և մոմեր,  
Տիրում է չորս կողմ խաւար անթափանց,  
Հընչում են կըրկին ոգելից երգեր—  
Լըսում է ամբոխ լուռ, արձանացած։  
Եւ ահա, ահա խաւարի միջին  
Ծընունդ է առնում գիւթական պատկեր—  
Այն խաչ է կանգնած սարի գագաթին  
Եւ նորա շուրջը պայծառ կէս գիշեր։  
Ահա և խաչւածն—գալկացած երես  
Թեքել է պարզած թւերի վերալ,  
Ահեղ չարչարանք, ցաւեր աղեկէզ  
Տանջում են նորան... և լըսում է նա։

## V.

Նորա ճակատին բաց են դեռ վէրքեր,  
Մեխած ձեռներից, կողից կաըեվէր  
Հոսում են արեան շիթերն անդադար  
Եւ կաթիլ կաթիլ գըլորում են վայր:  
Արդէն ուժասպառ մարդկային մարմնին  
Տիրում է գունատ դալկութիւն մահւան,  
Մօտ է խաչւածի վայրկեանը վերջին.  
Ու բա՛ւ է, և ցաւն ունի իւր սահման:  
Բայց աստուածալին վառ են դեռ աչեր.  
Զը կայ նոցա մէջ գանգատ, բարկութիւն,  
Այնտեղ վառում է յաւերժական սէր,  
Նորա բերանից լըսում է ներումն:

## VI.

«Ներում եմ ես ձեզ... արտասւում էք դուք...  
Հաւատում եմ ես չարերի զըղջման...  
Բայց, գիտեմ, երկար չի տևիլ ալդ սուգ—  
Շուտ կը լուսանայ և օրը վաղւեան.  
Եւ երբ չէք տեսնիլ ձեր աչքի առաջ  
Աստուծոյ Որդուն խաչւած, չարչարւած,  
Երբ կը մոռանաք իմ վէրք և արիւն՝  
Կ'անցնի և ալդ կարճ զըղջման դառնութիւն:  
Կըսկըսէք նորից Յուդայի նըման  
Մատնել, վաճառել ձեր մերձաւորին,  
Որ իբրև քարոզ սուրբ ճշմարտութեան  
Փուշ է երևել ձեր կոլը աչերին:

## VII.

«Կեղծ, փարիսական արդարսիրութեամբ  
Քարշ կը տաք նորան դէալ ի հրապարակ  
Եւ ամբարտաւան բարձրամըտութեամբ

Անմեղին մահւան վըճիռ կը կարդաք:  
 Կըսկըսէք նորից եղբօր վերալից  
 Հանել, պատառել միակ պատմուճան,  
 Փըշեր կը կախէք նորա ճակատից,  
 Գանելով ծաղրել կըսկըսէք նորան:  
 Թըշւառութեան մէջ, որպէս սուտ ընկեր,  
 Որպէս ուրացող հեռւից կ'արտասւէք,  
 Եւ երբ կը մնայ նա խեղճ և անտէր՝  
 Բարձրաձայն «ի խաչ, ի խաչ» կը գոչէք:

## VIII.

«Ներում եմ ես ձեզ... բայց իմացէք գուք,  
 Որ պարձանք էք ձեզ ասում իմ անուն,  
 Որ ծըխում էք ինձ քաղցրաբոյր կընդրուկ,  
 Որ ինձ կանգնում էք յարկեր զարդարուն,  
 Որ լաց էք լինում այժմ իմ առաջին՝  
 Ինձ մի անգամ չէր որ խաչ հանեցին:  
 Եւ ամենայն օր խաչւում եմ հիմա...  
 Գիշերեան մըթնով քարշում էք ինձ գուք  
 Ծաղը ու ծանակով գէպ ի Գողգոթա,  
 Պաշտում էք յայտնի՝ անտես ու ծածուկ  
 Մեխում էք ամուր ամուր իմ ձեռներ  
 Եւ իմ կող ու սիրտ խոցում կարեվէր:

## IX.

«Եւ նախում եմ ես լերան գագաթից  
 Սիրած փայփայած մարդկութեան վերալ.—  
 Առաջին անգամ չէին տանջում ինձ  
 Հարլամած ու վէրքեր.—բայց վառ է հիմա  
 Ամենայն գիշեր ձեր հարւածների  
 Կըսկիծն ահաւոր. անզուսպ են ցաւեր,  
 Սաստիկ է տանջանքն անշարժ ձեռների  
 Եւ ալրւում են իմ արիւնոտ վէրքեր...»

Հիմա... բոլորած գիշերեան հանդէս  
Թափում էք խաչի առաջ տըտասսւք...  
Օ՛, լացէ՛ք, լացէ՛ք—ներում եմ ես ձեզ,  
Միայն թէ իրար ներէիք և դուքս...

## X.

Դատարկ է տաճարն. ալեծուփ մըտքով  
Դառնում է ամբոխն անձայն դէպ ի տուն.  
Ոչինչ աղաղակ. խաղաղ անվըրդով  
Հանգչում է չորս կողմն հանգած բնութիւն:  
Թեթև, ըսպիտակ ամպերով ծածկւած  
Նընջում են լուսին, աստղեր անհամար,  
Քընում է հիմա աշխարհ—արարած,  
Քընում է և մարդն. բայց երկար երկար  
Արթուն է դեռ ձայն զայրացած խըղճի,  
Անհանգիստ է քուն, կոշտ է անկողին  
Եւ երազներով մըռայլ, ահռելի  
Տանջւում է նորա յանցաւոր հոգին...

## ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

### Յ. ՍԱԴԱԹ Է. ԵԱՆԻ

Ընդհանուր տեղեկութիւններ հողատիրութեան ուսումնասիրութեան մասին  
Եւրոպակում և մեզանում:

Շատ վաղուց է, որ հողատիրութիւնը Եւրոպակում դարձել է գիտնական ուսումնասիրութեան առարկաց: Զարմանալի և խորհրդածութեան արժանի երեսոյթ, — այն առարկան, որի հետ կապւած է եղել հասարակութիւնների կազմակերպութիւնը և նոյն իսկ ազգերի բազդը, շատ անգամ երկար դարեր առանց արժանի ուշադրութեան է մնացած եղել պատմագիրների և գիտնականների կողմից: Հին ժամանակների գրողները, Հերօգոտից սկսած, լինելով իրանց նկարագրութիւնների մէջ շատ անգամ բազմակողմանի և կեանքի բոլոր երեսոյթներին հետամուտ, անուշադիր են եղել հողատիրութեան կարգերի վերաբերմամբ, կամ կցկոտուր փաստեր են յայտնել, որոնք ուղղակի չեն ցոյց տալիս նոցա ժամանակակից հողատիրութեան կազմակերպութիւնը: Եւս առաւել դոցանից շատ քիչերն էին կարողանում հասկանալ այն վճռողական դերը, որ կատարում էր ազգերի պատմութեան մէջ հողատիրութեան այս կամ այն ուղղութիւնը:

Այդ սակաւների թւին է պատկանում Պլինիոսը, որի հռչակաւոր մարգարէական խօսքերը—Latifundia perdidere Italiam շատերին յայտնի է: Նկարագրելով մեծ անցքեր, ազգերի ընդհարում, դասակարգերի ծագում և դերը, նոյն իսկ տէրութիւնների անկումը, պատմագիրները անուշադիր են եղել այդ իրերի գլխաւոր պատճառներից մէկի, շատ անգամ ամենազլլսաւորի—հողատիրութեան վերաբերմամբ: Այդ տեսակ վերաբերութիւնը տևեց մինչև նոր ժամանակները: Իսկ այն

ժամանակւանից, երբ սկսեցին զբաղւել հողատիրութեան կարգերի ուսումնասիրութիւնով, վերջինիս մասին, ժամանակակից հողատիրութեան ազդեցութեան ներքոյ, կազմեցին թիւր վարդապետութիւններ: Մինչև քսանական թւականները այժմեան դարիս տիրապետող վարդապետութիւնը այն էր, որ չը կայ հող առանց կալւածատիրոջ—nulle terre sans seigneur,—որից գիւղացիները զանազան պայմաններով վերցրել են հողերի մի մասը: Բայց որովհետեւ նոյն իսկ այդ ժամանակւայ Եւրոպայում կային տեղեր, ուր կալւածական հողատիրութեան հետ զուգընթացաբար պատահում էին գիւղացու սեպհականութիւն, ազատ համայնական հողատիրութիւն, կամ վերջինիս հետքերը—օրինակ, արտերլ քաղելուց յետոյ դոցա մէջ ազատ, առանց խարութեան, արածացնելու սովորութիւնը և այն, իբրև լրացումն վերև յիշւած վարդապետութեան առաջ եկաւ մի ուրիշը—իւստուս Սօգերի, որը պնդում էր թէ ի սկզբանէ եղել է միայն մասնաւոր սեպհականութիւն հողի վերաբերմամբ, որից յետոյ ծագել են կալւածատիրական հողատիրութիւնը ֆեոդալիզմի ազդեցութեան ներքոյ և համայնական հողատիրութիւնը զանազան գիւղատնտեսական պատճառների ազդեցութեան ներքոյ, որոնց առջև իւրաքանչիւր գիւղացի միայն վեր առած՝ անզօր է եղել, ինչպէս օրինակ, կառուցումն ամբարտակների (πλοτιατί), ջրանցքներ շինելը և այն: Այս վարդապետութիւնների պատճառը մի ուրիշ՝ այդ ժամանակ տիրապետող այն վարդապետութիւն էր, որը չէր թոյլ տալիս կուլտուրական ազգերի մէջ մասնաւոր հողային սեպհականութեան բացակայութիւնը և հասարակաց հողատիրութիւնը (кооперативное землевладение) համարում էր վայրենի ազգերի յատկանիշ: Իրլանդական պատմագիր Սուլիւանը, անպատճութիւն էր համարումիւր ազգի համար 16. և 17.-երորդ դարերի անդիմացի պատմագիրների այն կարծիքը, թէ իրլանդիայում մի ժամանակ եղել է հասարակաց կամ համայնական հողատիրութիւն, և աշխատում է սպացուցներ հակառակը, որ իրլանդիայում ի սկզբանէ եղել է միայն մասնաւոր սեպհականութիւն:

Մինչև այդ ժամանակ հողատիրութեան անցեալը հետազօտութեան առարկայ չէր դարձել և չէր ուսումնասիրւել այդ առարկան Արևմտեան Եւրոպայից դուրս:

Հողատիրութեան ուսումնասիրութեան համար նոր էրա բաց արեց հռչակաւոր գերմանացի գիտնական Մառլերը (Maurer) յիսունական թւականներում՝ իւր աշխատութիւններով գերմանական նախնի հողատիրութեան մասին։ Մառլերը ապացուցեց, որ հողատիրութիւնը, ինչպէս և մարդկացին ամեն մի հիմնարկութիւն, ունի իւր զարգացման աստիճանները և որ նախնի հողատիրութիւնը եղել է համայնական, որից յետոյ ծագել են միւս ձեւերը։ Դորանից յետոյ հողատիրութիւնը դարձաւ գիտնականների առանձին ուշադրութեան առարկայ և ենթարկւեց նկարագրութեան ամեն անդ, ուր մտան եւրոպացիք։ Համեմատական ուսումնասիրութիւնը այդ նիւթերի կատարեցին Բելգիացի գիտնական Լաւըլէ (Ընախնի սեպհականութիւն) և ուսւ գիտնական Կուալւեսկի (Համայնական հողատիրութիւն), «Հողացին յարաբերութիւններն Արևմուտքում, —լեկցիաներ՝ կարդացւած 188<sup>4/5</sup> թ. Մօսկացի համալսարանում), որոնք հաստատեցին Մառլերի վարդապետութիւնը և ուրիշ ազգերի վերաբերմամբ։ Այդ հետազօտութիւնները ապացուցին, որ հողատիրութեան այս կամ այն ձեւը յատուկ չէ այս կամ այն ազգին միայն, այլ իւրաքանչիւր ձեւը կարելի է գտնել զանազան ազգերի մէջ, բայց ոչ միշտ միևնոցն ժամանակ, որովհետև շատ քիչ ազգեր են գտնւում զարգացման նոյն աստիճանի վերաց Մինչդեռ մի ազգ գտնւում է հողատիրութեան նախնական աստիճանների վերաց, միւսները այդ վաղուց արդէն անցել են։ Հողատիրութեան ուսումնասիրութիւնը ցոյց տւեց, որ նորա նախնական նշանաւոր ձեւերից մէկը՝ գիւղահամայնականը — հէնց ներկայումս տիրում է շատ երկիրներում; որ այդ ձեւը ոչ թէ յատկանիշ չէ վայրենիութեան կամ բարբարութեան, այլ ընդհակառակը, լինելով ամենաբաւարարը ամբողջ ժողովրդի բարօրութեան տեսակէտից, կարող է ապրել և բարձր կուլտուրացի հետ։ Ընդունակ լինելով երկարակեցութեան, նա այժմ էլ գտնւում է եւրոպական երկրներում, ինչպէս նուսաստանում, իբրև տիրապետող ձև, ոլաւոնական երկիրներում և մինչև անդամ Զւիցերիացի մի քանի կանոններում և Գերմանիացի Հոենոսեան կողմերում։ Նուսաստանում օրէնսդրութիւնը ընդունել է այդ ձեւը իւր պաշտպանութեան ներքոյ և դիմադրում է նորա քայլացման։ Զանազանութիւնը այդ յիշւած երկիրների և միւս եւրոպական երկիր-

ների մէջ նրանումն է, որ մինչդեռ առաջիններում համարեա չը կայ գիւղացի, որ չ'ունենայ իւր հողը և տունը, միւսներում միլիօնաւոր մարդիկ, բացի իրանց ձեռքերից, ապրուատի ուրիշ աղքիւր չ'ունին և չը զիտեն ի՞նչ է սեպհական անկիւնա։ Մառը երը ցաւելով է խօսում այդ հիմնարկութեան կորստեան մասին Գերմանիայում։

Պէտք է նկատել, որ ամեն տեղ համայնական հողատիրութեան անկումը եղել է միենոյն ժամանակ հողագործ դասակարգի անկումը և շատ տեղեր հետևցրել է սորկութիւն։ Այնպէս որ համայնական հողատիրութեան քայլացիչ գործիչները (Փակտոր) եղել են միենոյն ժամանակ կործանիչ գիւղական դասակարգի բարօրութեան և ազատութեան համար, ինչպէս այդ ապացուցւած է վերև ցիշած գիտնականների՝ Խաւըլէցի, Կուալիւսկու և ուրիշների գրւածներով։

Հողատիրութեան ուսումնասիրութիւնը Ռուսաստանում սկսեց անհամեմատ աւելի ուշ. և զարմանալի երեսոյթ՝ չը նայելով որ Ռուսաստանը բացառապէս հողագործական երկիր է, նորանում տիրապետող հողատիրութեան ձեւը առաջինը նկատեց գերմանացի, մեզ հայերիս լաւ ծանօթ, Բարօն Հակոբհառուդէնը։ Բայց ցետոց Ռուսաստանումն էլ երեան եկան այս հարցի ուսումնասիրութիւնով զբաղւող առաջնակարգ ոյժեր՝ թէ մասնաւորապէս Ռուսաստանին վերաբերեալ և թէ առհասարակ Բաւական է ցիշել այսպիսի անուններ, ինչպէս պրօֆեսոր Կուալիւսկի, Կաւելին, իշխան Վասիլէ իկով, Բելեան և ուրիշներ։ Խոկ Ընդրկովկասում առհասարակ, մեզանում մասնաւորապէս, վերջին տարիներս միայն սկսեցին երեան գալ հետագոտութիւններ և յօդւածներ այս կամ այն գաւառի հողատիրութեան վերաբերեալ։ Այդ յօդւածներից երեւացին, որ մեզանում (հայերիս մէջ) հողատիրութեան ամենասարածւած ձեւը համայնականն է։

Մեր հողատիրութեան տիրապետող ձեմի գոյութեան և կանոնաւոր ընթացքի համար մի վերին աստիճանի բարեյաջող և առաջնակարգ հանգամանք տեղի ունեցաւ. այդ այն է որ Ռուսաստանը, տիրապետելով մեր երկրին, հողատիրութեան նոյն աստիճանի վերայ էր դանւում, որպէս մենք, և վերջը օրէնսդրութեան միջոցով պաշտպանեց այդ ձեւը քայլացումից, թէւ բոլորովին անհնար չ'արաւ նորա անկումը։ Այս լաւ հասկանալի կը լինի այն

ժամանակ, երբ մենք համեմատենք այդ ուրիշ եւրոպական ազգերի տիրապեսութեան հետևանքի հետ զանազան երկրներում։ չը պէտք է մոռանալ, որ մեր խօսքը այս դէպքում միայն հողատիրութեան մասին է։ Այնելով կուլտուրական բարձր աստիճանի վերայ, նոքա (եւրոպացիք) տիրած երկրներում ներմուծեցին իրանց մէջ տիրապետող հողատիրական ձևերը, որի հետևանքը եղաւ շատ ողբալի։ Երիտասարդ և խակ ազգերը, անընդունակ լինելով կուլտուրական մըրցման, մէծ մասամբ հողազուրկ եղան, և այդ ազգեց ոչ թէ միայն այդ ազգերի բարօրութեան անկման վերայ, այլ և թւի։

Վերջին տարիներս կառավարութիւնը, մտադիր լինելով մէր երկրի հողատիրութեան մէջ փոփոխութիւններ մացնել, ենթարկեց արքունական գիւղացիների թէ հողատիրութիւնը և թէ հողազործութիւնը մանրամասն ուսումնասիրութեան։ Այդպիսով մենք այժմ գտնւում ենք մի նշանաւոր պատմական րոպէում, որի նշանակութիւնը սակաւներն են կարողանում հասկանալ։ Առանց չափազանցութեան կարելի է առել, որ վճռւելու է միլիօնաւոր ժողովրդի բաղդը։

Մեր ժողովրդի բարօրութեան և յառաջադիմութեան խնդիրը սերտ կապւած է այս հարցի յաջող վճռւելու հետ։ այս դէպքում եղած սխալների հետևանքը դարերը մինչեւ անգամ անկարող են ուղղել։ Բաւական է վերցնել միայն Անգլիայի և Իրլանդիայի պատմութիւնը հասկնալու համար, որ հազիւ կարող են գտնել ուրիշ կարգի պատմական անցքեր, որոնք իրանց նշանակութիւնով և հետևանքներով կարողանացին մրցել հողատիրութեան մէջ պատահող փոփոխութիւնների հետ։ Լաւըլէ մինչեւ անգամ այժմեան քաղաքակրթութեան բազգը կապում է այդ առարկայի կազմակերպութեան հետ։ և պաշտպան հանդիսանալով համայնական հողատիրութեան, նա գատապարտում է այժմ Եւրոպայի շատ տեղերում տիրապետող հողատիրական ձևերը, գտնելով նոցա ոչ թէ միայն անբաւար, այլ մինչեւ անգամ վտանգաւոր։

Աչքի առաջ ունենալով, որ մեր գրականութեան մէջ հողատիրութեան մասին թարգմանօրէն կամ ինքնորոշն ոչ մի շարադրութիւն չը կայ, մենք անհրաժեշտ համարեցինք գոնեա այս համառօտ տեսութիւնը առաջ բերել, զետեղելով նորա մէջ այդ հարցի

ուսումնասիրութեան վերաբերեալ ամենակարևոր ընդհանուր տեղեթիւնները, և ապա անցնել մեր յօդւածի անմիջական նպատակին:

Երեանեան նահանգի հողատիրական կարգերի նշանակութիւնը ընդհական հողատիրութեան վերաբերմամբ:

Խնչպէս կարելի է նկատել նախընթաց գլխից, մեզանում այժմ հողատիրութեան ուսումնասիրութեան խնդիրը կրկնակութիւն սուացաւ: Ուսումնասիրութեան յատկութիւնից կախւած կը լինի սպասելիք օրէնսդրութեան բաւարարութիւնը, ուսուական հողատիրական օրէնսդրութիւնը, ինչպէս և ուրիշ ազգերում, չի աշխատում ներմուծել միայն նոր կարգեր, այլ որոնում է իւր նիւթը գլխաւորապէս ժողովրդի գարերով առեղծւած սովորութիւնների մէջ, որքան որ վերջինս դոնում է բաւարար իւր տեսակետից: Կառավարութիւնները այս եղբակացութեան եկան պատմութեան մէջ կատարւած դառը փորձերից յետոյ: Այդ համոզմունքն էր, որ դրդեց արքունի հոգերի նախարարութեանը, օրէնքներ տալուց առաջ, ուսումնասիրել ամբողջ երկրի հողատիրութիւնը: Բայց պէտք է իմանալ, որ հողատիրութեան մէջ պատահող երևոյթները, չը նայելով ձևերի գլխաւոր յատկութիւնների մշտականութեան, զանազան բնական և քաղաքական պատճառների շնորհիւ, այնքան բարդ են և խառնիխոււն, որ մի անգամից սպառել անկարելի է, և աւելի սակաւ այդ կարող էր անել պաշտօնական ուսումնասիրութիւնը, որը մեզանում առանձին խոշնդրուների է հանդիպում: Ամեն մի պաշտօնական հետազոտութիւն մեզանում կասկած է ծագեցնում իւր նպատակների վերաբերմամբ և գիւղական ներկայացուցիչները, նայած ինչ կուսակցութեան են պատկանում, աշխատում են սպաշտօնական հաղորդագրութիւնները իրանց շահերին ծառայեցնել, ծածկելով կամ աղաւաղելով խիկական փաստերը: Օրինակ՝ եթէ գիւղացին պատկանում է այն շըրջանին, որը զաւթել է հողերի լաւ և մեծ մասը — մի երևոյթ, որ պատահում է համարեա ամեն մի համայնքում, նա կը բացառորի, որ հողերի այն ինչ տեսակը (զաւթած հողերը), ենթադրենք վարելահողերը, համայնքի իրաւունքից դուրս են և իւրաքանչիւրը տիրում

է իբր սեպհականատէր, ծածկելով այն, որ այդ հանգամանքը համայնքի մէջ խռովութեան պատճառ է և որ համայնքը ձգտում է վերականգնել իւր իրաւունքը:

Միւս կողմից, հետազոտողը պէտք է ունենայ յացտնի աստիճանի թէօրիական պատրաստութիւն. հակառակ դէպքում, կարող է պատահէլ, որ նրանից անուշաղիր մնան առաջնակարգ երևոյթներ: Ես չեմ ուզում պնդել, որ այս ասածներս տիրապետող երևոյթ է վերև ցիշւած պաշտօնական ուսումնասիրութեան մէջ, այլ այն, որ նա բոլորովին ազատ չի կարող լինել այդ տեսակ պակասութիւններից:

Այսպիսի խորհրդածութիւնների շնորհիւ մենք, մտադիր լինելով զբաղւել մեր երկրի հողատիրութեան ուսումնասիրութիւնով, ընսրում ենք այնպիսի միջոց, որը հնար տար մեղ ոչ միայն օգտւել արդէն եղած նիւթերով, այլ միևնոն ժամանակ և անմիջական դիտողութիւններ անել: Դորա համար մենք մեր առաջին փորձը սկսում ենք Երևանի նահանգի հողատիրութիւնից, մեր աշխատութեանը տալով այս վերնագիրը՝ «Հողատիրութիւնը Երևանի նահանգում»: Բայց մեր յօդւածի առարկան աւելի ընդարձակ է քան թէ այդ կարելի է ըմբռնել նորա վերնագրից. և ահա ինչ'ու: Անդրկովկասի մի քանի նահանգների ազգաբնակութիւնը ոչ թէ միայն ազգութեան կողմից, այլ այս կամ այն ազգերի մասերի, ցեղերի վերաբերմամբ՝ չի բազկացած միատեսակ տարրից. ևս առաւել այս ճշմարիտ է հայերի վերաբերմամբ: Հայկական տարրը պատմական տիսուր պատճառների շնորհիւ շարունակ գաղթական շարժողութեան մէջ էր: Նայած թէ մեր երկրի ո՛ր մասում առաջ էր գալիս կարգ և խաղաղութիւն (եթէ կարելի է Հայաստանի մի որ և իցէ մասի վերաբերմամբ այս երկու բառը գործածել), ժողովուրիք զանազան կողմերից հաւաքւում էր այնտեղ: Այդպէս էլ կաղմել է Երևանի նահանգի ազգաբնակութիւնը: Երևանի խանութիւնը տիրելուց և նորան շրջապատող պարսկական և տաճկական գաւառները ժամանակաւորապէս գրաւելուց յետոց, հայ ժողովուրդը, տեսնելով, որ բացի Երևանի և Նախիջևանի խանութիւնները, մնացած գաւառները յետ են դարձնելու, խուռն բազմութեամբ գաղթեց այժմեան Երևանի նահանգը. և այսպէս վերջինիս ազգաբնակութիւնը կաղմեց մի

քանի տաճկական և պարսկական գաւառների բնակիչներից,— Երզրումի, Բայազէղի, Մուշի, Ալաշկերտի, Բուլանուխի, Վանի, Բասենի, Խնուսի, Սալմասոնի, Խոյի, Ուրմիի, Մակուրի և Աւաշուղի (Նօպէն՝ Հայկական նահանգի պատմութիւնը): Գաղթականները մեծ մասմբ խառը բնակւեցան նահանգիս գաւառներում, վերանորոգելով տեղ տեղ աւերակ գիւղերը, երեւմն էլ նոր գիւղեր շինելով: Գիւղերի վերաբերմամբ չի կարելի ասել նոյնը, ինչ որ գաւառների մասին: Գիւղերը կազմել են գլխաւորապէս միանման տարրերից: Ճանապարհորդը զարմացմամբ լսում է մի քանի վերստ հեռաւորութեան վերայ մի քանի բարբառով, միւսում մաքուր Մշու բարբառով, երրորդում Խոյի, չորրորդում Վանի, Մակուրի, և այլն: Եւ այդ գիւղերը գտնւնում են միմեանցից միայն մի քանի վերստ հեռաւորութեամբ: Զանազաննութիւնը աչքի է ընկնում ոչ միայն բարբառների պատճառով, այդ կարող է նկատել և հայերէն չ'իմացողը, որովհետև արտաքուստ նոյնպէս տարբերւում են մի գիւղի բնակիչները միւսներից: Իսկ մի ձիւղ—քիւղիկ Արարատնանը, որիներկայացուցիչներն են Երևան քաղաքը և մի քանի գիւղեր, ինչպէս Աշտարակը, Օշականը և մի քանի ուրիշ գիւղեր, տարբերւում է և իւր կուլոտուրայի բարձրութիւնով: Եւ այս տեսարանը յակամացից ցիշեցնում է մարդուն այն սոսկալի պատմական անցքերը, որոնց մէջ անցնում էր հայկական ազգի կեանքը: Տպաւորութիւնը նոյնն է, ինչ որ անում է մի հեղեղի տեսարան, որը աւերել և մի տեղ է բերել կուտել զանազան շինութիւնների բեկորները: Եւ այսպէս Երևանի նահանգի ազգաբնակութիւնը ոչ թէ ազգերի վերաբերմամբ միայն, այլ մեր ազգի ճիւղերի վերաբերմամբ ի բաղկացած միանման տարրերից:

Այս նահանգում պատահում են ներկայացուցիչներ հայկական ազգի համարեա բոլոր ճիւղերի, որոնք ապրում են Անդրկովկասում, Տաճկաստանում և Պարսկաստանում: Այդ պատճառով Երևանի նահանգի ազգաբնակութեան ուսումնասիրութիւնը մի որ և իցէ կողմից՝ միշտ կողմնակի շօշափում է աւելի լայն սֆերա, քան թէ այդ առաջի անգամից կարող է Երևալ:

Եթէ աչքի առաջ ունենանք այն, որ շատ ժամանակ չէ, որ Երևանի նահանգի այժմեան ազգաբնակութիւնը կազմեց ազգի

զանազան ճիւղերից, հասկանալի կը լինի, որ այդ մասերը կարծ ժամանակում չէին կարող կորցնել իրանց ճիւղին յատու կ կարգերը և սովորութիւնները և նոցա տեղը առեղծել նորերը:

Ուրեմն Երեանի նահանգի հողատիրական կարգերը, անկասկած, մեծ կապ պիտի ունենան այն տաճկական և պարսկական գաւառների հողատիրական կարգերի հետ, որտեղից գաղթել է այս նահանգի հայոց ազգաբնակութիւնը:

Ընդունելով այդ կախումը, մենք աշխատեցինք տեղեկութիւններ հաւաքել այդ գաւառների հողատիրական կարգերի մասին: Վերջապէս մենք ուշադրութիւն դարձրինք մեզ հետաքրքրող առարկայի անցեալի վերաց, որքան մեզ թոյլ է տալիս այդ մեր պատմութիւնը: Վերջին ժամանակներիս պատմութեան մասին, այսինքն դաղթելուց մինչեւ այժմ, տեղեկութիւններ շատ կան, որովհետու տակաւին ասպրում են՝ այսպէս ասած կենդանի յիշատակարանները՝ գաղթող սերնդի մի մասի ներկայացուցիչները:

Այդ տեսակ վերաբերմնանքի բացակայութիւնով դէպի առարկան կարելի է միայն բացատրել սր. Ս. Եղիազարեանի կարծիքը, (այժմ Կազանի համալսարանի պրօֆեսոր) անկասկած՝ մեր երկրի ներկայ իրաւաբանական կարգերը ամենալաւ իմացողի, որ համբաւ-չարեք հողատիրական սիստեման իբր թէ հիմնած է զլիաբաժին (ուժական) սկզբունքի վերաց, և իբր թէ զլիաբաժնի հակառակ դէպքերը շեղումն և անկումն են իսկական համբաչարեք սիստեմի:

Բայց բացի այն, որ Երեանի նահանգում, ինչպէս ասացինք, ապրում են հայ ժողովրդի զանազան մասերի ներկայացուցիչները, այդ գաւառում՝ երկար դարերով կենդրոնացած էր կուլտուրական և քաղաքական զօրութիւնը ամբողջ աղդի: Ուրեմն աչքի առաջ ունենալով որ Երեանի նահանգում իրաւաբանական սովորութիւնները և կարգերը համարեա նոյնչափ ընդհանուր ազգային բնաւորութիւն պիտի ունենան, որքան և տեղային, մենք մեծ կարիք զգացինք հետամուտ լինել մեզ հետաքրքրող առարկայի պատմութեան, հետեւել նորա փոփոխութիւններին դարերի ընթացքում և որոշել այժմեան դրութեան կապը անցեալի հետ:

Պատմական պատճառներ համայնական հողատիրութեան երկարակիցութեան հասկրի մէջ:

Մենք բոլորովին ձեռք չինք տալ պատմութեանը, եթէ ցանկութիւն և կարիք չունենալինք առաջ բերել նրանից այնպիսի փաստեր, որոնք թէւ ուղղակի մեր առարկային շեն վերաբերում, բայց, ուղղակիների բացակայութեան պատճառով, միայնակն են յայտնի հողատիրական դրութեան բացատրութեան համար: Հին հայկական գրականութիւնը բաւականին հարուստ է, ևս առաւել նորա պատմական մասը: Եւ պատմագիրները եղել են իրանց ժամանակին կրթւած մարդիկ, երբեմն լուսաւորւած իրանց ժամանակակից յունական գիտութիւնով, ինչպէս Վ-րդ դարի հեղինակները, և նոցահետազաներից շատերը:

Բայց, չը նայելով այդ բոլորին, հայ գրականութիւնը շատ քիչ նիւթ ունի իւր մէջ ժողովրդի իրաւաբանական կեանքին վերաբերեալ, իսկ մասնաւորապէս հողատիրութեան մասին համարեա ոչ մի ուղղակի փաստ: Դուցէ և այս գէպքում եթէ գործադրւի այն մեթօդը, որը գործադրւեց Արևմտեան Եւրոպայի իրաւաբանութեան պատմութեան ուսումնասիրութեան վերաբերմամբ՝ շատ բան բացւի և հնար լինի ամրող իրաւաբանական ինստիտուտներ (հաստատութիւններ) վերականգնել: Բայց այդ բարդ մէթօդը, որը Արևմտութքում այնպիսի փառաւոր հետեւանքներ ունեցաւ, ինչպէս Մառուրերի, Լաւրիցի, Կուալեսկու և ուրիշ գիտնականների աշխատութիւնները, Անդրկովկասեան ազգերի, մասնաւորապէս մեր հայերի իրաւաբանութեան պատմութեան վերաբերմամբ դնու չի գործադրւել:

Մի բան գմւար բացատրելի է, թէ ինչպէս հայ պատմագիրները, որպէս Վ-րդ դարի և նոյնպէս նորանից յետոց եկողները լուսութեամբ են անցել մի ազգի իրաւաբանութիւնը, որը շատ վաղուց էր ապրում, կուլտուրայի շատ աստիճաններ անցել էր, և ունէր բարդ սօցիալական կազմակերպութիւն: Դեռ Հերօդոտը և Քունօֆօնը ցոյց են տալիս հայերին իբրև մի կուլտուրական ազգ: Միայն ցիշատակները, որ թողել է այդ ժողովուրդը շատ հին ժամանակներից, բաւական են ցոյց տալու, որ զրանց ստեղծող ժողովուրդը կանգնած է եղել կուլտուրական բարձր աստիճանի վերայ: Հետեւ աբար, այդ ժողովրդի իրաւաբանութիւնը ևս գարգացած պիտի լինէր: Ինչո՛ւ պատմագիր-

ները լոռում են դորա մասին և ինչո՞ւ չը կայ իրաւաբանական ոչ մի ցիշատակարան մինչև 12 դարը, — մի ժամանակ, որից իսկապէս սկսում է ազգի անկումը և՝ քաղաքական և՝ կուլտուրական կողմերից։ Եթե բացատրութիւն այդ երևոյթի, որի մանրամասն քննելը մեր առարկայից դուրս է, հետևեալ ենթադրութիւնն ենք անում։

Այն ժամանակը երբ ծագեց և սկսեց ծաղկել հայկական գրականութիւնը, եւրոպական քաղաքակարթութեան հայրենիքում—Յունաստանում և վերջինից լուսաւորւած երկիրներում, որտեղից զիտութիւնը մուտք էր գործում Հայաստան, միտքը յետ էր գնում։ Կրիստոնէական և դրական գիտութիւնների գարը տեղի էր տւել աւտօրիտետի և պատգամախօսական յայտնութիւնների (ինտուիտիւ պրօպագանդաների) գարին։ Կրօնը, իւր ուղղակի նպատակից—բաւարարութիւն տալ միայն կրօնական պահանջներին—շեղելով, դարձրել էին մի ամեն բան բացատրող փիլիսոփայութիւն, որպիսի յարաբերութիւն, ինչպէս արդարացի նկատում է անգլիացի հռչակաւոր պատմաբան Մակոլէյը, միշտ եղել է ի վես իրան—կրօնին և հակառակ նորա իսկական նպատակին։ Եւ ահա ինչու պատմական երեսոյթի սօցիալական և տնտեսական պատճառների ուսումնասիրութիւնը փոխարինեց ամեն բան բացատրող ֆօրմուլով—«մեր մեղքերի համար» (վասն մեղաց մերոց)։ Այսպիսի ժամանակներում էին գրում հայ պատմագիրները։ Մինչդեռ փաստերը հայկական նախնի իրաւաբանութեան մասին շատ հետաքրքիր էին և միուրիշ կողմից։ Յայտնի է որ հայերը պատկանում են հնդկա-եւրոպական մեծ ցեղին, որի իրաւաբանութիւնը բաւականաշափ ուսումնասիրւած է։ Վերին ասուիճանի հետաքրքրական կը լինէր համեմատել հայ ազգի իրաւաբանութիւնը նորա ցեղակից եւրոպացի ազգերի իրաւաբանութեան հետ։ Հայերը մի քանի կողմերից շրջապատած էին շատ հին ժամանակներից ուրիշ ծագումի աղդերով։ Ի հարկէ գրանցից գլխաւորապէս սեմիաներից՝ ինչպէս ամենազարդացածներից՝ հայերը շատ բան պիտի վերցնէին։ Համեմատական մեթօդը մի դէպքով ևս կ'օգտուէր բացատրելու թէ ի՞նչն է ցեղին պատկանում և ո՛րքան ամուր է ցեղական սկզբունքը։ Մեր կարծիքով այն սէրը, որ մեր ազգը ցոյց է տալիս գէպի եւրոպական քաղաքակարթութիւնը և

հեշտ իւրացնում նրան՝ մեծ կապ ունի նորա ծագման հետ։ Խնչպէս ասացինք, հայոց պատմութեան մէջ նորա ներկայ պայմաններում՝ ազգի իրաւաբանութեան մասին ուղղակի տեղեկութիւններ համարեա ըլ կան, ևս առաւել հողատիրութեան մասին։ Եւ մենք պատմութեանը դիմեցինք կողմանակի փասուեր գտնելու մի հողատիրական ձևի երկարակեցութիւնը մեզանում բացատրելու համար, որը, ինչպէս ամեն մի մարդկացին հիմնարկութիւն, ժամանակաւոր է և յատուկ յայտնի կուլուրական աստիճանին, մեր խօսքը համայնական հողատիրութեան մասին է։

Հայկական ազգի պատմութիւնը սկսւում է ամենահին ժամանակներից և հէնց առաջի անգամից այդ պատմութեան մէջ նա ներկայանում է մեզ իրեւ կուլուրական ազգ։ Նորա հասակակիցները վաղուց անցել են այն իրաւաբանական կենցաղը, որի մէջ գտնւում է նա այժմ։ Համայնական հողատիրութեան գոյութիւնը երիտասարդ ազգերի, ինչպէս օրինակ սլաւոնների մէջ՝ զարմանալի չէ։ բայց մի հին ազգի մէջ ինչպէս մերը, նա ենթադրում է անշուշտ բացառիկ պատճառներ, որովհետև մեր կարծիքով մի դէպքը ոչ թէ պիտի խախտէ ընդհանուր օրէնքը, այլ դորա համար պիտի որոնել առանձին բացատրութիւն։ Նոյնը պէտք է ասել և այդ հաստատութեան գոյութեան մասին Զւիցերիացի մի քանի կանոններում։

Որո՞նք են այն առանձին պատճառները, որոնք պահպանեցին երկար դարերի ընթացքում համայնական հողատիրութիւնը Հայաստանում։

Յայտնի է թէ որ աստիճանի մեծ է անտեսական պայմանների աղղեցութիւնը իրաւունքի (պրաՅ) վերայ։ Նառ անգամ անտեսական պատճառը լինում է միայնակը այս կամ այն իրաւաբանական հաստատութեան ծագման։ Համայնական հողատիրութեան գոյութեան պայմանների մէջ, մեր կարծիքով, ամենանշանաւոր տեղը բռնում է հողի պահանջի աղղեցութիւնը։ մի ս նշանաւոր պայմանը հողի վերայ ունեցած իրաւունքի անձեռնմխելիութեան մասին համոզունքի բացակայութիւնն է։

Հայկական ժողովրդի պատմութեան մէջ այդ երկու հանգամանքները շարունակ ներդործող դեր են կատարում։ Ժամանակի

ընթացքում աւելի ու աւելի զօրանալով շնորհիւ քաղաքական պատճառների: Իւր աշխարհադրական դրութեան շնորհիւ հայ ժողովուրդը շարունակ պատերազմական դրութեան մէջ էր: Կեանքի պաշտամանութեան համար ժողովուրդը շատ անգամ թողնում էր իւր մըշտական բնակութեան աեզզ երկրի մի մասում, անցնում միւս մասը, միշտ պակասելով թւով՝ պատերազմի և տեղափոխութեան զանազան վտանգների պատճառով: Պարտութեանը համարեա միշտ հետեւում էր գրաւած գաւառի աւերումը և բնակիչների կոտորածը: Ահա մի քանի օրինակներ այդ տեսակ աւերմունքների, որոնց ամենասարսափելիները սկսւեցին արաբների արշաւանքներից յետոյ և անդադար շարունակւեցին մինչև ուռների դալը Անդրկովկաս:

Ահա ինչ է գրում Յովհաննէս Կաթողիկոսը՝ արաբների արշաւանքների ժամանակակից Զ-րդ գարի պատմագիրը. «Նատ գաւառներ անապատ զարձան, կարծես թէ նրանցում բնակիչներ չեին եղած, և մարդը այնտեղ բնակութիւն երբէք չը լինէր հաստատած»:

Տասն և մէկերորդ դարի պատմագիր Արիստակէս Լաստիվերցին՝ Սելջուկների Հայաստանում կատարած աւերմունքների մասին գրում է. «Երկիրը զրկւեց բնակիչներից, քաղաքները աւերեցան... Նէն աւանները գազանների բնակութիւն դարձան, և նրանց գաշտերը վայրի կենդանիների արօտատեղին...»

Ամենասարսափելին՝ թաթարների արշաւանքներն էին: Ահա ինչ է դրում դոցա մասին ժամանակակից Կիրակոս պատմագիրը. «Արագութեամբ անցնելով Գերբենտի դռնից, անցնելով Աղւանիքից մտան մեր և վրացիների աշխարհը և ինչ որ գտնում էին ճանապարհին սրի ճարակ էին տալիս թէ մարդկանց, թէ կենդանիներին, մինչև անգամ և շներին»:

Այդ արշաւանքներից յետոյ սկսւեց մի անվերջ պատմական ողբերգութիւն. թշնամիները չ'արշաւեցին ու չ'անցան, նոքա բնակութիւն հաստատեցին մեր և մեզ շրջապատող երկիրների մէջ: Լինելով խաշնարած ժողովուրդ, նոքա սրով և հրով արօտատեղի դարձրին իւրաքանչիւր գաւառ, որը ընտրեցին իւրանց բնակութեան համար: Անընդունակ լինելով մի որ և իցէ կուլտուրական կոչման, պատերազմից և աւարից դուրս ուրիշ ձգտումներ չ'ունենալով, նոքա սկսեցին անվերջ կոիններ միմեանց և ուրիշ ազգերի հետ, որի հետեւանքը եղաւ ամայութիւնը մի ժամանակ մշակւած և բարգաւաճ

երկիրների և լնդունակ տարրերի նւազումը և կորուսով։ Երբեմն երբեմն այդ աւերիչ ոյժը զօրանալով համառմ էր զարհուրերի չափերի, ինչպէս օրինակ Լանկթամուրի ժամանակի, որ կարող է համարւել ծայրացեղ ներկայացուցիչը թրքա-թաթար ազգերի կործանիչ ձգտութիւնների։ Սա Հայաստանը, ինչպէս և ուրիշ շատ երկիրներ, արեան դաշտ դարձեց։ Հայկական տարրը, մի շարք յուսահասու ընզիմադրութիւններից և սպատերազմներից յետոյ, զինաթափ եղաւ այն հոսանքի առաջ, որը վերջը պիտի լափէր բիւզանդական կայսերութիւնը, և որին անզօր եղաւ յաղթելու միացեալ Եւրոպան։ Այնուհետև կեանքը անսուննելի դարձաւ Հայաստանում և ժողովուրդը, երբ հնար էր գանում, խուռն բազմութեամբ թողնում էր իւր հայրենիքը և գաղթում օսար երկիր։ Հայկական տարրի սպառիչ դործիչներին աւելացաւ նորը՝ ոչ սակաւ կորառաբեր ժողովրդի թւի համար—գաղթականութիւնը։

Բարբարոս արշաւողները վերջի ի վերջոյ լուծւելով երկու մեծ մասերի, կազմելով երկու մեծ տէրութիւններ՝ պարսկական և օսմանեան, բայց արին իրար մէջ անվերջ պատուրազմներ, որոնք անընդհատ աւերում և տակն ու վրայ էին անում Հայաստանը, և որոնց երբեմն հասուցած հարւածները հայ ժողովրդին շատ քիչ օրինակներ ունեն առհասարակ պատմութեան մէջ։ Դրանցից ամենակորսառաբերը հայ տարրի համար պարսից շահ Աբասի արածն էր, որը ամայի դարձեց Հայկական գաւառների մեծ մասը, զերելով դրանց բնակիչները Պարսկաստան՝ տնտեսական և քաղաքական պատճառներից դրդւած։ Առաքէլ պատմագիրը՝ ժամանակակիցը այդ անցքի՝ պատմում է, թէ ինչպէս շահը հրամացեց իւր զօրքերին ահազին բազմութիւնը թափել Արաքսը, որը նաւերով պիտի անցնէին. որովհետև նորա յեսն էին միղել Օսմանեան զօրքերը և նա փախչում էր նրանցից, և բաւականաշափի նաւեր չ'ունէր, չ'ուզեց այդ գերւած ամբոխից ոչ ոքին թողնել իրանից յետոյ և փորձեց տանել նորա ան մասը, որը լողալով կարող էր անցնել գետի միւս կողմը. իսկ այդ ամբոխը բաղկացած էր ընտանիքներից—ուրեմն մասամբ ծերերից, երեխաններից և կանանցից։ Առաքէլ պատմագիրը պատմում է թէ ինչպէս գետը երկար տարածութեամբ ծածկեց խեղդւածների գիտիններով և ինչպէս մետած մասը թշնամին տարաւ հեռաւոր Պարսկաստան։

Այս տեսակ պացմանների մէջ էր հայ ժողովրդի կեանքը մինչեւ վերջի ժամանակներս։ Ժողովրդի անումը շարունակ վտանգի մէջ էր և նա զնալով պակասում էր և շարունակ ստիպւած էր փոխել իւր բնակութեան տեղը երկրի մի մասից դէպի միւսը՝ պաշտպանութեան ապաստարաններ փնտուելով։  
(Կը շարունակւի)

## 10 ԱՊՐԻԼԻ

Արծիւնիք

Թմբած աշխարհը կեանք առաւ նորից...

Ահա ամեն տեղ

Քո սէրն է երգում, գարուն ոգելից,

Գարուն շնորհագեղ:

Անտառի խորքում քո սէրն է երգում

Սիրավառ սոխակ.

Ծաղկալից գաշտում քեզ է հեզ ժպտում

Սիրուն մանուշակ:

Մատղաշ գառնուկներ լեռան լանջերում

Քաղցր մայիւնով՝

Հոգուի սընդի հետ քեզ են ողջունում

Ներդաշնակ ձայնով:

Քո գալն են օրհնում արև ու աստղեր,

Եւ երկինք անամպ.

Քո սէրն են երգում թէ՛ ջահիւ, թէ՛ ծեր

Բուռն ցնծութեամբ:

Թմբած աշխարհին կեանք տւիր նորից.

Ահա՛ ամեն տեղ

Քո սէրն է երգում, գարուն ոգելից,

Գարուն շնորհագեղ:

## ԾԱՂԻԿՆԵՐ ԵՒ ԻՂԶԵՐ

Արձիւեանի

Կա՛ն ծաղիկներ ազատ փթթող  
Կանաչավառ պարտիզում.  
Կա՛ն և՛ իղձեր արիւն յուզող  
Մորդու սըտի խորքերում:

Ծաղիկները անուշ բուրմամբ  
Կեանք են շնչում պարտիզին.  
Վառ իղձերն էլ միշտ թարմութեամբ  
Լի են պահում մեր հոգին:

Մօնկւա. 15 ապրիլի, 1890 թ.

## ԱՐՔԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Գ. ՎԱՐԴԱՆ ԵԱՆԻ

Ամենահետաքրքրական և ամենանշանաւոր հասարակական խընդիրներից, որոնք միշտ մտածողութեան առիթ են տալիս, մէկը այն է, որը վերաբերում է Հաղպատաների խնամատարութեանը: Այս խնդիրը այնքան հին է, որքան հին է և մարդկացին տնտեսական կեանքը: Քանի որ մարդկացին տնտեսական կեանքը գոյութիւն կ'ունենայ, աղքատների խնամատարութեան գործն էլ անկասկած գոյութիւն կ'ունենայ: Միայն թէ դարերի ընթացքում այս խնդիրը կերպարանափոխել է, որովհետեւ սորա երեւալու պատճառները նոյնպէս մի յացոնի չափով կերպարանափոխել են:

Հին ժամանակներում աղքատութիւնը ուղղակի բղխում էր այնպիսի պատճառներից, ինչպիսի են սով, հեղեղ և ացն, ինչպէս այդ այժմն պատահում է յետամնաց ասիսական երկիրներում: Բայց այսպիսի բնական չարիքներից և տառապանքներից բղխող աղքատութեան վտանգը այնքան չէ սպառնում փոքր ի շատէ քաղաքակերթ ազգերին, որովհետեւ սոքա մի յայտնի չափով պատսպարած են զանազան միջոցներով այդ դժբաղդ դէպքերի դէմ: Օրինակ՝ սովի դէմ պաշտպանած են այն երկիրները, որոնց մէջ ճանապարհների հաղորդակցութեան միջոցները զարգացած են, այնպէս որ սովի ժամանակ սովեալների տեղը հեշտութեամբ օգնութիւն է համում: Այս կերպով խմբովին աղքատանալու դէմն է առնեռում: Ի հարկէ, չե կարելի բոլորովին հերքել, որ նոյն խի քաղաքակերթ երկիրներում կարող են երաշտութիւնը և նման բնական երեսիները տեղի ունենալ և աղքատութեան ծագման պատճառ դառնալ: Սակայն այս

երևոյթների ազդեցութիւնը այնքան չէզոքացրած է, որ նոր ժամանակներում անհիմն կը լինէր աղքատութեան պատճառների շարքում դորան գլխաւոր տեղը տալ: Մեր նոր ժամանակներից չիշած բնական տագնասլալից գէպքերից պարբերապէս ծագող աղքատութիւնը խաղում է երկրորդական դեր: Դիմաւոր պատճառը, որից աղքատութիւն է բզիսում, պէտք է որոնել տնտեսական կազմակերպութեան մէջ, որը շատ է տարբերութիւն հին ժամանակների տնտեսական կազմակերպութիւնից: Այն, ինչ որ մենք անուանում ենք հասարակութեան գասակարգերի ազատ մրցումն տնտեսական գործունէութեան մէջ, այդ բանը գոյութիւն չունէր թէ ամենահին և թէ մասամբ էլ միջին դարերում: Կարճ ասենք, հին ժամանակներում—յունաց և հռոմայնեցոց մէջ տնտեսական կազմակերպութեան յենարան էր ընտանիքը: Խրաքանչիւր ընտանիք առանձնացած կազմակերպութեան մէջ էր տնտեսապէս մի աէրութեանն նման, որը ինքն էր գնում իւր բոլոր պիտոյքները: Այսինքն ընտանիքի զլխաւորը, որը բոլոր տնտեսութեան տէրն էր, կարգադրում էր ինքնակամ կերպով իւր ստորագրեալների մէջ այն բոլոր գործերը, որոնք հարկաւոր են ընտանիքի ամեն տեսակ պիտոյքներին բաւարարութիւն տալու համար: Ստորագրեալների մէջ, բացի տիրոջ աղքականներից, գտնում էին յալտնի քանակութեամբ և ուրիշ մարդիկ: Դոքա ստորուկներն էին: Դոքա ստրուկներ էին կոչւում, որովհետև ոչ տնտեսապէս և ոչ առանձնապէս ազատ գործելու իրաւունք չունէին, այլ կազմում էին մի տեսակ ընտանեկան միապետութեան գործիքներ, որոնք բանում էին, ինչպէս որ իշխող գլուխը կը կարգադրէր:

Մի ուրիշ պատկեր էին ներկայացնում միջին գարերը: Այս գարերում տնտեսական կազմակերպութեան բնարոշ յատկանիշն կայանում էր նրանում, որ հողատէրերը ներկայանում են իբրև ինքնակարական մարմիններ, որոնք իրաւունք են ձեռք բերել՝ իշխելու իրանց հողերի վերաց բնակող գիւղացիների տնտեսական կացութեան վերաց: Դիւղացիները իրանց տէրերի հողերից անբաժան են: Տէրերը պարտաւորացնում են գիւղացիներին իրանց օգտին յացտնի ծառացութիւններ մասուցանելու թէ տուրքերով և թէ աշխատանքով: Այս յարաբերութիւնների հիման վերաց գիւղացիները կատարեալ ճորտեր են դառնում: Ճորտութեան մէջ գիւղացիները միայն

տնտեսապէս աղատ չէին և միանգամայն կախւած էին իրանց խնամատար տէրերից, քանի որ իրանք չէին հողային սեպհականութեան տէրերը: Իսկ անձնապէս զդիւղացիները աղատ էին իրանց ներքին անհատական կեանքը այնպէս տնօրինելու, ինչպէս իրանց նախառակարմար էր թւում: Աւելացնենք միջին գարերի անտեսական կազմակերպութեան որոշող այս յատկութեան վերաց և ացն, որ այդ ժամանակ քաղաքներում արդիւնաբերութեան գործն էլ կրում էր մի ուրիշ կերպարանք: Քաղաքային արդիւնաբերութիւնը կատարւում էր ընկերաբար, համբարական կերպով: Խրաքանչիւր քաղաքի զանազան տեսակ արհեստաւորները միանում էին և կազմում ընկերութիւններ, որոնք արդիւնաբերում էին խմբովին յայտնի աղբանքներ և սոցա վաճառահանում, այնպէս որ անդամներին արգելած էր ընկերութիւնից գուրս գալ և մասնաւոր կերպով աշխատել ինչպէս տեսնում էք՝ յիշեալ ժամանակներում անհատական գործունէութիւնը տնտեսական ասպարիզում կաշկանդւած էր զանազան կապանքներով, որոնցից ազատւելլ հնարաւոր եղաւ միայն 18-երորդ դարու վերջում, երբ որ ազատութիւնը անտեսական գործերի մէջ գտաւնում է մի անցետաձգելի պահանջ: Հէնց այս ժամանակից Եւրոպայում սկսւեւմ է անհատական տնտեսական կեանքը, ուր իրաքանչիւր մարդ ինքն պատասխանատու է իւր տնտեսական գործունէութեան հետեւանքների համար: Այսպէս խրաքանչիւր մարդուն տւած է կատարեալ իրաւունք անտեսական ասպարիզում ուրիշների հետ ազատ մրցելու՝ իրան ինքնուրոյնաբար պահպանելու համար: Բայց մրցման ազատութիւնը գոյութեան կուի մէջ ունէր այն հետեւանքը, որ ամենալարնտրեալները և ամենալարնդունակները միշտ յաղթող են հանդիսանում: Տնտեսապէս ոչ ուժեղները կարողանում են իրանց պահել զեւու մի յայտնի չափով, քանի որ դա ֆիզիքապէս հնարաւոր ֆիզիքական ոյժերը թէ հիւանդութեան և թէ ծերութեան ժամանակ կամ այլ չը նախած տեսած պատճառներով, դռքա դառնում են կամաց-ակամայ անընդունակ իրանց ապրուստը հոգալու, և նիւթապէս ապահոված չը լինելով մատնում նն աղքատութեան:

Ահա առհասարակ այն ընթացքը, որով մարդս աղքատանում է նորագոյն ժամանակներում: Աղքատութիւնը դառնում է այսպէս

Հասարակական այն ցաւերից մինը, որի գէմ պատերազմելը իւրաքանչիւր հասարակութեան սուրբ պարտաւօրութիւնն է:

Նախ քան դիմենք այն խնդրին՝ թէ ի՞նչպէս են կամ պէտք է լինեն կազմակերպւած աղքատութեան խնամատարութեան հաստատութիւնները, մեզ կարևոր է թւում մի համառօտ պատմական ակնարկ ձգել այն բանի վերաց՝ թէ ի՞նչպէս է զարգացել աստիճանաբար աղքատների խնամատարութեան գործը:

Եթէ սկսենք հին ազգերից, մենք կը տեսնենք, որ սոցախնամատարութեան գործը գտնեւում էր գլխաւորապէս լնուանեկան իշխանութեան ներքոյ: Արդարեւ, հոռմացեցոց և յունաց մէջ աղքատներ կոչւում էին նոքա, որոնք գտնեւում էին ստրկութեան մէջ. և տէրերն էլ պարտաւորութիւն էին համարում՝ իրանց աղքատ ստրուկներին խնամելու: Բացի մասնաւոր — լնուանեկան խնամատարութեան, որը այդ ժամանակ գերիշխող ձև էր, թէ Հռոմում և թէ Աթէնքում գոյութիւն ունէին նաև մի տեսակ տէրունական հաստատութիւններ, որոնք պաշտօն ունէին աղքատներին խնամելու: Բացց նկատեցէք, որ այդ տէրունական հաստատութիւնները խնամում էին ոչ այն տեսակ աղքատներին, որոնք մեր հասկացողութեամբ բոլորովին զուրկ են ապրուսափ միջոցներից: Նոքա խնամում և օգնում էին յատկապէս այնպիսի քաղաքացիներին, որոնք աշխատանքի անընդունակ լինելով՝ այլ ևս հարկաւոր կարողութիւնը չ'ունէին իրանց ամենակարեւոր սլահանջներին լիովին լրացումն տալու:

Անցնենք հին ժամանակներից ուղղակի դէպի այն դարագլուխը, ուր քրիստոնէութիւնը լաղթող է հանդիսանում: Մենք հանդիպում ենք այդ ժամանակ աղքատների խնամատարութեան մի այլ ուղղութեան: Բանը այսուղ նրանում է, որ աղքատներին խնամելու մասին կազմած գաղափարը միանգամայն աշխարհական էր հին զասական աղգերի մէջ, մինչդեռ քրիստոնէութեան սկզբում այդ գաղափարը փոխւում է և ստանում հոգեւորական բնաւորութիւն: Արդէն հրէից հոգեւորական գրքերը և նամանաւանդ մովսիսական օրէնքները յայտնում են այն միտքը, որ աղքատներին ողորմութիւն տալը Աստուծոյ հրամանն է: Նոքա միևնույն ժամանակ

պնդում են եղել, որ ինչպէս Աստուած է տւել իւրաքանչիւր մարդուն հող, նոյնպէս ամեն մարդ պարտաւոր է աղքատին օգնել Այս հացեցւածքը աղքատների խնամատարութեան մասին ունեցել է իւր ժամանակին այնքան ազգեցութիւն, որից նաև քրիստոնէութիւնը զերծ չէ մնացել: Ըստ այնմ քրիստոնէական եկեղեցին իւր կողմից քարոզում է այն միաքը՝ թէ մարդս իւր ունեցածից, որ իսկապէս Աստուծոյ սեպհականութիւնն է, ովհայ աղքատին էլ տայ, որպէս զի նա էլ ողորմութիւն վացելէ Խարձեալից: Այս տարածւած աշխարհացեցողութիւնից քրիստոնէական եկեղեցին շինեց իւր համար մի սկզբունք, որի հիման վերայ նա սկսեց նայել իւր հոգերին և կացքին իբրև աղքատներին պատկանող սեպհականութիւն:

Յենւելով այս տեսակէտի վերայ և ապա իրան կոչւած համարելով ացդ ասպարիզում արձակ գործելու, քրիստոնէական եկեղեցին իւր ձեռքն առաւ աղքատների խնամատարութեան գործը: Քրիստոնէական եկեղեցին այնուհետու հիմնում է աղքատանոցներ, հիւանդանոցներ և անկելանոցներ, որոնց գործունէութիւնով իրաւահագին զարկ է տրում աղքատների խնամատարութեան զարգացման առհասարակ: Եւ մասնաւորապէս հայոց պատմութիւնից տեղեակներին անցայտ չէ, որ նոյնը կատարւեց նաև մեզանում: աղքատների խնամատարութեան գործը (հիւանդանոցներ, աղքատանոցներ և այլն) մեր եկեղեցու առաջին հացքապետների ամենազլիսաւոր գործերից մէն էր:

Քրիստոնէական եկեղեցու բարերար գործունէութիւնը ացդ ապարիզում շարունակւում է մինչ միջին դարերը: Իսկ երբ որ միջին դարերում սկսեցին կազմել՝ այսպէս անուանած արհեստաւորների ընկերութիւնը (համքարներ), հէնց ացդ ժամանակից աղքատների խնամատարութեան գործը դուրս է գալիս եկեղեցական վրա ջանից և լնդունում է հետզհետէ դարձեալ աշխատաւորներին: Եւ նմանը կատարւում է նաև մեզանում, թէ դուցէ ոչ բոլորովին նոյն ժամանակամիջոցներում: Միջին դարերում Արևմտեան Եւրոպայում արհեստաւորների ընկերութիւնները, բացի իսլամիցին արդիւնաբերելուց, նմանապէս պաշտօն ունէին թէ ընկերութեան անդամների մօտ բանող աշակերտներին արհեստոներ սովորութիւն:

բացնելու և թէ առհասարակ արհեստաւորների բոլոր տեսակ խնտերեները պաշտպանելու։ Այս պաշտօնի մէջ մտնում էր նաև աղքատութեան խնամատարութիւնը։ Միայն թէ սա չէր տարածւում ընկերութիւններից դուրս, այլ խնամք տանուում էր սոսկ ընկերութեան աղքատացած անդամների համար։ Այսու ամենայնիւ եկեղեցին իւր կողմից կատարում էր զուգահեռաբար իւր գործը, և նոքա, որոնք չին պատկանում արհեստաւոր ընկերութիւններին, գտնում էին աղքատութեան ժամանակ իրանց ապաստարանը տակաւին եկեղեցու օգնութեան մէջ։

Բայց ժամանակի ընթացքում աղքատների խնամատարութեան վիշտ երկու տեսակ հաստատութիւնները անկարող գտնւեցին բոլոր պահանջներին բաւարարութիւն տալու։ Եւ զժւար չէ գտնել դորա պատճառը։ Մի կողմից ողորմութեան սկզբունքը, որի հիման վերաց եկեղեցուց աղքատներ էին խնամեում, դառել էր անհաստատ և անընդունելի առաջընթաց ժամանակների ողու համար։ Միւս կողմից անտեսական կեանքի զարգացման աստիճանը պահանջում էր ամենայն իրաւամբ, որ աղքատների խնամատարութիւնը կազմակերպւած լինի աւելի լրջօրէն և ժամանակակից հասարակական պահանջների համեմատ։ Ամենքից առաջ բողոքական եկեղեցին էր, որ լաւ ըմբռնեց աղքատների խնամատարութեան վերանորոգման պահանջը։ Պահպանելով քրիստոնէական վառ սէր դէպի մեր չքաւոր մերձաւորները՝ բողոքական եկեղեցին պահանջում էր, որ աղքատների խնամատարութիւնը կազմակերպւած լինի խելացի հիմունքների վերաց և ոչ ողորմութեան գաղափարի հիման վերաց։ Բողոքական եկեղեցին էր, որը եւրոպացում՝ 16 դարում արծարծեց առաջին անդամ այն հիմնաւոր միտքը, որ իւրաքանչիւր համայնքինքն պարտաւոր է իւր աղքատ անդամներին խնամելու։ Համոզւած լինելով այս մտքի ճշմարտութեան մէջ, նա սկսեց ձեռնարկել մի քանի տեղերում համայնք առ համայնք աղքատների գանձարաններ կաղմելու, որոնք պաշտօն ունէին համայնքներում աղքատացած անդամներին խնամելու։ Բայց միևնույն ժամանակ արգելւած էր ընդունել մի համայնքի աղքատների խնամատարութեան շրջանի մէջ ուրիշ թէ հեռաւոր և թէ մերձաւոր համայնքի աղքատներին։

Յա մի անհրաժեշտ կարգադրութիւն էր, որը նպատակ ունէր,

բացի խնամատարութեան գործը հեշտացնելուց, սահման դնել մի յայտնի չափով աղքատների այն սաստիկ թափառականութեան, որը 16 և 17-երորդ դարերում ներուպացում շատ զարգացած էր և որը գցում էր ազգաբնակութիւնն նեղեալ զրութեան մէջ:

Վերջապէս տէրութիւններն ել հասկացան այս խնդրի հաս-  
սարական նշանակութիւնը և սկսեցին օրէնսդրական ճա-  
նապարհով կանոնաւորել նմանօրինակ հաստատութիւններ աղքատ-  
ների համար: Առաջին քայլը, որ արւեց այս բանի մէջ, պատկա-  
նում է Ֆրանսիային՝ նոյն խակ լուղովով կոս ԽIV թագաւորութեան  
ժամանակ: Եւ այս հասկանալի է. որովհետեւ այդ ժամանակից  
սկսած՝ Ֆրանսիան պարունակել է իւր մէջ ամենքից շատ մանա-  
ւանդ թափառական աղքատներ: Օրինակ՝ վերջինների քանակու-  
թիւնը նոյն երկրում համարում է եղել 1640 թւն 40.000, մի-  
բազմութիւն, որ, հարկաւ, պիտի շատ նեղացնում լինէր այն ժամա-  
նակւայ հասարակութիւնը, աչքի առաջ ունենալով ժամանակակից  
աղքատների խնամատարութեան բոլորովին անբաւարար և անմիտ-  
թար զրութիւնը: Յիշեալ ժամանակ աղքատութիւնը և սորա-  
հետ մուրաց կանութիւնը այնքան աւելանում են, որ վերջա-  
պէս վերջինա արգելում է տուգանքով: Մուրալը արգելում էր, և  
նմանապէս արգելում էր ողորմութիւն տալը մուրացկաններին փո-  
ղոցներում և ուրիշ հասարակական տեղերում: Սոքա, անկասկած, այն  
միջոցներն էին, որոնք կատարում էին երկրորդական դեր և առժա-  
մանակեւայ էին: Գլխաւոր միջոցը այս ցաւի դէմ պատերազմելու  
համար պէտք է լինէին և իրօք էլ եղան այն հիմնարկութիւնները  
որ օրէնսդրութիւնը յանձն էր առել կանոնաւորելու: Օրէնսդրութիւնը  
յանձնում էր աղքատների խնամատարութիւնը ինքնալարական օր-  
գաններին, այսինքն համայնքներին, որոնք մօտիկ և լաւ ծա-  
նօթ լինելով տեղական պայմանների և հանդամանքների հետ, կարող  
էին աւելի արդար և անսաշառ կերպով կատարել աղքատներին խնա-  
մելու պաշտօնը: Համայնական կազմակերպութիւնը աղքատներին  
խնամելու վերաբերմամբ տարածւած էր 17—18 դարում ամբող  
Արևմտեան Եւրոպացում: Սակայն այս ձեւը ամենքից շատ տարածւեց  
Գերմանիայում և ապա Անդիացում:

Աւրեմն այսպէս աղքատների խնամատարութիւնը դաւնում է

Հետզհետէ հասարակական այն ծանրակշիռ գործերից մինը, որին եւրոպական տէրութիւնները նւիրում են իրանց օրէնսդրութեան մէջ մի պատւաւոր տեղ մեր 19-րդ դարում։ Նամանաւանդ Գերմանիան է, որը շատ փորձեր է արել 19-րդ դարում աղքատների խնամատարութեան գործը բարեկաւելու։ Աւելի աչքի ընկնող և նշանաւոր փորձեր, որոնք արւել են Գերմանիայում, վերաբերում են օրինակ պատկների սահմանափակման 60-ական թւականներում։ Այս մինչ այդ ժամանակ տարօրինակ օրէնքը նպատակ ունէր՝ իրաւունք ըլտալ պատկելու այն մարդկանց, որոնք ոնտեսապէս անկարող են մի ընտանիք պահէելու։ Պատկների սահմանափակման օրէնքի հետ կապւած էր մի ուրիշ օրէնք, որը նպատակ ունէր աղքատների թափաւումը խանդարել։ այդ նպատակով ամեն մի համայնքից պահանջւում էր օգնութիւն հասցնելու միացն այն աղքատներին, որոնք նորա խսկական բնակիչներն են կամ այդ համայնքում ձեռք են բերել բնակւելու իրաւունք։ Զի կարելի ուրանալ, որ չիշած օրէնքների գիտաւորութիւնը խելացի է եղել։ Այնու ամենայնիւ նոքա չ'ունեցան ցանկացած հետևանքներ։ Եւ ահա թէ ինչո՞ւ։ Պատկների սահմանափակումը խսկապէս նպատակ ունէր՝ երեխաների սակաւութեան նպաստել, որոնք իրաւ չքաւոր ծնողներին ենթարկում են մէծ զրկանքների։ Փոխանակ այս հետևանքին համարու, սկսաւ օրէնքիս զօրութեամբ երեւալ շատ աւելի ապօրինի երեխաներ քան մինչ այդ օրէնքի լոյս տեսնելը։ Եւ որովհետեւ այս երեսոյթը վերջի վերջոյ աղքատների թիւը պիտի աւելցնէր, ուստի համայնքները, որոնք պարտաւոր էին նոցա խնամելու, այլ ևս անընդունակ գորնեցան մի զործին ծառայելու, որը իրանց ոյժերից վեր էր։ Նմանապէս անցածող էր գործնականափէս և միւս օրէնքը, որի հիման վերայ համայնքից կարող էր օգնութիւն համար աղքատին, երբ որ աս նոյն համայնքի խսկական բնակիչ էր կամ ձեռք էր բերել այնտեղ բնակւելու իրաւունք։ Յայտնի է, որ 50—60 թւականներում եւրոպացում շատ արագ զարգանում էին ճանապարհների հաղորդակցութիւնը և սորա հետ արդիւնաբերութիւնը։ Զարմանալի բան կը լինէր, եթէ այս ընթացքի հետ միասին ցիշեալ օրէնքը յաջողութիւն ունենար, քանի որ աս ոչ այլ ինչ էր, եթէ ոչ աղաս շրջելու և բնակւելու իրաւունքների սահմանափակումը։ Մի խօսքով, վե-

բոյիշեալների նման օրինական միջոցներով անկարելի էր աղքատների սակաւութեան նպաստել, որովհետև դոքա ոչ միայն ժամանակի տնտեսական զարգացման աստիճանին էին հակասում, այլ և այնպէս դոքա կրում էին իրանց բովանդակութեամբ բացասական բնաւորութիւն:

Իրերի ացապիսի ընթացքին աւելի բաւարար և նպատակացարմար ուղղութիւն տալու համար՝ գերմանական օրէնսդրութիւնը վերջապէս ձեռք է մեկնում 1880 թւականներին մի նոր կազմակերպութեան, որով վերացնում և փոփոխուում են աղքատների ինամատարութեան նախկին օրէնքները (այն է՝ պատկաների և ամեն տեղ բնակւելու իրաւունքների սահմանափակումը): Այս նոր օրէնսդրութիւնը անփոփոխ թողեց համայնական ձեւը, որ կրում էր աղքատների ինամատարութիւնը: Վերանորոգումը վերաբերում էր աղքատների ինամատարութեան ներքին կազմին, որ պէտք էր ընդարձակել, որպէս զի բաւարարութիւն տրեւը պատշաճաւոր կերպով անընդհատ աւելացող աղքատների պահանջներին: Եւ ահա այս պաշտօնը լատ կարելոց լաւ կատարելու համար՝ օրէնսդրութիւնը սաեղծում է երկու տեսակ վարչական մարմիններ, որոնք հիմնուում են ընկերական սկզբունքների վերաբէց: Այդ վարչական մարմիններից առաջին տեսակները կոչում են տեղային-համայնական վարչութիւններ, որոնք ինամում են յառկապէս իրանց մէջ համայնական շրջանում գտնուող աղքատներին: Երկրորդ տեսակները կոչում են նահանգական վարչութիւններ, (Land-armenverhände), որոնցից ամեն մէկը կազմում է մի քանի համայնքներից և այսպէս միացած ուժերով ինամում է աղքատներին միայն այն ժամանակ, երբ որ համայնքները առանձին-առանձին չեն կարողանում այդ գործը կատարել:

Մենք մասնաւորապէս խօսեցինք գերմանական աղքատների ինամատարութեան հաստատութիւնների մասին, որովհետև Եւրոպայում ամենից շատ կատարելագործւած են այդ հաստատութիւնները Գերմանիայում: Անգլիան էլ յետ չէ մնացել այդ դործի մէջ: Բայց ինչ վերաբերում է Ֆրանսիային, այսուեղ մենք հանդիպում ենք այլ տեսակ կազմակերպութեան: Ֆրանսիայում համայնքները ունին ինամատարութեան հաստատութիւններ, կոչւած bureaux

de bienfaisance, որոնք բոլորովին ընկերական կազմ չ'ունին, այլ նմանուում են մի տեսակ հիւանդանոցների։ Սոքա խնամում են սկզբունքով մեծ մասամբ այնպիսի աղքատներին, որոնք հիւանդ են և բանելու ընդունակութիւնը կորցրել են չքաւորութեան մէջ։ ուրիշ պատճառներով և խնամուում են միայն այն ժամանակ, երբ որ այդ հաստատութիւնները ունին աւելորդ միջոցներ նաև դոցա համար։

Մենք աեսանք այս համառօտ պատուական տեսութիւնից՝ թէ աղքատների խնամատարութիւնը եւրոպայում ինչպէս է զարդացել աստիճանաբար մինչ այժմու Նա եղել է ի սկզբանէ մասնաւոր մարդկանց ձեռքում և կրել է աշխարհական բնաւորութիւն։ Յետոյ նա անցել է, քրիստոնէութիւնից սկսած մինչ միջին դարերը և սրանից էլ յետոյ, եկեղեցու իշխանութեան ներքոյ, որը խնամում էր աղքատներին սոսկ ողորմութեան սկզբունքի հիման վերաց։ Վերջապէս աղքատների խնամատարութիւնը գտոնում է կրկին աշխարհական անցնելով հետզետէ տէրութիւնների ձեռքը։ Իսկ սոքա յանձնում են այդ գործը իրանց օրգաններին—համայնքներին իբրև մի սրատաւորիչ գործ, որի կատարումը հասարակութեան պահանջ է գառնում։

Հետաքրքիր խնդիրը հիմա այն է, թէ այդ տէրունական օրգանները, որոնց յանձնուում է աղդպիսի հասարակական ծանր սղաշտօն, ո՛ր աստիճան արգար պիտի գործեն, որպէս զի նոքա իրանց կոչման համապատասխանեն։ Ահա ձեզ մի գործնական դժւար խնդիր։ Յայանի է, որ այժմեան գոյութեան կուի մէջ ուժերի տարբերութիւնը յառաջ է բերում զանազան տեսակ յաղթւածներ։ Յաղթւածների շարքում գտնուում են ոչ միայն տնտեսական ոչուժեղներ, այլ, հարկաւ, և նոքա, որոնք մրցման ասպարիզում ինչ և ինչ պատճառներով ֆիզիքապէս անընդունակ են դարձել իրանց ապրուսող հայթայլթելու։ Պարզ է, որ հանդամանքները այսպէս քննելով մենք կը հանդիպենք այն խնդրին՝ թէ ի՞նչ տեսակ աղքատներին պիտի խնամք և օգնութիւն տրւի սոցա առժամանակ չքաւորութիւնից ազատելու և կամ մինչև անգամ կատարեալ անկումից կրկելու համար։ Որոշել թէ ի՞նչ տեսակ աղքատներին է խնամք տրւում այն փողերով, որոնք հարկերի ձեռվ հաւաքւում են համայնքներից, դա էլ շատ նշանաւոր խնդիր է նոյն իսկ հասարակական բարոյականութեան տեսակէսից։ Զէ՞ որ մարդիկ հակ-

ւած են և վատ սովորութիւններին, որոնք, եթէ դոցա չը ջանացին արմատախիլ անել, անկասկած կը փոխւէին դժւար բուժելի ախտերի: Համայնքը պարտաւոր է չքաւորին օգնել, քանի որ վերջինս ընկել է աղքատութեան մէջ իրանից անկախ պատճառներից և որը առժամանակ խնամելուց յետոյ՝ կարող է կրկին վերականգնել իւր նախկին ապահով դրութիւնը: Սակայն կարող է պատահել, որ այսպիսի աղքատները օգտւելով խնամատարութեան առատաձեռնութիւնից, էլ չեն ուզում աշխատել իրանց ապրուստը հայթայթելու ինքնուրոյնաբար, որպէս զի խոյս տան խնամատարութիւնից: Յացնիքան է, որ այս համարձակութիւնը՝ միշտ հասարակութեան խնամքին զիմելու, դառնում է մի սովորութիւն, որից այնուհետև ծագում են ծուլութիւն, արբեցողութիւն և այն բոլոր մոլորութիւնները, որոնց մարդս հակւած է: Աչքի առաջ ունենալով այսպիսի հանգամանքներ, աղքատների խնամատարութեան հաստատութիւնները պէտք է զիտենան որոշել՝ թէ այն աղքատները, որոնց նոքա խնամում են, ընդունա՞կ են թէ ոչ իրանց ապրուստը ինքնուրոյնաբար հայթայթել: Որպէս զի այս գործը հեշտանայ, խնամելու կարօտ աղքատներին պէտք է բաժանել աշխատանքի ընդունակների և ոչ ընդունակների: Աշխատանքի ընդունակ աղքատներ նոքա են, որոնք չեն ուզում աշխատել ծուլութիւնից, աշխատելու զգւանքից և այլ նման անյարգելի պատճառներից և նոքա, որոնց համար հնար չը կայ իրանց ոչժերը գործ զնելով՝ ապրուստ հայթայթելու: Սռաջին կարգի աղքատներին խնամելը՝ ոչ մի խնամատար հաստատութեան համար պարտաւորութիւն չի կարող լինել: Օրէնքը կարող է սոցա ստիպել աշխատելու խվելով սրանցից անձնական աղատութիւնը և այնուհետև բանեցնելով մի յայտնի ժամանակով նոյն խակ տէրունական գործերի մէջ, որպէս զի նոքա ընտելան ան աշխատանքի: Սոքա այնպիսի աղքատներ են, որոնք տարածում են ամենքից շատ մուրալու ախտը, մինչև անգամ վատ օրինակ տալով իրանց երեխաններին: Վերջիններս կազմում են մեծ հասակում վերջ ի վերջոյ մի սպառնալի տարր հասարակութեան ասպահովութեան և կարգ ու կանոնի համար: Երկրորդ կարգի աշխատանքի ընդունակ աղքատներ նախ նոքա են համարւում, որոնք, օրինակ՝ պատժարաններից և հիւանդանոցներից արձակւելուց յետոյ՝ մնում են առժամանակ անդորձ: Այսպիսի դէպքում աղքատների

խնամատարութիւնը պարտաւոր է ձեռք մեկնել գոնէ ժամանակաւոր օգնութեան, մինչև որ նոր աղքատացածները իրանց համար գործ ճարեն։ Յամենայն դէպս, այս օգնութիւնը պէտք է սահմանափակւած լինի խստօրէն, որպէս զի օգնութեան կարօտները իրանց ստիպւած տեսնէին ամենայն ջանք գործ գնելու և հասարակական խնամատարութիւնից շուտով աղատւելու։ Այս տեսակ կարօտեալներին օգնելու և նոցա համար գործ գտնելու մէջ մի յացնի դեր են կատարում և մասնաւոր ընկերութիւնները և հաստատութիւնները, որոնք հիմնում են յատկապէս այդ նպատակով։

Աշխատանքին ընդունակ աղքատների շարքում պէտք է յիշել և նոցա, որոնք աղքատների խնամատարութեանը ամենազժւարին գործ են սկածմառում, երբ նոքա երևան են գալիս ահաղին բազմութեամբ՝ շնորհիւ արտասովոր տառապանքների՝ ինչպէս երկրաշրժ, հեղեղ և անբաղդ հունձ կամ անբաղդ պատերազմ, արդիւնաբերութեան և վաճառահանութեան տագնասիներ և այլն։

Առաջ բերած երևոյթները նմանում են մի տեսակ հիւանդութեան, որին կարող է ենթարկել մի համայնք, երկրի մի մասը կամ գաւառը և վերջապէս ամբողջ պետութիւնը։ Յիշեալ աղետաւոր դրութիւններին ընդդիմադրելու համար՝ տեղային առանձնապէս գործող հաստատութիւնները անբաւ են միանգամայն։ Հարկաւոր են հաւաքական ուժեր, որոնք կարող են յաջողութեամբ ծառայել աղաղակող օգնութեանը։ Օրինակ՝ Գերմանիայում այս դէպքերում կատարում են մի լաւ պաշտօն այն երկրային-գաւառական աղքատների հաստատութիւնները (Landarmenverbände), որոնք, ի միջի այլոց, ինչպէս վերև յիշեցինք, կազմում են մի քանի համայնական հաստատութիւնից բազկացած մի վարչական միութիւն և գործում հաւաքական ոյժերով։ Պետութիւններն էլ օգնում են իրանց կողմից յանկարծակի աղքատացած բանւոր մարդկանց գլխաւորապէս նրանվ, որ նոքա ստեղծում են նորանոր հասարակական աշխատանքներ (շինութիւններ ամեն տեսակ) աղքատներին այստեղ զետեղելու նպատակով, թէպէտ և այս բանի համար արած ծախքերը արժէքից աւելի են նստում պետութեանը։

Լուսաբանենք վերջապէս աղքատների այն տեսակները, երբ բոլորովին նոքա անընդունակ են իրանց ապրուստը հայթայթելու

և հետևաբար արժանի են հասարակութեան կողմից վառ կարեկ-  
ցութեան և լուրջ հոգասարութեան։ Սոցա շարքում աչքի են ընկ-  
նում ամենից առաջ աղքատ և բարեկան երբ և ապօրինի երեխաները  
լիսաների մէջ պէտք է զանազանել որբ և ապօրինի երեխաները  
նրանցից, որոնք, թէպէտ և ունին ծնողներ կամ ինամականներ,  
բայց և այնպէս զոհ են զառած բարոյական անփոյթութեան  
Որբ երեխաների հոգասարութեան համար կան բոլոր եւրոպական  
երկիրներում յատուկ հաստատութիւններ։ Նոյնպէս կան այսուեղ, ի  
հարկէ, ապօրինի երեխաների խնամելու տները Խնչ վերաբերում է  
բացառապէս անխնամ մնացած երեխաներին, սոցա խնամելու հա-  
մար էլ արդէն երեւցել են շատ տեղերում մասնաւոր և համայնա-  
կան ընկերական հիմնարկութիւններ։ Միայն թէ սոցա գործունէու-  
թիւնը հանդիպում է մէծամեծ խոշնդունների։ Խոչնդուններից մէկը  
կայանում է հէնց այս տեսակ երեխաներին գտնելու գմւարութեան  
մէջ։ Մի այլ խոչնդուն էլ այն է, որ գմւար է անխնամ թողած երե-  
մէջ։ Մի այլ խոչնդուն էլ այն է, որ գմւար է անխնամ թողած երե-  
մէջ։ Խիմնարկութիւններից բարեկար գործունէութիւնը կը համնի միշտ իւր  
նպատակին, եթէ օրէնսդրութիւնով պարզ որոշւած է՝ թէ ո՞ր  
պայմաններում կարելի կը լինէր բաժանել անհոգ և անխնամ թո-  
ղած երեխաներին իրանց ծնողներից։ Եւ ինչպէս չը բաժանել, երբ  
զած վերջններս անընդունակ գտնելով իրանց սուրբ պաշտօնի կա-  
տարման մէջ՝ տալիս են հասարակութեանը այնպիսի մարդիկ, որոնց  
նմաններին նա կարօտ չէ։

Այս երկու տեսակ հիմնարկութիւնների մէջն էլ պէտք է  
խնամել և կրթել երեխանց ոչ միայն մինչ յայտնի հասակը, որ նոքա  
կարողանացին իրանց հացը վաստակել, այլ մինչ այն աստիճան, որ  
նոքա դառնացին հասարակութեան օգտին ծառայող տոկուն և բա-  
րոյական քաղաքացիք։

Ոչ պակաս գեր են խաղում աշխատանքին անընդունակ աղքատ-  
ների շարքում նաև նոքա, որոնք հիւանդ են Փիղիքապէս կամ  
մասաւորապէս, և յետոյ նոքա, որոնք դարձել են անընդունակ զա-  
ռամ եալ ծերութեան ժամանակ։ Աղքատ զառամեալների վե-  
րաբերութեամբ կարելի է պնդել, որ սոքա ենթակայ են հասարա-  
կական խնամատարութեանը լնող միշտ, մինչ իրանց կերպը վերջը

իսկ հիւանդ աղքատներից շատերը լնդունում են միմիացն յայտնի ժամանակով՝ սրանց համար յատկացրած հիմնարկութիւնների մէջ և առողջանալուց յետոյ՝ զուրս են թողնուում։ Այս պատճառով վերջին տեսակի աղքատներին խնամատարութեան աներում պէտք է ջանալ բաժանել այն աղքատներից, որոնք մասնաւել են աղքատութեանը արբեցողութեան կամ նման վաստ սովորութիւններից — հակառակ գէպքում ժամանակաւորապէս լնդունած աղքատները, որոնք զերծ են բարոյական սպակասութիւններից, աղքատանոցներում և հիւանդանոցներում վատերի հետ միասին կենակցելով՝ հեշտութեամբ վարակում են բարոյական սպակասութիւններով և այսպիսով կորցնում ինքնայարգանք և բարոյական ոչՔ՝ աղքատութիւնից իրանց աղատելու։

Մենք այսուեղ նկարագրեցինք համառօտապէս և ընդհանուր գծերով աղքատների այն բոլոր տեսակները, որոնք գոյութիւն ունին այժմեան հասարակական կազմակերպութեան մէջ և որոնք ենթակաց են հասարակութեան խնամատարութեաննը։ Համարեա միւնոցն տեսակ աղքատներին կարելի է հանդիպել ամենուրեք, ուրեմն նաև մեզանում։ Ավ մի փոքր ինչ դիտող աչքով հետաքրքրւել է այդ թշւառականների զրութիւնով նաև մեր երկրում, նա պէտք է համոզի, որ զոքա կարօտ են մարդավայել խնամատարութեան, որը մեզանում գտնուում է շատ վատ վիճակի մէջ։ Մենք անդում ենք, որ մեր երկրում համայնքները իրանց սեպհական միջոցներով զրեթէ ոչինչ չեն գործում՝ իրանց նախաձեռնութեամբ մի որ և է օրինաւոր հաստատութեան ձեռնարկելու։ Այսպիսի անտարբերութիւնը դէպի մեր թշւառ մերձաւորների զրութեան բարուգումը աւելի քան պախարակելի է։ Դա նմանում է այն շարիքին, որի հետեանքների լուծը ինքն հասարակութիւնն է կրում ի վես իւր հանգառութեան։ Քրիստոնէական սուրբ սէրը զէպի մեր չքաւոր մերձաւորները՝ հրամացում և պարտաւորում է մեզ սոցա նիւթական և բարոյական գոյութիւնը ըստ կարելոյն բարելաւելու։ Մեր երկրում աղքատները թափառում են խումբ-խումբ մէկ տեղից միւսը անտեր և անտուն և սփռւելով ամեն տեղ՝ պկում են մուրալ ամենայնգուզն կերպով։ Ավ չէ զգում այդ ժամանակի թէ ո՞ր աստիճան տղեղ և վիրաւորական է զառնում գոյցա

այդ յանդգնութիւնը։ Եթէ մուրացող աղքատների այդ բնաորոշ սովորութիւնը չը վերացւի կամ գոնէ չը սահմանափակվի, ապա դա այնքան կը զարգանայ, որ մարդկանց հասարակական ազատութիւն անուանուած բանը պէտք է համարել անկասկած սահմանափակւած։ Այս հետեւանքը այնքան քայլացիւ է, որ հասարակութիւնները անկարող են այդ երևոյթի վերայնացել սառնարտութեամբ։ Պէտք է ջանալ ուրիշ երկիրներում փորձւած միջոցներ ձեռք առնել, որպէս զի գործ գրւած ջանքերը պտղաբեր լինին։ Այդ միջոցները զանազան են և պահանջում են մի առանձին քննութիւն, որ և կը կազմէ մեր մի այլ յօդւածի նիւթը։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԵՒ  
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԱՐԵԱԿ ՏԵՐ-ՄԻՔԵԼԵԱՆԻ

(Շարունակութիւն<sup>1)</sup>)

«Բաղմութիւն իմաստնոց վրկութիւն է աշխարհ-  
հայ»: (Առակ)  
«Կը թեցէք զանձինս ըստ ժամանակիս նահա-  
տակութեան»: (Ոսկելբան)  
«Այլ մարդոյ, թէ և իցէ ոք իմաստուն, չէ ո-  
մօթ բազում ի՞նչ ուսանիլ...»: (Սփոկէս)

Ա.

ՀՆԴԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՅՔ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՅ ՄԻՒԶԵՒ  
ՊԵՍԱԼՈՅՑԻ

Այս բարեկարգութիւնը միայն Սաքս-Գօթակումն էր. Գերմանիակի միւս  
մասերը բաժին չ'ունէին այս գործում. չը կար աղջային միութիւն և ինքնա-  
ճանաչութիւն. Ոչ մի գործ չէր կարող ընդհանրանալ, մինչեւ որ համե-  
րաշխութիւն և բարի նախանձ չը լինէր, որոնք չէին կարող լինել, մինչեւ  
որ ազգը մի որ և է միութեան կետի կամ զաղափարի խելամուտ չը լինէր:  
Ահա մինչև այդ միութիւնը և աղջային ինքնաճանաչութիւնը Գերմանիակի  
խառն ժամանակներից մէկն է:

Այդ խառն շրջանում միայն զանազան հանճարների — պետական կա-  
ռող անձերի երեալը լուսով աղբիւր էր գերմանացիների համար, որ ծագելով  
երկրի աչս և աչն մասում սակաւ աղջեցութիւն չէր թողնում միւսների

1) Տե՛ս «Մուլգ»-ի № 4.

վերակ: Ավտոմիսիներից առաջինը համարելի է Քրանդենքուրդի ընարիշխանը (կուրֆիւրստ)՝ Ֆրիդրիխ Վիլհելմ, որ հասկանալով իւր ժամանակաւ կարիքն և գիտակցաբար նկատելով 30-ամեակ պատերազմի առթած թշուռութիւններն, որոնք ձգել էին երկիրը գտափին անբաղդութեան մէջ, ձեռք մեկնեց իւր երկիրը գերեզմանական եղկելի վիճակից բարձրացնելու արժանաւոր աստիճանի, կեանքի ցնցում տալու և շունչ վիշելու. իսկ առաջ նորա որդի Ֆրիդրիխ Ալբ Էնաց իւր հօրից, շարաւնակեց ոկոսած զործը և ձեռնհատ եղան իւր գրառութիւնը թափաւորութեան բարձրացնելու: Սորա օրով Քրանդենքուրդ՝ Գրաւսական պիտութիւնը հետպհեաէ ընդարձակեց և գալրցական կեանքը լուրջ տշաղրութեան տուարկաւ զարծու: Որդին Ֆրիդրիխ I թագաւորը նախանձախնդիր վիճելով գիտութեան, ճիմնից Բերդինում գիտութեանց ձեռարանը և Ֆրանցիկուրտի ու Հալլէ: համալսարանները: Հալլէի համալսարանը բարձրացաւ մանաւանդ Ա. Ն. Ֆրանցիկի աճանառութեան կասախոսելով, որ Լայպցիգում ևս գասախոսեց կրթութեան զարկ տալ աշխատելով, ըստ որում ինչպէս և Գրեգորինում ամենօրեաւ լսարան էր բացել ժողովրդի համար, որտեղ Վ. Գրքից կարդալով լուսարանում էր, առելով՝ «մէկ նաքարակիւտ կենուանի հաւատը պատաւականադուն և քան մէկ ցենտներ լոկ պատաւական գիտութիւն, և մէկ կաթիլ իսկական ուրն առաւել է, քան գիտութեան և գաղտնիքների ամբողջ մի ծով»: Նա միծամեծ զբուածքներ չէ թողել բանահիմն ունենալով թէ՝ առկ գրքեր գրելով կըրթութիւն չի բարառքւիլու: Եւ իրաւ, նո իւր զարծերով առատ նիւթ է տալու իւր քսոնչիւր կենսագրի և խրատական է անձնիւր գործատնչին նաշատ տեղեր ժողովրդի մէջ զանազան անձերի թիւրիմացութեան և նախանձի հալածանք կրեց, բաց երբէք զադար չը տւեց իւր հանրօգուտ գործերին: Նա մի ողորմական արկղիկ կախուց իւր բնակարանի մօտ աղքատների համար և մի անգամ 7 գուլզեն գանելով մէջը, իսկոն 2 զուլզենի գրքեր զնեց և մէկ չքաւոր ուսունող վարձեց, որ պարտաւոր էր ամենան օր 2 ժամ աղքատ աշակերտների հետ պարագել: Եւ թող զարմանաէ ընթերցողը, որ ալդ ուսումնարանը հիմք եղաւ նորա միծանոն հաստատութիւններին: Նա սաւցաւ 500 տալեր նւէր, որով իսկոն հաստատեց ձի-ճաշ չքաւոր ուսանողների համար, որոնք պարտաւոր էին նորա ուսումնարաններում օգնական ուսուցիչներ վիճելու: Գոքա կաղմեցին մի տեսակ ուսուցչանոց (Seminarium Praeceptorum), որ միծամեծ օգուտներ տւեց, ժողովրդական ուսումնարաններին մատակարարելով ոչ թէ պատահական հացախնդիր անձեր ուսուցչական ծանր պարտաւորութեան ներքու, այլ վարժւած, գիտակից, գործատենչ և բարեխիդա վարժապետներ: Զքաւորների ուսումնարանը աճանպէս ծաղկեց, որ քաղաքացիներն ևս զիմնեցին նորան խնդրելով իրանց համար ևս ուսումնարան հիմնելու, ըստ որում և հիմնեց նա քաղաքացիական դպրոցների ոկիպը տալով (Bürgerschule), Նա նկատելով որ ապարդիւն է անցնում ուսումը առանց կըր-

թութեան, վասն զի որբ—չքառոր աշակերտներ դպրոցից դուրս անօգնական մնալով՝ մտահան էին անում սովորածը, հիմնեց մի նորատութեամբ առաջին որբանոցը 1695 թ. աճնպէս որ 1698-ին վշեալ բոլոր ուսումնարաններում ունէր 409 աշակերտներ, իսկ մունելու տարին 2.200 աշակերտներ, մոտ 200 վարժապետներով, Մինչև իւր 64 տարեկան հասակն աւտքան մեծ լառաջադիմութիւն!՝! Շատ կենսագիրներ ասում են, որ նորանմանը ոչ առաջ, ոչ ել վետոկ եղած է—ազգպիսի մի անխոնչ անձնաւորհ մանկալարժ:

Կարճ կապելու համար միան վիշենք, որ նա ազգքան չառ ուսուցիչներ աւելյ ուսուցչական ժողավարներ կազմելով, փորձագասեր տալ աւալով թէ հրապարակապէս և թէ առանին, աճնպէս որ նորա վարժապետացաները ուսուցանելով՝ ուսուցանելու միան 1707-ին համալսարանին կից բացին բարձր ուսուցչանոց:

Ուսումն և լուսուորաթիւնը սասացել էին արուեն իրանց խթանը, մնում էր ավժմ լառաջատարութիւնը, որ լաջող էր պարագաների նպատակը թիրմումը: Ասովարիվզից հոսացող աշխատաւողներին լաջորդեցին նոր ձեռքեր նոր աշխուժավոլ: Ուսումնասեր պետի ջանքավ երևեցին ժողովրդական ուսումնարաններ խաւարի հանկերից շորթելու աճն հպատակներն, որոնք լանձնւել էին իրան Աստուածանից արժանաւոր դրութեան մէջ պահելու: Ի՞նչ չէ կարող անել գեղեցիկ և աստուածավին զազսիարներով ոգնորւածը, միան Պրուսիացու 1000-ի չափ ուսումնարաններ կենդանութիւն ստացան, որոնց համար թէ կանոնադրութիւններ և թէ սլարտադիր ուսումն հետեւեցին իրար: Խրաքանչիւրի լուսուորութիւնն սիզունք էր ուսման լառաջադիմութեան և կենաքի բարեկաւացման, որ և նա հոգով զվասար կէտը շնեց, որովհետեւ ինչպէս նա ասում էր՝ «ճանրութեան բարեկեցութեան վեստում են ագէտ, նախապաշտուած, կոպիտ և անբարուական մարդիկ»: Ազդ զաղափարի մնկիւնաքարը պարտուեց ռառութ էր, որ գետ շատ առաջ Աթէնքում և Սոլարապում գործադրուած էր, սակայն ոչ ընդհանուր մտակերտութեան սկզբունքավ—որպիսին միան Պրուսիացին է պատկանում: Օրինակը կար, որի փակը զրաւեց հարեանների ուշազրութիւնը, ըստ որում լուսաւորութեան ճշմարիտ նախանձախնդիրները սկսեցին արագութեամբ նմանագործել:

Ֆրիդրիխ Մեծը զարկ աւելյ գիտութեան, ինքն ևս գործակից եղաւ «իմաստապիրութեան և բանահյաստութեան զիտարանին» անդամակցելով, սակայն գիւղերում և մանր քաղաքներում նողն լառաջադիմութիւնը չէր երեսում. աճնակազ զեռ տիրում էր կիոդութեան մասամբուզը, մինչզեռ թաղաւորի ձեռքը մինչեւ այդ խոր անկիւնները կարկառելու շարժառիթներ չը կացին, թէս անդ-տուղ գործունեա անձերի հանդիպելով լառաջ էր զնում և ուսման գործը: Սակայն Ֆրիդրիխի վվասար արժանիքն աճն է, որ նա կարենորը կարգի բերաւ և կանոնադրութեան ևնթարկեց, պարզ ոկզրունք-

Ների վերաէ հիմնելով։ Լնդ նմին նա աշխատում էր ուսման պատիւը բարձրացնել ժողովրդի աչքում, ուստի և հրամակում էր արժանաւոր ուսնալներին ուսուցչութեան հրաւիրել։ Նա խորհրդադրեց դառախօսներին վսեմացնելու ուսումնավայրերի չարդն և փառքը գեղեցիկ, հասկանալի և դիւրընթերցանելի գրութիւններով։ Բարձրագոն դպրոցները պէտք է այն չառաջ տանէին, ինչ որ կեանքի մէջ գործունէութեան և աղքալին ձգտումներին օգտակար և նպաստաւոր էր։ Աշակերտներն էլ պիտի վարժւէին անկախարար մտածելու, որ մի պարզ ապացուց է թէ որքան աշխատում էր նա իւր ժողովրդի ինքնախոնութիւնն և զիտակցական մոածողութիւնը զրգուելու և նորան իւր մտքի տէրը դարձնելու։ «Ուսեալ և հասկացող յողղովուրզը միշտ աւելի բարովական և չանասէր է, քան տղէտ և խաւարը»։ ահա Աղամ Սմիթի խօսքերը, որոնց գիտակից էր Ֆրիդրիխ և ճգնում էր ըստ կարելուն իրականացնել այդ սկզբունքը։ Նա մինչև իսկ վարժապետներին հրահանգներ էր տալիս, ինչպէս օրինակ ասելով՝ «Վարժապետը պէտք է աշակերտների առաջ կարդաւ և պատեհ առիթներ աշխաթող չ'անէ պատանիների քննադատելու ուժը սրելու և ճշմարտին, բարւոն ու գեղեցիկն ճաշակը զարգացնելու»։ Վերջապէս «ես չպնել եմ ստրուկներ կառավարելուց», հոչակաւոր և իւր հանձարին գործունէութեան այս մըշտաւորդ բանահիմն ասելով, կեքեց իւր մահկանացուն։

Սոն այս շրջանումն էր, որ Ֆրանսիակի մէջ գլուխ բարձրացրեց Ժան-Ժակակ Ռուսո իւր «Էմիլը» գրւածքով, որում նա հետեւում էր նոյն ուղղութեան, ինչպէս Կոմենցոս, ասելով «իմ բանակարգութիւնն (սիստէմ) է բնութքի առաջագայութիւնը», սակայն այն տարբերութեամբ, որ վերջինս «բնութք» փրարկում է հակադիր մշակութեան (Կուլտուր)։ Նա կարծում էր թէ մշակութիւնից զուրկ ժողովրդները զրախատաին կեանք են վարում, ըստ որում և Վոլտերը գրեց նորան «Էմիլը» կարդալուց լետոք «երբ մարդ կարդում է Ձեր գիրքը, մի հաճոք է զգում չորս ոտքերով շրջելու...»։ Մարդկանութիւնը՝ քրիստոնէական արդիւնքն, իսկ Ռուսոի բնամարդը բնաւ գերականական մարդ չէ։ Այսու ամենալիւ, այն զաղափարի պատճառով Ռուսոի վարկը չէ ընկնում։ Նա ևնթակալ է եղել շատ տատանութիւնների, բաց ի վերջու կատարեալ համոզմունքով զրում էր։ «Ես խոստովանում եմ որ Ս. Գրքի վեհութիւնը զարմացնում է ինձ։ Աւետարանի սրբութիւնը խօսեցնում է իմ սիրու Տեսէք իմաստաէրների հպարտունակ գրքերը, քանի փոքր են դոքա նորա առաջ։ Մթթէ կարելի է որ ազդպիսի մի վեհափսեմ ընդ նմին և պարզ գիրք մարդու զործ լինի։ Ի՞նչ հեղութիւն, ինչ սրբութիւն նորա բարուքների մէջ։ Ի՞նչ խոր իմաստութիւն նորա խօսքերի մէջ...»։ Սոկրատը օրհնում է այն մարդուն, որ լալով տալիս է նորան թունաբաժակը. Յիսուս աղօթում է իւր կատաղի ասող դահճի համար սարսափելի չարչարանքների մէջ։ Եթէ Սոկրատի մահը և կեանքը մի խմաստունի կեանք է և մահ, Քրիստոսի կեանքն ու

մահը մի Աստուծոյ կեանք է և մահ»։ Յիրաւի, Ռուսսօի դրութիւնը Գեօթէի ասածին պէս՝ «մարդկակին բնութքի աւետարանն է»։ Ռուսսօն աւետարանի սուրբ գաղափարներով եղաւ միշտիմութեամ չառաջալարը, աղասութիւն, հաւասարութիւն, եղագրութիւն զոյելով, որոնք, դեռ՝ չատդարեր կ'անցնին, բաց կը մնան ազգերի կենդանարար զօրութիւն։

Այս գարաշրջանը հաճարի գարաշրջանն է. Բերլինի, Կեօնիկսբերգի և Հալլէի համալսարանները ծաղկեցին խմաստամիրութեան և մանկավարժութեան ասպարիզում փալող անձերից, որպիսիք էին՝ Կանտ, Ֆիխտէ, Շոպենհաուէր, Հեգել, Հերսարտ, Բինեկէ և ալլք, որոնք մի մի աստղեր են գերմանական հօրիզոնի վերաց. Բարուական կրթութիւն—ահա Կանտի մտակետը, ըստ որում մարդս միակ կրթելու արարածն լինելով, պարտական է ինքն իսկ իւր մշակութեան աշխատելու, միւսներին ևս կատարելաբերելու։ Կրթութիւնը պէտք է մարդուն քաղաքալիթէ, բարուականացնէ և մշակէ; Կրթութիւնը են վերաբերում՝ խնամածութիւն, զրոց, կարդապահութիւն, խրատ և հոգասարութիւն լրւաւորութեան կամ մտակերպութեան մետ Ուսուցիչը պարտաւոր է իւր աշակերտներից նախ հասկացող, ապա մտացի և ի վերջոյ ուսեալ մարդիկ պատրաստել. Աշակերտը պէտք է գաղանութիւնից մարդկայնանաց, ոչ թէ մոռածմունքներ սովորէ, ազ մտածել, աշակերտին պէտք է ոչ թէ տանել, ազ առաջնորդել, որ ապագայում իրանք գնալ գիտենան. Պէտք է փշողութիւնը բանալ, ըստ ազնմ թէ տանուա scimus, quantum in memoria tenemus. Սակայն ամենին պէտք է կրոնը բառաջէ, երկիւղածութիւն ներշնչելով պէտք է աստուածպաշտութիւն զարգացնել նոցա մէջ, որպէս զի Աստուծոյ կամքով շարժւին. Աշակերտը պէտք է ձեռք բերէ առաքինութիւններ, բարուական ունակութիւններ, ըստ որում առաքինութիւնները ձեռք են բերում և ոչ թէ բնածին են. Ահա ազդ հոչակաւոր իմաստաէրի գաղափարներն, որոնք մանկավարժութեան մէջ տեղ բռնելու իրաւունքն ունին։

Ֆիխտէն ևս «եսուի և առ եսուի յարաբերութիւնները որոշելուց իմաստութիւնն է, որ աշակերտը ոչ թէ անկամք մեքենաց պիտի նկատւի, ազ մի աղատ էլութիւն. Նա չի ժի ժխտում, որ, կրթելիս, ստիպելը անհրաժեշտ է, սակայն պէտք է և աղատութեան մաս ևս տրւի, ան է հնազանդութիւնն, որ ոչ թէ հրամանի կամ արգելմունքից չառաջ գաէ, ազ ան հաւատքից, որ պէտք է լինի աշակերտի մէջ առ ծնողների բարիքն և խմաստութիւնը. Նախ կրթութիւն, ապա կոչումն, ժողովրդի ուսման և լրւաւորութեան հոգատարներն են նախ ուսեալները, ապա ժողովրդի բարուակրթիչները, որոնք են եկեղեցու ճշմարյան սպասարկները, որոնց պարտաւոր է կամակից լինել իրաքանչիւր համանքք, Ուսեալների կամ ժողովրդի ուսուցիչների և ժողովրդի բարուակրթիչների մէջ աեղը բռնում են գեղարւեստա. պէտները, որոնք զարգացնելով գեղարւեստական իմացքը, ծառապում են մարդկանց հասկացողութեան և կամքի գարգացման, որովհետեւ վերջին.

ներս կարակից են առաջնին: Այս հիմքերը տալուց վեառէ նա իւր ուշքը զարձնում է զերմանական աղքի վերակ, որ աղքութեան գոճն չ'ունէր բնաւ, վայրենութեան և պատականան մէջ խորասուզւած վինելով: Նա ձդառմ էր միջոց ցաց աւալ իւր ճնշած ազգի եսասիրութիւնը կամ ինքնամոլութիւնը զարթեցնելու: Նա ասում էր թէ՝ «ոչ մի մարդ և ոչ Աստուած և ոչ որ և է պատահար չէ կարող մեզ օգնել, այլ մենք պարս ենք մեզ օգնել, եթէ օգնելու հարկ լինի»: Ամենք կարիքից ասիստած ենք որսանց և հիմնաւրապէս բարի մարդիկ կերպագործելու (Կրթելու), որոնցով միանալու աղքը չորսունել կարող է, մինչեւ վատերի միջոցով օտարին հետ կ'ընդիւառնուի: Փերկարար միջոցն է՝ կերպագործութիւն առկաւին նոր, ընդհանուր և աղքակին ինքնութիւնից՝ ազգի կրթութեան, ազգին, որի ցալժմեան կետքը հանդչած է մի նոր կեանք ապլով, մի խօսքով՝ ամբողջովին փոխել ցալժմեան կրթութեան էութիւնը, և այդ է այն միջոցը որ ես առաջարկում եմ զերմանական ազգի գործութիւնը պահելու համարութողով որդիները պիտի ընկերաբար ապրել սովորելով, աղքագու աղքացն և բարուական կեանքի նախաղդացումն ունենան, սովակը և աղջկերքի միտուին, առանց սեոփ ասրբերութիւնը հասկանալու: Ամենայն բասարաթիւն ոլէտք է ձգտի մի հաստատ և չարատե էութիւն լառաջ բերել որ ոչ թէ պիտի լինի, այլ և աղքագէս չը կարողանայ լինել: Աշակերտը ոլէտք է այնպէս կրթւի, որ կամենալ ինչ որ կամենում է և ոչ աղքապէս կամենալ կարողանալ: Ասել է թէ, նոր կրթութիւնը պէտք է ամերապինդ կամք գուացնէ մարդու մէջ: Ապա ինքնամոլութեան փոխարին պէտք է ուրբ տրի, որ անմիջաբար առ բարին է գնում պարզապէս, ըստ որում նորա կամքը կազմէլ այնպէս, որ նորա բարի հաճոցքը ճշգապէս ողղուի առ բարին: Նորա կարողութիւնից լառաջ ելած պատկերները պիտի իրականութեան նախաղատիւն լինին, սակայն նոյնից անկախարար, ըստ այսու ոչինչ ընդունելութիւն արտաքուստ, այլ մեզ չաջոնի սեպհական ներբին կէտք դրգիտ: ստանալով, ինքնագործունետիւնը միամբ չառաջագալու նորեմն կրթութիւնը պէտք է անմիջորդաբար ուղղվէ հոգու չափաւորապէս լառաջախաղաց դործունելութիւնը զրգուելու: Աշդպիտով աշակերտը հոգեպէս զործունեալ է լինում լոկ զործունելութեան սիրուց: Դորա համար նա պէտք է անընդհատաբար կրթւի առանց համանքների աղղեցութեան ենթարկելու, միան իրանց բարուական կարգաւորութեան սիրու չառաջաղիմութիւնը նկատել և գնահատել կարողանալու համար՝ պէտք է իրանց մէջ համանաբար աղքենն, ինքեանց համար մի համանք կազմելով և անձնականը ընդհանուրին զոհելու վարժելով: Մարմնաւոր աշխատանք ևս պիտի ունենայ այդ փոքրիկ համանքը, որի անդամները իրար օգնել ջանան, միւս կողմից ևս կրօնապէս պէտք է լուսաւորւին և իմանան որ առա ոչինչ ճշմարդու չէ, բայց եթէ հողեր կմահքը մտածողութեան մէջ, ար ըստ աստուածավին օրինադրութեան մէկ է, չը նաև լով իւր բազմասեռ կազմութիւններին:

Ամփոփենք. կրթութիւնը պէտք է թափանցի մինչև կեանքի արմատները, գործէ միակերպ բոլոր խաւերում և պէտք է աղբային և ժողովրական վճիր, կրթութիւնը պէտք է ամուր կամք առ բարին դռացնէ, պէտք է իւր խնդիրը զնէ բարի հաճուք առ բարին, որ է մարդկային կեանքի արմատը թէ աստ և թէ անդ: Կրթութեանն հնթակաւք են՝ կամք և միաք, սական երկրորդն առաջինից առկախեալ կամքի կերպաւորութեան միջոցն է խմացողութեան հոգուը, ըստ որում աղպախով բարտական կեանքը կ'ունենալ իւր մշտական ճրագլը: Այս ամինի կնիքն է՝ աշակերտի սեպհական գործունէութիւնը գրգռել:

Սակայն այս ազգահոգ և հանձարեղ մեծ խմացառէցը հիւնաում է իւր ժամանակակից դպրոցանուէր անձի վերաէ—ալդ Պետալոցցին է:

## Բ.

Ոչ ոք անպէս խոր չէր թափանցել մանկավարժական զործը, ինչպէս Պետալոցցին, որի զրութիւնների վերաէ հիանում էր և կրկին ու կրկին կարգում վիրուժեալ իմաստասէրը: «Ոչ ոք է, ասում է Շոթէ, ուսուցման գործում արեւատակութեան տաճաճքն և գորա առընչութիւնն ընդհանուր չարիքի հետ, որից տաճւում էր Խւրոպան, անզէս խորունկ չէ զգացել, որպէս Հլենրիխ Պետալոցի, իսկ ան ովհուրութիւնն, որ ի վեր հանեց նորա երեսումը Գերմանիակում և զուրուը, վկանեց որ նոյն զգաւութիւնը բռնել է անթիւ բարեխոններ, որոնք աշխմ նորա խօսքերից միանդամից հասկացան ան ամինն, ինչ որ նոյանից և ամինից պակասում էր»: Դեռ Պետալոցցուց առաջ երեաց Ֆրանկէ, որ պահանջում էր ժողովրական դըպրոցների իրազորդութիւնը, ըստ որում նա նախագուշակ հանդիսացաւ Պետալոցցուն. սակայն նա գործի մանկավարժ էր, իսկ սա ոճաբանութեան մանկավարժ էր, մանկավարժների մանկավարժ...

Պետալոցցին ծնւեց Ցիւրիխում (1746—1827). «լաւագոյն մօր» խնամածութեան ներքու կրթւած, հարուստ աղնիւ զգացմունքով և քրիստոնէական սիրով, հսկատարմութեան, ինքնազնութեան և երախտագիտութեան զեղեցիկ առաքինութիւններով օժտւած ալդ միծ մարդը, սնանելով մակրական տաճնիքի տակ պէտք է աշխարհի կրթութիւնը նեղացչման ենթարկէր և նորան նոր կեանք, նոր ուղղութիւն տարի նա ղեռ ասպարէզ չէր ելած, երբ գերմանական դպրոցներն, ինչպէս տեսանք, կընէսո երկիւղածի աշխատութեատր և մարդասէրների ջանքով փոքր ի շատէ բարւոքամծ էին: Այդ մարդասէրների մէջ ամինանշանաւորն էր Բաղեղով (1723—1790), որ հիմնեց Պետալու՝ անպէս կոչւած՝ մարդ ասիրաբան (Philantropinum), և չատ հետևողներ ունեցու, որպիսիք են Վոլկէ, Զալցման և ալք: Նա չատ հետևողներ ունեցու, որպիսիք են Վոլկէ, Զալցման և ալք: Նա չատ հետևողներ ունեցու, որպիսիք են Վոլկէ, Զալցման և ալք: Նա չատ հետևողներ ունեցու, որպիսիք են Վոլկէ, Զալցման և ալք: Նա չատ հետևողներ ունեցու, որպիսիք են Վոլկէ, Զալցման և ալք:

ծամեծ օդնութիւններ գտաւ, չը կարողացաւ ժողովրդի մէջ մեծ լաջողութիւն ունենալ, որովհետև զաւանցանքների ենթարկւելով ժամանակակից ուսեալների ծաղրին արժանացաւ։ Պեստալոցցին սկզբում գիւղատնտեսութեան նւիրւեց հիւանդութեան պատճառով, բայց մի պարտք զգալով հասարակութեան բարուքման նպաստելու, ըստ որում ասում էր՝ «Ես ուզում եմ իմ կալւածքս միջնակէտ շինել իմ գիւղատնտեսական և մանկավարժական ձգումներին»։ Նա օգնութեան դիմեց և ժողովելով աղքատ մանուկներ՝ սկսաւ այդ աղնիւ մարդը ապրել «ինչպէս ապրում է մի մուրացկան, մուրացկաններին մարդու պէս ապրել ուսուցանելու համար»։ Սական նաընկաւ վերջին չբաւորութեան մէջ և ծաղր ու ծանակ գարձաւ ժողովրդի աչքում։ Նա անվնաս էր և ահա 1798-ին Ստանցից վերստին սկսելով և օրն ի բուն իւր աշակերտների հետ ապրելով, խաղալով, քննելով և զարթնելով սքանչելիք գործեց զպրոցական գործում, որ նկարագրելը շատ հեռու կը տանէր մեզ և մեր գրութեան շրջանից դուրս կը գալինք։

Այդ չբաւորութեան ժամանակ իսկ գրած «Ճիշճաւորի իրիգնաժամերը» գիրը պարունակում է բազմաթիւ մանկավարժական գաղափարներ, որոնք դպրոցական լառաջաղթիմութեան մտախիթաններ էին։ Ամենայն ինչ հիմնում է նա «ակիղըն իմաստութեան» երկիւղ Տեառն։ իմաստուն խօսքերի վերաց. ինչպէս առաջին կրթութիւնը ընտանեկան է, քան հայրն ու մայրը բարձր է Աստուած և մօտագոն իւրաքանչիւրի սրտին, քան որ և է ոք, որովհետեւ նորա հաւաքով կազդուրելով, ստանում է մարդս ախպիսի զօրութիւն, որ անվեներ է ամենալն բռնութիւնների դիմաց։

1808-ին Պրուսիաի Լուիպէ թագուհին գրեց. «Ես կարդում եմ այժմ Պեստալոցու Ոլյնհարդ և Գերատուղ»։ Փանի հաճելի է ինձ Զւիցերափի այդ դիւզում։ Լինէի ես ինքնազլուխ, կը նստէի իմ կառքում և կը սլանափի Զւիցերփա։ Պեստալոցու մօտ, այդ աղնիւ մարդուն արտասաւլց աչքնորով շնորհակալութեամբ ձեռքը կը սեղմէի։ Փանի բարեացակամ է նա մարդկութեան։ Այն, լանուն մարդկութեան չնորհակալ եմ ես նորանից։ Պեստալոցին պատկերացնելով այդ գրւածքում ժողովրդի իսկական կեանքն աննման լաջողութեամբ, իւր բոլոր շանքը գործ է զնում նորա զրութիւնը բարւոքելու, մաքրելու, վեհացնելու... Նորա այդ գրւածքը, իբրև դասական, ընդունելի եղաւ ամենուրեք։ Ոլյնհարդ և Գերատուղ», ասում է Դիստերվեդ, Պեստալոցու միակ գիրքն է, որն ես գործնական ուսուցիչներին խորհրդաբերում եմ անպալման։ Իւր միւս գրւածքում Ֆիխտէ՛ի գերակախուզութեան լարելով, ասում է՝ «իբրև բարուսական էութիւն զգում եմ ես մի զօրութիւն իմ մէջ, որը կայ, վասն զի ես կամ, և ես կամ, վասն զի նա կայ»։ «Քրիստոնէութիւնն է ամբողջովին բարուսականութիւն, ուստի և անձն իւր մարդու անհատականութեան զործ»։ Ահա այս հոչակաւոր սկզբոնքներով բացորոշամ է ուսուցման և կրթութեան զործը՝ հոգեբանական և անհատական օրէնքներին, բարուսական, հոգեկան և ֆիզիքական զարգաց-

ման մէջ ամենաբարձր տեղ տալով, որոնց վերակ արդէն տեղ տեղ խօսեցանք: Ամենայն դպրում նա էնւում է Ս. Գրքի վերակ, ինչպէս և իւր կող դիմակի վերակ ձգելով մարդկանութեան ազդ կտակարանը, բացականչում է՝ «այս աղբիւրից ստեղծեցինք դու և ես արդութիւն, ամրութիւն և խաղաղութիւն»:

Պեստալոցին ուսուցման քաջավար խթանը տալով, ձգտում էր բարեկաւել տնապին կրթութիւնը, բարձրացնել ժողովրդի ստորին խաւերն, ընդ նորին և ըստ մանկական ոգուն բնակատոկ չարմարութեան հաչեցողական պարզ և հասարակ սկզբունքով մանկան ոչխերը վարժեցնել և առհոգեկան ազատութիւն և ինքնազործունէութիւն առաջնորդել: «Երբ ես ինձ հարցնում եմ, ասում է նա, ինչ եմ էապէս կատարել մարդկալին ուսուցման մէջ, ես գտնում եմ՝ ես պինդ դրել եմ իրեն ամենավերին կիտակ (աքսիոմա) հաչեցողութիւնը, իրեն բացարձակ հիմք ամենայն իմացութեանց խոստավանելով»: «Մեր ներքին զգացութեան օրէնքները պէտք է մեր հոգեկան և բարուական կեանքի օրէնքներին ստորագրուին: Առանց այդ ստորագրութեան անհնար է, որ մեր բնութքի զգացողութիւնը երբէք կարողանալ ճշդապէս ներգործել մեր զարգացման վերջին հետևանքների ձշմարիտ արտօադրութեան կամ մարդկանութեան արտադրութեան վերաբ: Մարզս մարդ է միան իւր հոգենը ներքին կեանքով, զրանով է նա անձնիշխան, աղատ և գոհ»: Ամենայն թշւառութեան և մեզքի ազբակով, ըստ Պեստալոցուն, տպիտութիւնն է, ուստի պէտք է թշւառներին ազատել ազիտութեան ճիրաններից և ահա կը փրկէք նրան թշւառութիւնից, մեղսագործութիւնից և ազն: Պեստալոցին սիրելով ի սրտէ իւր ժողովուրդը, պատանեկութիւնը, գործեց անձնութրութեամբ չօգուտ նորա բարգաւաճման և հիմնաւորսպէս խորամտութեամբ արդիւնաւորեց կատարելագործելով մինչև իւր ժամանակն արտակարուած մանկավարժական գաղափարներն, ախնապէս որ նա իւր նախորդների մտքերի կտղապարովը կարող է համարել: Նորա մտագրիւն էր, որ լառաջ բերաւ Ֆրեօրելի մանկապարտէզը Թիւրինգենում և զգալի բարեփոխութիւն մոցրեց կրթութեան և ժողովրդի զարգացման դրութեան մէջ, ըստ որում պէտք է կեանքն աղնւանար բոլոր խաւերում, իւրաքանչիւր անձն պէտք է կրթէր աստուածապաշտ, առաքինի և հալրենասէր լինելու: Մանկապարտէզը մեծ ծառագութիւն է մաստուցանում ուսուցման, վերջինիս հարկաւոր և մանկան մէջ եղած բոլոր ընդունակութիւնները առընչաբար զարգացնելով, վասն զի մանուկը իւրանմանների հետ վարելով չարմարութիւն է ունենում հոգեպէս լառաջանալու:

«Մի մեկին հոգեկան նալածքով և իւր պարզութեամբ, ասում է Միշը, զտել է Ֆրեօրել այն, ինչ որ իմաստունները զուր որոնել են՝ կրթութեան գալոնիքը: Ֆրեօրելի վարդապետութիւնը է ժամանակի կրթութիւնը և իրաւճմարիտ կրթութիւնը: Կրթութիւն ըստ Ֆրեօրելի գաղափարին՝ ոչ արտաքին, ոչ նախորոշ և ոչ կամակական: նա ինքն իսկ մանուկից է դուրս բերւած.

մանուկն իւրմով սկսում է պատմութիւն, մարդկալին սեռի սուեզծաբերող գործունեութիւնը։ Եւ իրաւ, որքան ընտանեկան կրթութիւնն է անհրաժեշտ դպրոցական գործի չառաջազլմութեան, նազքան կարևոր է մանկապարտէվը մանաւանդ առաջինի թերագէտ ժամանակ։ Այդ է պատճառը, որ այդ գաղափարի իրագործումը բոլոր հասուն մանկալարմների պահանջներից մէկն է եղել, ըստ որում և զորա իրականացումը մեծ զարկ տւեց Պեստալոցը։ Եղայրջնած և բարեկարգած դպրոցական աշխարհին։

Մանկավարժութեան այս նոր հոսանքը չաջողեց նախ իսկ քաղաքական անպատճի բաց զարթուցիչ հարւածների ներքո։ Մինչդեռ այս հանձարներն ազգի ցաւութիւն խելամուտ լինելով, մոտաւոր վեղափոխութեան անլիներ զինւորներ էին հանդիսանում, ուսումն ընդհանրապէս աղդակին գոյն չ'ունենալով դեռ ևս անհաս էր ժողովրդին նպաստաւոր լինելու, ոլէտք էր նոր կերպարանք տալ զորան, այդ եղաւ Ֆրիդրիխ Վիլհէլմ III-ի աշխատութեամբ կամ աղղեցութեան տակ, արդարադատութեան նախարար Մասսալի ջանքով, երբ աղզակին կրթութեանը իւր արժանաւոր և վակելու տեղը աւին, 1800-ին Գեոգիկը գրում էր՝ «մէկ իշխան, որ լաւագոյն աղզակին կրթութեան ստեղծողն է, ապրում է ոչ միան սերունդի համար, այլ և անպատճառ այդ սերունդի մէջ»։ Այդպիսիներից էր և վշեալ թագաւորը, սական որչափ գործը բարեպատճին էր, աղնու հանդերձ ձգտութիւնը միւսթիւնը դեռ սպակասում էր, իսկ ապա Նապոլէօնի սոսկալի ճակատը Ենապի մօտ, որտեղ ջարդ ու փշուր եղաւ գերմանական զօրութիւնը, փոխեց իրերի զրութիւնը և նկատելի եղաւ թշւառութեան մէջ, որ նւազ էր տիրող հանրողին, դեռ խոպան էին մարդկանց սրտերը, պակասում էին հոգեոր առաջինութիւններն, որոնք հիմքեր են ճշմարիտ հայրենասիրութեան։ Այդ ժամանակ գերմանացիների թշնամին ոկտաւ իւր պաշտպանութեան գործ ածել քաղաքացիներին, որոնք միւսթեան դրօշի տակ ինքնազիտակցութեան եկան և սկսան քաղաքակրթական միութիւններ հիմնել, իսկ վեհապեսը ջանանար եղաւ իւր աղզը կրօնական, բարուական և աղդակին ոգու զարթուցմամբ տնտեսական, քաղաքական և ընկերական բարձրութեան ձգտել։ Նա համոզած էր, որ թէ ընդհանուր և թէ անհատական կեանքի բարելաւացումն այն ժամանակ միան կարելի կը լինի, երբ իւրաքանչիւր ոք ըստ կարելուոն լարմարութիւն կ'ունենալ անարգել զարգացնելու իւր ընդունակութիւններն, իւր ոչքերն և կիրարկիլու։ Պրուսիան պատերազմի խաղաղութիւնից իւսու զգալապէս նւազել էր, սական ֆր. Վիլհէլմ Գ. տակաւին չը վհատւեց, նա ասում էր, որ կորցնելով ինչ ինչ արտաքուստ, պետութեան զօրութիւնն ևս ընկճւեց, «սական մենք պիտի և հարկ է հողանք ներքին զօրութիւն և ներքին վայլ ձեռք բերելու, վասն որոց և իմ լուրջ կամքն է՝ որ մնծ ուշք նւիրւի ուսուցման։ Արդարան, որ ինչ արտաքին է շարժական է, նիւթական է, կորուսի և լափշտակութեան ենթակա։ Ներքին դանձ պէտք է զարդացնել, որ

մշտական սեպհականութիւն լինիու. Այս զաղափարը, որ հապա ևս արծար-  
ծեց Ֆիխտէի մտադնութեամբ, ծնաւ այն ժամանակ, երբ զերմանացիք  
իրանց նիւթաւոր հարասութեան անցաւորութիւնը տեսան նապօլէօնի  
ձևա ընդհարւելով. Հաստ ժամանակ չ'անցաւ և առա Պիտարոցցու կերպա-  
ւորած հիմունքները զարգացան զիտնական մանկավարժութեան օրոր-  
քում, որի զօրավիպներն եին կանան ու Հերբարա, Ֆիխտէ և Հեղել և  
ապք, ընդ նմին և Պրուսիայում սկսան, ըստ Ֆիխտէի, ամենան միջոցներ  
գործ զննել բարուա-ազգապին կրթութիւնը զիւրամարս կացնելու ամենա-  
մատող մաքերին, խոնեմ թագաւորն ես վերակոչեց և բարձրացրեց ժողո-  
վրդական ողին, ամենան ինչ աղջանացնելով, միան ազգապինը ճանաչե-  
լով և աչքի առաջ ունենալով, որով միացաւ ազգն աղջապինը պետութեան  
հետ. Սկսավով Պրուսիան շատ առաջ գնաց. հոգի, կեանք, գործ—տիրում  
էին աղատութեան մէջ. կրթութիւնը իւր ընդարձակութեամբ լիք սերմանիք  
էր, որ աստանայէս ցանում էր խաղաղութեան մէջ. Կրթութիւնը,  
իրաւ է, մեծ կարեսութիւն էր սաացել, սական չէր լաջողում և շատ  
հասկանալի պատճառով. մարդ էր հարկաւոր, ճշմարիտ ուսուցողներ էին  
անհրաժեշտ, որոնք չը կային. բայց մարդիկ ունենալու համար դարձեալ մար-  
դիկ էին հարկաւոր. լաւ ուսուցիչներից — յաւ զարոցներ՝ տաս էր 1790—1866  
Դիմանելովիք աքսիօմը. նա ասում էր. որտեղ զպրոցի էութիւնը ընկած է,  
ուսուցիչներն են այդ անկման պատճառը. որտեղ բարձրացած է, ուսու-  
ցիչներն են որ բարձրացրել են. Այլ ևս ուրիշ ելք չը կաէ. Ըստ այդմ  
ամեն ուսուցչանցի ինդիրն է՝ ըստ կարելոցն հոգու բարձր և հիմնաւոր  
զարգացումն, վասն զի միան արթուն, խոնուն, ինքնակախ, ըստ ո-  
րում փորձող, հետադնող, հասում մարդիկն են ուսուցչութեան արժանիու:  
Նորա ուսուցչանցը Մորասմ պէտք է օրինակելի լինէր և եղաւ ամբողջ  
երկրի համար. այնտեղ պէտք է վարժապետացուները տեսականի իրա-  
գործմամբ փորձնական լինէին և ապա զարգացնէին իրանց գիտութիւնը  
և փորձը օրըստօրէ. դիմանալը անհրաժեշտ է, սական կարենալը պսակն  
է գիտենալուն. Որչափ օրինակելի էր վարժոցը, նոնչափ և նա ինքն, որի  
զաստաւութեան միջոցին աշակերաները իրանց բուզը էութեամբ նւիրւում  
էին նրան. Դպրոցի զարգացման չափն է՝ կարգալ և խօսելն, որոնք Դիմ-  
տերվիպի մօտ վերին կատարելութեան էին հասած. Նա նւիրւած էր այս  
սուբր զործին մի շարք հոգածան անձերի օգնութեամբ, ինչպէս երևում է  
այս խօսքերից՝ «Rochone genuit Wilberg Wilberg genuit Diesterweg et frat-  
res ejus»: Նրկար ժամանակ չանցաւ և Դիմաների մողովորդի մշակութեան  
(Կուլտուր), որ ազգի աննման ամրութիւնն է, մեծ ծառակութիւն մատուց,  
ըստ որում այս զպրոցի աշակերաները տարածեցին աջ ու ձախ մի զարգա-  
փարով ովերտած և մի ուզգութեամբ, պարաւականութիւնների ճշմարիտ  
զիտակցութեամբ, ինչպէս երևում է Դիմաների խօսքերից, որ նա գրում էր  
նախարարին՝ «անձնիւր պրուսական երեխապ մի գոյակ է իմ աչքիս առջև,  
որ կարող է զանգատաւել Աստուծուն եթէ ես նորան ըստ իմ կարողութեան չը  
հասցնեմ մարդկապին և քաղաքական զարգացման»: Պարտաճանաչութեան  
աջ արտաքսութիւնն, որ ոչ թէ մէկի, այլ բաղմաց ձայնն է, պարզ  
ապացուց է և նշան այն ժամանակի լառաջաղիմութիւնը հասկանալու  
համար:

(Էլ շարունակութիւն)

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԵՐԻՑԵԱՆ ԱԼՔԻՍԱՆԴՐ. — «ՆԻՒԹԵՐ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ»:  
Ա. — Գրիգոր Արծրունու և նորա քսանեհինդ տարւայ գրական գող-  
ծունէութեան առիթով (1865—1890 թ.). Թիֆլիս, տպարան Տ.  
Նազարեանցի, 1890 թ., քառածալ, 100 երես, տառ № 12:  
Գինն է 50 կողէկ:

Ահա մի զրքովկ, որը լիապէս ար-  
դարացնում է իւր վերնագիրը, իբր  
«Նիւթեր հայոց պատմութեան հա-  
մարո», և իրօք արժանի ոչ միայն կար-  
դալու, այլ և ուսումնասիրելու: Գիրքը  
բաղկացած է երկու գլխից, որոնցից  
առաջնում (34 երես) պատմում է  
Գէորգ Արծրունու և այն բոլորի մա-  
սին, ինչ կապ ունի այդ մարդու  
անձնաւորութեան և գործունէութեան  
հետ: Երկրորդ զլիսում պատմում է  
Երևմիա Արծրունու, և սորա որդի-  
ների և այն ամենի մասին, ինչ կապ  
ունի Գրիգոր Արծրունու կեանքի  
հետ մինչ «Մշակ» լրագրի հիմնելը:  
Կինտրոնակէտ ունենալով Գէորգ,  
Երևմիա և Գրիգոր Արծրունիներին,  
հեղինակը մեզ տալիս է հմուտ  
անձից բղխած տեղեկութիւններ:  
1) Թիֆլիսը գարուս առաջին կիսում,  
2) Վանը, 3) հին Արծրունիների  
տոհմի մասին, 4) Տպարանական գոր-  
ծի սկզբնաւորութիւնը Թիֆլիսում,  
5) Ներսէս Աշտարակեցին, 6) Ներ-  
սիսեան Դպրոցը, 7) Թատրոննական  
գործը Թիֆլիսում, 8) Պետրոս Սի-  
մոնեանցը, 9) Ռուսահաւերի կրթու-  
թեան գործը համալսարաններում  
ներկաւ դարում, 10) Արովեանց, Նա-  
զարեանց և այլք և Դորպատի հա-  
մալսարանը, 11) Հայկական նոր  
բանաստեղծութեան սկզբնաւորու-  
թիւնը, 12) Հայկական առաջին պար-  
բերական հրատարակութիւնները,  
13) Մօսկովյալի ուսանողական ժողո-  
վի սկիզբը, 14) Հայկական թատ-  
րոնի սկիզբը, 15) Պետերբուրգի հա-  
մալսարանը 60-ական թւականնե-  
րում, 16) Եղեանց, 17) «Հիւսիսա-  
փակը» և «Կուռնկը», 18) «Մեղու» լրա-  
գիրը, 19) Գրիգոր Արծրունու աշ-  
խատակցութիւնը «Մեղու» և «Հայ-  
կական Աշտարակ» թերթերում—ահա  
այն առարկաները, որ էաջորդարար

շօշափում է պ. Երիցեանը իւր այս | չէ նորագոյն աշխարհաբարի տեսա-  
100 երես զրքովկի մէջ, որը կար- | կէտից:  
դացւում է մեծ լավաշտակութիւնով:  
Լեզուն բաւականաչափ կանոնաւոր

Ա. Ա.

ՄԱԼՈՒՄԵԱՆ, Խ.—«ՄՏՔԻ ՄՇԱԿԸ». Գրիգոր Արծրունու գրական գոր-  
ծունէութեան 25-ամեակի առիթով: Թիֆլիս, 1890 թ., տպարան  
Տ. Նաղարեանցի, քառածալ, 96 եր., տառ № 12: Գինն է 50 կ:

Գրքովկը պարունակում է հետե-  
ւալ գլուխները. 1) Ներածութիւն,  
2) Կննագրական տեղեկութիւններ,  
3) Գրիգոր Արծրունու գրական գոր-  
ծունէութեան սկզբնաւորութիւնը,  
4) Հայոց մամուլի անցեալի մասին,  
5) «Մշակ» սկզբնաւորութեան հան-  
գամանքները, 6) Նոր մեթօդ և նոր  
ուղղութիւն, 7) Ընդհանուր հանեացք  
Գրիգոր Արծրունու գործունէութեան  
մասին, 8) Մի քանի գծեր Արծրու-  
նու կեանքից, 9) Առաջադիմական  
շարժումներ:

Առաջին գլուխները հաղիւ դուրս  
եկած՝ արդէն հնացան, որովհետեւ  
դրեթէ միաժամանակ լուս տեսաւ պ.  
Ա. Երիցեանի զրքովկը, որի առջե  
պ. Մալումնանցի տւած տեղեկու-  
թիւնները զրականապէս ոչ մի ար-  
ժէք չեն կարող ներկայացնել: «Հա-  
յոց մամուլի անցեալի մասին» գըլ-  
խում բոլորը, ինչ տեղեկութիւններ  
են, քաղած են Յարովի մի ըրոշիւ-  
րից հայոց մամուլի մասին: Եւ պ.  
Երիցեանի գրքովկը նաև այդ կողմից  
գերագանց է: Խակ ինչ վերաբերում  
է մասնաւորապէս «Հիւսիսափալ»-ի  
և «Առունեկ»-ի գնահատութեան, Մա-

լումնանցի գրածը մի շատ թով ար-  
ձագանք է արդէն ցածմ լաւտնած  
մտքերի:

Մի փոքր աւելի հետաքրքրու-  
թիւն ներկայացնում է 5-երորդ գը-  
լուխը՝ «Մշակ»-ի սկզբնաւորութեան  
մասին. բայց այժմ, երբ ալդ մասին  
նոյն խակ գործին մասնակցող անձերը  
հակասող մտքեր են լայտնել—Մա-  
լումնանցի պնդումները ճշգութեան  
տեսակէտից կորցնում են իրանց ար-  
ժէքը:

«Նոր մեթօդ և նոր ուղղութիւն»  
գլխում Մալումնանցը լաւտնում է,  
թէ մինչև «Մշակ»-ը հայոց մամուլի  
մէջ տիրում էր քարողչական մեթօդը,  
խակ «Մշակ»-ը մտցրեց բնագիտական  
մեթօդ մեր հրապարակախոսութեան  
մէջ: Առաջին ածականը Մալումնան-  
ցը վերցրել է Ա. Արասխանեանցի  
լոդածից Ստեփան Նաղարեանի հրա-  
պարակախոսութեան մասին, երկ-  
րորդ ածականը հեղինակը վերցրել  
է Արծրունու մի լոդածից՝ իւր սեպ-  
հական հրապարակախոսութեան մա-  
սին: Բայց որքան գրչի սիսալ էր այդ  
Արծրունու կողմից, նոյնքան ոչ պատ-  
ւարեր կրկնութիւն է թւում այդ

Մալումեանցի կողմից. Աւ ի զուր չէ զեկութիւն կաէ և ոչ միաք. բայց թէ տեղեկութիւնների և թէ մոքերի կողմից հեղինակը ցուց է տավա իրան կասարեալ անձեռնատ. Միակ գնահատելի կողմերը՝ արտաքին կողմերն են՝ թուղթը, տիպը, ոգերուած ու կողմերը և այլն.

Հեղինակի համար ամենակարեւոր գլուխը պէտք է եղած լինէր զլուխ ՎՊՌ «Ընդհանուր համեացք Գ. Արծրունու զործունէութիւնների ընդհանուր հետեանքները» և այլն.

Հեղինակի համար ամենակարեւոր գլուխը պէտք է եղած լինէր զլուխ ՎՊՌ «Ընդհանուր համեացք Գ. Արծրունու զործունէութիւնների ընդհանուր հետեանքները» և այլն.

Վերջի Մալումեանցի զրքուկը

Նպաստական և ոչ խակ ընդհանութիւնների հետեանքների հետ խառը կան և ճշգրիտ տողեր.

Վերջի Մալումեանցի զրքուկը

Նպաստական և ոչ խակ ընդհանութիւնների հետեանքների հետ խառը կան և ճշգրիտ տողեր.

Ա. Ա.

ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԳԵՈՐԳ. — «ՕՐԻՈՐԴ. ՆԱԴԻԿ ԿԻԼԻԿԵԱՆ» (Քոպէներ) և Յաւելւած (բանաստեղծութիւններ). քառածալ, 71 երես. Թիֆլիս, տպարան Մ. Դ. Ռոտինեանցի, 1890. Գին է 30 կոպ.

Աւ զրքուկի մեծագուն մասը (55 երես) կազմում է մի ընդարձակ ու տանաւոր, որի համառօտ բովանդակութիւններն է.

Թիֆլիսի մի խուլ փողոցի վերաէ գտնուալ խարիսուլ աներից մէկում ապրում էր թուկեր մանող խեղճ Արտուշը իւր կնոջ՝ Անանի և իւր միակ

գտներ՝ Նաղիկի հետ. Մակր ու աղջիկ օգնում էին Արտուշին, բայց ինչ ասել կ'ուղէ, որ ընտանիքի նիւթական դրութիւնը անհախանձելի էր.

Խիստ դանդաղ քալով (?) անց էին կինում Զարքաշ օրերի ձիք ձիք (ձիք ձիք ?) ժամերը,

և Արտուշի աշխատանքը շատ չնշին  
դրամով էր դնահատում: Բայց ահա  
սկսում է ուսուաց և թուրքաց (բայտ-  
նի չէ թէ ո՞ր) պատերազմը: Բազդը  
ժամում է Արտուշին և նախկին թո-  
կեր մանողը դառնում է «ատասը հա-  
զարի» տէր, տեղափոխում է խար-  
խուլ տանից մի վաւելուչ բնակարան  
և ինչպէս սէտաք էր սպասել.

Նորոգւած կեանքը լուսատու  
ձայնով

Հոսում է առաջ քրքիջով ու-  
րախ...

Նադիկը տասը տարեկան է. նորա  
կրթութիւնը յանձնում են մի «ֆրանս  
տիրացուի», որ սկզբում անհամ և  
անալի պատութիւններով ձանձրաց-  
նում է խեղճ աղջկան, իսկ վերջը  
նվիրում է նրան «սէրի (?) երգիր  
յանդով բազմազան» և «թւով անհա-  
մար»: Յանդուզն ուսուցչին վանդում  
են տանից և նորա տեղը բռնում է  
մադամը, որի դէմքից, —«հաւատաց-  
նում է հեղինակը, —առաստ ծորում  
է մեծ պասի դառը ձէթացուն (?)  
(երես 12):»: Նադիկին դա էլ չի դուր  
դալիս, ուստի նրան տալիս են ուռ-  
սաց գիմնազիօն: Բայց ուսումնա-  
րանն էլ բարերար աղջեցութիւն չ'ու-  
նեցաւ օրիորդի վերակ. վոխանակ  
դասերին հետևելուն նա թուզ էր տա-  
լիս իրան գիմնազիստունու չարու-  
թիւններ.

Պուշկինից անդիր է պի գրամ-  
մաններ

Առվել է փոքրիկ կաւալէրնե-  
րից.

Եւ սէրի կեղասոս ստանաւորներ  
Արագլած ունի նրանց տես-  
րակից:

Մի պատկառելի թւով նամակ-  
ներ  
Կարող է ցուց տալ Վանից ու  
Կոլից  
Որով (?) այս պատիկ երկրապա-  
տուններ  
Առաջարկում են՝ փակաչել հօր  
տնից:

Զարմանալի չէ, որ այդ տեսակ թե-  
թեամիտ օրիորդ դեռ ուսումը չ'ա-  
ւարտած չորս անգամ սիրահարւում  
է, չորս անգամ թողնում. և վերջի  
վերջու այնպէս տաք է կազում մի  
«պօրուչիկից», որ սափում է ծնող-  
ներին հանել իրան գիմնազիօնից:  
Ճար չը կար, հանեցին:

Այդ ժամանակները հաջոց թատ-  
րոնի փառաւոր ժամանակն էր: Աղա-  
մեանը ընդհանուր բարդանքի և ոգե-  
ւորութեան առարկաց էր զարձել:  
Այդ ոգեւորութիւնից անմասն չէ մնում  
զգալուն Նադիկը: Հայկական բեմը  
անգէս է կախարդել նրան, որ «Համ-  
լէտ»-ի ներկայացման ժամանակ նա  
շատ կ'ուզենար «թուչել օթեակից և  
ներկայացնել ցնդւած Օֆէլիան»: Բայց  
դժբաղզաբար նա

Դեռ չը գիտէ մաւրենի խօսքի  
Հաղար մի տեսակ թոթովանը-  
ները (?).

Տանում է ղահւան ծերուկ  
պապի ի նկի,

Թէ պիտի կարդամ հաջոց զբերը:  
«Զահիլ սկրուչիկը» մուացութեան  
տրւեցաւ: Նոր կեանը է ոկտում  
օրիորդ Կիլիկեանի համար: Նա այժմ  
շրջապատում է իրան թատրոնական  
երկրապատուններով, որոնք հաճուա-  
խոսութիւններով շոկում են օրիորդի  
ինքնասիրութիւնը:

Խեղճ հակրենիքի ազատիչ հրեշ-  
տակ  
Տեսնում են նրանք Կիլիկեան  
իսօսքում (?)  
Եւ գովասանք խիստ շատ ու  
անտակ (?)  
Մեծ տեղ են բռնում հակացած  
սրտում:

Ալապիսով նախկին օտարացած  
չարաձճի գիմնազիստունին դառնում  
է ազգասէր օրիորդ:

Մի տարի՝ ամառը անցկացնելու  
համար՝ Արտէմ Մինէիչ Կիլիկեանը  
դալիս է իւր ընտանիքով Բօրժօմ:  
Ալատեղ է լինում իւր ընտանիքով  
նաև քաղաքի լաւոնի կրեսո՞ Արզաս  
Նիկիտիչ Նաթանեանը: Նաթանեանը  
ունի երեք որդի: Մեծը, որին ար-  
տաքսել էին համալսարանի, լայտոնի  
չէ թէ որ Փակուլտէտի, երկրորդ  
կուրսից, ծնողների ստիպմամբ ա-  
մուսնացել էր: Միջակը ամենից ինե-  
լօքն էր, կառավարում էր հօր գոր-  
ծերը, իսկ կրտսերը՝ անառակ Վո-  
լոդեան կանաց լետեից ընկած, ան-  
հաշիւ շռակում էր հօր դասած փո-  
ղերը: Կիլիկիանները Նաթանեաննե-  
րին զեռ Թիֆլիսից էին ճանաչում,  
բայց ամարանցում նրանց չարաքե-  
րութիւնները ամելի սերտացան: Ա-  
մուրի եղբայրներին անքան լաճախ  
էր պատահում տեսնել և զրոյց ա-  
նել օրիորդ Կիլիկեանի հետ, որ կարձ  
ժամանակամիջոցում երկուսն էլ սի-  
րանարւում են նորա վերայ: Նադիկը  
անտարբեր է դէպի միջակ եղբայրը  
և հաւանում է Վոլոդեալին, սակայն  
ծնողները գերազաւում են «ապահով»  
Պետր Արդասիչին նորա փշրանքը  
վայելող եղբօրից: Դուստրը ընդդիմա-

նում է ծնողների կամքին և չափո-  
նում է, որ վճռել է երբէք չ'ամուս-  
նանալ և մտնել կուսանոց: Սակայն  
չ'ուզենալով մերժել Վոլոդեալի սէրը,  
նա նամակով տեսակցութիւն է նշա-  
նակում նրան «Յ. պարկի ծակրին»:  
Չորս օրից լետով միայն Նադիկը  
ստանում է իւր նամակի պատաս-  
խանը. Վոլոդեան առաջարկում է  
նրան պսակել Պետրի հետ, իսկ  
անուհնետե, —աւելացնում է նա, —  
«իբրև տանու ձրցն» «աներկբաց  
լուսով կարող ենք զքունել ազատ  
թիւ ի թես»: Նադիկը խոր խոցւած  
սրտով ընկնում է ուշաթափ: Ազդ  
օրւանից նա էլ չի դուրս գալիս  
տանից: Սենեակում օրերով փակւած,  
նա աչքը չէ հեռացնում «Ալլի»  
պատկերից:

Մինչ այս մինչ այն Արտէմ Մի-  
նէիչի ոսկիները քամու պէս կոր-  
չում գնում են առողջութեան հետ:  
Անանը սկսում է տան ծախքը չափա-  
ւորել, իսկ Նադիկը մտածում է  
դառնալ «ազջիկ վարժապետ»: Դար-  
ձաւ թէ ոչ, լայտնի չէ, միայն եթէ  
հաւասանք հեղինակին, մի տարի  
սրանից տուաջ Գոլովինսկի պրոս-  
պեկտով շատապ քավերով անցնում  
էր մի խելազար կին: Ազդ կինը օ-  
րիորդ Նադիկ Կիլիկեանն էր:

Դրքուկի սկզբում հեղինակը ծա-  
նուցանում է, որ իւր նպատակն է  
ամի անմեղ հաճուք միայն պատճա-  
ռելու: Գուցէ ազդ ասած է համեստու-  
թեան համար միայն և հեղինակը  
ուզեցել է աւելի բարձր դերում  
պատկերացնել մեր Նահապետական  
կեանքի խանդարաւմն և անսիստեմ ու  
վայրի ի վերոն կրթութեան կորստա-

բեր հետեանքները, — բաց չէ կարելի չը նկատել, որ նոյն իսկ իւր բարարած համեստ նպատակին չէ հասնում հեղինակը: Եւ իրաւի «Երիորդ Նադիկ Կիլիկեանի» բավանդակութիւնը ինքն ըստ ինքեան ու չինչ նորութիւն չէ ներկայացնում: Գեղարւեստական և հոգեբանական չշղութիւն բացակայ է նկարագրութիւնների մէջ, թէս ամբողջ գէպիկի նիւթը իրական կեանքից է վերցրած: Արդարե, տեղ տեղ երկում են հումորի թուլ նշուներ, բաց ալդ նշուլները շատ հեռու են «անմնդ հաճուք» պատճառելու ձգտումից: Աւելացրէք ալդ ամենի վերայ և այն, որ հեղինակը բաւականաչափ չէ մշակել իւր լեզուն, ի չարն է գործ գնում բանաստեղծի աղատութիւնը (licentia poetica), իսկ երբեմն ուզզակի մեզանչում է տաղաչափութեան օրէնքների դէմ: Ալսէս, օրինակ, նա գրում է՝ 'ւ փոխ. և, չողոքորթում 'ին' փոխ. չողոքորթում էին, թ' երբ փոխ. թէ երբ,

իսինդով փոխ. իսինդութեամբ, անսաս փոխ. անձաւն և ազն: Պատահում են և այս տեսակ կուրեօղներ.

«Գղղղած հերքը ուսերի նրա թափել ին խառը, անփոփու ու անկապ» (55)

Կամ «Բաց մինչև ալժմ տիկին Անանուց

Ոչինչ չեմ պատմել ես կարդացողին

թէ ինչ համ ու հոտ տեսում էր մարդուց...

Բացի վէպիկից այս դրամկի մէջ որպէս «պաւելւած» տպւած են և միքանի «բանաստեղծութիւններ», որոնց մէջ ամեն բան կը գտնէք, բաց բանաստեղծութիւնն ոչ:

Խորհուրդ կը տավինք պ. Տէր-Ղեռնդեանին փորձել իւր ոչժերը գրականութեան ուրիշ ճիւղերում. ուտանաւոր զրելու համար մի առանձին ձիրք չէ պահանջւում, սակայն ամեն ոտանաւոր բանաստեղծութիւն չէ:

ՎԱՆԿ

### ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՖԵՐ

1) Навасартянцъ Багратъ,—Диссертация на степень доктора медицины. „Къ вопросу о вліянії Эссентукской № 17-й воды на усвоеніе и обмѣнъ азотистыхъ веществъ“. С.-Петербургъ, типogr. газ. „Новости“, 1890 года.

2) Калантаръ Александръ.—„Скотоводство въ связи съ окружающими его условиями“. Докладъ читанный 9-го Января 1890 г. въ I. отдѣлении Имп. Волын. Экон. Общ. С.-Петербургъ, 1890 года, типогр. Демакова. Цѣна 40 коп.

3) Калантаръ Александръ,—„Докладъ Калантара о V отдѣлѣ молочн. хозяйства Кавказск. выставки 1889 г., читанный въ засѣд. Петерб. собранія сельскихъ хозяйствъ. С.-Петербургъ, 1890 г. типографія Товарищества „Обществ. Польза“.

4) ԲԱՅԹԻ. — ՀԱՅ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ: Թիֆլիս, տպարան Տ. Նաղալիանցի: Գլ.Էջ է 1 ր. 50 կուպէկ:

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՕՆԻԿ

Գ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ՅՈԲԵԼԵԱՆՔ. — ԺՈՂՈՎՐ. ԸՆԹԵՐՅ. ԳՈՐԾՅ.;

Ամսուս 6-ին տօնեց Գրիգոր Արծրունու հրապարակախօսական գործունէութեան 25-ամեակը, որի համար պատրաստութիւններ տեսնուած էին սկսած այս տարւաչ լունւար ամսից: Տօնը կատարւել է ոչ միայն քաջող, ալև և զրականապէս փառահեղ կերպով: Եւ ես կարծում եմ, որ մեր գրական և հրապարակախօսական գործիշներից և ոչ մէկի չօբելեանը չի արժանացել այն ուշադրութեանը, որպիսին արժանացաւ. Արծրունու չօբելեանը:

Տօնախմբական պերիօդը աղմկալի էր մի ամսաշափ: Ստիպւած լինելով մի որ և իցէ գիրք բունել դէպի կատարւելիք տօնը, հասարակութեան և մամուլի բոլոր խումբերի մէջ կատարւեց մի տեսակ պրօցես: Հին և նոր հաշիւնները կրկին հրապարակ եկան:

Հասարակութիւնը հաւասարապէս չը վերաբերեց դէպի Արծրունու տօնը. կապին տօնողներ, կալին և չը տօնողներ: Տօնողների ամենաինտելիքնեա մասը ուղեց իւր մասնակցութիւնով լավանել մի բան՝ որ «Մշակ»-ը հաջոց մամուլի մէջ առաջ բերաւ մի շարժում, որը ունեցաւ շատ բարեկար հետևանքներ լառաջադիմական ուղղութեամբ:

Հիմնական գաղափարը տօնողների այդ էր. դորանից դուրս նոյն իսկ տօնին մասնակցողները կարող էին իրար հետ վիճել և իրար հետ չը համաձայնել:

Եւ այն բոլորը, ինչ արտակարուեց ամսիս 6-ին, այդ բոլորը, ասում եմ ես, կատարւեց զլաւորապէս ի վիշտակ «Մշակ»-ի սկզբնական տարիների փալուն պերիօդի, որը բաւականաչափ զօրեղ էր, որ մի հանգիստոր օրում, նաև տարիներ լիտոց, իւր բոլոր ոժով երևան գար:

«Մուրճ»-ը, որ 1889-ի 1 Նույն արդէն գնահատել էր Գ. Արծրունուն, այդ օրը ուղարկեց վերջնիս իւր չնորհաւորութիւնը, որի պատճէնը սա է.

«Մուրճ ամսագրի խմբագրութիւնը, միանալով բաղմաթիւ հասարակութիւններից, հիմնարկութիւններից և անձերից արտաշաբտած չնորհաւորութիւններին, վկանում է Ձեզ, գրագելի յօմելեար, իւր խորին զարգանքը այն բոլոր լուսաւոր մորքերի համար, որ Գուք Ձեր 25-ամեաց հրապարակախօսական գործունէութեան ընթացքում արագացանել և մոցրել էք հասարակութեան գիտակցութեան մէջ։

«Մուրճի խմբագրութիւնը հաճութեամբ ընդունում է, որ Գուք հայոց մոտաւոր շարժման պատմութեամ մէջ ունիք գրաւած Ձեր որոշ և պատւաւոր տեղը։ «Մուրճ»-ի խմբագրութիւնը ուրախ է, որ իւր դործունէութեան ասովարէզը չափանի չափավ հարթւած է ահսնում Ձեր հրապարակախօսական ջանքերի շնորհիւ. գորա համար է ահա, որ նա պարտք է համարում ակաստով օրս միացնել իւր ձանը շատ ուրիշների հետ և ողջունել Ձեր չօրելեանը։»

Նոր չէ «Մուրճ»-ը ընդունել «Մշակ»-ի պատմական գերը մեր մոտաւոր շարժման դործի մէջ. և արտապատել ազդ մի անպիսի լուղեամ, երբ տօնում են այդ շարժման շրջանի գիտաւոր գործիչին—«Մուրճ»-ը իւր համար պարտաւորութիւն համարեց։

Այս չեմ կարծում թէ կորստաբեր հոսանքները մեր կեանքում իսովառ ջնջւած լինին. ես կարծում եմ, ընդհակառակը, որ այդ հոսանքները գուտութիւն ունին և պատրաստ են մեր կեանքը ասաւաններավ վախթաթելու և խեղղելու, եթէ նրանց զօրեղ ընդդիմագրութիւն չ'անւի. Ամենազօրեղ ընդդիմագրութիւնը կը լինի ան, որ չառաջազէմ կուսակցութիւնը ջանաչ միշտ աւելի ու աւելի մնի քայլեր անել զեպի առաջ, ապացուցել, որ գրականութիւնը միմիսայն ազդ կուսակցութեան գործում կարող է իւր բարձր իդէալներին հասնել և բնդմուաւորել. Կակ հոսանքները վերստին վերադառնալու և ձեռք բերածը կորցնելու վասնզի դէմ կուելու գործի համար՝ Գուգոր Արծրունին նաև ագմ մնում է մի կարեսը ֆակտօր, չը նայած որ ձեռք բերածը լինքն ըստ ինքեան կը կորչի, եթէ միայն լսա աջաղէմ կուսակցութիւնը չ'ուզենաչ անել մի աւելի հեռու քավ դէպի առաջ, քան այն ինչ որոշում է մեր լրագրութեան մօտիկ անցեալով և ներկայով։

---

Մեր ժողովրդական լուսաւորութեան գործը շատ իտամնաց գրութեան մէջ է, Փոքր մանուկների կրթութիւնը բոլորովին անխնամ է թուզած, Փոքր ինչ հասակ առած երեխաների համար կան ծխական զպրոցներ, բայց զաւառներ կան, ուր տասնեակ և հարիւրաւոր գիւղեր առանց ուսումնարանի են. Հասակ առածների համար կատարւած է որքան կարելի է քիչ. Հասակաւորները կրթում են պարբերական հրատարակութիւններով, որոնք դեռ ևս ամեն մարդու ձեռքում չ'են զանում. Ժողովրդ-

դական գրքերով, որոնց հրատարակութեան միան առաջին փորձերն ևն աճւում ներկայումս։ Գրադարանները և ընթերցարանները չեն կարող մի ուրիշ նոր բան տալ ժողովովին, քան ինչ տալիս են գրականութիւնը և պարբերական հրատարակութիւնները։ Գրադարանները և ընթերցարանները ժողովրդին միմիան մատչելի են դարձնում զրքերի և թերթերի ընթերցումը բաց եղածի վերաէ բան չեն աւելացնում, թէ նորա հենց իրանց ալդ պաշտօնով մեծ ծառակութիւն են անում ժողովրդին։ Աւելորդ է աւելացնել, որ նաև գրադարանները ու ընթերցարանները դեռ ևս միան մի քանի տեղերում կան հաստատուած։ Իսկ Թիֆլիսի մասին խօմ չափոնի է, որ լատկապէս հայ ընթերցանութեան համար գրադարաններ հիմնելու միտքը միան նոր-նոր սկսում է իրականանալ, «Մուրճ<sup>+</sup>-ի ընթերցողներին արդէն չափոնի է, որ Հայոց Բարեգործական Ընկերութիւնը արգէն սկսել է մի գրադարան հիմնել, որը պէտք է մատչելի լինի նաև համեստ զրպանի տէր անձերին։ Բաց մինչ ալս մինչ այն, մի խումբ երիտասարդների ջանքերով արդէն ալժմ հիմնել է Թիֆլիսում, Միքաէլեան կամուրջի վերակ, ալսպէս կոչւած յիժանագին գրադարան<sup>«</sup>, որի նպատակն է շատ փոքր գնով՝ գլխաւորապէս չունենոր դատակարդին մատչելի անել նաև հայոց զրքերի և թերթերի ընթերցումը։ Հետաքրքրական հանգամանք է, որ «յիժանագին գրադարան<sup>«</sup>-ի գաղափարը վերցրած է Թիֆլիսում գոյութիւն ունեցող ուռու օրիորդ Օլգա Կադանովակի «յիժանագին գրադարան-ից» (Дешевая библиотека), որի նմանները Ռուսիակի ուրիշ քաղաքներում ևս կան և որի մի մասն էր կազմում, մի քանի ժամանակ, ալժմեան հայոց «յիժանագին գրադարանը»։ Նման մի հիմնարկութիւն հիմնեց նորերում նաև մի ուրիշ անձի՝ օրիորդ Խշանուհի Արզութեանի կողմից և պէտք է լուսալ, որ էժանագին գրադարանների գուռը ալժմ բացւած է և թէ Թիֆլիսում և թէ միւս քաղաքներում ու զիւղերում ալսուհետու նման էժանագին գրադարաններ կը հիմնին։

Բաց, որպէս չիշեցի վերե, զրադարաններով և ընթերցարաններով միմիան տարածւում է տափագրութեան մէջ եղածը, ալճպէս որ տափագրական զործը մնում է զեռ աւելի կարենոր խնդիր։ Եւ ես ասում եմ, որ զալրոցից զուրս հասարակութեան կրթութեան համար զեռ ևս զրեթէ ամեն մնում է անելու, որովհետեւ եղածը զեռ շատ և շատ քիչ է։ Եւ ոչ միան պէտք է աւելի մեծ եռանդով շարունակել ժողովրդական զրքեր հրատարակելու զործը, ալ և ժողովրդին կրթելու համար գործադրուող միջոցների վերաէ պէտք է աւելացնել նորերը, մեղնում զեռ ևս չը զործադրուած միջոցները։

Մի զովելի նախաձեռնութիւն ալդ կողմից պէտք է համարել Ախալցիսայի երիտասարդութեան ձեռնարկութիւնը՝ ժողովրդական—հրատարակախօսական դասախոսութիւնները, որ, ինչպէս երեսում է, չաջողութիւն է դանում աջնորդ, չնորհիւ այն եռանդի, որ հրադարակախօսների խումբը ծառակեցնում է իւր սկսած և ամեն համակրանքներին արժանի գործին։

Ազդ էլ, պէտք է ասած, մէկն է այն օգտակար նորութիւններից, որ խոստանում են լաւ ապագայ և որը, Ռուսիայի միջոցով, մննք փոխ ենք առնում Եւրոպայից: Միան թէ Ռուսիակում եկել են այն հղակացութեան, որ ժողովրդին, մանաւանդ անդրագէտ ժողովրդին, աւելի հասկանալի լինելու համար, աւելի օգտակար են ժողովրդական ընթերցումներ՝ սուերի տեսարաններով (ոչնչութեան արդիութեան պահանջման համար)։

Ազդպիսի ժողովրդական ընթերցումների մի փորձ արւեց Թիֆլիսում ներկաւ մայիս ամսի 6-ին, նախաձեռնութեամբ մի քանի անհատների, ոռուսների համար, առ ազժմ կլասիկական զիմնազի սենեակներից մէկում: Փորձը պէտք է կրկնւէր մի երկու անգամ ես, իսկ ներկաւ տարւայ սեպտեմբերից պէտք է գործը կազմակերպի և կանոնաւոր ընթացք ստանավ:

Անկասկած է, որ այստեղ մննք դործ ունինք մի սկզբնաւորութեան հետ, որ պէտք է օրինակ ծառալէ նաև մեղ համար, որպէս Ռուսիայի միւս քաղաքները այդ կողմից օրինակ են ծառալել Թիֆլիսի ռուս հասարակութեան համար: Ազդ առիթով պէտք է ասել, որ հրապարակական—ժողովրդական ընթերցումները ստւերի-տեսարաններով մուտք գործեցին Ռուսիակում 70-ական թւականների սկզբում միայն, իսկ 80-ական թւականների սկզբին նոքա արդէն միծ ծաւալ էին ստացել: Հատ նահանգական և մի քանի դաւառական քաղաքներում, ամենանեռաւոր անկիւններում, վերջապէս ամեն աեղ, ուր կար կրթւած անձերի մի խումբ, որոնց կեանքը ամբողջապէս չէր սպառւած անձնական շահերով և թղթախաղով,—ամեն տեղ աշխատուեցին ազդպիսի ընթերցումներ սարքել:

Եւ ամեն տեղ, ուր կազմւում էին ազդպիսի նկիրակնօրեակ՝ ընթերցումներ, նոքա չաջողութիւն էին ունենում և դէպի իրանց էին գրաւում ընդհանուրի համակրութիւնը և մասնակցութիւնը բանւորների, ծաւաների, մանրավաճառների, դործակատարների և արհեստաւորների: Ազդ հասարակութեան համար կիրակնօրեակ ընթերցումները դատնում էին սիրւած զւարճութիւններից մէկը: Իսկ եթէ շատ տեղ դործը կաղում է, նորանից է, որ դործը սարքողները միջոցներից զորկ են: Հաստատ հիմք դրւած է դործին միայն Պետերբուրգում, Մոսկվայում և մի քանի նահանգական քաղաքներում, ուր նոցա դեկավարող մասնակողովները ունին որոշ միջոցներ նոցա պահպանելու և աւելի քարզացնելու համար: Հեռաւոր քաղաքներում գործի գործութիւնը պարտական է եռանդում մարդկանց խմբներին, որոնք նպաստակին համելու համար հանդիպում են ամեն տեսակ արգելքների, Գլխաւոր պահատութիւնը—միջոցների սակաւութիւնն է, որպէս զի կարողանան էարմար ու մշտական բնակարան վարձել, պատկերներ ձեռք բերել և նոցա զնելու էարմարութիւնները ստեղծել: Ազդ պատճառով գործը լաւ ընթացք է տառացել միայն այն տեղերում, ուր տեղական քաղաքացին կամ զիմստապին (նահանգական) ինքնավարութիւնները իրանց վերաւ են

առնում դործի սարքելը կամ ամբողջապէս, որպէս Վլագիվօստօկում, կամ օժանդակութիւններ տալով 300—500—750 բուբու, որպէս Արեւում, Նիկոլանեւում, Օդեսսապում և Հաշտարխանում, անգամ երբ միանւագ խոշոր գումարներ են չառկացնում, ինչպէս Օդեսսապում (20.000 ր.), Եարօնաւում (300 ր.):

Ի դեպ է առելացնել, որ ժողովրդական ընթերցումների համար նիւթերի ընարութիւնը սահմանափակւած է կանոնադրութիւնով 24 ին դեկտ. 1876 թ., որը որոշում է ընթերցանելի շարադրութիւնները, թողարարածների մէջ կան կրօնական ընթերցումներ, պատմութիւններ որբազան պատմութիւնից, չօգւածներ բնական պատմութիւնից և աշխարհագրութիւնից, որպէս նաև պատմութիւններ, որոնք ներկայացնում են լարմարեցրած փոփոխութիւններ ուսուաց լաւագուն գրողների մի քանի շարադրութիւնների:

Պէտք է ցուսալ, որ հայ ինտելիգենցիան Թիֆլիսում և գաւոտներում կ'աշխատէ օգտուել ժողովրդական լուսաւորութեան այդ լաւ միջոցից, լարմարացնելով ընթերցանելի նիւթերի ընարութիւնը տեղական նահանգներին և ժողովրդի պահանջներին: Միան թէ ալֆմանից կարտզ ևմ խորհուրդ տալ՝ ժողովրդին ծանօթացրէք որքան կարելի է շատ գիտութիւնների տարերքների հետ:

Պէտք է արդեօք առելացնել, որ քաղաքաւին դումաները, զանազան բարեգործական և ավ ընկերութիւնները պէտք է ձեռք կարկառեն սկսող ներին, քանի որ ստեղծագին տնսարանները ինչ և իցէ փող են նստում և ամեն մի ընթերցում 30 բուբու չափ ծախք է պատճառում:

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՅՄԱՆԻՑ

## ԲԱՆԻՈՐՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Ա. Ե Գ Լ Բ ա կ ա ն ը ա ն ւ ո ր ն ե ր ի հ ա ն գ ա մ ա ն ք ն ե ր ի մ ա ս ի ն մ ի  
հ ե տ ա զ օ տ ո ւ թ ի ւ ն : Գ ե ր մ ա ն ի ա լ ի ա ր դ ի ւ ն ա պ ո ր ծ ն ե ր ը ո ւ ն ի ն մ ի կ ե ն դ ր ո-  
ն ա կ ա ն ը ն կ ե ր ու թ ի ւ ն : կ ա ն ն ա ն ը ն կ ե ր ու թ ի ւ ն ե ր ի , ո ր ո ն ց ն ա լ ա ս ա կ ն է ա ր դ ի ւ-  
ն ա գ ո ր ծ ու թ ե ա ն շ ա ն ե ր ը պ ա շ ա ս պ ա ն ե լ : Ա ռ ա ջ ի ն ը կ ո չ ւ ո ւ մ է Centralverband  
d e u t s c h e r I n d u s t r i e l l e r , ե ր կ ր ո ր դ ն ե ր ի ՝ Interessenwahrungsvereine . Ա զ դ  
մ ի ւ ն դ ր ո ն ա կ ա ն ը ն կ ե ր ու թ ի ւ ն ը և ե ր կ ր ո ր դ ն ե ր ի ց չ ո ր ս ը ա ն ց ե ա լ ա ս ա ր ի մ ի  
մ ա ս ն ա մ ո ղ ո վ կ ա վ մ ե ց ի ն , ո ր ը պ է տ ա ք է զ ն ա ր Ա ն գ լ ի ա ՝ ա յ դ ե ր կ ր ի բ ա ն ւ ո ր ծ ն ե ր ի  
զ ր ու թ ի ւ ն ը ո ւ ս ո ւ մ ն ա ս ի ր ե լ ու հ ա մ ա ր : հ ա ն ս ա պ ա ր հ ո ր դ ու թ ի ւ ն ը ա ն ե ց 1889  
թ ւ ի ս ե պ ա ն մ բ ի ր ի 4 - ի ց մ ի չ ն ա կ ա ն մ բ ի ր ի 21 - ը , ո ւ ր ե մ ն չ ո ր ս շ ա ր ա թ :  
Մ ա ս ն ա մ ո ղ ո վ ի մ ե ն դ ա մ ն ի ր ը ա մ ե ն օ ր ա ց ե լ ու մ է ի ն զ ո ր ծ ա ր մ ա ն ա ս է ր ե ր ի ն ,  
բ ա ն ւ ո ր ծ ն ե ր ի ք ա ր ո ւ ղ ա ր ն ե ր ի ն և պ ա շ ա ն ն ա ն ե ր ի ն , հ ա ր ց ու փ ո ր ձ ա ն ե լ ո վ  
բ ա ն ւ ո ր ծ ն ե ր ի հ ա ն գ ա մ ա ն ք ն ե ր ի մ ա ս ի ն . ն ո ք ա փ ո ր ի կ հ ա մ բ ո ր դ ու թ ի ւ ն ե ր  
է ի ն ա ն ո ւ մ Լ օ ն գ օ ն ի ց դ ո ւ ր ա , ա ր ձ ա ն ս պ ի ր ե լ ո վ ի ր ա ն ց տ ե ս ա մ ն ու լ ս ո մ ը և  
հ ա ւ ա ք ո ւ մ է ի ն ա մ ե ն տ ե ս ա կ լ վ ի մ ա կ ա վ ր ա կ ա ն տ ե ղ ե կ ու թ ի ւ ն ե ր : Ա զ դ բ ո-  
լ ո ր ն ի ւ թ ե ր ը ն ո ք ա ի ր ա ն ց հ ե տ բ ե ր ի ն հ ա ւ ե ր ե ն ի ք և մ շ ա կ ե ա ծ ձ ե ո վ հ ր ա ս ա-  
ր ա կ ե ց ի ն մ ի հ ա ս ո ր ա լ <sup>1)</sup> , ո ր ո ն ց ի ց ա ռ ա ջ ի ն մ ա ս ո ւ մ ի ո ւ ո ւ ր ու մ է բ ա ն ւ ո ր ա-  
կ ա ն հ ա մ բ ա մ ա ն ք ն ե ր ի մ ա ս ի ն , ե ր կ ր ո ր դ ո ւ մ տ ա լ ւ ա ծ ե ն մ ա ս ն ա մ ո ղ ո վ ի չ ո ր ս  
ա ն դ ա մ ն ի ր ի զ ե կ ու ց ո ւ մ ն ե ր ը , ո ր ն ո ք ա ր ե ց ի ն ը ն կ ե ր ու թ ե ա ն ն ի ս տ ա մ  
գ ե կ տ . 13 - ի ն : Վ ե ր ջ ի ն ն ե ր ս ծ ա ռ ա լ ու մ ե ն ի ր բ ա շ ա ր ու թ ի ւ ն և լ ր ա ց ու մ ն  
ա ռ ա ջ ի ն մ ա ս ի :

Մ ա ս ն ա մ ո ղ ո վ ի զ ի ս ա ւ ո ր գ ո ր ծ ը պ է տ ա ք է կ ա ղ մ է ր ո ւ ս ո ւ մ ն ա ս ի ր ո ւ-  
թ ի ւ ն ը բ ա ն ւ ո ր ա կ ա ն ը ն կ ե ր ու թ ի ւ ն ե ր ի , ո ր ո ն ք Ա ն գ լ ի ա լ ո ւ մ ւ ա կ ա ն ի և ն  
Trade Unions (Տ ր է գ - Ո ւ ն ի օ ն ) ա ն ո ւ ն ո վ :

1) Berichte der von industriellen und wirthschaftlichen Vereinen nach England entsendeten Commission zur Untersuchung der dortigen Arbeiterverhältnisse. Herausgegeben von den betreffenden Vereinsvorständen. Berlin 1890. Verlag von Titscher u. Rödell.

Յալտնի է, որ Տրէդ-Ռւնիօնները կաղմւեցին կամաց-կամաց և մեծ դժւարութիւնների հանդիպելով։ Մինչև 1869 թւականը կառավարութիւնից նոքա միայն «համբերւած» էին, բայց չէին ճանաչւած որպէս օրինական ընկերութիւններ և այդ պատճառով չէին վարելում պաշտպանութիւն օրէնքի և դատարանների կողմից։ Օրինակ, նոքա չէին կարող կալանաւորել տալ ընկերութեան գանձարանին դիմուող պաշտպանավիճ։ Տրէդ-Ռւնիօնների էութեան և կանոնադրութեան մասին մի թաղաւորական մասնաժողով նշանակւեց 1865 թւականին։ Ազդ մասնաժողովի հաւաքած տեղեկութիւնները հասցրին այն եղրակացութեան, որ օրէնսդրութիւնը պէտք է աւելի որոշ դիրք տալ բանւորական միութիւններին և պէտք է նոցագանձարանները առանց պաշտպանութեան չը թողնէ։

Այդ պահանջման հետևանքն էր, որ 1869 թւականին արւեց տրէդ-Ռւնիօններին հովանաւորող մի ժամանակաւոր օրէնք։

Հէնց նոյն այդ ժամանակ մտցրւեց Գերմանիակում այն օրէնքը, որով ազատութիւն էր տրուում բանւորներին միանալու (Coalitionsfreiheit)<sup>1</sup> օրավարձը բարձրացնելու և գործադուլներ անելու համար։ Յառաջադիմական կուսակցութեան ներկալացուցիչ Մաքս Հիբը և ընկերվարական կուսակցութեան ներկալացուցիչ Ի. Բ. Փոն Շվայցեր ուզում էին նոանդով իրարից գերազանցել՝ Գերմանիակում չեղած տեղից ստեղծել անդիմական տրէդ-Ռւնիօնների նման բանւորական միութիւններ։ Բայց ահա զանազանութիւնը. Անդիմական տրէդ-Ռւնիօնները չեն կրում կուսակցական ընաւորութիւն, մինչդեռ գերմանական կուսակցութիւնների ներկալացուցիչները ջանում էին նման բանւորական միութիւններ ստեղծել կուսակցական նպատակներին ծառակեցնելու համար։ Այսուղեղ՝ ընկերութիւններ, որոնց սկզբնաւորութիւնը հասնում է մինչև անցեալ 18 դարը, երբ համքարական կազմակերպութիւնը ոչնչացրւեց, իսկ ապստեղ՝ դեռ նոր սկսել էին վերացնել միութիւններ կազմելու արդելքները։

1869-ից դէս տրէդ-Ռւնիօնները դեռ պէտք է կռւէին, որ միւս տեսակ արդիւնաբերական ընկերութիւնների հետ հաւասար իրաւունքներ ձեռք բերէին։ Միմիան 1876 թւականին վերացւեց վարպետների և ծառաների մասին հին օրէնքը (Master and Servent Act), որի գորութեամբ բանւորը, իւր պայմանից գուրս գալու պատճառով, բանտարկութեամն էր դատապարտում։ մի բան, որը Շոտլանդիակում դեռ այժմ էլ կաէ։ 1876 թ. օրէնքով որոշեցին տրէդ-Ռւնիօնների իրաւունքները՝ վերաբերեալ այն վէճերի, որոնք ծագում են գործատէրերի և բանւորների մէջ։

Ահա տրէդ-Ռւնիօնների կազմակերպութիւնը։ Դոքա կամ տեղական ընկերութիւններ են, կամ կենդրունական կազմակերպութիւններ, թէ առաջինները և թէ երկրորդները մի որոշ արհեստի կամ արդիւնաբերութեան վերաբերեալ ընկերութիւններ են։ Կենդրունական ունիօնները (միութիւն) կամ ամբողջ թաղաւորութեան վերակ են տարածում իրանց գործունեւութիւնը։

թիւնը, կամ երկրի մի մասի վերաց և կամ կօլոնիաների և վերջապէս նաև ստար երկիրների վերաց Օրինակի համար, Amalgamated Society of Carpenters and Joiners (աստաղձագործ արհեստաւորների միացիալ ընկերութիւններ) 1886 թ. վերջում ըմբռնում էր 440 ընկերութիւններ, որոնք այսպէս էին բաժանւած. Անգլիա՝ 338, Շոտլանդիա՝ 15, Իրլանդիա՝ 70, Հիւսիսալին-Ամերիկակի Միացեալ Նահանգները՝ 25, Կանադա՝ 6, Նոր-Զէլանդիա՝ 10, Աւստրալիա՝ 22, Հարաւային Աֆրիկա՝ 4, ընդամենը 25.781 անդամներով:

Կենդրունական Տրէդ-Ռունիօնները ունին տեղական ճիւղեր. այդ ճիւղերը միացած են վիճակավին կամ դիստրիկտների ընկերութիւններով, բայց նոքա բոլորը ունին մի գործադիր մասնաժողով. Այդպէս էլ զանազան գործարանական քաղաքներում. մի քանի արէդ-ունիօններ իրար հետ չփուլմ են կամ հաղորդակցում trade councils կոչւած խորհուրդների միջոցով, իսկ բոլոր արէդ-ունիօնները միասին ունին, ամենքի շահերը պաշտպանելու համար, մի Parlamentary Committee (պարլամենտական մասնաժողով) Լօնդոնում, որոնց անդամները անգլիական պարլամենտի անդամներ են և մի Trade-union-congress (արէդ-ունիօնների կօնգրէս):

Գերմանիակումն էլ կան տեղական ընկերութիւններ (մասնագիտական ընկերութիւններ-Fachvereine) և կենդրունական կազմակերպութիւններ: Բայց այդ տեղական ընկերութիւնները իրար հետ ոչ մի կապ չ'ունին: Այդ իսկ պատճառով բոլոր փորձերը, որ արւած են Գերմանիայում անգլիականի նման արէդ-կօնսիլիներ և արէդ-ունիօն-կօնդրեսներ կազմելու, ի դերև ելան: Ան, ինչ Դերմանիակում կրում են կենդրոնական անունը, միութիւններ չեն տեղական ընկերութիւնների, այլ ընկերութիւններ են, որոնց անդամները ցրւած են նաև կազմերութիւնից դուրս կամ երկրի մի որոշ մեծ մասի վերաց: Բայց տեղական ընկերութիւնների կենդրոնացնելը օրէնքով արգելած է: Ան իրաւունքները, որ վակելում են անգլիական արէդ-ունիօնները՝ դործարանատէրերի և բանւորների և կամ բանւորների իրար մէջ ծագաւ վէճերի մէջ խառնւելու—գերմանական ընկերութիւնները չ'ունին: ոոցա հետ կապւած չեն օգնութեան և ապահովութեան դան: Ճարաններ, ինչպիսիք այդ ունին արէդ-ունիօններից շատերը՝ բանւորներին օգնելու համար անզործութեան, հիւանդութեան, ծերութեան և վտանգի ժամանակ: Արդարն, Գերմանիակումն էլ կան օգնութեան աղաս զանձարաններ (freie Hülfsassen), կան նաև պաշտպանող զանձարաններ (Unterstützungscassen). բայց ոքա առանձին, առաջինների հետ ոչնչով չը կապւած և բանւորների օրավարձի չ'ուն կապ չ'ունեցող ընկերութիւններ են: Գերմանական վէշաքաւորների ընկերութիւնները չփում են պետական վարչութեան օրգաններից միմիան ոստիկանութեան հետ, առանց լարաբերութիւնների մինիստրութեան հետ: Գորա հակառակը, անգլիական առևտրական մինիստրութիւնը (Board of trade) ունի մի սեպհական պաշ-

տօնեալ—Labour Correspondent կոչւած—որի դործը հենց արէդ-ունիօն-ների հետ է: Այժմեան ալդ պաշտօնեան է սպարոն Բուրնէտ (Burnett), որը առաջ բանւոր էր, զետու եղաւ քարտուղար արէդ-ունիօններից մէկում, ուստից նա վետու կանչւեց առևտրական մինխտորութիւնը: Գերմանական, բաց մանաւանդ պրուսական բարձր պաշտօնեանների մնածագոյն մասը զբժ-ւարութեամբ կարող են ըմբռնել, որ մի ինտելիգենտ բանւոր, թէկուզ քաղաքա-անաւուսապէս կրթւած մի ընկերութեան քարտուղար կարող է զառնալ մի տաճնի ուսւանիկ մի մինխտորութեան մէջ:

Մասնամողայի հարց ու փորձերից երեացել է, որ արէդ-ունիօնների ղեղավարների հեղինակութիւնը բանւորների վերալ չի հիմնուում անքան այն բարերարութիւնների վերալ, որ արէդ-ունիօնները անում են մասնաւորների համար դորձի սպակառութեան, հիւանդութեան ժամանակ և ալճ, ալդ հեղինակութիւնը բղիսում է զեղավարների բարտական դիրքից և դորա վերալ հիմնուուծ ազգեցութիւնից:

Նկատենք, որ արէդ-ունիօնների անդամները իրանց վերալ նակում են ոչ որպէս պրօլետարիատի վերալ, ալդ իբր մի տեսակ բանւորական արեսուոկրատների վերալ: Եւ իրօք, անդամ ընդունուում են միմիան նոքա, որոնք իրանց արհնեսափ մէջ ընդունւած օրեկան միջին վարձը ապահով կերպով վաստակում են: Ազգպիսով զանազանուում են վերթւած բանւորները ոչ կրթւածներից: Այդ կրթւածներն են կազմում չորրորդ դասակարգը, մինչդեռ մնացածները կազմուում են իսկական պրօլետարեատ կամ հինգերորդ դասակարգը: Տրէդ-ունիօնիստները ազգպիսով կազմում են բանւոր դասակարգի բարձր խաւը:

Տրէդ ունիօնիստների պահանջները մնածապէս տարբերուում են ընկերվարական կուսակցութեան զեղավարների պահանջներից: Առաջինները ջանք են գործ գնում, որ բանւորները կարելիին չափ լաւ վարձատրւեն, բաց չեն հերքուում նաև կազմակիցների պահանջները, որոնց համար էլ նոքա ընդունում են, որ պէտք է իրանց օգտառը ստանան: Ազգպիսով Անգլիացում մինք ականատես ենք մի երեսվթի՝ արէդ-ունիօնական բանւորները վաղուց է որ կուիւ են սկսել զուա ընկերվարականների զէմ, որոնց գլխաւոր զեկալարն է Անգլիացում Բուրնս (Burns), որը դրդում է հինգերորդ դասակարգին ընդգէմ չորրորդ դասակարգին Բօրնս սկսել է Անգլիացում կազմակերպել ալդ հինգերորդ դասակարգը (unskilled men), որպէս զի դորանով լառաջացնէ առխատանքի աղդալին ֆեղերացիալ միութիւնը», կազմակերպութիւն, որը վերջերքումս զարմանալի չաջողութիւններ ցուց տւեց:

## ԲՈՒԺԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԵՆՍՅՈՒՄ:

(Heiepaedagogische Anstalt in Jena)

Յ. Բար. Մայլս ամսոին բուժական-Մանկավարժական Դպրոցն է բաց-  
ւում Ենացում պ. Տրիւբերի տեսչութիւնամբ և պրոֆեսոր Դր. Թանի (տեսուչ  
համալսարանական մանկավարժական սեմինարիոնի) և պրոֆեսոր Դր. Բի-  
վանդերի (տեսուչ Ենակի գժանոցի) ընկերակցութեամբ։ Այդ հիմնարկու-  
թեան նմանը ոչ թէ միմիանի Գերմանիայումն, այլ նաև ամբողջ երկրագնդիս  
վերաէ չենք կարող գոնել։ Այդ դպրոցի նպատակն է այնպիսի մանուկնե-  
րի կրթութիւնը ստանձնել, որոնք, մի որ և իցև, հոգեբանական պատճա-  
ռից, անլուգունակ են դպրոցական դասաւութեան և կրթութեան հետեւ  
և որոնց կրթութեան զործում կարենոր է անհատական եղանակ (indivi-  
duelle Behandlung) զործագրել։ Այդ դպրոցի ձգտումն է մանկան հոգե-  
կան կեանքի նորմալ ընթացքի խանգարիչ տարրերն ոչնչացնել, հիմնո-  
վին խորտակել և նորա հոգեկան աշխարհն կանոնաւորելով, ընդունակ  
դարձնել դպրոցական դասաւութեան և կեանքի համար Հենց այդ պատ-  
ճառով պէտք է ընդունեին այդ դպրոցում միմիտն 8 մինչ 12 տարեկան  
մանուկներ։

Ալատեղ պէտք է ուսուցիչն ոչ թէ միան փորձւած մանկավարժ  
անդիմանաէ, այդ նաև բժիշկ, խոկ բժիշկն էլ—ոչ թէ միան բժիշկ խօս-  
քի գործածական մտքով, այլ և մանկավարժ։ Ահուասիկ մնեք զանում  
ևնք այս զէպքում մի գաղափարի իրազործումն, որը բաւականին հին է  
և զորա իրագործման մասին շատ փորձեր են եղեւ, բաց մի արժանի հե-  
տեանքի չեն հասցըել։ Ենակի այդ վերոիշեալ դպրոցն ունի այն առա-  
ւելութիւնը, որ նորա կառավարողները զուտ մասնագէտներն էն բաւական  
է վշիշ այս գէպքում միան պրօֆ. Դր. Թանին, որը նշանաւոր Ցիլերի  
ամննահուանդուն տշակերտներից մէկն է և ամբողջ զիտնական մանկա-  
վարժական ուղղութեան ղեկավարողն, խոկ պրօֆ. Դր. Բիվանդերի հեղի-  
նակութիւններն պսիխասորիալի (Psychatrie) գրականութեան մէջ պատ-  
ճառոր տեղ են բռնում։ Ինչ պարոն Տրիւբերին է վերաբերում, նա մի  
Քրեմնենցի երիտասարդ է, 5 տարի իւր հայտնիքի ժողովրդական ուսում-  
նարաններում ուսուցչական պաշտօն լաբորատոր է Ենակ  
մանկավարժութիւն ուսումնասիրելու նպատակով։ Նա ալդաեղ իրան ցոց  
է առաջ բաւականին ընդունակ և հռանդուն երիտասարդ, որով և գրա-  
ւում է ճեմարանական սեմինարիոնի տեսչի ուշադրութիւնը։ Տրիւբերն  
ալժմ պլոփ. Թանի մանկավարժական երիտասարդ դպրոցի ամե-  
նաեռանդուն աշակերտներից մէկն է և ունի մի քանի մանկավարժական  
գրւածներ, որոնց մէջ նշանաւոր տեղ է բռնում «Կրթութիւն ընկերու-

թեան միջոցով վերնաղրով ուսումնասիրութիւնը։ Այդ վերջինի գլխաւոր միտքն այն է, որ ոչ թէ միայն անհատական հոգեբանութիւնն է մանկավարժութեան օժանդակիչ դիտութիւն, այլ նաև սոցիալական, ընկերական հոգեբանութիւնը։ Այդ գաղափարն արծարծել են, նորագոյն ժամանակներում, Վիլլման իւր մանկավարժութեան մէջ և Լինդներն<sup>1)</sup> իւր «Մանկավարժութիւնը որպէս գյուղութիւն» երկասիրութեան մէջ։

Ապագայում թնրես առիթ ունենանք «Բուժական-Մանկավարժական Դպրոցի» կազմակերպութեան և ընթացքի մասին մի առանձին հողւածում ընդհարձակօրէն խօսել.

Բերլին.

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱՐԻՆԻՑ

Կարեն. 42 մայիսի 1890 թ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Քանի որ նախորդ թղթակցութեանս մէջ<sup>2)</sup> մի քանի անդամ Սահասարեան անունը լիշեցինք, հարկ կը համարեմ քաղաքիս մէջ հիմնած այդ վարժարանին վրաէ կարելի եղածին չափ ճշգրիտ տեղեկութիւն տալ Արարատեան հայոց։

Սուն վարժարան հօթը գասակարգի բաժանւած է և ամբողջ ուսանողաց թիւը 130, որոց 20 միան ձրիալիարժ են և մնացեալ 110 ուսանողը թոշակաւորներ, բնականարար հարուստներուն զաւակունք տեղացի և ուրիշ զանազան գաւառներէ։

Ընդհանուր ծախուց գումարը է 4000 սոկի օսմանեան, որ կը կազմէի թոշակներէն սոսացւած 3000 օսմ. սոկի, և 1000 օսմ. սոկի (մօտ 8500 ր.), որ աղա Սահասարեան իւր կողմանէ կը վճարէ։

Տեսչութեան նախկին ծրագրին համաձայն ամբողջ շրջանը Սահասարեան վարժարանում 7 տարի պիտի տեղեր, բայց ի վերջուէ երկու տարւայ չաւելում մը ըրին, հիմաէ զրոյց կալ թէ 12 տարիի պիտի վերածեն։

Ապահովաբար վերև նշանակած պատկառելի գումարին փոխարէն աղջը ընդհանրապէս և աղա Սահասարեան մասնաւորապէս շատ արդիւնք

1) Լինդների «Մանկավարժութիւնը որպէս գիտութիւն» երկասիրութեան արժանի կտորներից մէկն փոխադրել եմ Հայերէն և շուտով լոյս կը տեսնէ Սօսկւայում հրատարակող անդիսին մէջ։

2) Տե՛ս «Մուլճ» 1890 թ. № 3։

կը սպասուին, բայց ինդիր է թէ արդեօք ալդ լուսերը պիտի իրականանան...

Վարժարանին բարողականութեան վրաէ խիստ մեծ հսկողութիւն կը լինի, բայց ես պիտի ծանրանամ անպատեհ ինդրու մը վրաէ, ալճ է չըսեմ անդրալեռնական, ալլ անդրմարդկալին մի պատժու, որ կը գործազրեն ալդ չարկին տակ խիստ գաղտնի. և ես զայդ լսած եմ մի քանի աշակերտներ հարցաքննելով: Երբ ուսանող մը առաւել կամ նւազ ծանր լանցանք մը գործած լինի, կը մերկացնեն զինք և երեսի վրաէ կը կապին սեղանի մը վրաէ հորիզոնական դիրքով. ալս պահուս կերենի դահիճը՝ պ. Յ. Մադաթեան, իւր ի Լաւիցիկ բատկապէս բանձնարարել տւած մտրակը ի ձեռին, և կը սկսի ծեծել խեղճ պատանին. կտուալարիչը՝ պ. Տիգրան Բուրուտեան տղուն բաղուկը ի ձեռին բազկերակին զարկը կը համբէ. երբ կը տեսնան թէ ալ տղան մարած է, գեղերով կը սթափեցնեն զինք:

Ալդ գաղանարարու ընթացից և ծարաւեղ խստութեան հետեանքը խիստ գէշ եղած է. առհասարակ ուսանողաց զէմքերուն վրաէ մի տիսուր մելամաղձային վիճակ կը տեսնեի, անալիսի իմն որ սոքա մեռելատիպ պատկերներէ զատ ուրիշ բան չեն ներկալացներ:

Չը բաւակնիմ ըսել թէ՝ ուսումնական ալլ դպրոցական ոք զոլովս և սոն վարժարանին դաստիարակութեան վրաէ յարտաքուստ ըրածս ման. բաղննին քննութիւններով արդէն խակ ապահովւած էի՝ թէ տեսչութիւնը չափաղանց դանդաղ կը բառաջանալ և աշակերտք նշանակութեան արժանի բան մը տւած չեն:

1889 թ. լուսիս—լուլիս ամբողջ ամսոց մէջ քննութիւնք կը կատար. էին. հաներէն, կրօն, գերմաներէն և ալզն և ալզն, խիստ փալունութեամք կ'անցունէին, ունկնդիրք բոլորն ալ առ հասարակ կը հիանալին ի տես սոն լաջողութեան, մանաւանդ որ քիչ աշակերտներ կը թերանալին իրենց պատասխաններուն մէջ:

Սական ինձ համար առաջին անգամ չէր որ ալտպիսի ձեական քննութեան մը կը հանդիպէի, ուրիշ տեղական վարժարաններ ալ ալցելած լինելով հանդիպած եմ շատ անգամ պատրաստւած քննութեանց: Եւ լայտնութիւնը (révélation) շատ չը տեսեց երեան ելաւ է՛րդ կարգի ֆրանսերէնի քննութիւնը կատարւած պահուն. որովհետև դասասուն ֆրանսիացի էր և հետեաբար աշակերտք սոսկ ֆրանսերէն խօսելով քննութիւն պիտի տապին, բայց դժբաղդաբար ալդ բարձրագուն կարգի բոլոր աշակերտք չը ւարեցան և չը կրցան կանոնաւորապէս բան մը պատասխանել կամ գրել: Այս ցաւալի և անպատեհ դէպքը եռապետութեան զգացումները վրդովնց որ հրաժարեցուց անմիջապէս զպարոն ֆրանսիացին:

Ամեն զպրոցի մէջ ալ կրնաէ պատահել, որ մէկ կամ մի քանի աշակերտք չանկարծ կը չփոթին, և ես ալդ խառնաշփոթութիւնը որ տեղի ունեցաւ՝ ալճչափ կարեոր պալացուց մը չը համարելով, քննութիւնէ անմիջապէս վերջ աշակերտներէ ումանց առանձինն առանձինն հարցաքննեցի

և ստուգիւ բոլորէն ալ տեղեկացաւ թէ՝ մէկ ամսէ ի վեր իւրաքանչյուր աշակերախ առանձին պարտականութիւն տրւած է եղեր քննութեան համար վատուկ դասեր սովորելու համար:

Այս բնական հետևանքը բացաբատ է մանաւանդ որ Սանասարեան տեսչութիւնը աւելի հետամուտ է լաւաջ վարելու իւր փափկակեցութիւնը և չափազանց զրունակութիւնը (ասով չենք ուղեր ըսկել թէ՝ ազդ վարժանաց զատատուներու նման սոքա ևս այսոք է խեղճ ապրին, բայց պէտք է զիտնալ թէ Սանասարեանք սկզբունք մ'ունին, որ է՝ ծագրականիւններէ չը խորշել), որով շատ ժամանակ չ'ունենար գասափօսութիւնք կանոնաւորապէս շարունակելու:

Երբ գեռ նոր կը հաստատէր Դպրոցը, Դելփիան ինձ կը պատմէր թէ առաջին 7 տարւաւ շրջանին 40 աղքատ տղաք պիտի ընդունվին թոշակաւորներու հետ ի միասին, այդ շրջանը լրանալին վերջ իւրաքանչյունը տարի 10 ուսումնաւարս (աղքատիկ զատէն) պիտի հանէին, և անոնց տեղ նորէն 10 ձրիսավարժ պիտի ընդունէին. Արդէն սկիզբէն մեծ թւով աղքաք 30-էն մինչև 40 թէ դաւանեներէն և թէ քաղաքէն ձրի ընդունեցին և շատուրը արդէն իրենք մասնաւորապէս հաւաքեցին. բայց Դելփիանի մահւանէ գրեթէ քիչ ժամանակամիջոց վերջը հետզհետէ ձրիսավարժները և մանաւանդ գաւառացիները արտաքսուեցին, մին հիւանդու է, միւսը խելսու է, մէկն ալ ապուշ է ըսկելու պատրսակաւ. Զը մոռնամ ըսկել թէ 3-5 տարի չաճախող աշակերտաց շատերուն ալ ալսպէս ըսին և արտաքսեցին: Միւս կողմանէ չեմ կրնար զարմանքս չը չափունել տեսնելով շատ մը թոշակաւորներ, որք եսթը տարիէ ի վեր կը չաճախին. բայց կան ատոնց մէջ, բացի առաւել կամ նւազ անընդունակներէ, անպիտմեր որ հակերէն բառ մը ուղիղ չեն կրնար զրել. Զը դիտեմ թէ այս պիտիները ինչու չեն զարձնէր իրենց ծնողաց...

Ժողովրդեան համար բացարձակ անիրաւութիւն մ'է, զրկել է, մանաւանդ երբ ազնւասիրս և վեհանձն բարերար մը կը հրամակէ որ ձրիսավարժներու մեծ թիւ մը ևս պահւեն, մինչզեռ չը զիտեմ ինչպէս իւր սաները չաջողեցան զինք համոզել թոշակաւորներն և եթ ստուրացնելու:

Ամեն ժողովրդական և ժողովրդապէտ անձինք պիտի ցաւ զգան տեսնելով ալսպիսի մի հակասական և չոռի ընթացք, որով աղքատ զասը պիտի զրկի ուսանելէ կարելի եղածին չափ Քանզի ընդունւած է թէ՝ ազգ մը կրնաւ կոչւել լուսաւորեալ այն պարագաւին, որ ժողովրդական դասը լուսաւորեալ է:

Սանասարեան տեսչութիւնը իւր զարմունքով կարնոյ ժողովրդին համարումը չը վակելելէ զատ, մեծ ատելութիւն ո՞ը հրաւիրած է առ ինքն ախտէս որ էերկուց կոչմանց սաստիկ թիւնամութիւն մը կը տիրէ և պիտի ատականաւ եթէ չը փութացւի զարմանել այդ վատ վիճակը.

Անուրանելի է թէ աղա Սանասարեան խիստ մեծ բարերարութիւն

մը ըրաւ, և պիտի ընէ ազգին տակալին. ոչ թէ միայն Կարնեցին աչ աղքն համալն օրհնող և աղօթող են իրեն համար. Ամեն սիրաեր երախ-է տափառութեամբ լի են առ բարերարն, առ ան վեհ և մեծաղն Սահա. սարեան, Բաց ցաւ է լուել, որ իւր սանունք կը թերանան իրենց պաշտա-մանց մէջ, որով կը ստիպենք արդարացի բողոքաց ձաներ բարձրացնե-լու մինչև բարերարին ականջը, Գիշ շատ զպրոցական դրժերու փորձառու լինելովս խորհուրդ կը տամ աղա Սանասարեանի և պ. Եզկանցի, որ ու-սեալ անձնաւորութիւն մը տեսուչ Կարգելով զրկին աստ' եռապեառութիւնը զարձեալ դասառու պահելով. ի հարկէ աչս պարագալին արդիւնք պիտի տեսնեի.

Ցաւ է տեսնել Կարնու մէջ ակսպիսի մի լուսի վիճակ, որ կը աիրէ աղդամին բոլոր կրթական չարկերու մէջ:

Առա միակ գործող մարմին մը կաչ, ֆրանսիացի Ֆրէներու վար-ժարանը՝ աւելի հոռմէական հարց չատկացւած, որ 1884 թւոյն հաստատ-ցաւ չնորհն հոռմէական Սահիքան եպ. Մելքիսէթէկեանի. Ֆրէները ունին խիստ եռանդրուն մի տեսուչ Simeon Marie անուամբ, որ կանոնա-սորագէս ամեն ինչ կ'ուսուցանէ և լաւ կը կառավարէ վարժարանը. մաշ-րենի լեզու կամ զսրծածական լեզուն է ըստ իւրեանց սոլորութեան ֆրան-սերէնը, խոկ հազերէն լեզուն բնաւ զանց առնւած է:

Մեր լուսաւորչական հագերէն ոմանք ալ գմբո՞ ազգ. բոլոր հաստա-տութիւններէ, կը խրկեն ազդ զպրոցը իրանց զաւակունքը:

Փարիզեան (Alliance Française) Փրանսիական զաշնակցութիւն կոչւած ընկերութիւն, որ սպասարան է Ֆրէներու, գնեց աստ ի հաշիւ իւր մի ընդարձակ տուն, գիշերօթիկ վարժարան մը հաստատելու համար. Ֆրէները խիստ եռանդրուն կ'երեն Փրանսիականութիւնէ աւելի կա-թօլիկութիւնը ծաւակելու հարց մէջ:

Գալոյն ազգ, վարժարանաց, որու ակար կողմերը արդէն նկարագրած եմ նախորդ թվակցութեամբս, ըստմ արդ թէ՝ լուսահաստելու տեղի չը կաչ բնաւ, կամ խիստ լաւ միջոցներ գարմանելու տղո. գարոցաց վիճակը, մանաւանդ որ զպրոցը 1000 սակիէն աւելի տարեկան եկամուս ունի. Յ կամ ։ հարբար ոսկուց գումար մը եթէ թոշակներէ դանձելու բլլան, ահա 1500 ոսկուց գումար մը կը ներկայանաք, որով խիստ լաւ կրնան կառա-զարւել և բարեկարգ վիճակի մը մէջ մացնել ամբողջ ազգակին կրթական չարկերը.

Առաջին անգամ հարկ է որ ուսումնական հողարաձութիւնը ի բաց թողու ան անձնական գնուծ ինդիլիները, որոնցով և եթէ կը զբաղի իւր պաշտօնավարութիւնէ ի վեր. Եւ եթէ իւր ընթացքը պիտի շարունակէ աւելի լաւ է հրաժարի և ազդ անդամաց տեղ լուրջ և խոհական անձինք պաշտօնի կոչւին. որպէս զի գալոցներու հոգ տանեն և ուսանողաց ալ չը լուսահաստեցնեն, նա մանաւանդ ազս պարագաներու մէջ, ուր քաղաքի ու

մէջ արդէն արհեստք խիստ անկեալ զիճակի մը մէջ են, առևտրականութեան մէջ քիչ մը ուսում և եւրոպական լեղու մը չը գիտցող պատանիներ անգործ կը մնան. գէթ ալս խեղճերուն օգնելու նպատակաւ խղճի մտօք գործելու է:

Վարժարանները պէտք ունին մի լաւ ուսիալ և լեղուազէտ ընդէ. Տեսչի, պէտք ունին մի քանի լաւ դասաստերու:

Հարկ անհրաժեշտ կ'երեսի Հռիփսիմեանց վարժարանը իգական սեռին լատկացնել, որու կրթութեան յարկը լաւ տեղ չը գտնւիր և դաստիարակութիւնը տարօրինսկ անձանց ձեռք կը գտնւի. օրինակի համար, օրիորդաց կար և ձես սովորեցնելու պաշտօնը լանձնւած է պ. Արշակ Տօնտօնեանի, մի տպէտ և անբարուչական անձի, որու կը վճարն Խղմիրեանի Կարնու իգական սեռի վարժարանին համար կտակած տարեկան գրեթէ 60 ոսկու դումարը. ամօթ և հսղար ամօթ կարնեցոց, որ ստակ ունենալով հանդերձ կ. Պօլսէն մի լաւ վարժուհի բերել տալու տրամադիր չեն լիներ. Բայց ինչ կ'ըսեմ, անձնական վէճերը և հակառակութիւնք կը թողմուն զիրենք այդպիսի բաներ խորհելու:

Ֆրանսիացի Սէն-Ժօվէֆի (St.-Joseph) քոլորը, որք մէկ տարի լառաջ հոս կը գտնւէին և շատ հակեր հոռվմէական հալոց հետ ի միասին իրենց աղջիկները այդ քոլորու վարժարանը կը դրկէին աւելի ձեռագործ և ֆրանսերէն սովորեցնելու համար, տարի մը լառաջ Ֆրանսացի Կառավարութիւնը այդ քոլորը ի Սամուն ուղարկեց:

Տեղացի հոռվմէական հակը նկատելով որ իրենց ունեցած կողս մայրապեսները բոլորովին անկարող են դաստիարակելու և կրթելու իրենց օրիորդները, հանրագիր մը պատրաստեցին (որը ստորագրեցին նաև միքանի հակեր) և հիւպատուին միջոցաւ Ֆրանսացի արտաքին գործոց նախարարին մօս դիմումներ ընելով կամ նախկին St.-Joseph-ի քոլորը Սամսունէն լետու դրկէին և կամ Ֆրանսիացէն ուրիշ միաբանութեան պատկանող գթութեան քոլոր ուղարկի, քաղաքիս մէջ գտնւած օրիորդներ կրթելու համար:

Աչսօր Սանասարեան վարժարանի տեսուչներից մէկի՝ պ. Սարգիս Աօղիկեանի ծննդեան տարեղարձն լինելով, բոլոր զպրոցականք ինչպէս նաև տեսչութեան ազգականները զեացին ի Վանս Յ. Գ. Լուսաւորչայ այդ տարեղարձը կատարելու համար:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բոլոր այն մարդիկ, որոնք Բիսմարկի պաշտօնավարութեան ժամանակ աշխատում էին նորան ներկայացնել որպէս միակ մարդ, որից իր կախւած է զրութեան այս կամ՝ այն մաքով փոփոխութիւնը, այսօր սովորած են խոստովանելու, որ նոքա սխալւած են: Եւ մանաւանդ մամուլի այն մասը, որը Բիսմարկի պաշտօնավարութեան ժամանակ նրան վերագրում էր ամենասատանաշական դիսումներ և ներկայացնում նորան իր ժամանակին յառաջդիմութեան ամենամեծ խոչընդուռ,—այսօր, փոխելով իւր լեզուն, որպէս վայել է անխելք և անազնիւ մամուլին, զւարճութիւն է գտնում Բիսմարկի մասին պատմել նոր առասպելներ, բայց ոչ թէ նորան չար դե ներկայացնելու համար, այլ նորա անունը սիրելի և ժողովրդական դարձնելու համար:—Այդ տեսակ մամուլի դատողութիւններին չը պէտք է հաւատ ընծայել առհասարակ, լինին այդ դատողութիւնները նպաստաւոր, թէ աննպաստ, որովհետեւ զիխաւորը ընթերցողների համար այն է, որ իրերի դրութիւնը ներկայացնեի իւր իսկական լրացով: Խակ մեր ակնարկած մամուլը, յեղաշրջած դատողութիւններ տալով քաղաքական անձնաւորութիւնների մասին, միշտ սովորած է նաև իրերի իսկական դրութիւնը յեղաթիւրել և կեղծ բացատրութիւններ տալ:

Այսպէս, օրինակ, եւրոպական միլիոնարիզը, այսինքն կանգուն զօրքերի մշտական աճումը վերագրում էր Բիսմարկին, փոխանակ այդ բանը վերագրելու քաղաքական ընդհանուր պայմաններին, այն պայմաններին, որոնց տևողականութիւնը ումենևին չի կապւած նորա հետ, թէ Բիսմարկ իւր պաշտօնում կը մնայ թէ ոչ:

Եւ ահա, այժմ, Բիսմարկի հեռանալուց յետոց, գերմանական երիտասարդ կացսեր առաջի մեծ քայլից յետ՝ վերաբերեալ բանւորա-

կան խնդրին, յաջորդեց միւսը, վերաբերեալ գերմանական զօրքին, որը, նոր զինւորական առաջարկութեան համաձայն, պէտք է զդալապէս ուժեղացնի: Ներկայ թւականի վետրւարին ընտրւած նոր րէշտուտագը (Գերմանիայի պատգամաւորների ժողովը կամ պարլամենտը) պէտք է քննէր այդ օրինադիճը: Եւ ոչ մի կասկած չը կայ, որ այդ օրինադիճը կ'ընդունի, չը նայած որ ներկայ րէշտուտագի կազմը, որուէն յայտնի է, շատ աննպաստ է համարւում կառավարչութեան:

Այդ նոր զինւորական օրինագծի վերայ մենք առանձնապէս կանգ չենք առնիլ, որովհետև նորա նշանակութեան դնահատումը ենթադրում է ծանօթութիւն եւրոպական զլիսաւոր պետութիւնների զինւորական զրութեան հետ, մի խնդիր, որին մենք կը դառնանք մի ժամանակ, բայց որը այժմ մեզ հեռու կը տանէր: Ժամանակի սղութիւնը մեզ թոյլ չի տալիս այժմ մի ացլպիսի յօդւած ներկայացնելու:

---

Եւրոպայի ներքին քաղաքական անցքերի կողմից այս մայիս ամսին ամենից շատ իւր վերայ ուշադրութիւն գրաւեց Ֆրանսիան: Հանրապետութեան նախագահ Կարնօի ճանապարհորդութիւնը ֆրանսիայի մէջ, նոր տոմարով ապրէլի 27-ին կատարւած ընտրութիւնները Պարիզի համայնքի խորհրդի համար և Բուլանժեան կուսակցութեան խստառ ջարդելը այդ ընտրութիւններին, Աֆրիկայի մի աւազակային և բարբարոս թագաւորութեան, այն է Դահումէյի դէմ բացւած կոխւը, մամուլի ազատութիւնը սահմանափակող օրինագծի չընդունելը պատգամաւորների ժողովում, Դրէշփուս պատգամաւորի ըրօշիւրը և Ժիւլ Ֆերրիի գիրքը Տօնկինի մասին, --ահա՛ այն զլիսաւոր խնդիրները, որոնք խօսակցութեան զլիսաւոր առարկաները եղան ներկայ մայիսին: Դոցանից առանձին չիշատակելու արժանի են Բուլանժեան կուսակցութեան ջարդելը, մայիսի 1-ի տօնը և մամուլի վերաբերեալ օրինադիճը:

Բուլանժեան շարժման մասին մենք արդէն մի երկու անգամ առիթ ենք ունեցել ընդարձակօրէն խօսելու: Մեր ընթերցողներին ծանօթ է Բուլանժեի անձնաւորութիւնը, նորա բարձրանալու և

զարգանալու պատմութիւնը. յայտնի է, նաև նորա կուսակցութեան առաջին մ.ծ պարտութիւնը անցեալ տարւայ սեպտեմբերին եղած պարլամենտական ընտրութիւնների ժամանակ:

Բուլանժէն, այդ ընտրութիւններին, յաղթւեց զաւառներում, բայց Պարիզ քաղաքում նա ունեցաւ նշանաւոր յաջողութիւններ: Ահա այստեղ է, որ բուլանժականութիւնը ուզում էր իւր բունը հաստատել և ապագայում գուցէ Պարիզի միջոցով, այսպէս ասած, Ֆրանսիային տիրել: Ապրիլի 27-ին Պարիզի մայրաքաղաքը, շրջակացքով, պէտք է ընտրել 88 հոգի ձախնաւորներ համայնական խորհրդի համար: Եթէ այդ ընտրութիւններին Բուլանժէն կարողանար իւր կուսակցիցներին ընտրել տար և գումայում մեծամասնութիւն ձեռք բերել, — այն ժամանակ Բուլանժեան կուսակցութիւնը զաւթած կը լինէր մայրաքաղաքը: Դորա հետեւանքները բացատրութեան կարօտ չեն:

Արդ, ապր. 27-ի համայնական ընտրութիւններին Բուլանժեան կուսակցութիւնը կրեց աւելի ևս մեծ ջարդ, քան անցեալ տարւայ պարլամենտական ընտրութիւններին: 88 հոգուց բուլանժական ձախնաւորներ ընտրւեցին միայն երկու հոգի: Կուսակցութիւնը այժմ ինքն էլ խոստովանում է իւր քաղաքական ոչնչութիւնը, բայց դեռ ևս ապագայի համար յոյսերը իսպառ չի կորցնում, որովհետեւ մայրաքաղաքում Բուլանժեան կանդիդատներին պատկանող ընտրողների թիւը այնու ամենայնիւ համար է 144.000-ի:

Մայիսի 1-ին պէտք է կատարեր մի «Համաշխարհային» տօն բոլոր բանւորների: Տեսնած էին մեծամեծ նախապատրաստութիւններ՝ այդ տօնին քաղաքական շարժման մեծ յօցի բնաւորութիւն տալու համար: Գլխաւոր կինդրոնակէտը ընտրւած էր Պարիզ քաղաքը: Իսկ է, ցոցեր եղան, եղան նաև փորձեր յեղափոխական շարժումների. բայց ներքին գործերի մինիստր Կոնստան'ի արի գործունէութեան շնորհիւ, որը ամեն նախազգուշական միջոցներին դիմել էր, շարժումը սահմանափակւեց և յեղափոխականները չը կարողացան իրանց նպատակին համնել: Կոնստան'ի ժողովրդականութիւնը դորանով աւելի ևս աճեց: Ամենքը այժմ դիտեն, որ Կոնստան'իներ-

կայութիւնը մինիստրութեան մէջ ուժեղ կառավարութեան գրաւականն է:

Գալով այժմ մամուլի ազատութեան դէմ սենատում առաջարկուած և ընդունւած օրինագծին, որը պատգամաւորների ժողովը մերժեց, պէտք է ասած հետեւելլը: Թերեւս ոչ մի երկրում մամուլը չի վայելում այն կառարեալ ազատութիւնը, ինչպէս ֆրանսիացում: Բայց և ոչ մի երկրում այդ ազատութիւնից այնքան չեն օգտում այս և այն կառավարչական անձին վիրաւորելու, զրպարտելու, անպատւելու՝ կուսակցական շահերի համար, որքան ֆրանսիացում: Զրպարտուածը դիմում է գատարանին, որը գատում է ընդհանուր օրէնքների համաձայն և երգւեալ գատաւորները դատում են իրանց խղճի համաձայն: Այդ սրբազնութերը ձեռաց չեն կատարում; այլ ինչ և իցէ ձգձգւում են: Բայց դորանից՝ երգւեալները շատ յաճախ դատում են քաղաքական կուսակցութիւնների ազգեցութեան ներքոյ:

Այդ չարիքների դէմն առնելու համար, մանաւանդ որ քաղաքական շարժումների ժամանակ, երբ մամուլի ստոր ներկայացուցիչները, մի որոշ գործնական նպատակին հասնելու համար, չեն քաշում և չեն վախենում ստութիւնների և զրպարտութիւնների դիմել, առաջարկութիւն եղաւ այդպիսի գանգատներով դիմել ոչ երգւեալ գատաւորներին, այլ մեղադրածին յանձնել այսպէս կոչւած ուզզի: պօլիցիական գատարաններին, ուր գործերը քննւում են արագ կերպով և ոստիկանական կանոններով:

Սենատը ընդունել էր այդ օրինագիծը. պատգամաւորների ժողովը մերժեց: Կառավարութիւնը ինքը հակառակ էր սենատի օրինագծին: Եւ ահա հիմունքը: Մամուլի ազատութիւնը դառել է ֆրանսիացում մի ազգային կարեւոր հաստատութիւն: Հանրապետական կեանքի հետ սերտ կապւած է մոքի ազատ արտայացութեան կարելիութիւնը: Արդ, եթէ գատերին ուզզելու համար մամուլը ենթարկւ ազատութեան սահմանափակման, այն ժամանակ, մանաւանդ վատ և յետաղէմ կառավարիչների օրերով, մամուլի ազատութիւնը առհասարակ վատնդի մէջ կը լինի և մամուլը ինքը կ'ընկնի կառավարութեան ձնշման տակ: Այս մոքով խօսեց պատգա-

մաւորների ժողովում Դեշանել, յայտնի պրօֆեսօրը, մինչդեռ նորահակառակորդն էր Ռէնախի, դեռ ևս երիտասարդ՝ բայց ներկայ հրապարակախուների մէջ փայլուններից մէկը, հանգուցեալ Գամբետտայի քարեկամը։ Օրինադիճը չ'ընդունեց, մանաւանդ ալժմ, երբ Ֆրանսիան նորերումն ապացուցեց, որ զրադարտութիւններով և զե՛փամացիայով զանազան բուլանժէներին չի յաջողւիլ ազգի մեծամասնութեան խաբել, երբ կառավարութիւնը ինքը իւր պաշտօնը կը կատարի, որպէս օրէնքը այդ թողլ է տալիս և ողահանջում։

Z.

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՒՆ

«Արձագանք» շարտաթաթերթի № 13-ի առաջնորդող խօսածում ի միջի ալլոց հետևեալ միաբն է լավոնւած. «Անկաչա, անանուն, տպէտ և դեռ աշակերտական նոտարանի վերակ բաղմող երիտասարդներ ասմարէղ և ն զուրս կավա աճնպիտի գործիչների դէմ, որոնց չնորհիւ ամրող սերտանդներ և կրթւել Յաւանի իրողութիւնն է և ամօթարժիր փաստ, որ մի ամսադրի էջերում քանի մի տղպիտի համբակներ Գամառ-Քաթիպակի դիմին դատաւոր նոտան...»

Այս ակնարկութիւնը վերաբերում է մի խումբ ուսանողների, որոնք չունեարին բողոքեցին Սիւլվիկի «Սատանակի Օջիլ» պասկւիլի դէմ: Պասկւիլը տպւած էր Մօսկաւյում մի ուսանողի խմբագրութեամբ հրատարակւող «Հանդէս Պատմական և Գրականական» ժողովածուի մէջ, իսկ Մօսկաւի ուսանողների բողոքը՝ «Մուրճ»-ում: Աղջ բողոքողներից մէկը լինելով ես, իմ պարտականութիւնն եմ համարում պատասխանել «Արձագանք»-ի լաւոնած մաքին, եթէ ներողամուաբար և նթաղրենք, որ աղդ առաջնորդողում մի միտք կայ:

Ենթադրենք մի լոպէ, թէ «Արձագանք»-ի խմբագրատանը ամենագէտներ և նոտած և թէ նորա բոլոր աշխատակիցները պատմնի անունով, զիտոն և ազնու մարդիկ են, տեսնենք իրաւունք ունի արդեօք «Արձագանք»-ի խմբագրութիւնը աղղպէս արհամարհանքով վերաբերելու ուսանողներին ու նրանց բողոքին:

Բարոկականութեան ինդիրներում ոչ աճնքան գիտութիւնն է գեր խաղում, որքան խղճի մաքրութեան աստիճանը: Ուրեմն լոկ համբակ բառը ոչինչ չի ապացուցանում եթէ ոչ աղդ խօսքը արտասահողի անբարեխղճութիւնը կամ անմտութիւնը:

Ահա թէ ինչումն ենք մենք դատաւոր նստել Սիւլվիկի դմին. թող ընթերցողը դատի, թէ արդեօք ուսանողները աղդ բանում համբակ են թէ ոչ: Մենք համուլած էինք՝ 1) որ «Սատանակի Օջիլ»-ը պասկւիլ է և անձնական, ոչ-հասարակական պասկւիլ, 2) որ աղդ պասկւիլը ձգտում է անուանարկել մի շատ զարգելի անձնաւորութեան, 3) որ պասկւիլը, պարուաւողրութիւնը անբարուականացնում է զրականութիւնը, 4) որ պասկւիլի զո՞ն գարձած անձնաւորութիւնը աւհասարակ, հոգեսրականը ևս աւելի, չի կարող պասկւիլեանտի զրապարտութիւնները հերքելու համար զիմել ոչ լրագրական խօսքի, ոչ էլ դատաստանի օգնութեան, որովհեան նաև պասկւիլի մէջ չի վշտած չականէ չանուանէ, 5) որ աչքի առաջ ունենալով աղդ բոլորը, հասարակական կարծիքը պարտաւոր է պասկւիլիանտներին ու նրանց քաջալերազներին զսպել՝ զրականութիւնը որդապղծելուց և լարգելի անձնաւորութիւնների պատիւը ոտնակոխ անելուց, 6) որ զրականական

գործիչների վերաբերմամբ հասարակական կարծիքը կազմում են նրանց դրամագիտների ընթերցողները, որոնք իրաւունք ունին և մինչև անգամ պարտական են հարմատոր զէպիքերում իրանց համակրութիւնը լայտնել ուղերձների, պատակների և այլն միջոցով և իրանց զժգոհութիւնը՝ բողոքով։ Եթէ «Արձագանք»-ի խմբագրութիւնը համոզւած է, թէ «Սասանացի 0ջիլ»-ը պասկւիլ չէ, թէ պարաւագրութիւնը գրականական անբարութականութիւն չէ և այն, թող ներքի այն բոլոր կէտերը, որ ես վերել իշատակեցի։

Բայց քանի որ «Արձագանք»-ը չի հերքել այդ բոլորը և, հաւատացած եմ, չի էլ կարող հերքել, ես իրաւունք եմ համարում ինձ ասել, որ «Արձագանք»-ի խմբագրիները կլասիկական համբակներ են հրապարակախոսութեան մէջ։ Ոչ մի հասկացող հրապարակախօս, ազնւութեան մասին հօ էլ չեմ խօսում, իւր պաշտապանութեան տակ չի առնի պասկւիլեանատին եռոչ մի խելքը զլիխին հաջ լրագրական գործիչ սիստեմատիկա և կանոնագիր չի լայտնի ուսանողակիւն, ինչպէս այդ արել է «Արձագանք»-ի խմբագրութիւնը։ Ամեն մի առողջ զատողութիւն ունեցող հրապարակախօս պէտք է իւր պարտականութիւնը համարի քաջալերել հայ ուսանողներին զրականութեամբ պարապելու։ Նախ այն տեսակէտից, որ իրանց հասարակութեան կեանքից առնասարակ կորւած ուսանողները կապ պահեն իրանց ժողովրդի հետ, երկրորդ՝ աչքի առաջ ունենալով մեր մէջ ինտելլիգենտ ոչերի պակասութիւնը։ Ֆրանսիացի կամ դերմանացի ուսանողը ինքը կրթւում է իւր հարենիքում հրատարակւող պարբերական թերթերի աղջեցութեան տակ, նա նրանց միջոցով նոր լան հաղորդել, կրթել ընթերցողներին չի կարող, թէ և նրանք ազատ կերպով իրանց համակրութիւնն և բողոքը չափանում են հասարակական գործիչների վերաբերմամբ, և ոչ մի խելքը զլիխին հրապարակախօսուն նրանց այդ առիթով համբակ չի անուանում։ Բոլորովին տարբեր է հայ ուսանողի զրութիւնը։ Հայ զրականական գործիչների մէջ ընդամենը երկու ու կէս ուսումնական մասնագէտ կաչ, հայ լրագրիների աշխատակիցներից բարձրագուն ուսումնարան աւարտողներին մատների վերաէ կարմէլի է հաշւել, իսկ չօգւածաղիրների ստւար մհծամանութիւնը, իւր զարդարացմամբ, ուսանողներից ցած է, անպէս որ հայ ուսանողները լրագրութեան մէջ մասնակցելով ոչ թէ կը ստորացնեն նորա մտաւոր մակերեսովթը, այլ ընդհակառակը կը բարձրացնեն։ Իսկ չնորհակալութիւն կամ զժգոհութիւն չափանել մի զրականական գործիչի գէմ իրաւունք ունի մինչև անդամ հասարակ ընթերցողը, այն ընթերցողը, որ ոչինչ չի զրում, բայց որի համար է ամեն բան զրւում։

Վերջացնելով նամակս՝ երկու հարց կ'առաջարկեմ «Արձագանք»-ին։

1) Ինչու «Արձագանքը», հակառակ իւր կարծիքի ուսանողների մասին, մի ժամանակ տպագրում էր ուսուանող Մ. Քարխուղարեւնցի և Պ. Ենդիբարեւնցի քննադատական չօդւածները։

2) Ինչու «Արձագանք»-ը ու Հանդէսունցից առաջ ոկտեց տպագրել այս-

տաճակի, Օջիւռ-ը, բայց լետու դաղարեցրեց տպագրելը։ Ճիշդ է, որ իմանալով թէ ազդ պասկւիլը դրւած է մի չարգելի հոգևորականի դէմ, խմբագրութիւնը ամաչեց շարունակել տպագրութիւնը։  
Թիֆլիս, մայիս:

Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

Մանօթ. «ՄուրՃ»-ը, ընդունելով տպագրել իւր էջերում Մօսկւայի հայ ուսանողների բողոքը Սիւլիւկի դէմ, միացըել էր իւր ձայնը բաղոքողների հետ։ Այդ բողոքի նպատակն էր՝ պաշտպանել մի անձնաւորութիւն, որը, բողոքը սարժադրութների կարծիքով, արժանի է մեծ յարգանքների և որին չը պէտք է թողնել պարսաւած մանաւանդ մի հեղինակի կողմից, որի տաղանդը ամբողջ ազգին յայտնի է։ «ՄուրՃ»-ի ընթերցողները ամենայն իրաւունքով կարող են պահանջել, որ իրանց յայտնի լինի պաշտպանողի անձնաւորութիւնը։ Այդ, մենք յայտնում ենք, որ «ՄուրՃ»-ը, միացնելով իւր ստորագրութիւնը Մօսկւայի 15 ուսանողների սարժադրութիւնների հետ, ենթագրել է, որ «Սատանայի Օջիւռ-ի մէջ պարսաւած անձը՝ Կիւրեղ վարդապետ Սըասեանն է, որի թերեւս միայն ժամանակաւոր հեռանալը իւր պաշտօնատեղից՝ «Արձադանք»-ի (№ 14) թղթակցի վկայութեան համաձայն՝ մեծ յուղում և ցաւ է պատճառել նոր-նախիչեան քաղաքին։

Խ. Մալով.

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Պր. Պետք ՊՌՈՇԵԱՆՑԻ «ԲՂԴԵ» վէպի շարունակութեան տպագրութիւնը այս ամիս ընդհատւեց՝ հեղինակի նեարդապին մի տկարութեան պատճառով, որի համար բժիշկները խորհուրդ են տւած նրան մի առժամանակ մտաւոր աշխատութիւնով իրան չը լոգնեցնել։ «ՄՈՒՐՃ»-ի ՎԵՊԵՐԸ, Պարոն Ս. Մելիք-Շահնաղարեանցի «Հայ գիւղացու սև օրը» վէպը վերջանալով, հետեւալ համարից կարծում ևնք թէ կարող կը լինինք սկսել Տիկին Մարիամ Խատիսեանի «Նինա» անունով րօմանը, որի մասին դեռ ևս անցեալ տարի լիշատուկ. ևց «Մուրճ»-ում։

«ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕՐԸ» պ. Մելիք-Շահնաղարեանցի վէպը շուտով լոյս կը տեսնի առանձին տպւած։ Վէպը բաղկացած կը լինի մօտ 160 երեսներից, «Յեցեր» և «Կորածներ» վէպերի զիրքով։ Դինը նշանակւած է 40 կոպէկ և վաճառում է թէ «Մուրճ»-ի խըմ. բագրատանը, թէ գրալաճառանցներում և թէ հեղինակի մօտ, որին պէտք է զիմնել աւսպէս՝ Եակу. Տարկու Մելիք-Շահնա- զարյաց, յշտ. և Տեղուակ Արմ. Չելովեկուած։ Առաջարակուած։ Օբածուած։ Եակ գիւղացու սև օրը» գրքով, «Մուրճ»-ի հրատարակու- թիւների թիւը, 17 ամսագ ընթացքում, հասնում է հնգի. այն է՝ «Յեցեր» Պոօչեանցի, «Խն Կարապետ» Ատրպետեանի, «Երե- խաների մարսողութեան հիւանդութիւնները» բժշկ. Տէր-Գրի- գորեանցի (Ղղլարցու), «Խորածներ» Լէօփ, և «Հայ գիւղացու սև օրը» Մելիք-Շահնաղարեանցի, բալորը միասին 4.600 օրինակ։

Պ. ՍԱՂԱՄԷԼԵԱՆԻ ՅՈՒԽԱԾԸ ՀԱՄԱՀՆԱԿ ՀՈՂԱՄԻՐ ՀՈՂԱՄԻՐ ԵՐԵԱՆ Ն Ա Հ Ա Ն Գ Ո ւ մ « սկսում է տպագրւել ներկայ Ն Ե 5-ից։ Յօդւածը կ'ունենաց մի քանի շարունակութիւններ։

ՀԱՅՐ ՂԵԽՈՆԴ ԱԼԻՇԱՆԻՆ, նորա 50-ամեաց գործունէութեան տարեդար- ձին, «Մուրճ»-ի խմբագրութեան կողմից խմբագրից ուղարկւեց Վենետիկ մի շնորհաւորական հեռագիր։

ԳՐՈՅԵԱՈՐ ԶՈՒԲԻՆՈՎԻՆ, որի տարեդարձը լիսնամեալ զրական գործու- նէութեան՝ վրաց գրականութեան վերաբերեալ՝ լրացաւ մալիսի

13-ին, „Մուրճ“-ի խմբագրութիւնը լանձին խմբագրի ուղարկեց  
Թիանքուրդ հետեւալ բովանդակութեամբ հեռակիր”

Профессору Կյունիով

Редакция армянского журнала „Мурчъ“, поздравляя Васъ съ  
пятидесятилетнимъ юбилеемъ Вашей ученой деятельности, вы-  
ражаетъ свою радость по поводу празднованія дорогаго для  
сосѣдей вашихъ—грузинъ—ученаго.

**ՄԱՀԱՅՈՒՑԱԿ.** Այս մասին Պատիում վախճանւեց գնդապես Ալեքսանդր  
Մելիք-Հակազնանցը: Հանդուցեալը լավոնի էր մանաւանդ  
իւր օժանդակութիւններով մի քանի հողինակների գրւածք-  
ները տպագրելու համար: Հանդուցեալի հաշւով տպագրը-  
ւել էն՝ Բաֆֆիի „Կաչերը“, երկու հատոր, Աւ. Արաւիսա-  
նեանցի Աղջաբեակութիւնը և նորա շարժումները” և „Հողը  
և հասարակութիւն“-ը. (վերջինիս „Աշխատանքը և նորա բաժան-  
մունքի ակզրունքը“ կիսով չափ տպարտաստ դրւածքի տպագ-  
րութեան համար հանդուցեալից ստացւած է 100 բուրյի,  
գրւածքը, տպագրաւած՝ կը նւիրւի հանդուցեալի անուան): Տպա-  
գը բարւած է հանդուցեալի հաշւով նաև մի հակերէն զիրք.  
“Անդրկովկասի հաւ զինուորների համար”:

Հանդուցեալը տւել է նաև կանոնաւոր օժանդակութիւն-  
ներ և թոշակներ աշակերտաների և համալսարանական ուսու-  
նողների:

**ՆՈՅՆ ԱՅՍ ԱՄՄՈՒՆ** վախճանւեց Պարիդում Մկրտիչ Ամենասարեանը, որի  
ամենագլխաւոր գործն է Սանասարեան վարժարանը Կարինում  
(Հրովերում), որը հաստատեց հանդուցեալը երկարամեալ նա-  
խապարատաստութիւններից վետով, ունենալով արդյէն մի խումբ  
պատրաստա ուսուցիչների, որոնք կրթւած էին իւր հաշւով զինա-  
ւորապէս Գերմանիակում: Վարժարանի նիւթական դրութիւնը  
ասպահովացրած է կտակով:

**ՊՐՕՖԵՍՈՐ ԴՕ.ԲՏԾՈՐ Լ.ՕՐԵՆՑ ՖՈՆ ՇՏԼՅԵՆ-ի** 50-ամեակ դօքտորական լօբե-  
լեանին, որ տեղի ունեցաւ նոր տոմարով մականի 20-ին,  
„Մուրճ“-ի խմբագիրը ուղղեց հոչակաւոր քաղաքատնականին և  
մտածողին մի շնորհաւորական նամակ, ինք ինձ դրդում է ալդ առիթով միւս  
որը առաջ ենք բերում թարգմանօրէն.

Մեծաբարդ պատոն Պրօֆեսոր.

„Ենորհաւորի լով Ձեզ, մեծալարդ պ, պրօֆեսոր, իմ խմբագրած  
մի հակական ամսագրի անունից, Զեր 50-ամեակ դօքտորական  
լօբելեանի առիթով, ինդրում եմ Ձեզ միաժամանակ ընդունեք  
հաւասարվը, որ այն, ինչ ինձ դրդում է ալդ առիթով միւս  
զեր բաղմաթիւ երկրպագուների հետ միանալ, այն ուժին կարիքն

է, որ զգում է մի աշակերտ՝ իւր չնորհակալութիւնը լայտ-նելու համար նրան, որին իւր ամենապարզելի ուսուցչապետներին և հեղինակների թւումն է համարում, թէև նա Ձեզ անձամբ ճանաչելու բաղդը ունեցած չէ:

“Այս լուպէին ես վերցրի ձեռքս Ձեր զրւածքը՝” Կինը քաղաքատնահսկան ասսպարիզումն, որի համար առիթը տւեց մեր մի հոչակաւոր վիպատան և զրող հանդուցեալ Ռաֆֆիի նոր հրատարակւած գրւածքը՝ ոչակ կինը և հաչ երիտասարդութիւնը և միան այժմ իմացայ, որ լուս է ահսել Ձեր վերջին զրւածքը երրորդ տպագրութեամբ՝ Ակինը, նորա կրթութիւնը և կեանքի կոչումը<sup>4</sup>, Եսուսու ունիմ, որ հայկական հառուակութիւնը Մուրճ<sup>5</sup>-ին չնորհապարտ կը լինի, որ նորանով ծանօթանակ Ձեր գաղափարների հետ այդ մասին:

Ախնդունեցէք, մեծատարգ պ. Պրօֆեսօր, իմ ամենախորին լարդանքների հաւասարվքը»:

Մենք կ'աշխատենք մի ժամանակ մեր այդ խոստումը կատարել, որքան կարելի է շուտով. բայց „Մուրճ“-ի հետեւալ համարում մենք կը շտապենք ծանօթացնել այդ զրական և գիտնական հսկութի հետ, որով կարող է պարծենալ ոչ միան գերմանական աշխարհը, ապէ թերես և մեր դարը:

**ՀԱՆԴԵՑՈՒԹՅՈՒՆ** Ա.Մ.Ա.Օ.Ր.Ե.Յ.Յ. թիւ 6, լուսիո, սկսում է տպագրել 1889 թւականին լուս տեսած հալերէն հրատարակութիւնների ցուցակը պլթ.թենական կարգով և առ այժմ վիշտած են 41 հրատարակութիւններ։ Կազմովը ամեն մի զրքի վերնագրին կից ուզում է վիշտակել այն թերթերի անունները, որոնք քննապատած են լիշտած ամեն մի հրատարակութիւնը։ Արդ մենք պէտք է լատններ, որ զործի այդ մասը թերի է։ (Մուրճ)-ի անունը այդ ցուցակում վիշտակետած է միան չորս զրքերի առիթով, որոնց հեղինակներն են՝ 1) Արեգեան, Աղամենանց, Աղանեանց քահանակ, Գալերքերեան, մինչդեռ «Մուրճ»-ի քննադատութիւնները չեն վիշտակետած հետեւալ հրատարակութիւնների առիթով՝ 1) «Աղբիւր» (ցուցակում № 10), 2) Դոքտո. Բարակեան (№ 24), 3) Բարակացաւ-թռքախոտի մասին, 4) «Բազմավկապ» (№ 26), 4) Բակազէզցի՝ Թասիբ (№ 28), 5) Գալրիէլի Անդրէաս՝ Բնաւութ. կրթութ. (№ 32), Աղպիսի անհողութիւնը դարձնում է ցուցակի այդ բաժինը բոլորովին անհետաքրթական։

## Վերջին ժամկե տուցանք՝

Балантаръ, Ал. А.—Агрономическая секция VIII съезда естествоиспытателей и врачей въ С. Петербургѣ 1889—1890 года. (докладъ, чит. въ Кабк. Общ. Сельс. Хоз.)

Правление Попечительного Общества при Домѣ Трудолюбія.—Проектъ Учрежденія Общества по устройству сельскохозяйств. Колоній. С. Петерб., 1890.

- ԱՆԱՆՈՒՆ. —Աղբագլ, Ս. Պետրովուրդ, ապ. Սկօրօխօդօվի, զինն է 5 կ.  
 » «Հաջի-Ֆիմիար ու Սահման կարագա», նոյն տպար. զինն է 3 կ.  
 » «Սարկաւագ», նոյն տպարան, զինն է 5 կոպէկ.  
 » «Շամփլ գատաստանը», նոյն տպարան, զինն է 2 կոպէկ:  
 ԴՕՒՆ, ԱԼՖՈՆՍ. —«Բերլինի պաշարումը», նոյն տպարան, զինն է 2 կոպ.  
 ՎՐԻՊԱԿ, ԱՆցեալ № 4-ում տպւած պ. Տէր-Միքելեանցի լողւածում, երես  
 595, հինգերորդ տող ներքենից, փակողծի մէջ պէտք է կար-  
 դալ՝ познан'е, մինչդեռ սխալմասիր տպւած է ոսնան:

ՅՈՒՐՃԱ-Ի ԽՄԲԵԳԻՄԱՍԸՆ ՄԷԶ ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԼ ԳՐՔԵՐԸ.

Բ. Կ.

|                                                                                                            |    |   |
|------------------------------------------------------------------------------------------------------------|----|---|
| «ՄՈՒՐՃԱ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով . . .                                                             | 12 | — |
| ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ Ահ. — «Ազգաբնակութիւնը և ազգա-                                                                 |    |   |
| բլնակչական շարժութերը» . . . . .                                                                           | 40 |   |
| ՆՊՅՆ ՀԵՂԻՆԱԿ. — «Հողատիրութիւնը և հասարա-                                                                  |    |   |
| կութիւնը» . . . . .                                                                                        | 40 |   |
| ԲԹԿ բժիշկ. — «Ֆիզիքական և մասւոր զարգացման                                                                 |    |   |
| մասին» . . . . .                                                                                           | 30 |   |
| ԱՐԱԾԱՆԻԱՆՑ Ա. — „Զակավազская хлѣбная тор-<br>говля“ . . . . .                                              | 75 |   |
| “ ” — „Закавказские шелкометальные<br>заводы“ . . . . .                                                    | 80 |   |
| ՆԱԻԱՍՍՐԴԵԱՆՑ ՏԻԳՐԱՆ. — «Ժողովրդական հէքիաթ-<br>ներ», 4-րդ գիրք . . . . .                                   | 50 |   |
| “ ” — «Ժողովրդական հէքիաթ-<br>ներ», 5-րդ գիրք . . . . .                                                    | 50 |   |
| ՊԻՇԵԵԱՆՑ ՊԵՐՃ. — ՅԵՅԵՐ» — (վէպ) . . . . .                                                                  | 1  | — |
| ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԻ (ՂԱՂԱՐՋԻ)՝ Ման-<br>կառածութիւն» . . . . .                                    | 50 |   |
| ԱՏՐՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ. — «ԵԵԿ-ԿԱՐԱՊԵՏ» — վէպ հայ-կաթոլիկնե-<br>րի կեանքից . . . . .                             | 1  | — |
| Լ. Ե. Օ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» — (վէպ) . . . . .                                                                    | 50 |   |
| ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ, բժշկ. (ՂԱՂԱՐՋԻ)՝ «ՄԱՆՈՒԿՆԵՐԻ<br>ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԲԱՆ. ՄԻ ԳԱՆԻ ՀԻՒՄՆԴՈՒԹԻՒՆԵՐԸ» — 5 |    |   |
| Ճանապարհածախոր խմբագրութեան վերայ է: Գրամփ տեղ կա-<br>մլի է ուղարկել պօստի մարկաներ:                       |    |   |

# ГОСТИНИЦА ПЕТЕРБУРГЪ

Близъ Александровскаго сада.


Меблированные номера отъ 50 к. въ сутки.

Отпускаются обѣды и ужины, а также завтраки и выборъ всевозможныхъ напитковъ, по весьма умѣреннымъ цѣнамъ, съ ручательствомъ за свѣжесть провизіи.

Имѣется залъ для общественныхъ обѣдовъ и ужиновъ, отдающійся также подъ свадебные пиры, для коихъ имѣется полная обстановка.

Тутъ же имѣются билліарды, новѣйшей конструкціи, С.-Петербургскаго фабриканта Фрейберга.

Н. Михайловъ.



# „ՄՈՒՐՃ“

## ԱՄՍԱԳՐԻ

1890 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է:

|                                 |                   |
|---------------------------------|-------------------|
| Տարեկան բաժանորդագինը . . . . . | <b>10 ր.</b>      |
| Կէս տարւանը . . . . .           | <b>6 ր.</b>       |
| Երեք ամսանը . . . . .           | <b>4 ր.</b>       |
| Մի գրքովկը . . . . .            | <b>1 ր. 50 կ.</b> |

Ընդունում է բաժանորդագրութիւն նաև մաս-մաս առաջին կիսամեակում ամբողջը վճարելու պայմանով:

Ուսուցիչները, վարժուհիները և բարձրագոյն դպրոցների ուսանողները վայելում են զիջումներ, համեմատ առանձին տպած յայտարարութեան:

«ՄՈՒՐՃ»-ի ծաւալը տարեցարի մեծացնելը միանգամացն կախւած է բաժանորդագրութեան յաջողութիւնից: Ծաւալիցն է կախւած նիւթերի հարստութիւնը: Այդ սկասմառով մենք յորդորում ենք մեր ներկայ բաժանորդներին՝ իրանց կողմից հարկաւոր ջանքը շը խնայել «ՄՈՒՐՃ»-ը իրանց ծանօթ շրջաններում տարածելու համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

|                                 |              |
|---------------------------------|--------------|
| Ամսական մի երեսի համար. . . . . | <b>10 ր.</b> |
| ,, կէս երեսի համար . . . . .    | <b>6 ր.</b>  |
| ,, քառորդ երեսի համար . . . . . | <b>4 ր.</b>  |

Գրքերի յայտարարութիւնների համար կարելի է վճարել նաև յայտարարւած գրքերով՝ սոյա գների համաձայն:

Խմբագրութեան հասցեն՝ Տիֆլիս. Ե՞ Պեդակցիո յурнаլա ՝ ՄՈՒՐՃ. Խմբագրութիւնը գտանուում է՝ Գանովլեան փողոց, նախկին տուն Յովհաննիսեանի, (Гановская улица, домъ бывш. Иоанниесиан), բոլորովին մօտ Երեանեան հրապարակին:

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURTCH».